726

8 40
4-46

ԺՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱԻԱՊԵՏԻՆ

ՈՐԴԻՔՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՇՈՒՐՋԸ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՃԵՄԱՐԱՆԷՆ ՖՐԱՆՍԱՑԻ

ԳԱՌՆԻԿ ՏԻՕՓՄԷՃ
ԴՐԱՎԱՃԱՌ, ԹՂԹԱՒ
ՏՊԱԳՐՈՒԶ ԵՒ ԿԱԶՄԱՐ
Բուսյոմ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

معارف عمومیه نظارت جلیلهسنك رخصتیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ
1885

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱԻԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՔՈՒԱՐԻ

Եթէ երբէք Կրանթ նաւապետն որոնողները պարտէին, ուսահատիլ վայն գըտնելէ, ո՞չ ապաքէն այս միջոցիս էր, ուր ամեն բան կը պակսէր միանգամայն։ Աչխարհի ո՞ր կէտին վրայ կրնային նոր արշաւանք մը փորձել։ Ի՞նչպէս կրնային նոր երկիրներ հետախուզել։ Ցընտն կորսուած էր, և անմիջապէս Մ՛ոլոտիա վերադառնալ իսկ հնարին չէր։ Այսպէս ահա այդ ազնուասիրտ Մ՛ոլտացւոց ճեռնարկն ի դերեւ եղած էր։ Ձախողուա՛ծ։ Տխուր բառ, որ արձագանգ չունի քաջարի սրտի մը մէջ, և սակայն չարաբախտութեան հարուածին

տակ հարկ էր որ Կլէնարվան ճանչէր թէ ոչ եւս կրնար չարունակել զիւր անձնուիրական գործ։

Իրաց այս վիճակի մէջ, Մարի Կրանթ քաջութիւն ունեցաւ ոչ եւս արտասանելու զիւր հօր անուն։ Իւր սրտին տագնապը զսպեց միտքը բերելով Տըֆֆըրի դժբաղդ նաւաղներն որք Պէն Ճոյիսի հարուածոց զոհ եղած էին։ Զաւկութիւնը մէկ կողմ ձնաց բարեկամութեան առջեւ, և ինքն ըսկըսաւ մխիթարել զտիկին Կլէնարվան, որ մինչեւ ցարդ կինքը մխիթարած էր այնչափ։ Ամենէն առաջ նա առաջարկեց վերադառնալ ի Սկովտիա։ Ճոն Մանկլը, օրիորդ Կրանթի այս քաջասրտութիւնն ու համբերատարութիւնը տեսնելով, աքանչացաւ։ Ուզեց վերջին խօսք մ'ըսել ի նպատ նաւապետին, բայց Մարի արգիլեց զայն իւր նայուածքով, և ապա ըսաւ.

—Ո՛չ, պարո՛ն Ճոն, խորհինք այն անձանց վրայ, որք անձնուէր եղան։ Պէտք է որ Լորա Կլէնարվան ետրոպա վերադառնայ։

—Իրաւունք ունիք, օրիո՛րդ Մարի, պատասխանեց Ճոն Մանկլը, այնպէս պէտք է։ Նաեւ պէտք է որ անգլիական իշխանութիւնք իմանան Տըֆֆըրի վախճանը։ Բայց մի՛ կորսուաներ ամեն յոյս։ Մեր ըսկըսած խուզարկութիւնք պէտք չէ կիսատ-

տար մնան։ Ես միայնակ կը չարունակեմ։ Կա՛մ կը գտնեմ զԿրանթ նաւապետ, կա՛մ կ'ընկճիմ այդ ձեռնարկի տակ։

Լուրջ պայմանապրութիւն մ'էր որ կ'ընէր Ճոն Մանկլը։ Մարի ընդունեց զայն, և իւր ձեռքն երիտասարդ նաւապետին կարկառեց լերեւ ի վաւերացումն այս պայմանադրութեան։ Ճոն Մանկլի կողմէ ցկեանս անձնուիրութիւն մ'էր։ Մարիի կողմէ ալ անդրդուելի երախտագիտութիւն։

Նոյն օրը չուն որոշուեցաւ վերջնապէս։ Անյապաղ Մէլպուրն պիտի երթային։ Հետեւեալ առաւօտ, Ճոն գնաց տեղեկանալ թէ Մէլպուրն գնացող նաւ կա՞ր։ Կը կարծէր թէ յաճախ հաղորդակցութիւնք կայրն ընդ մէջ Վիքթորիոյ մայրաքաղաքին և Էտէնի։

Իւր ակնկալութիւն պատրեցաւ։ Ցոյժ քիչ նաւ կար։ Թուոֆոլտի ծովածոցին մէջ խարսխեալ երեք-չորս նաւերէ կը բաղկանար տեղւոյն առեւտրական տորմիղը։ Ո՛չ Մէլպուրն, ո՛չ Սիտնէ, ո՛չ Բուանթ-տը-Կալ գնացող նաւ կար։ Արդ, Լորա Կլէնարվան Աւստրալիոյ այս երեք նաւահանգիստներուն մէջ միայն կրնար Անգլիա գրնացող նաւեր գտնել։ Արդարեւ Արեւելեան Թերակղզւոյն (Ըչչինհիւլէր Օրհանթալ)

ընկերութիւնը կանոնաւոր չոգենաւական գիծ մ'ունի ընդ մէջ մայրաքաղաքին և այլ նաւահանգիստներու։

Արդ ի՞նչ պիտի ընէին։ Նաւո՞ւ սպասել։ Բայց այդ սպասում կրնար երկար ժամանակ տեւել, վասն զի Թուոֆոլտի ծովածոցն յաճախակալ տեղ մը չէ։ Շատ նաւեր բացէն կ'անցնին՝ առանց հոն հանդիպելու։

Երկար խորհրդակցութենէ ջնին, մինչ կ'էնարվան որոշելու վրայ էր որ Սիտնէ երթան ծովեզերեայ ճանբաներէ, Բականէլ առաջարկ մ'ընէ, զոր ոչ ոք կ'սպասէր։

Ախարհագիրն ալ իր կողմէ այդ տուած էր Թուոֆոլտի ծովածոցին։ Գիտէր թէ փոխադրութեան միջոց կը պակսէին Սիտնէ և Մէլպուրն երթալու համար. բայց նաւահանգստին մէջ խարխեալ երեք նաւերէն մին Օքլանտ երթալու կը պատրաստուէր, Նոր-Զէլանտայի հիւսիսային Իքանա-Մաուի կղզւոյն մայրաքաղաքն։ Արդ, Բականէլ առաջարկեց վարձել զայն նաւ և Օքլանտ երթալ, ուստից դիւրին էր Եւրոպա վերադառնալ Թերակղզական ընկերութեան չոգենաւերով։

Այս առաջարկ ինկատ առնուեցաւ։ Բականէլ այս անգամ չպաշտպանեց գիւր առաջարկ յորդառատ փաստերով, ինչպէս որ սովորութիւն ունէր. այլ միայն յայտնեց,

և աւելցուց թէ հինգ-վեց օրէն աւելի չէր տեւեր նաւարկութիւնն։ Արդարեւ Նոր-Զէլանտա հազար մղոնի չափ հեռի էր Աւստրալիայէն։

Զարմանալի զուգադիպութեամբ, Օքլանտ ալ հզդիւ երսուն-եօթներորդ զուգահեռականին վրայ կը գտնուէր, որուն յաճառաբար կը հետեւէին հետախոյզք Աւրաքանիոյ ծովեզրէն ի վեր։ Անշուշտ, աշխարհագիրն, առանց իբր կողմնակալ համբաստանուելու, կրնար այս զուգադիպութենէն նպաստաւոր փաստ մը հանել իր առաջարկին։ Եւ արդարեւ յոյժ բնական առիթ մ'էր այս՝ Նոր-Զէլանտայի բոլոր նաւահանգիստներն այցելու։

Սակայն Բականէլ չուզեց օգուտ քաղել այս առաւելութենէ։ Երկու յաջորդական ձախողանքէ յետոյ չէր ուզեր անշուշտ երրորդ մեկնութիւն մը տալ ծովէն ելած գրութեան. մանաւանդ որ ի՞նչ մեկնութիւն կրնար հանել։ Վճռական կերպիւ ըսուած էր անոր մէջ թէ «գտնաք երկիր» մը ապաստանարան եղած էր Կրանթ նաւապետին, և ոչ կղզի մը։ Արդ Նոր-Զէլանտա կղզի մ'է։ Այս բան վճռական կ'երեւէր։ Ինչ և իցէ, այս կամ ուրիշ որ եւ է պատճառաւ, Բականէլ նոր հետախուզութեան մը գաղափար չյարեց Օքլանտ եր-

թալու առաջարկին։ Միայն պիտել տուաւ թէ կանոնաւոր հաղորդակցութիւնը կայնի ընդ մէջ այդ կզզւոյ և Մեծին-Բրիտանիոյ, և թէ դիւրին էր օգուտ քաղել անոր։

Ձոն Մանկլա պաշտպանեց Բականէլի առաջարկն և ընդունելու խորհուրդ տուաւ, որովհետեւ չէին կրնար ոտասել նաւու մը կեղակարծ գալուտեան ի Թուուֆալտ-Պէյ։ Բայց, աւելի առաջ չգնացած, պատշաճ դատեց երթալ տեսնել աչխարհագրին նշանակած նաւը։ Կէնարվան, հապարապետը, Բականէլ, Ռոպէրթ և ինք մակոյկ մը նստան և քանի մը թեւճակի հարուածով հասան այն նաւին քով, որ ծովափէն չորս հարիւր մեթրի չափ հեռի երկաթ նետած էր։ Երկերիւր յիսուն տակառաչափնոց երկկայմ մ'էր Մ-ոռոռէլ անուամբ։ Առաւինեայ նաւարկութիւն կ'ընէր Աւստրալիոյ և Նոր-Զելանտայի այլեւ այլ նաւահանգիստներուն միջեւ։ Նաւապետը բաւական կոպտութեամբ ընդունեց իր այցելուները։ Կարմիր ու խոշոր երեսներ, հաստ ձեռներ, ճմլեալ քիթ մը, պայթեալ աչքեր, ծխաքարշէ աղտոտած չրթունք, և սոսնց ամենուն հետ բիրտ դէմք մը՝ տխուր անձնաւորութիւն մը կ'ընէին պ. Լէվել Հալէյ։ Բայց ընտրութիւն ընելու ժամանակ չէր, և քանի մը աւուր նաւարկութեան համար պէտք չկար բարակը փնտռելու։

—Ի՞նչ կ'ուզէք, հարցուց Ուիլ Հալէյ իր նաւը մտնող անծանօթներուն։

—Նաւապետը, պատասխանեց Ձոն Մանկլա։

—Ես եմ, ըսաւ Հալէյ։ Ուրի՞չ։

—Մ-ոռոռէլ Օքլա՞նտ պիտի երթայ։

—Ա՛յո՛։ Ուրի՞չ։

—Ի՞նչ կը տանի։

—Ինչ որ կը վաճառուի ու կը գնուի։ Ուրի՞չ։

—Ե՞րբ պիտի երթայ։

—Վաղը, ցերեկի մակընթացութեան ժամանակ։ Ուրի՞չ։

—Ուղեւոր կ'առնո՞ւ։

—Ուղեւորը գիտէ, եւ եթէ գոհ կը լինի մեր փայտեայ սկուտեղով թանէն, յորմէ ամենս ալ խառն կ'ուտենք։

—Ուտելիքնին հետ կը բերեն։

—Ուրի՞չ։

—Ուրիչ ի՞նչ։

—Ա՛յո՛, քանի՞ հոգի են։

—Իննն, որոց երկուքը տիկնայք։

—Խցիկներ չունի՞մ։

—Նաւուն գոգն իրենց կը տրուի և կը չատանան անով։

—Ուրի՞չ։

—Կ'ընդունի՞ք, ըսաւ Ձոն Մանկլա, առանց չփոթելու նաւապետին քաղաքավարութիւնէն։

—Տեսնենք, պատասխանեց Մոթօ-ոէի հրամանատարը։

Ուիլ Հալլէյ մէկ երկու պտոյտ ըրաւ թնդացնելով տախտակամածն իւր երկաթագամ խոչոր կոշիկներով։ Յետոյ յանկարծ Ջոն Մանկլսի վրայ եկաւ։

—Ի՞նչ կը վճարեն, հարցուց։

—Ի՞նչ կ'ուզէք, պատասխանեց Ջոն Մանկլս։

—Ցիսուն լիրա։

Կէննարվան հաւանութեան նշան մ'ըրաւ։

—Լա՛ւ, յիսուն լիրա, պատասխանեց Ջոն Մանկլս։

—Բայց լոկ ուղեւորութիւն, աւելցուց Ուիլ Հալլէյ։

—Լոկ ուղեւորութիւն,

—Ուտելիքը զատ։

—Զատ։

—Շատ աղէկ։ Ուրի՞շ, ըսաւ Հալլէյ ձեռքն երկնցնելով։

—Ի՞նչ։

—Գրաւ։

—Ասոր կէսը, քսան-հինգ լիրա, ըսաւ Ջոն Մանկլս համրելով ոսկիները, զորս Հալլէյ գրպանը նետեց առանց «չնորհակալ եմ» ըսելու։

—Վաղը կէս օրէն առաջ պատ պիտի

գտնուիք։ Գաք թէ չգաք, ես կը չուեմ։

—Պիտի գանք։

Այս պատասխանէն յետոյ Կէննարվան, հազարապետը, Ռոպէրթ, Բականէլ և Ջոն Մանկլս նաւէն իջան։ Ուիլ Հալլէյ և ոչխակ մատին ծայրը դպցուց գլխարկին, որ իւր կարմիր կեղծամին փակած էր։

—Ի՛նչ կոշտ մարդ, ըսաւ Ջոն։

—Իմ գործիս կուգայ, ըսաւ Բականէլ։ Ձշմարիտ ծովու գայլ մ'է։

—Ձշմարիտ ծովու արջ մը, պատասխանեց հազարապետը։

—Ես կը կարծեմ թէ, աւելցուց Ջոն Մանկլս, այս արջ ժամանակաւ մարդկային մարմնոյ առուտուր ըրած է։

—Մեզ ի՞նչ փոյթ, պատասխանեց Կէննարվան, քանի որ Մոթօ-ոէի հրամանատարն է, և Մոթօ-ոէ ալ Նոր-Զելանտա կ'երթայ։ Թուոֆալտ-Պէյէն մինչեւ Օքլանտ քիչ կը տեւենք գայն, իսկ Օքլանտէն անդին ոչ եւս կը տեւենք։»

Տիկին Էլէնա և Մարի Կրանթ ուրախութեամբ իմացան որ հետեւեալ օրը ճանապայ պիտի ելնէին։ Կէննարվան դիտել տուաւ անոնց թէ Մոթօ-ոէ հանգստաւէտ չէր ցնծոնի պէս։ Բայց այնչափ տառապանք կրող կանայք չէին վախնար մանր անհանգստութիւններէ։ Պ. Օլսինէթ հրաւիրուե-

ցաւ պատրաստել պէտք եղած նպարը։ Խեղճ մարդը, Տըխ-ոնի կորուստէն ի վեր, յաճախ ողբացեր էր դժբաղդ օրկին Օլ-պինէթն, որ Տըխ-ոնի մէջ մնացած էր, եւ հետեւաբար Քոնվիքաց վայրագութեան զոհ եղած էր չոգենաւին բոլոր պաշտօնէից հետ։ Սակայն և այնպէս տնտեսութեան պաշտօնն իր սովորական փութաջանութեամբ կը կատարէր, և «զատ ուտելիքն» այնպիսի ընտիր նպարներէ կը բաղկանար, որք երբէք տեսնուած չէին երկկայմին սեղանին վրայ։ Քանի մը ժամու մէջ պատրաստուեցան նպարեղէնք։

Նոյն միջոցին հողագործները սեղանաւորի մ'երթալով փոխանակդրեր կտրել կուտար, զորս Կլէնարվան Մէլպուրնի Ինէն Պանքային վրայ քաշել տուած էր։ Կ'ուզէր որ ունայն չտնուէր ոսկիէ, ինչպէս նաեւ զէնքէ ու ռազմամթերքէ։ Ուստի նոյեմբեր միւս գիներան։ Բայանէլ ալ Նոր-Զելանտայի պատուական քարտէս մը գնեց, զոր ձոնաթըն տպած էր Էտինպուրկի մէջ։

Միւրրատ տպաքինած էր։ Հազիւ կ'ըզգար իր վտանգաւոր վէրքին ցաւը։ Քանի մը ժամու նաւարկութիւն բաւական էր անոր կատարեալ առողջացման։ Կը յուսար խաղաղականի հոգւերով դարմանուիլ։

Ուիլսընի յանձնուեցաւ ուղեւորաց քնա-

կարանը պատրաստել Մ-ո-ո-ըի մէջ։ Անոր խոզանակի և աւելի հարուածներուն տակ նաւուն գոգը կերպարանափոխ եղաւ։ Ուիլ Հալլէյ, ուսերը թօթուելով, թոզ տուաւ նաւաստին որ ուզածին պէս ընէ։ Կլէնարվանի և անոր տիկնոջ և ընկերաց համար բնաւ փոյթ չունէր։ Մինչեւ իսկ անոնց անունը չէր գիտեր և հոգը չէր։ Պարզապէս բեռի յաւելուած մ'էին, որ յիսուն լիրա կը բերէին իրեն. իսկ չեմարանին մէջ լցուցած երկու հարիւր տակառակչիա սեկին չափ արժէք չունէին իր առջեւ։ Նախ սեկն և ապա մարդիկ։ Նաւապետ և միանգամայն վաճառական էր։ Իր նաւաստական արժանեաց գալով, բաւական հմուտ էր այն ծովերուն, զորս բուստի ժայռերն յոյժ վտանգաւոր կ'ընեն։

Օրուան վերջին ժամերուն մէջ Կլէնարվան ուզեց վերադառնալ ծովեզրին այն կէտը, զոր երեսուն-եօթներորդ զուգահեռականը կը կտրէր։ Երկու պատճառ կը մղէին զինքն առ այս։

Կը փափաքէր անգամ մ'ալ տեսնել նաւաբեկութեան ենթադրեալ տեղն։ Արդարեւ էյրթըն Պէյնէնէյի նաւաստեաց տասնապետն էր, և Պէյնէնէյ կրնար ստուգիւ խորտակած լինիլ աւստրալիական ծովեզերաց այս մասին վրայ, արեւելեան ծովեզ-

րին վրայ և ոչ աթեւմտեան : Ասոր պէտք չէր թեթեւութեամբ թողուլ այնպիսի կէտ մը, զոր ոչ եւս պիտի կրնային տեսնել :

Ակէ զատ, փոխանակ ՊրէՆէյի, գո՛նէ Տըֆֆան ընկած էր անդ Քոնվիքաց ձեռքը : Թերեւս կռիւ եղած էր անդ : Թերեւս կատաղի կռուոյ մը, բուռն դիմադրութեան մը նշաններ կը գտնուէին ծովեզրին վրայ : Եթէ Տըֆֆանի նաւաղները ծովամոյն եղան, անոնցմէ ոմանց դիակները չէի՞ն կրնար ցամաքը նետուած լինիլ ծովուն ալիքներէն :

Կլէնարվան, իր հաւատարիմ ձոնին հետ կատարեց զայս հետազօտութիւն : ՎէֆՆըլա օթեւանին պետն երկու մի տուաւ անոնց, և ճանբայ ելան Թուոֆոլտի ծովածոցը պատող ուղիէն :

Տխուր հետախուզութիւն մ'եղաւ : Կլէնարվան և ձոն կը ձիավարէին առանց խօսելու, բայց կը հսկային պիրար : Նոյն խորհրդածութիւնք, և հետեւաբար նոյն անձկութիւնք կը տանջէին անոնց միտքը : Ծովէն կրծեալ ապառաժները կը դիտէին : Զիրար հարցնելու և միմեանց պատասխանելու պէտք չունէին :

Ձոն Մանկլսի փոյթեռանդն ուշադրութեան վստահելով կրնանք հաստատել թէ ծովեզրին մէն մի կէտերը խղճմտաբար խուզուեցան, ամենափոքր խորշերը խնամով քննուեցան, ինչպէս նաեւ ծովափին զառիվայրերն և աւազուտ սարահարթերն, ուր խաղաղականի մակընթացութիւնք կըրնային բեկոր մը ձգել : Բայց ոչ մի նշանակ չգտնուեցաւ, որպէս զի այդ ծովեզերաց վրայ նոր հետազօտութիւններ ընելու առիթ ընծայէր :

Նաւաբեկութեան հետք չկար :

Գալով Տըֆֆանի, անոր ալ հետքը չկար : Ովկէանի եղերեայ Աւստրալիոյ այս մասը բովանդակապէս ամայի էր :

Սակայն ձոն Մանկլս ծովեզրին վրայ իջաւանման յայտնի հետք գտաւ, առանձին մխաիներու տակ նոր վառած կրակի մնացորդներ : Արդեօք բնիկներու թափառիկ ցե՞ղ մ'անցած էր քանի մ'օր առաջ : Ո՛չ, վասն զի ուրիշ նշանակ մը զարկաւ Կլէնարվանի աչքին և աներկբայապէս հաստատեց թէ Քոնվիքներ յաճախած էին ծովեզրին այն մասը :

Նշանակն էր գորշ և գեղին թիկնոցակ մը, մաշած, պատռտած, չարագոյժ գըրգռեակ մը ծառի մը տակ թողուած : Բէրթի պղաստարանին արձանագրական թուատոմարը կար վրան : Թիապարտն հոն չէր, բայց իր գծուծ ցնցոտին կը պատասխաներ իրեն համար : Այդ եղեռնական համագետ, թշուառականի մը հագուստ լի-

նելէ զկնի, կը փաէր այն ամայի ծովեզրին վրայ։

—Կը տեսնե՞ս, Ճո՛ն, ըսաւ Կլէնարվան, փոնվիքները մինչեւ աստ եկած են։ Եւ մեր Տըֆֆըի խե՛ղճ ընկերք...

—Այո՛, պատասխանեց Ճոն յուզեալ ձայնիւ, ատոյգ է որ ուռանց չոգենաւէն դուրս հանուելու սպաննուա՛ծ են...

—Թշուառակա՛ն փոնվիքներ, գոչեց Կլէնարվան. եթէ երբէք ձեռքս ընկնին, նաւապներուն վրէժը պիտի առնում ա-նանցմէ...։

Կակիծը խստացուցեր էր Կլէնարվանի դէմքը։ Քանի մը վայրկեանի չափ ծովուն անհունութիւնը դիտեց, որպէս զի թերեւս միջոցին մէջ կրուսեալ նաւ մը նշմարէր վերջին նայուածքով։ Յետոյ մարեցան աչերն, ինքնիրեն վերադարձաւ, և առանց բառ մ'աւելցնելու կամ չարժուում'ընելու էտէնի ճանբան բռնեց ձիարշաւ։

Միակ ձեւակերպութիւն մը կը մնար կատարել, այն էր անցած վերջին դէպքերը ծանուցանել տեղւոյն ոստիկան Թոմաս Պանքսի, և նոյն երեկոյին կատարուեցաւ։ Ոստիկանն հազիւ կրցաւ իր գոհունակութիւնը ծածկել՝ առեղծուած միջոցին։ Պարզապէս կ'ուրախանար Պէն Ճոյիսի և անոր հրոսախմբին չուած լինելուն վրայ։ Փոնվիքները

մեկնած էին Աւստրալիայէն, արդարեւ նոր ոճրագործութեան մը չնորհիւ, բայց վերջապէս չուած էին։ Այս կարեւոր լուրն անմիջապէս հեռագրեցաւ Մէլպուրնի և Սիտնէյի իշխանութեանց։

Իր յայտարարութիւնն աւարտելէ յետոյ Կլէնարվան վերադարձաւ ի Վէրնոըէ-օթէւան։ Ուղեւորք տխրութեամբ անցուցին գայն վերջին երեկոյ։ Իրենց միտքը կը թափառէր այս աղետալից երկրի վրայ։ Կը յիշէին այն գեղեցիկ յոյսերը զոր արդարապէս յղացած էին Պէրնուէյի հրուանդանէն մեկնած ժամանակնին, և որք դառնապէս անդնդատոյզ եղան Թուոֆոլի ծովածոցին մէջ։

Բականէլ ալ բուռն յուզման մ'ենթակայ եղած էր։ Ճոն Մանկլը, որ Սնուի-Բիվըրի դէպքէն ի վեր կը դիտէր զայն, կ'զգար որ աշխարհագիրը կ'ուզէր ու չէր ուզեր խօսիլ։ Քանի՛ քանի անգամ հարցումներ ըրած էր նմա, և պատասխան չէր ստացած։

Սակայն, նոյն երեկոյին, Ճոն, իր սենեակը առնելով զայն, հարցուց թէ ի՛նչ պատճառաւ յուզեալ էր այնչափ։

—Բարեկա՛մ իմ Ճոն, պատասխանեց Բականէլ խոստովանութեան կերպիւ, ոսվորակա-նէս աւելի բան մը չունիմ։

—Պարո՛ն Բականէլ, ըսաւ Ճոն, դուք

գաղտնիք մ՚ունիք որ կը մղձկէ զձեզ։

—Ի՞նչ ըսել կ՚ուզէք, գոչեց աշխարհագիրը չարժտակելով, ինձմէ չատ աւելի ուժով է։

—Ո՞վ ձեզնէ աւելի ուժով է։

—Ուրախութիւնս մի կողմէ, յուսահատութիւնս միւս կողմէ։

—Ուրեմն ուրախ և յուսահա՞տ էք միանգամայն։

—Այո՛, ուրախ և յուսահատ երթալ այցելու համար գՆոր-Ջելանտա։

—Արդեօք նշանա՞կ մ՚ունիք, հարցուց իսկոյն ձոն Մանկլս. արդեօք կորուսեալ չաւղին թելը ձե՞ռք անցուցիք։

—Մ՚է, բարեկամ իմ ձոն, Նոր-Ջել-Նոյեն ստէպ էվերտոռնոյ։ Բայց սակայն, վերջապէս դուք ծանօթ էք մարդկային բնութեան։ Բաւական է որ չնչէ ոք յուսալու համար։ Եւ իմ նշանաբանս է «քէրոյ, քէրոյ, (չնչիլ և յուսալ), որ աշխարհի ամենէն գեղեցիկ նշանաբաններէն գերազանց է։

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԹԱԼՈՒ ԵՐԿԻՆ ԱՆՑԵԱԼՆ

Հետեւեալ օրը, յունվար 27, Մոթոռաբիի ուղեւորք ղետեղեցան երկկայմին անձուկ գոգին մէջ։ Ռիւ Հալէյ չէր ուզած իր

խցիկը նուիրել ուղեւորուհեաց։ Անքաղաքավարութիւն մը որ ցաւալի չէր, վասն զի որջն արժանի էր արջուն։

Կէս օրը կէս ժամ անցած, նաւը ճանբայ ելաւ տեղատուութեան հետ։ Խարիսխը վարէն վեր ուղղակի քաշուելով դժուարութեամբ կորզեցաւ ծովուն յատակէն։ Հրաւային արեւելեան մեղմ քամի մը կը փչէր։ Առագաստք հետզհետէ պարզեցան։ Նաւուն հինգ նաւաստիներն յամր կը չարժէին։ Ռիլսըն ուզեց օգնել անոնց. բայց Հալէյ աղաչեց զայն որ հանգիստ կենայ և չխառնուի իրեն չվերաբերող գործերու։ Իւր սովորութիւնն էր իւր գործն ինքնին կատարել, և օգնութեան կամ խրատի կարօտ չէր։

Այս խօսք ձոն Մանկլսի ուղղեալ էր, զոր նաւուղղական ինչ ինչ գործողութեանց ճախողութիւնը կը ժպտեցնէր։ ձոն Մանկլս կրկնել չտուաւ Հալէյի դիտողութիւնը, բայց միտքը դրաւ արդեամբ՝ եթէ ոչ իրաւամբ՝ միջամտել, եթէ նաւաստեաց անյաջողակութիւնը վտանգի մէջ ձգէ նաւուն ապահովութիւնը։

Սակայն ժամանակն և հինգ նաւաստեաց բազուկները, նաւապետին հայհոյանքներով մարակեալ, յաջողեցան վերջապէս պարզել բոլոր առագաստները։ Բայց, այ-

սու հանդերձ, նաւը ծանր կ'երթար. յա-
ռաջակողմեան ուռուցիկ ձեւը, յատակին
լայնութիւնը, յետակողմեան ծանրութիւնը
գանդաղ նաւ մ'ըրած էին, կատարեալ
տիպար փայտէ մուճակի:

Հարկ էր համբերել: Բարեբաղդաբար,
որչափ և յոգի նաւարկող մը լինէր Մա-
ժէ, հինգ և առաւելն վեց օրէն կրնար
հասնիլ Օքլանտի նաւահանգիստն:

Իրիկուան ժամ եօթնին աներեւոյթ ե-
ղան Ալատրալիոյ ծովախուներն և Էսէնի
փարոսը: Ծովը, բաւական ալեծուփ, կը
յոգնեցնէր նաւն, որ կոհակաց խոռոչնե-
րուն մէջ կ'ընկնէր ծանրութեամբ: Ուղե-
ւորք բուռն ցնցումներ կրեցին, որք նա-
ւուն դոզին մէջ նստիլն յոյժ տաժանելի ը-
րին. սակայն տեղացող յորդ անձրեւին
պատճառաւ չէին կրնար տախտակամածին
վրայ ելնել: Ուստի խիտ բանտարկութեան
մը դատապարտեալ տեսան զիրենք:

Իւրաքանչիւր ոք յայնժամ իր մտածու-
թեանց հոսանքին տուաւ ինքզինք: Քիչ
խօսակցեցան: Հարիւ տիկին Էլէնա և Մա-
րի Կրանթ քանի մը խօսք փոխանակեցին:
Կլէնարվան չէր նստեր, կ'երթար կուգար.
իսկ հազարապետն անշարժ նստած էր:
Ճոն Մանկլս և Ռոպէրթ մերթ ընդ մերթ
տախտակամածին վրայ կ'ելնէին ծովը դի-

տելու համար: Իսկ Բալանէլ, խորշ մը
քաշուած, տարտամ և կցկտուր խօսքեր կը
մրմնջէր:

Ի՞նչ կը մտածէր պատուարժան աշխար-
հագիրը: Նոր-Զելանտայի վրայ կը խորհէր,
ուր ճակատագիրը կը տանէր զինք: Նորա
պատմութիւնը կը յօրինէր իւր մտաց մէջ,
և այդ չարաշուք երկրին անցեալն իւր ա-
չաց առջեւ կը ներկայանար:

Բայց այդ պատմութեան մէջ կա՞ր իրո-
ղութիւն մը, դէպք մը, որ այդ կղզիները
գտնողներուն արտօնութիւն տար իրր ցա-
մաք երկիր նկատելու: Ժամանակակից աշ-
խարհագիր մը, նաւուղիղ մը, կրնա՞ր զայդ
անուն տալ անոնց: Ինչպէս կը տեսնուի,
Բալանէլ ծովէն ելած թուղթին մեկնու-
թեանը կը վերադառնար միշտ: Նախապա-
շարում մը, հաստատուն գաղափար մ'ե-
ղած էր իրեն: Բոթագոնիայէն յետոյ, Ա-
ւրստրալիայէն յետոյ, իւր երեւակայու-
թիւնը, միակ բառէ մը հրապուրուելով,
Նոր-Զելանտայի վրայ սեւեռած էր: Բայց
կէտ մը, միակ կէտ մը կը կասեցնէր զինքն
այս ճանապարհին մէջ:

«Քոնըին . . . քոնըին . . . կը յեղյեղէր.
«քոնթինան» (ցամաք երկիր) ըսել է:

Եւ ակաւ մտաքն յիշել այն նաւապետ-
ներն որք հարաւային ծովուց այս երկու

մեծ կղզիները գտած կամ այցած են։

1642 դեկտեմբեր 13 ին, հոլանտացի Թասման նաւապետը, Վան-Տիէմէնի հողը գտնելէն յետոյ՝ եկաւ Նոր-Զելանտայի անծանօթ ցամաքն ելաւ, և քանի մ'օր ծովեզրին երկայնութեամբ նաւարկելէ զկնի, դեկտեմբեր 17 ին իւր նաւերն ընդարձակ ծովածոց մը մտան, որոյ ծայրը նեղ անց մը կար ընդ ւէջ երկուց կղզեաց։

Հիւսիսային կղզին էր Իքա-Նա-Մաուի, Զելանտական բառեր, որք «Մաուի ձուկ» ըսել են։ Հարաւային կղզին էր Մահաի-Բունա-Մու, այսինքն՝ «կանանչ յասպիկն արտադրող վիշապաձուկ» (*)։

Աբել Թասման իւր մակոյկները ցամաքը ղրկեց, և ետ դարձան երկու նաւակաց հետ, որք բնիկներէ բաղկացեալ չառաչոտ նաւազներ ունէին։ Այդ վայրենիք միջահասակ էին, թուխ դեղին մորթով, ցըցուեալ ոսկերօք, խուզոտ ձայնիւ, սեւ մազերով, որք դլխոնուն վրայ կապուած էին ճարոնական ձեւով, և որոց վրայ խոշոր ճերմակ փետուր մը ցցուած էր։

Եւրոպացւոց և բնիկաց այս առաջին

(*) Ժամանակէ յետոյ հասկցուեցաւ թէ Նոր-Զելանտայի բնիկ անունն է Թէ-Քա-Մաուի, Թուահի-Բունա-Մու կեդրոնական կղզւոյն մի մասին անունն է։

տեսակցութիւնն երկարատեւ բարեկամական յարաբերութիւն կը խոստանար։ Բայց հետեւեալ օրն, երբոր Թասմանի մակոյկներէն մին՝ ցամաքին աւելի մօտ խարսխավայր մը գտնելու կ'երթար, բազմաթիւ բնիկներով լի եօթն նաւակ մակոյկին վրայ յարձակեցան։ Մակոյկը մէկ կողմին վրայ շրջեցաւ և ջրով լցուեցաւ։ Նաւաստեաց տասնապետը կոկորդէն զարնուեցաւ կոչտ նիզակով մը, և ծովն ընկաւ։ Նորա վեց ընկերներէն չորսն սպաննուեցան. մնացեալ երկուքն և տասնապետը լողալով նաւերուն մօտեցան և ծովուն մէջէն վեր առնուելով ազատեցան։

Այս ձախող դէպքի վրայ, Թասման՝ բնիկներէն վրէժ առնելու համար՝ քանի մը հրացան արձակեց, որք հաւանաբար չդպան անոնց, և մեկնելով այն ծովածոցէն, որոյ անունը «Ծովածոց կոտորածի» մնաց, արեւմտեան ծովեզրէն վեր ելաւ և յունվար 5ին երկաթ նետեց հիւսիսային հրուանդանին մօտ։ Անդ, ոչ միայն ծովեզրը ծեծող ալեաց ընկկման բռնութիւնն, այլ եւ վայրենեաց թշնամութիւնը թոյլ չտուին նմա ջուր առնուլ, և վերջապէս մեկնեցաւ այն ծովեզրներէն, զորս Սթէյթըն-Լանտ անուանեց, այն է երկիր վիճակաց, ի պատիւ Հոլանտական պետութեան։

Արդարեւ հոլանտացի նաւապետը կ'ենթադրէր թէ այդ հողերը կը յանգէին այն հսկայական կղզեաց, որը գտնուած էին Թէյի արեւելեան կողմն, Ամերիկայի հարաւային ծայրը։ Կը կարծէր թէ «Հարաւային մեծ ցամաքը» գտած էր։

«Բայց, կ'ըսէր Բականէլ, ինչ որ տանեօթներորդ դարու նաւապետ մը «Ցամաք երկիր» կոչած էր, տաս-իններորդ դարու նաւապետ մը չկրցաւ այնպէս կոչել։ Ասպիսի սխալ մը չկրնար ընդունուիլ։ Ո՛չ, բան մը կայ որ կը վրիպի իմ ծանօթութենէս։»

Դարէ մ'աւելի ժամանակ Թասմանի դիւտը մոռցուեցաւ, և Նոր-Զելանտա անդոյ կը թուէր, երբոր Ֆրանսացի Մարիվիլ նաւապետը գտաւ զայն լայնութեան 36° 37 աստիճանին տակ։ Իսկզբան դժգոհելու պատճառ մը չունեցաւ բնիկներէն. բայց աւելնաբուռն հովերու հանդիպեցաւ, և վոթորիկի մը միջոցին իր հիւանդները կրող մակոյկ մը Ռըֆիւժի ծովածոցին ցամաքն ընկաւ։ Անդ, բնիկներու ցեղապետ մը, Նակի-Նուի, մարդասիրաբար հիւրընկալեց Ֆրանսացիներն։ Ամեն բան յաջող գնաց մինչեւ այն վայրկեանն, ուր Մարվիլի մակոյկներէն մին դողցուեցաւ։ Մարվիլ ի զուր պահանջեց զայն, և վերջապէս

գիւղ մը հրկիզելով պատժեց այս գողութեան համար։ Սարսափելի և անիրաւ վրէժխնդրութիւն, որ մասամբ պատճառ եղաւ այն արիւնռուչտ քինահանութեանց, որոց թատր պիտի լիներ Նոր-Զելանտա։

1769 Հոկտեմբեր 6ին Հոյակապն Քուք երեւցաւ այդ ծովեզերաց վրայ։ Թաուէ-Ռուա ծովախորշին մէջ երկաթ նետեց իր Ինդէվոր նաւով և չանաց քաղցրութեամբ գրաւել բնիկներուն սիրտը։ Բայց մարդոց հետ լաւ վարուելու համար պէտք էր նախ իւր ձեռքն անցունել զանոնք։ Քուք քանի մը բնիկ գերի բռնեց և բռնութեամբ բարեբարեց անոնց։ Վերջապէս զանոնք ընծաներով և գդուանօք յղփացնելէ յետոյ ցամաքը վերադարձուց։ Շատ չանցաւ, բազմաթիւ բնիկներ, հրապուրեալ անոնց պատմութիւններէն, Քուքի նաւը գնացին և փոխանակութիւններ ըրին Եւրոպացւոց հետ։ Քանի մ'օր ետքը, Քուք Չաուքսի ծովախորշը գնաց, որ հիւսիսային կղզւոյն ելքին աղեղնաձեւ ընդարձակ ծոց մ'է։ Անդ՝ պատերազմասէր, կառանչոտ և խիզախ բնիկներու պատահեցաւ, որոց ցոյցերն այնչափ յառաջ գնացին, որ թնդանօթի հարուածով մը հանդարտել հարկ եղաւ։

Հոկտեմբեր 21ին, Ինդէվոր երկաթ նետեց Թոլոյ-Մալուի ծովածոցն, ուր երկու

հարիւր հոգիէ բաղկացեալ խաղաղ ժողովուրդ մը կը բնակէր։ Նաւուն բուսաբաններն արդիւնաւէտ երկրախուզութիւններ ըրին երկրին մէջ, և բնիկներն իրենց կուրերով ծովեզրը փոխադրեցին կանոնք։ Քուք երկու գիւղ այցեց, որք ցցապատնէչներով, որմերով և կրկին խրամներով չրջապատեալ էին և ցոյց կուտային թէ բնակիչք քաջահմուտ էին բանակադրութեան։ Ա.յս ամրոցներէն կարեւորագոյնն ապառաժի մը վրայ կառուցուած էր, որ մեծ մակընթացութեանց ժամանակ կատարեալ կղզի մը կը դառնար, և լաւագոյն իսկ քան զկղզի. վասն զի ոչ միայն ջուրերը կը չրջապատէին զայն, այլ եւ մռնչելով կ'անցնէին վրան ոտնաչափ բարձրութեամբ կամարի մը մէջէ, որոյ վրայ կառուցեալ էր այս անմատչելի ամրոց։ Քուք, հինգ ամիս անդ կենալով, բաղում հետաքրքրաշարժ նիւթեր, բնիկ տուներ, և ազգաբանական ու ապրուստական գրութիւններ հաւքելէ զկնի, իր անուանը տուաւ երկու կղզիները բաժնող նեղուցին, և մեկնեցաւ Նոր-Զելանտայէն, զոր վերատին պիտի գտնէր իր ապագայ ուղեւորութեանց մէջ։

Արդարեւ, 1773ին, մեծ նաւապետը վերատին երեւցաւ Հաւքսի ծովախորշին մէջ, և մարդակերութեան տեսարաններու

ներկայ գտնուեցաւ, որոց իւր ընկերները պատճառ եղան։ Իւր սպաներէն ոմանք դեռատի վայրենւոյ մը կրճատեալ անդամները գտնելով գետնին վրայ, ժողվեցին նաբը տարին և եփել տալով բնիկներուն ընծայեցին, որք որկորստաբար վրան ընկնելով լափեցին։ Տ/ո՛ւր քմահաճոյք, որով Քուքի սպաներն այսպէս մարդակերական ճաշի մը խոհարար ըրին զիրենք։

Քուք, իւր երրորդ ուղեւորութեան միջոցին, դարձեալ այցեց այս երկիրներ, զորս մասնաւորապէս կը սիրէր, և որոց ջրագրական քարտէսն ամբողջացնել կը ջանար։ Վերջին անգամ մեկնեցաւ 1777 փետրվար 25 ին։

1791ին, Վանքուվէր քսանօրեայ դադար մ'ըրաւ Սոմպր ծովախորշին մէջ, առանց որ եւ է օգուտ մը քաղելու բնական կամ աշխարհագրական գիտութեանց համար։ 1793ին, Անթրըքասթրոյ քսան-հինգ հղոն ծովեզը պննեց և գծագրեց Իքա-Նա-Մաուիի հիւսիսային մասին մէջ։

Հաւզէն և Տալրիմփ առեւտրական նաւապետք և անոնցմէ յետոյ Պատէն, Րիքարտսըն և Մուտի կարճ այցելութիւն մը տուին այդ կղզեաց, և տոքթոր Սավէյճ, հինգ չաբաթ բնակելով անդ, ուշագրաւ տեղեկութիւններ հաւքեց Նէոյ-Զելանտաց-

ւոց քարուցն և սովորութեանց վրայ ։

Նոյն տարին , այն է 1805ին , Բանկուվէ-Հու ցեղապետին որդին, հանճարեղն Տուա-Թարա , Եւրոպա ուղեւորեցաւ Ամէրիկա նաւով , որ Պէ-տէզ-Իլ ծովածոցին մէջ երկաթ նետած էր , և որուն կը հրամայէր Պատէն Նաւապետ ։

Տուա-Թարայի արկածները կրնան դիւցազներգութեան մը նիւթ ընծայել Մաւորի Հոմերի մը ։ Ամէնքն բեղմնաւոր եղած են աղետալի դէպքերով , անլրաւութեամբք , չարչարանօք ։ Խոստմնազանցութիւն , պատանդում , հարուած և վէրք , սոքա եղան դժբաղդ վայրենւոյն ստացած հատուցումն ի փոխարէն իւր բարի և հաւատարիմ ծառայութեանց ։ Ի՞նչ գաղափար ունեցաւ արդեօք այն մարդոց վրայ , որք քաղաքակրթեալ կը կոչեն կիրենք ։ Լոնտրա տարին զայն , յետին կարգի նաւաստի մ'ըրին , զոր անխնայ կ'աշխատցնէին նաւագք ։ Եթէ վերապատուելի Մարստէն չգթաբ անոր վրայ և չօգնէր , խեղճը պիտի մեռնէր վաստակաբեկ ։ Այդ քարոզիչ համակրութիւն ղգաց դեռատի վայրենւոյն վրայ , տեսնելով անոր ուղիղ դատողութիւնը , քաջութիւնը , քաղցր , հնորհալի և մարդասէր բնաւորութիւնը ։ Մարստէն քանի մը պարզ տորեն և մշակութեան գործիներ ձեռք բե-

բաւ իւր պաշտպանելոյն համար , որպէս զի իւր հայրենի երկիրը վերադառնալով երկրագործութիւն ընէ · բայց գողցան անոր այս փոքրիկ հարստութիւնը ։ Նորէն դըժբաղդութիւնը և տառապանք ընկճեցին զինէք Տուա-Թարա մինչեւ 1814 , յորում վերահաստատեալ կը գտնենք զինք իւր նախնեաց երկրին մէջ ։ Եւ երբ այնչափ յեղականութեանց պատուղը քաղելու վրայ էր , և կը պատրաստուէր բարեկորոգել զարիւնախանձ Ջելանտա , մահը վրայ հասաւ քսանութամեայ հասակին մէջ ։ Ա.յս անդարմանելի դժբաղդութեան պատճառաւ քաղաքակրթութիւնն երկար տարիներ ետ մնաց այդ երկրի մէջ ։ Ոչինչ կրնայ բռնել հանճարեղ և բարի մարդու մը տեղն , որ բարոյն սէրն հայրենեաց սիրոյն հետ կը լծորդէ իւր սրտին մէջ ։

Մինչ 1816 անտես մնաց Նոր-Ջելանտա ։ Նոյն տարին Թոմսըն և յաջորդ տարին Լիտիար Նիքոլաս , 1819ին Մարստէն , այդ երկու կղզեաց այլ եւ այլ կողմերը պըտտեցան , և 1820ին , Րիչար Քրիւիչ , հետեւակազօրաց ութսուն-չորրորդ գնդին մէջ հարիւրապետ , տասն ամիս անդ կեցաւ , կարեւոր ուսումնասիրութիւններ ըրաւ բնիկներուն բարուց և սովորութեանց վրայ ։

1824ին, Տիւբէրէ, հրամանատար Քոփէլ մարտանաւին, տասն-հինգ օր կեցաւ Կըզըլեաց ծովածոցն, և գոհ եղաւ բնիկներէն։

Անկէ յետոյ, 1827ին անգլիական Մէդիթերրանաւն հարկադրեցաւ ինքզինք պաշտպանել առարառութեան և սպանութեան դէմ։ Նոյն տարին Տիւեռն նաւապետն երկիցս դադար ընելով անդ, սիրալիր ընդունելութիւն գտաւ։

1827 մարտին Ա. Ընդրլոպի հրամանատար մեծանուն Տիւմոն-տ'Իւրվիլ կրցաւ՝ առանց զինուց՝ քանի մը գիշեր անցուցանել բնիկներուն մէջ, ընծայներ և երգեր փոխանակել, նոցա տաղաւարներուն մէջ ննջել, և առանց բնաւ արգելքի չարունակելիւր երկրաչափական աշխատութիւններն, որք գեղեցիկ քարտէսներ ընծայեցին ծովային պաշտօնատան թանգարանին։

Ընդհակառակն, հետեւեալ տարին, անգլիական Հէյվ երկկայմին հրամանատար Ճոն Ճէյմս, կղզեաց ծովախորշն հանդիպելէ զկնի, դէպ յԱրեւելեան հրուանդան նաւարկելով, շատ վիշտ կրեց Էնարարոյ անուն նենգաւոր ցեղապետէ մը։ Իւր ընկերներէն ոմանք կատամահ եղան։

Այս հակառակ դէպքերէ, քաղցրութեան և խժդժութեան դարձադարձ յատկութիւններէ պէտք է եզրակացնել, թէ

Նոր-Զելանտացւոց վայրագութիւնները վրիժառութեան արդիւնք էին։ Բարի կամ չար նաւապետք բարի կամ չար ընդունելութիւն գտած են։ Եղան արդարեւ քանի մ'անիրաւ յարձակմունք բնիկներուն կողմէ, բայց առաւել Եւրոպացւոց կողմէ գրգռեալ վրէժխնդրութիւնք էին։ Դժբաղդաբար, պատիժն անոնք կրեցին որք արժանի չէին։ Իւրվիլլէն յետոյ, Նոր-Զելանտայի ցեղագրութիւնն ամբողջացաւ քաջայանդուգն երկրաչափի մը ձեռամբ, որ քսան անգամ պտըտեցաւ զրովանդակ աշխարհ, թափառայած մը, գիտութեան գնչու մը, Իրլանդիացին։ Երկու կղզեաց անծանօթ մասերը չրջեցաւ, առանց բնաւ դժգոհութիւն մ'ունենալու բնիկներէն, բայց մարդակերական տեսարաններու ներկայ գըտնուեցաւ յաճախ։ Նոր-Զելանտացիք գիրար կ'ուտէին գարշելի հեշտասիրութեամբ։

Նոյնը տեսած է նաեւ Լարլաս նաւապետն 1831ին, կղզեաց ծովախորշին մէջ դադար ըրած ժամանակ։ Արդէն կռիւներն աւելի ահաւոր եղած էին, վասն զի վայրենիք հրազէն գործածել սկսած էին նշանաւոր ճշդութեամբ։ Այս պատճառաւ Քանա-Մաուիի ծաղկեալ և բազմամարդ երկիրները խորին ամայութեանց փոխուեցան։ Ամբողջ ցեղեր բնաջինջ եղած էին, խորո-

ված և կերուած ոչխարաց հօտերու պէս։

Քարոզիչք ընդունայն աշխատեցան յաղթել այդ մարդախանձ բնազդմանց։ 1808 էն սկսեալ, Անգլիոյ Միսիոնարական Ընկերութիւնն իր ամենէն ճարպիկ գործակատարները —այս անուն կը վայլէ տալ անոնց— ղրկած էր հիւսիսային կղզւոյն գըլխաւոր կայարանները։ Բայց Նոր-Զելանտացւոց բարբարոսութիւնն հարկադրեց զնա դադրեցնել քարոզչութիւնները։ 1814ին վերջապէս Պ. Մարսդէն, Տուա-Թարայի պաշտպանն, և Պ. Պ. Հոլլ և Քինկ կըղզեաց ծովածոցն եկան, և երկու հարիւր ակրոն հող գնեցին երկրին ցեղապետներէն, ի գին տասն-երկու տապարի։ Անդ հաստատուեցաւ քարոզչական ընկերութեան կեդրոնավայրն։

Ի սկզբան դժուարութիւններ կրեցին։ Բայց ի վերջոյ բնիկներն յարգել սկսան քարոզչաց կեանքն, և անոնց խնամքն ու վարդապետութիւններն ընդունիլ։ Քանի մը վայրագ բնիկներու բարքն ամոքեցաւ. և բարեփոխութեան դպացումն արթնցաւ այդ դժնեայ սրտից մէջ։ Մինչեւ իսկ, 1821ին Զելանտացիք պաշտպանեցին իրենց «Աէյէ»-ներն, այսինքն վերապատուելիներն, ընդդէմ վայրենի նաւաստեաց, որք կը նախատէին զանոնք և թոպել կ'սպառնային։

Այսպէս ահա, քիչ քիչ և հետզհետէ բարգաւաճեցան քարոզչութիւնք, հակառակ Իորթ Ձէքսընէն փախչող Փոնվիքաց ներկայութեան, որք բնիկ ժողովրդեան բարոյականը կ'աւրէին։

1831ին, «Աւետարանական քարոզչութեանց լրագիրն» երկու մեծ հաստատութիւն կը յիշէր. մին ի Փլղի-Փիդի, Կըղեաց ծովածոցը վազող Ջրանցի մ'եզրը, միւսն ալ ի Բայի-Չիա, Քավա-Քավա դեմին եզրը։ Քրիստոնէութեան դարձած բնիկներն՝ ուղիներ գծած էին Արիքիներուն առաջնորդութեամբ, հաղորդակցութեան ճանբայներ բացած էին անհուն անտառներու մէջէ, և կամուրջներ չինած էին հեղեղատներու վրայ։

Մէն մի քարոզիչ կարգաւ կ'երթար քաղաքակրթիչ կրօնը կը քարոզէր հեռաւոր ցեղերու մէջ, կնիւնէ կամ կեղեւէ մատուռներ կը կանգնէին, և այդ համեստ չինուածոց վրայ քարոզչական ընկերութեան դըրօշակը կը պարզուէր, որոյ վրայ Քրիստոսի խաչը նկարուած էր և սա բառերը գըրուած. «Ռոնկոյ-Էէ», որ Աւետարան կը նշանակէ Նոր-Զելանտական լեզուաւ։

Տարաբաղդաբար, քարոզչաց ազդեցութիւնը չկրցաւ իրենց հաստատութիւններէն անդին տարածիլ։ Ժողովրդական բոլոր

թափառիկ մասն անմատչելի մնաց անոնց գործողութեան: Մարդակերութիւնը քրիստոնէից մէջ միայն վերցած է, բայց և այնպէս այդ նորադարձք իսկ չեն կրնար մեծ հրապոյրներու դիմանալ: Արեան բնազդումը կը թրթռայ անոնց սրտին մէջ:

Միւս կողմէ, պատերազմին անվախճան է այդ դուժ երկիրներու մէջ: Զելանտացիք չեն նմանիր ապուշ Աւստրալիացւոց, որք կը փախչին Եւրոպացւոց արշաւանացն առջեւ. կ'ընդդիմանան, կը պաշտպանեն գիրենք, կ'ատեն իրենց երկիրը գրաւողներն, և անբուժելի ատելութիւն մը մինչեւ այսօր անգլիացի դաղթականաց դէմ կը մղէ զանոնք: Այդ մեծ կղզեաց ապագան քուէի հարուած մ'է: Կա՛մ անմիջական քաղաքակրթութիւն մը կ'սպասէ զայն, կա՛մ երկար դարեր չարունակող խոր բարբարոսութիւն մը, զինուց բախտին համեմատ:

Այսպէս բականէլ, ուղեղն անհամբերութեամբ եռալով, Նոր-Զելանտայի պատմութիւնն յօրինած էր մտքին մէջ: Բայց այդ պատմութեան մէջ չկար բան մը, որ Թոյլ տար իրեն «քոնթինան» (ցամաք երկիր) անունը տալ այդ երկրին, որ երկու կղզիներէ կը բաղկանար. և եթէ ծովէն ելած դրութեան քանի մը բառերը զարթուցած էին անոր երեւակայութիւնն, +ոն-

ըլլն երկվանկն յամառութեամբ կը կասեցըներ զայն նոր մեկնութիւն մը տալու ճանբուն մէջ:

ԳԼՈՒԽ Գ·

ԿՈՏՈՐԱԾՔ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ

Յունվար 31ին, չուելէն չորս օր յետոյ, Մ+ո-ոլէ տակաւին չէր անցած Աւստրալիոյ և Նոր-Զելանտայի միջեւ սեղմեալ ովկէանին երկու երրորդն: Ուիլ Հալլէյ չատ հոգ չէր տաներ իւր նաւապետական պաշտօնին: Գործը նաւաստիներուն թողած էր: Շատ չէր երեւնար, և այս բան դժգոհութիւն չէր պատճառեր ուղեւորաց: Ոչ ոք կրնար ըսելիք գտնել, եթէ իւր ընդոր ժամանակն իւր խցիկին մէջ անցուներ: Բայց այդ բիրտ նաւապետ աւեն օր կ'աթբեներ ճիչով կամ ցքիով: Նաւաստիք ալ իրեն կը հետեւէին կամաւ. և երբէք նաւ մը Մ+ո-ոլէի չափ Աստուծոյ չնորհիւ ուղեւորած չէր:

Այս աններելի անհոգութիւն՝ անդուլ հսկողութեան կը հարկադրէր զՃոն Մանկլս: Միւրատի և Ուիլսըն քանի քանի անգամ ղեկն ուղղեցին՝ երբ բուռն հոսանքներ կողին վրայ պիտի պառկեցնէին նաւը: Մերթ

ընդ մերթ կը միջամտէր Ուիլ Հալլէյ, եւ բուռն հայհոյութիւններով կը կշտամբէր իւր երկու ղեկավար նաւաստիները։ Նոքա ալ, չհանդուրժելով, կը խորհէին բռնել նաւուն յատակը նետել զարբշիռն և այնպէս չարունակել նաւարկութիւնը։ Բայց Ճոն Մանկլս թող չէր տար և դժուարաւ կրնար հանդարտել անոնց արդար զայրոյթը։

Սակայն նաւուն այս վիճակ մտահոգութիւն կը պատճառէր նմա. բայց կէնարվանի երկիւղ չազդելու համար՝ հազարապետին և Բականէլի միայն խօսք բացաւ։ Մաք Նապս գրեթէ նոյն խորհուրդը տուաւ նմա, ինչ որ Միւլրաոի և Ուիլսըն տուած էին։

—Եթէ այդ միջոց օգտակար կը թուի ձեզ, Ճո՛ն, ըսաւ Մաք Նապս, պէտք չէ վարանիք տառ նձնել նաւուն հրամատարութիւնն, կամ, եթէ լաւագոյն կը դատէք, տնօրէնութիւնը։ Այս արբչիւ՝ մեզ Օքլանտ հանելէ յետոյ՝ վերստին տէր թող լինի իւր նաւուն, ապա թէ ոչ՝ կրնայ ի կորուստ մտնել նաւն, եթէ իւր հաճոյքն ուզէ։

—Անշուշտ, պարոն Մաք Նապս, պատասխանեց Ճոն, այդպէս պիտի ընեմ, եթէ հարկը պահանջէ։ Գիտի որ արձակ ծովուն մէջ ենք, քիչ մը հակաղութիւն կը

բաւէ. իմ նաւաստիքս և ես նաւուն տակամածէն չենք մեկնիր։ Բայց եթէ, ծովեզերեայ մօտ հասած ժամանակ, այս Ուիլ Հալլէյ ինքզինք չժողվէ, կը խոստովանիմ որ մեծ տագնապ պիտի պատճառէ ինձ։

—Ձէ՞ք կրնար ուղի տալ նաւուն, հարցուց Բականէլ։

—Դժուարին է, պատասխանեց Ճոն։ Կը հաւատա՞ք որ նաւային քարտէս մը չկայ այս նաւու մէջ։

—Ի՞նչ կ'ըսէք։

—Այո՛, չկայ։ Մաթեմատիկ առաջնեայ նաւարկութիւն միայն կ'ընէ ընդ մէջ Էտէնի և Օքլանտի, և այս Ուիլ Հալլէյ ա՛յն աստիճան քաջածանօթ է այդ ծովեզերեայ, որ քարտէսի պէտք չզգար։

—Կ'երեւակայէ անշուշտ թէ, պատասխանեց Բականէլ, իւր նաւը ճանբան գիտէ և կրնայ ինքնիրեն երթալ։

—Օ՛, օ՛, ըսաւ Ճոն Մանկլս, ես չեմ հաւատար ինքնին գնացող նաւերու, և եթէ Ուիլ Հալլէյ ցամաքին մօտերն ալ չարունակէ զիւր արբեցութիւն, մեծ տագնապի մէջ պիտի ձգէ զմեզ։

—Յուսանք որ խելքը գլուխը ժողվէ ցամաքին մօտ հասած ժամանակ։

—Ըսել է թէ, հարցուց Մաք Նապս, ի պահանջել հարկին դուք չպի՞տի կրնաք Օքլանտ տանիլ զայս նաւ։

—Առանց այդ ծովեզերաց քարտէսն ուսնենալու անհնարին է: Ծովափունքն յոյժ վտանգաւոր են: Նորվեկիոյ ծովեզերաց կը նմանին: Բազմաթիւ ժայռուտք կան, յորոց խուսափելու համար չատ փորձառութիւն պէտք է: Նաւ մը, որչափ և պնդակազմ լինի, չկրնար դիմանալ եթէ իւր ողնուցը զարնուի այն ժայռերէն միոյն, որք քանի մ'ոտնաչափ ջուրի տակ ծածկեալ են:

— Եւ այդպիսի բան մը պատահած ժամանակ, մէջիններդ ծովեզրին վրայ ապաստանելէ ուրիշ միջոց մը չունի՞ն:

— Այո՛, պարոն Մաք Նապս, եթէ օդը ներէ:

— Դժնդա՛կ կացութիւն, պատասխանեց Բականէլ. վասն զի Նոր-Զելանտայի ծովափունքն հիւրասէր չեն, և վտանգները նոյնչափ մեծ են նաեւ ծովափունքէն անդին:

— Մաուրիներուն վրա՞յ կը խօսիք, պարո՛ն Բականէլ, հարցուց Ճոն Մանկլս:

— Այո՛, բարեկամ. այդ ժողովուրդ հռչակաւոր եղած է Հնդկական Ովկիանի մէջ: Բնաւ չեն նմանիր երկչոտ կամ ապուշ Աւստրալիացւոց. ուշիմ և արեանարբու ցեղ մ'են, մարդկային մսի խենդ, անագորոն մարդակերք:

— Ուրեմն, եթէ Կրանթ նաւապետ

Նոր-Զելանտայի ծովեզերաց վրայ նաւաբեկած լինէր, խորհուրդ չպիտի տայիք մեզ որ զայն փնտռելու ելնէինք:

— Ծովեզերաց վրայ, այո՛, պատասխանեց աչխարհագիրը, վասն զի կարելի էր թերեւս գտնել ՊէլՌանէյի հետքը. բայց ներսի կողմերն, ո՛չ, վասն զի անօգուտ էր: Այդ չարաչուք երկիրները գնացող ամեն եւրոպացիք Մաուրիներուն ձեռքը կ'ընկնին և ազատուիլ չեն ունենար: Ես Թելադիր եղայ բարեկամաց՝ անցնիլ Բամբաներէն և Աւստրալիոյ ցամաք երկրէն. բայց երբէք խորհուրդ չեմ տար որ Նոր-Զելանտայի արահետներուն մէջ ոտք դնեն: Աստուծոյ աչն առաջնորդէ մեզ և Թող չտայ որ այդ ամեհի բնիկներուն ձեռքն ընկնինք երբէք:

Բականէլի երկիւղը չատ արդար էր: Նոր-Զելանտա սարսափելի համբաւ մ'ունի. Նորա գիւտը նչանակող ամեն միջադէպերու՝ արիւնռուչտ Թուական մը կրնայ տըրուիլ:

Նահատակեալ նաւապետաց ցանկը բաւական երկար է: Ամենէն առաջ, Աբէլ Թասման, իւր սպաննուած ու կերուած հինգ նաւաստիներէն սկսած է զիւր մարդակերական արիւնռուչտ տարեգրութիւն: Անոր ետեւէն՝ Թիւքնէյ նաւապետն և իւր մակոյկը վարող նաւաստիք նոյն բաղ-

դին հանդիպեցան։ Ֆովոյի նեղցին արե-
ւելեան կողմը, Սէրնէ-ֆով կիտորօանաւուն
հինգ նաւաստիք կեր եղան բնիկներուն ա-
տամանց։ Պէտք է յիշել նաեւ Պրոդըս երկ-
կայմին չորս նաւաստիներն, որ սպաննուե-
ցան Մուանոյի նաւահանգստին մէջ։ Նմա-
նապէս պէտք է յիշել Կէյթս զօրավարին մի
քանի զօրականներն և իտալական Մընիլլա
մարտանաւին երեք դասալիք զօրականներն,
և ապա գալ Մարիոն Տիւ Ֆրէյն նաւապե-
տին դառնապէս հռչակաւոր անուան։

1772 մայիս 11ին, Թուքի առաջին ու-
ղեւորութենէն յետոյ, Ֆրանսացի Մարիոն
Տիւ Ֆրէյն նաւապետն եկաւ Նոր-Զեղանտա-
յի Կղզեաց ծովածոցին մէջ երկաթ նետեց
իւր հրամայած Մասքարէն մարտանաւով եւ
Քրոզէ նաւապետին հրամայած Քասթրէ մար-
տանաւով։ Կեղծաւոր Զեղանտացիք յոյժ հա-
մակրական ընդունելութիւն մ'ըրին նորեկ-
ներուն։ Մինչեւ իսկ երկչոտ ձեւացան,
այնպէս որ բաղում ընծայներ, բարեկամա-
կան ծառայութիւններ, հանապազօրեայ
եղբայրակցութիւն, և բարեկամական յա-
րաբերութիւնք հազիւ կրցին ընտելացնել
զանոնք Ֆրանսական նաւերն երթեւեկե-
լու։

Իրենց սկզբը, խորամանկ Թաքուրի,
Յանկարուաներուն ցեղէն էր, եթէ պար-

տինք հաւատալ Տիւմոն տ'Իւրվիլի աստո-
ւածեան, և ազգական այն բնիկին՝ զոր նեն-
գութեամբ առեւանգած էր Սիւրվիլ, Մա-
րիոն նաւապետին հոն հասնելէն երկու
տարի առաջ։

Ս.յնպիսի երկրի մը մէջ, ուր ամեն Մա-
ուրիի պատուոյ պարտք մ'է արեամբ հա-
տուցում ստանալ իրենց եղած թշնամանաց,
Թաքուրի չէր կրնար մոռնալ իւր ցեղին ե-
ղած նախատինքն. ուստի համբերութեամբ
կ'սպասէր որ եւրոպական նաւ մը հասնէր
հոն։ Երբոր Մարիոն հասաւ անդ, Թաքու-
րի անմիջապէս որոշեց իւր վրիժառութիւնն
և գործադրեց վայրագ պաշարիւնութեամբ։

Ֆրանսացւոցմէ երկնչիլ կեղծելէ յետոյ,
Թաքուրի ամեն միջոց ի գործ դրաւ զանոնք
խաբուսիկ ապահովութեան մը մէջ քնացը-
նելու համար։ Ինք և ընկերներն յաճախ
մարտանաւերուն մէջ գիշերեցին։ Ընտիր
ճուկեր կը բերէին նաւապետին։ Իրենց կա-
նայքն և աղջկունքն հետերնին կ'առնուին
անկասկած։ Շատ չանցաւ, սպայից անուն-
ները սովրեցան և իրենց գիւղերն այցելու
հրաւիրեցին զանոնք։ Մարիոն և Քրոզէ, հը-
րապուրեալ անոնց բարեկամական առաջարկ-
ներէն, գնացին պտըտեցան քոլոր այն ծո-
վեզերեայ երկիրն, ուր չորս հազար քնա-
կիչք կային։ Բնիկներն անոնց առջեւ կը

դիմէին անդէն, և բացարձակ վտահութիւն ազդել կը ջանային։

Մարիոն, կզզեաց ծովածոցին մէջ երկաթ նետելով, դիտաւորութիւն ունէր Քոռֆէյի կայմերը փոխելու, որք յոյժ ձնասուած էին վերջին փոթորիկներէն։ Ուստի երկրին ներսերն հետազօտեց, և մայիս 23ին եղեւիններու գեղեցիկ անտառ մը գըտաւ ծովեզրէն երկու փարսախ հեռի, եւ նաւերէն մէկ փարսախ հեռաւորութիւն ունեցող ծովախորշի մը մօտ։

Անդ գործարան մը կազմուեցաւ, ուր նաւաստեաց երկու երրորդ մասը, տապարներով և այլ գործիներով զինեալ, գնացին ծառերը կտրեցին և ծովախորշը տանող ճանբաներն հարթեցին։ Մարիոն երկու ուրիշ կայան ընտրեց. մին Մոթու-Ուրոյ անուն կղզեակին մէջ, որ նաւահանգստին մէջ տեղն էր, և ուր փոխադրել տուաւ հիւանդներն և նաւերուն երկաթագործներն ու տակառագործները. միւսը մեծ ցամաքին վրայ, ովկէանի եզրը, նաւերէն մէկ ու կէս փարսախ հեռի։ Այս վերջին կայան կը հաղորդակցէր ատաղձագործաց բանակետղին հետ։ Այս ամեն կայաններուն վրայ կորովի և հաճոյակատար բնիկներ կ'օժանդակէին նաւաստեաց այլ և այլ աշխատութիւններուն։

Սակայն Մարիոն մինչեւ ցայն ժամ անտես չէր ըրած խոհեմութեան միջոցները։ Վայրենիք չէին կրնար երբէք նաւերը մրտնել զինեալ, և մակոյկներն ալ միշտ սպառազինեալ կ'երթային ի ցամաք։ Բայց Մարիոն եւ իւր ամենէն կատաճոտ սպայք խաբուեցան բնիկներուն սիրալիր ցոյցերէն, և Մարիոն հրամայեց զինաթափ ընել մակոյկները։ Քրոզէ ջանաց համոզել զՄարիոն որ ետ առնուր զայս հրաման, բայց չյաջողեցաւ։

Ասոր վրայ, Զելանտացւոց համակրանքն ու անձնուիրութիւնը կրկնապատկեցան։ Նոցա պետերն և սպայք սերտ մտերմութեամբ կապուեցան միւսներց հետ։ Թաքուրի բազմիցս նաւը բերաւ իւր որդին, և թող տուաւ որ ննջեց անդ։ Յունիս 8ին, Մարիոն, հանդիսաւոր այցելութիւն մը տալով բնիկներուն, «Մեծ Պետ» անուանեցաւ բովանդակ երկրին, և չորս սպիտակ փետուրք զարդարեցին նորա ճիերն ի նշան պատուոյ։ Երսուն-երեք օրեր անցան այսպէս մարտանաւերուն հոն հասնելէն ի վեր։ Կայմերուն չինութիւնը կը յառաջանար։ Ջուրի անտուկները կը լցուէին Մոթու-Ուրոյի աղբերակէն։ Քրոզէ անձամբ կը վարէր ատաղձագործաց կայանն, և երբէք ճեռնարկի մը յաջողութեան յոյսերը չէին կրնար առաւել հիմնաւոր լինիլ։

Յունիս 12ին, ժամ երկուքին, հրամատարին մակոյկը ձկնորսութիւն մ'ընելու պատրաստուեցաւ Թաքուրի գիւղին ստորոտը: Մարիոն մէջը նստաւ իւր վոտրիքուր և Լրհու անուն երկու երիտասարդ սպայից, կամաւորի մը, գինուց հարիւրապետին եւ տասներկու նաւաստեաց հետ: Թաքուրի և ուրիշ հինգ ցեղապետք ալ կ'ընկերակցէին նմա: Ոչինչ կրնար նախատեսել տալ զայն սարսափելի վտանգ որ պիտի հանդիպէր տասն-եօթն Եւրոպացւոց տասն-վեցին:

Մակոյկը ճանրայ ելաւ դէպի ցամաք, և չատ չանցած՝ անտեսանելի եղաւ երկու մարտանաւերէն:

Երեկոյին Մարիոն չվերադարձաւ նաւը պառկելու: Բայց ոչ ոք կասկած մ'ըրաւ: Ենթադրեցին թէ կայմերուն գործարանը գնացած և գիշերն անդ կեցած էր:

Հետեւեալ օրը ժամ հինգին Քաֆըչէի մակոյկն ըստ սովորութեան գնաց ջուր առնուլ Մոթու-Աւրոյ կղզիէն, և նաւը վերադարձաւ առանց որ և է պատահարի:

Ժամն իննին, Մոսթաֆէի պահակ նաւատին մարդ մը տեսաւ ծովուն մէջ, որ ուժասպառ լողալով դէպ ի նաւերը կուգար: Իսկոյն մակոյկ մը գնաց օգնութեան և առաւ նաւը բերաւ զայն:

Մարիոնի մակուկավարներէն մին էր, Թիւրնէ անուն: Կուչտին վրայ նիզակի երկու վէրք ունէր, և առջի օրը նաւէն մեկնող տասն-եօթն մարդոցմէն սա միայն ողջ մնացած էր:

Հարցաքննեցին զայն և չատ չանցած՝ իմացան սոսկալի եղերգին մանրամասնութիւնները:

Տարաբաղդ Մարիոնի մակոյկը գիւղին առջև հասեր էր առաւօտեան ժամ եօթնին: Վայրենիներն ուրախութեամբ դիմաւորեցին զայցելուներն, և իրենց ուսերուն վրայ բառնալով ցամաք հանեցին սպաներն ու նաւաստիներն՝ որք չէին ուզեր թրջիլ մակոյկէն ցամաք ելած ժամանակնին:

Իսկոյն վայրենիները, նիզակներով ու մահակներով զինեալ, անոնց վրայ յարձակեցան, մէկի դէմ տասն, և անխնայ կոտորեցին զանոնք: Թիւրնէ նաւաստին՝ նիզակի երկու հարուած կրելով՝ կրցաւ պըրծիլ իւր վրայ յարձակողաց ձեռքէն և թուփերու մէջ թաքչիլ: Անտի ականատես եղաւ քստմնելի տեսարաններուն: Վայրենիները ժերկացուցին մեռեալներն, անոնց փորը ճեղքեցին, և մանր մանր յօշոտեցին . . . :

Նոյն միջոցին, Թիւրնէ, առանց նշմարուելու ծովը նետուեցաւ, և վերջապէս տեսնուելով նաեւ առնուեցաւ Մոսթաֆէի մակոյկին միջոցաւ:

Այս անգք սարսափահար ըրաւ երկու մարտանաւուց նաւակները։ Վրէժխնդրութիւն գոչեցին միաձայն։ Բայց, մեռեալներուն վրէժն առնելէ առաջ, ողջերը պէտք էր ազատել։ Երեք կայան կար ցամաքին վրայ, զորս հազարաւոր արիւնախանձ վայրենիք, քաղցեալ մարդակերք, կը հրջապատէին։

Փրոզէ նաւապետին բացակայութեան պատճառաւ, որ գիշերը կայմերուն գործարանն անցուցած էր, նաւուն առաջին սպայն փութաց ձեռք առնուլ հարկ եղած ստիպողական միջոցները։ Մաթաբէնի մակոյկը ցամաք ղրկուեցաւ խումբ մը զօրականով, սպայի մը հրամատարութեան տակ, որ ամեն բանէ առաջ օգնութեան պիտի հասնէր ատաղձագործ հիւաններուն։ Մեկնեցաւ, և ծովեզրին երկայնութիւնը պատելով՝ Մարիոնի մակոյկը տեսաւ ցամաքին վրայ խրեալ։ Անդ ցամաք ելաւ։

Փրոզէ հրամանատարն, որ՝ ինչպէս ըսինք՝ բացակայ էր նաւէն, բնաւ տեղեկութիւն չուներ կոտորածէն։ Երբոր ժամ երկուքին միջոցները տեսաւ զօրախմբին յառաջանալն, զգաց թէ դժբաղդութիւն մը պատահած էր։ Դիմաւորեց զանոնք և իմացաւ եղելութիւնը։ Պատուիրեց որ բան մը չըսեն իր ընկերաց, զորս չէր ուզեր սրտաթափ ընել։

Վայրենիները, գումարտակներ կազմելով, գրաւած էին բոլոր բարձունքը։ Փրոզէ վերցնել տուաւ գլխաւոր գործիները։ Մբնացեալները թաղեց, կրակի տուաւ գործարանն, և սկսաւ նահանջել վաթսուն մարդոց հետ։

Վայրենիներն անոնց ետեւէն կ'երթային գոչելով. «Թաթաբէ մաշէ Մաբէն (1)։» կը յուսային՝ Մարիոնի մահը գուժելով՝ ահաբեկել նաւաստիները։ Սոքա, ընդհակառակն, կատղած, կ'ուզէին յարձակիլ թշնամեաններուն վրայ։ Փրոզէ հազիւ կըրցաւ զսպել զանոնք։ Երկու փարսախ ճանբայ ընելէ յետոյ, նաւաստեաց գումարտակը ծովեզրն հասաւ և մակոյկները մըտաւ երկրորդ կայանին մարդոց հետ։ Նոյն միջոցին, հազարի չափ վայրենիք, գետին նստած կ'սպասէին անշարժ։ Բայց երբոր մակոյկները մեկնեցան ցամաքէն, քարերը տեղալ սկսան։ Իսկոյն չորս նաւաստի, ճարտար հրացանաձիգ, հետզհետէ զարկին սպաննեցին բոլոր պետերն, ի մեծ սարսափ վարենեաց, որք անգէտ էին հրազինուց արդեան։

Փրոզէ՝ Մաթաբէն մարտանաւը հասնելով, անմիջապէս Մոթու–Արոյ կղզին ղրկեց մակոյկը. զօրաց գումարտակ մը կեցաւ անդ

(1) Թաքուրի սպաննեց զՄարիոն։

գիշերն, և հիւանդները վերստին նաւը ղրկուեցան։

Հետեւեալ օրն երկրորդ զօրախումբ մը գնաց միացաւ գումարտակին հետ։ Պէտք էր մաքրել կղզին վայրենեաց ապաստակներէն, և ջրարկղերը լնուլ։ Մօթու-Արոյի գիւղն երեք հարիւր բնակիչ ունէր։ Ֆրանսացիք անոնց վրայ յարձակեցան, վեց պետ ըսպաննեցին, մնացեալ բնիկները սուիններով զարկին, հալածեցին և գիւղը կրակի տուին։ Սակայն ֆաունէ չէի կրնար նաւարկել առանց կայմերու, և ֆրոզէ, եղևինի անտառին ծառերէն հրաժարելու ստիպուելով, կցածոյ կայմեր չինելու պարտաւորեցաւ։ Անուշ ջուրի պատրաստութիւնք չարունակեցան։

Ամիս մ'անցաւ։ Վայրենիները քանի մը անգամ վտրձ ըրին Մօթու-Արոյ կղզին ետ առնելու, բայց չյաջողեցան։ Երբոր անոնց նաւակները ռումբի հասողութեան չափ մօտ անցնէին, ֆրանսացիք երկու կտոր կ'ընէին զանոնք թնդանօթի հարուածներով։

Վերջապէս, կայմերուն չինութիւնն աւարտեցաւ։ Կը մնար գիտնալ թէ տանվեց զոհերուն մէջ ուրիշ ողջ մնացող ալ եղե՞ր էր արդեօք, և սպաննեալներուն ալ վրէժն առնուլ։ Մաթաբէնի մեծ մակոյկը, գումարտակ մը զօրք և սպայներ առած, գնաց Թաքուրիի գիւղը։ Երբոր մօտ հասաւ, այն նենգաւոր ցեղապետ վատաբար փախաւ, Մարիոն հրամանատարին առղանն իւր Թիկանց վրայ։ Գիւղին հիւղակները մի առ մի խառնուեցան։ Թաքուրիի տնակին մէջ նոր ելփուած մարդու մը գանկ գտնուեցաւ։ Մարդակերին ակռաներուն դրոշմը տակաւին կը տեսնուէր անոր վրայ։ Մարդկային գլխոց մը չամիրեալ էր փայտէ գաւազանի մը վրայ։ Արիւնաշաղաղ օձիքով չապիկ մը գտնուեցաւ, որ Մարիոնինն էր, յետոյ Վոտրիքուրի հանդերձներն ու ատրճանակները, մակոյկին գինանշաններն և քըմքըմեալ ձորձեր։ Ուրիշ գիւղի մը մէջ ալ մարդկային ընդերք գտնուեցան մաքրուած և ելփած։

Սպանութեան և մարդակերութեան անժխտելի ապացոյցք հաւաքուեցան, և մարդկային մնացորդք թաղուեցան յարգանօք։ Ապա Թաքուրիի և անոր համախոհ Բիքի-Օրէի գիւղերը հրոյ ճարակ եղան։ 1772 յուլիս 14 ին երկու մարտանաւք մեկնեցան այդ ժանտաժուտ ծովեզրներէն։

Այսպէս կատարեցաւ այդ աղէտալի եղերդ, որոյ յիշատակը ներկայ է միշտ Նոր-Զելանտայի ծովափանց վրայ ոտք դնող ամեն ուղեւորի մտաց մէջ։ Անխոհեմ է այն նաւապետ որ օգուտ չքաղէ այս տեղեկութիւններէ։ Նոր-Զելանտացիք միշտ

Նենգաւոր են և՛մարդակերք։ Քուք ալ տուգած է զայս իւր 1773ին ըրած երկրորդ ուղեւորութեան միջոցին։

Իւր նաւերէն միոյն մակոյկը դեկտեմբեր 17 ին ցամաքը գնացած էր վայրի խոտեր հաւաքելու, և ոչ ևս երեւան ելաւ։ Դրօշակիր մ'և իննն նաւաստիք կային մէջը։ Նաւուն հրամանատարը, Ֆիւրնոյ, կասկածի մէջ ընկնելով, Պըրնի տեղակալը ղրկեց զանոնք գտնելու։ Պըրնի, մակոյկին ցամաք ելած տեղն հասնելով, «նախճիրի «և խժդժութեան այնպիսի պատկեր մը «գտաւ, կ'ըսէ, զոր անհնարին յիշել առանց «քստմնելու։ Մեր մարդոց մի քանիին գլուխները, ընդերքն ու թոքերը ցան և «ցիր կեցած էին ափերին վրայ, և անոնց «մօտ քանի մը շուներ նոյն տեսակ մնացորդներ կ'ուտէին։»

Աւարտելու համար զայս արիւնռուչտ ցանկ, պէտք է աւելցնել անգլիական Պրոբը նաւն, որ 1815ին յարձակումի կրեց Նոր-Զելանտացիներէն, և Թոմսըն նաւապետին հրամայած Պայ նաւն, որոյ նաւաղներն ամբողջապէս ջարդուեցան 1820ին։ Վերջապէս 1829 մարտ 1 ին, Ուալքիթաայի առջև Էնարարոյ ցեղապետը կողոպտեց անգլիական Հոռո երկկայմն, և իւր մարդակերք հրոսախումբ՝ քանի մը նաւաստի սպաննելով՝ եփեց ու կերաւ անոնց դիակներն։ Այսպիսի երկիր մ'էր Նոր-Զելանտա, առ որ կը դիմէր Մուռուէյ, ապուշ նաւաղներու վարչութեամբ և արբչիւռ նաւապետի մը հրամատարութեամբ։

ԳԼՈՒԽ Դ.

ԽՈՒԹՔ

Սակայն կ'երկարէր այս տաժանելի նաւարկութիւն։ Փետրվար 2ին, չուելէն վեց օր յետոյ, Մուռուէյ տակաւին չէր տեսներ Օքլանտի եզերքը։ Քամին լաւ էր սակայն, և կը շարունակէր փչել արեւմտեան հարաւէն։ Բայց հոսանքը դէմ կուգար նաւին, և աւելի կը յամրացնէր անոր ընթացքն։ Ալեծուփ ծովը կը կոծէր անոր վերին մասերն և կը ճարճատեցնէր անոր փայտակերտ չրջանակներն, այնպէս որ դժուարաւ կը վերականգնէր ալեաց խռովչեռուն մէջէն։ Կայմակալ պարաններն ու սարանները, լաւ ձկտեալ չլինելով, ալեկոծ նաւուն մի կամ միւս կողմ տատանած ժամանակ՝ ուժգնապէս ցնցուելով կ'երերային։

Բարեբաղդաբար, Ուիլ Հուլէյ, իրրև

քիչ վաղվաղկոտ մարդ, ուժ չէր տար ա-
ռագաստներուն, վասն զի բոլոր կայմերը
կը տապալէին աներկբայաբար: Ուստի Ճոն
Մանկլը կը յուսար որ այդ անպիտան նաւ՝
առանց ուրիշ ձախողանաց՝ պիտի հասնէր
ի Նաւահանգիստ. բայց ցաւ կ'զգար իւր
ընկերաց անհանգստութեան վրայ:

Սակայն ոչ տիկին Էլէնա, ոչ Մարի Կրանթ
չէին տրտնջեր, թէ և հեղեղանման անձրեւ
մը զանոնք արգելափակ կը պահէր նաւուն
գոգին մէջ: Անդ, օդի պակասութիւնն եւ
նաւուն ցնցուումը սաստկապէս կը նեղէր
զանոնք: Այս պատճառաւ յաճախ նաւուն
տախտակամածը կ'ելնէին՝ դիմագրաւելով
օդին դէշութեան, մինչև որ դժնդակ քա-
մին վերստին վար իջնելու հարկադրէր զա-
նոնք: Ուստի նորէն կը մտնէին այն նեղ
ծակն, որ աւելի վաճառաց չտեմարան լի-
նելու յարմարութիւն ունէր քան թէ ու-
ղեւորաց և մանաւանդ ուղեւորուհեաց
բնակարան:

Յայնժամ իրենց ընկերները կը ջանային
զբաղեցնել անոնց միտքը: Բականել իւր
պատմութիւններով ժամանակն սպաննել կը
փորձէր, բայց շատ չէր յաջողեր: Արդա-
րև, միաքերն, այս վերադարձի ուղւոյն վը-
րայ մոլորելով, վհատած էին: Բարքայից կամ
Աստրալիոյ վրայ աշխարհագրին ըրած ճա-

նախօսութիւններն ո՛րչափ ուշագրաւ էին
երբեմն, այնչափ Նոր-Զելանտայի վրայ ը-
րած խորհրդածութիւնները ցուրտ անտար-
բերութեան կը հանդիպէին: Որովհետեւ ա-
ռանց յօժարութեան, առանց համոզման,
առանց կամաց և գրեթէ ճակատագրին ճն-
ման տակ կ'ուղեւորէին յայդ աղետալի յի-
շատակներով լի նոր երկիր: Մտ-ոբէի ու-
ղեւորաց մէջ ամենէն արդահատելին էր
Լորա Կլէնարվան: Յոյժ քիչ կը տեսնուէր
նաւուն գոգին մէջ. չէր կրնար տեղ մը
նստիլ. իւր ջղային դրդռեալ բնութիւն չէր
կրնար չորս նեղ տախտակրմի մէջ բան-
տարկեալ կենալու հանդուրժել: Ցերեկնե-
րը, մինչև իսկ գիշերներն ալ, առանց հոգ
ընելու հեղեղանման անձրեւն և ծովու
ծրարները, նաւուն տախտակամածին վրայ
կը մնար, մերթ արմուկովը նաւուն ներք-
նատան կողին կրթնած, մերթ ալ տեղ-
դային յուզմամբ քալելով: Աչերն անդլա-
բար ծովուն լայնատարած տարածութեան
վրայ սեւեռած էին: Իւր դիտակն, օդին
կարճատև հանդարտութեան ժամանակ, յա-
մառութեամբ կը պտրտէր անհուն միջոցին
մէջ, կարծես թէ կը հարցափորձէր ծովուն
մունջ կոհակներն: Եթէ ձեռքէն գար, մէկ
չարժմամբ պիտի պատառէր հորիզոնը ծած-
կող մեգը, չեզքաբարդ գոլորշիները: Զէր

կրնար հանակերպիլ, և իր դէմքը դառն վիշտ կ'արտայատէր։ Զօրեղ մարդ, մինչև ցայնժամ երջանիկ և կարող, որ չանկարծ կը կորանցնէր վիւր կարողութիւնն ու երջանկութիւն։

Ճոն Մանկլս չէր զատուեր անկէ, և կը հանդուրժէր օդին խստութեանց։ Այն օրը, կլէնարվան, մէգին մէջ խրամատ մը բացուածին պէս, հորիզոնը կը զննէր չամառ կամակորութեամբ։ Ճոն Մանկլս քովը գնաց։

— Ձեր Ազնուութիւնը ցամա՞քը կը վնտռէ, հարցուց նմա։

Կլէնարվան բացասական նշան մ'ըրաւ գլխովը։

— Եւ սակայն, չարեց երիտասարդ նաւապետն, անշուշտ մեծ փոփոք պարտիք ունենալ այս նաւէն դուրս ելնելու։ Արդէն երեուն-վեց ժամ առաջ պարտ էինք տեսնել Օքլանտի փարոսները։

Կլէնարվան չէր պատասխաներ։ Այլ կը նայէր միշտ, և վայրկենի մը չափ իւր դիտակն հորիզոնին ուղղեալ մնաց։

— Ցամաքն այդ կողմը չէ, ըսաւ Ճոն Մանկլս, հաճեցէք նաւուն այլ կողմը նայիլ։

— Ինչո՞ւ համար, Ճո՛ն, պատասխանեց Կլէնարվան. ես ցամաքը չեմ վնտռեր։

— Ի՞նչ կ'ուզէք ուրեմն, Մի՛լըրտ։

— Շոգենա՛ւս, Տըն+ա՛ն», պատասխանեց Կլէնարվան բարկութեամբ։ Այս ծովափանց մօտ, այս ծովերուն մէջ պարտի գտնուիլ, ծովահէնի չարաչուք արհեստը գործելով։ Այս կողմերն է, կ'ըսեմ քեզ, Ճո՛ն, այս նաւական ուղղոյն վրայ ընդ մէջ Աւստրալիոյ և Նոր-Զելանտայի, և ես նախապգացում ունիմ թէ պիտի հանդիպինք նմա։

— Աստուած պահէ մեզ այդ հանդիպումէ, Մ'իլըրտ։

— Ինչո՞ւ համար, Ճո՛ն։

— Ձեր Ազնուութիւնը կը մոռնայ մեր վիճակն։ Ի՞նչ կրնանք ընել այս երկկայմին մէջ, եթէ Տըն+ն մեզ հալածէ։ Եւ ոչ իսկ կրնա՛նք փախչիլ։

— Փախչի՛լ, Ճո՛ն։

—Այո՛, Միլըրտ, չենք կրնար փախչիլ, հետեւաբար կը բռնուինք, այն թշուառականաց ձեռքը կ'ընկնինք, և Պէն Ճոյս արդէն փորձով ցոյց տուաւ թէ չընկրկիր ոճրագործութեան առջեւ։ Մեր կեանքը չեմ մտածեր, մինչև ցահ կը դիմադրենք։ Լա՛ւ։ Բայց յետո՞յ։ Խորհեցէք տիկին Կլէնարվանի վիճակը, Մի՛լըրտ, խորհեցէք Մարի Կրանթի վիճակը։

— Խե՛ղճ կանայք, մրմնջեց Կլէնարվան։ Սիրտս կոտրած է, Ճո՛ն, և երբեմն յուսա-

հատուցիւն կը տիրէ վրաս։ Կը թուի ինձ թէ նոր փորձութիւնք կ'սպասեն մեզ, և թէ երկինք մեզ դէմ եղած են։ Դուի մէջ եմ։

— Դո՞ւք, Միլո՛րա։

— Ո՛չ ինձ համար, Ճո՛ն, այլ իմ սիրելեաց համար, ձեր իսկ սիրելեաց համար։

— Մի՛ վախնաք, Միլորա, պատասխանեց երիտասարդ նաւապետն, ոչ ևս պատճառ ս'ունինք երկիւղի։ Մոթոօրէ լաւ չընթանար, բայց վերջապէս կ'երթայ։ Ուիլ Հալէյ անասնակերպ էակ մ'է, բայց ես ատ եմ և եթէ ցամաքին մօտերը վտանգաւոր թուին ինձ, նաւը նորէն բացը կը բերեմ։ Ուստի այս կողմէ քիչ կամ բնաւ վտանգ։ Բայց Տըն֊ոնի հետ քովէ քով գալէ Աստուած պահէ մեզ, և եթէ Ձեր Ագնուութիւնը կը ջանայ տեսնել զայն, զգուշանալու և մանաւանդ անկէ փախչելու համար միայն պարտի տեսնել։

Ճոն Մանկլս իրաւունք ուներ։ Տըն֊ոնի հանդիպումն աղիտաբեր էր Մոթոօրէի, և կը կասկածուէր անոր հանդիպումէն այդ սեղմեալ ծովերուն մէջ, զոր ծովահէնք կըրնային ասպատակել անվտանգ։ Սակայն, նոյն օրը գոնէ, Տըն֊ոն չերեւցաւ, և Թուոֆոլտ֊Պէյէն մեկնելէ յետոյ վեցերորդ գիշերն հասաւ՝ առանց Ճոն Մանկլսի երկիւղներուն իրացման։

Բայց այդ գիշեր սարսափելի պիտի լինէր։ Իրիկուան ժամ ութին յանկարծ մութը կոխեց։ Երկինք յոյժ սպառնալից էին։ Նաւապետն բնազդումն՝ արբեցական անըզգայութեան յաղթելով՝ ներգործեց Ուիլ Հալէյի վրայ։ Դուրս ելաւ իւր խցիկէն, աչերը չփելով և խոշոր ու կարմիր գլուխը ցնցելով։ Ցետոյ ուժով մը չունչ առաւ, ինչպէս որ ուրիշ մը մեծ գաւաթ մը ջուր խմէր ինքզինք գտնելու համար, և կայմերը ղննեց։ Հովը կը զովանար, և քառորդ մասամբ դէպ արեւմուտք դառնալով՝ Ջերսանտայի ափանց վրայ կը փչէր լիաչունչ։

Ուիլ Հալէյ իւր մարդիկը կոչեց բուռն հայհոյութիւններով, բարձր առագաստները ամփոփել և միայն գիշերային առագաստները պարզել տուաւ։ Ճոն Մանկլս հաւնեցաւ անոր այս ըրածին՝ առանց բան մ'ըսելու, վասն զի չէր ուզեր տեսակցիլ այդ բիրտ նաւապի հետ։ Բայց ոչ կէնարվան և ոչ ինք չմեկնեցան նաւուն տախտակամածէն։ Երկու ժամ յետոյ բուռն հով մը փչել սկսաւ։ Ուիլ Հալէյ իւր թակաղպի առագաստները մասամբ ամփոփել տուաւ։

Երկու ժամ անցաւ։ Ծովը կ'ուռէր, Մոթոօրէ ուժգնապէս կը ցնցուէր յատակէն։ կարծես թէ ժայռեր կը քերէր։ Սակայն այնպէս չէր։ Իւր ծանր իրանը դժուարաւ

կ'ելնէր կոհակներուն վրայ։ Այս պատճառաւ ալիքները նաւուն մէջ կը լցուէին։ Մակոյկն, որ նաւուն աչ կողէն կախուած էր, ալիքներէն յափշտակուելով անյայտ եղաւ։

Ձոն Մանկլս վախնալ սկսաւ։ Ուրիշ որ և է նաւ չէր վախնար այդ ալիքներէն, որք այնչափ ահաւոր չէին։ Բայց այդ ծանրաբարձ նաւի համար կը վախցուէր որ գլխիվայր ծովուն յատակն իջնէր. վասն զի ամեն անգամ մխրճուելուն, տախտակամածը կը լցուէր ջրով, և լոյծ ծածկոյթը չկրնալով կողին ծակերէն արագապէս հոսիլ, կրնար ընկղմիլ նաւը։ Ուստի վտանգին առաջն առնելու համար՝ խոհեմութիւն էր տախտակամածին որմերը խորտակել տապարով, որպէս զի ջուրերուն դուրս ելնելը դիւրանար։ Բայց Ուիլ Հալլէյ չուզեց ձեռք առնուլ զայդ նախազգուշութիւն։

Սակայն աւելի մեծ վտանգ մը կ'սպառնար Մոթոռայէի, և անշուշտ ոչ ևս ժամանակ կար առաջն առնելու։

Ժամը տասն-ևկկին մինչեցները, ձոն Մանկլս և Ուիլսըն, որք տախտակամածին եզրը կեցած էին հովին տակ, անսովոր շինդ մը լսեցին. իրենց նաւագական բնազդումն արթնցաւ։ Ձոն բռնեց նաւաստւոյն ձեռքէն։

— Ալիքները ժայռերու կը բախի՛ն, ըսաւ

— Այո՛, պատասխանեց Ուիլսըն, խուժերու վրայ կը խորտակին։

— Հազիւ չորս հարիւր մեթր հեռի՛։

— Հազիւ։ Ցամաքին յոյժ մօտ։

Ձոն՝ տախտակամածին որմէն վար ծռելով՝ թխատեսիլ կոհակներուն նայեցաւ և գոչեց. «Խորաչա՛փը, Ուիլսըն, խորաչա՛փը»։

Նաւապետն, որ նաւուն գլուխը կեցած էր, անծանօթ կը թուէր իր վիճակին։ Ուիլսըն իսկոյն գնաց առաւ խորաչափին և ցուկակայմին սարակներուն մէջ ելնելով վար նետեց կապարը։ Ջուանը քակուեցաւ մատներուն մէջէն, և երրորդ հանգուցին հասած ին պէս՝ կապարը կեցաւ։

— Երեք գրկաչա՛փ, գոչեց Ուիլսըն։

— Նաւապե՛տ, ըսաւ Ձո՛ն, Ուիլ Հալլէյի քով վազելով, խուժերուն վրայ ենք։

Տեսա՞ծ էք՝ Հալլէյինուսերը վերցնելը, չենք գիտեր. բայց վազեց ղեկին քով, ղեկին վար կոխեց, մինչդեռ Ուիլսըն ալ մեծ թակաղպին չուանը կը քաշէր նաւն հովուն կողմը դարձնելու համար։ Ղեկը վարող նաւաստին, ուժգնութեամբ անդին մղուելով, բան մը չէր հասկցեր այս յանկարծական գործէն։

Կէս վայրկեանի չափ երկկայմին ջլաշղթան պիտոը խուժերուն քովէն անցաւ, և, հակառակ գիշերին մթութեան, Ձոն

սպիտակ գիծ մը տեսաւ որ նաւէն չորս գրկաչափ հեռի կը մնէնչէր։

Նոյն միջոցին, Ուիլ Հալէյ դգալով վերահաս վտանգը, շուարեր, ընելիքը կորուսեր էր։ Իր նաւաստիներն, հազիւ արթեցուեր էնէ սթափած, չէին հասկնար անոր հրամանները։ Միւս կողմէ, նաւապետին կցկտուր խօսքերն և հակասական հրամանները կը ցուցնէին որ այդ տխմար արբչին կորուսած էր գլուխ պաղարիւն։ Ցամաքին ուժ մըն մերձակայութիւնն յանկարծակիի բերած էր զայն, մինչդեռ երեսունքառասուն մըն հեռի կը կարծէր։ Հոսանքը սովորական ճանբէն դուրս ձգած և անպատրաստ գտած էր թշուառ սովորամոլը։

Սակայն Ճոն Մանկլի արագ գործողութիւնն հեռացուցեր էր նաւը խութերէն։ Բայց Ճոն չէր գիտեր իր դիրքը։ Թերեւս խարակներու գօտիէ մը պաշարուած էր։ Հովը գլխուէ քիչ առաջ կը քշէր, և մէն մի տատանում կրնար ժայռի մը զարնել։

Արդարև չատ չանցաւ, ժայռերու բախելով ընկրկող ալեաց չառաչիւնը աստիճանաբար նաւուն ետ կողմէն. նորէն հարկ եղաւ հովուն կողմը քշել նաւը։ Ճոն գլուխը նորէն վար դարձուց և նաւուն ընթացքը փոխեց։ Խութերը կը չատնային նաւուն յառաջակողման տակ, ուստի հարկ եղաւ

գլուխն հովուն դարձնելով նորէն բացը քաշուիլ։ Այս գործողութիւն սլիտի կրնա՞ր յաջողիլ այնպիսի նաւով մը, որ հաւասարակշռութիւն չունէր, և առագաստներն ալ մեծ մասամբ աւիրուած էին։ Յաջողութիւնն հաւասար չէր, բայց պէտք էր փորձել։

— Գլուխը բոլորովին վա՛ր, գոչեց Ճոն Մանկլը Ուիլսընի։

Մոթոթէ սկսաւ մօտենալ խարակներու նոր գծին։ Շատ չանցաւ, ծովը ջուրին մէջի ժայռերուն բաղխելով փրփրեցաւ։

Տագնապալից վայրկեան մ'էր։ Փրփուրը լոյս կուտար կոհակներուն։ Կարծես թէ փոսփորափայլութեան երեւոյթ մը յանկարծ կը լուսաւորէր զանոնք։ Ծովը կը մնէնչէր այնպիսի պոչմամբ մը, որ հեթանոսական հին դիցաբանութեան ոգեւորեալ ժայռերուն գոչիւնը կը յիշեցնէր։ Ուիլսըն և Միւրատի, գլխին անոյն վրայ ծռած, կը կոխէին զայն իրենց բովանդակ ծանրութեամբ։

Յանկարծ ընդհարում մ'եղաւ։ Մոթոթէ ժայռի մը վրայ նստեր էր։ Նաւուն ցըրտակայմին նեցուկը խորտակեցաւ և առաջակայմին հաստատութիւնը վտանգի մէջ ձգեց։ Նաւուն չրջումը սլիտի կրնա՞ր կատարիլ առանց ուրիշ վնասուց։

Ոչ. վան զի յանկարծ հանդարտութիւն մը տիրեց, և նաւը նորէն հովին առջեւ եկաւ. բայց իւր շրջուելն արգիլուեցաւ բացարձակապէս: Բարձր կոհակ մ'եկաւ, վերցուց զայն տակէն, և աւելի առաջ քշեց խութերուն վրայ: Նաւը կրկին անգամ ժայռերուն վրայ ընկաւ ուժգնապէս: Առաջակայմն իւր բոլոր կազմածներով վար ընկաւ: Նաւն երկիցս քերեց ժայռերն և ապա անշարժ մնաց երսուն աստիճանի չափ ջրի կողմը ծռելով: Նաւագոգին սանդուղը ծածկող տախտակէ կնգուղին ապակիները ջարդուփսոր եղան: Ուղեւորք վեր վազեցին, բայց կոհակները մի ծայրէն միւսը կ'աւէրին տախտակամածն և անհնար էր կենալ անդ անվտանգ: Ճոն Մանկլս, գիտնալով որ նաւն ամբապէս նստած էր աւազին վրայ, աղաչեց զանոնք որ նորէն նաւուն գոգը մտնեն:

—Ձշմարտութիւնը, Ճո՛ն, հաբցուց Կլէնարվան պաղութեամբ:

—Ձշմարտութիւնը, Մ'իլրտ, պատասխանեց Ճոն Մանկլս, այս է թէ ծովասոյզ չենք լինիր: Իսկ նաւուն քայքայումն ուրիշ խնդիր է, բայց ժամանակ ունինք ասոր վրայ խորհելու:

—Կէս գիշե՞ր է այժմ:

—Այո՛, Մ'իլրտ, և պարտինք լուսնալուն սպասել:

—Ջե՞նք կրնար մակոյկը ծովը իջուցնել:

—Այս ալեկոծութեան և այս մութի մէջ անհնարին է: Մանաւանդ չենք գիտեր թէ ցամաքին ո՛ր կողմը պարտինք ելնել:

—Ուրեմն, Ճո՛ն, աստ կենանք մինչև առաւօտ:

Սակայն Ուիլ Հալլէյ խելագարի պէս կը վազէր իւր երկկայմին տախտակամածին վրայ: Իւր նաւաստիներն սթափելով իրենց ահաբեկութենէն, օդի տակառ մը կոտրեցին և սկսան ըմպել: Ճոն հասկցաւ որ ասոնց արբեցութիւնը սարսափելի տեսարաններ պիտի ընծայէր: Կարելի չէր յուսալ թէ նաւապետը պիտի կրնար զանոնք զսպել: Թշուառականն իւր մազերը կը փետէր և և թեւերը կը գալարէր: Իւր վաճառքը միայն կը խորհէր, որ ապահովագրեալ չէր:

—Տունս վլա՛ւ, տունս վլա՛ւ, կը գոչէր տախտակամածին մի կողմէն միւսն երթեւեկելով:

Ճոն Մանկլս փոյթ չէր ըներ զայն մխիթարելու: Զինեց իւր ընկերներն, և ամենն ալ պատրաստ կեցան յետս մղելու նաւաստիներն՝ որք անխնայ ցրի կը խմէին, սոսկալի հայհոյութիւններ ընելով:

—Այդ թշուառականներէն ո՛րն որ նաւագոգին մօտենայ, չեն պէս կ'ապաննեմ, ըսաւ հազարապետն հանդարտութեամբ:

Նաւաստիները տեսան անշուշտ թէ ուղեւորք պատրաստ էին զիրենք սանձահարելու, վասն զի աւարառութեան քանի մը փորձերէ յետոյ աներեւոյթ եղան։

Ձոն Մանկլս ոչ ևս զբաղեցաւ այդ արբչիներուն, և լուսնալուն սպասեց անհամբերաբար։

Նաւը բացարձակապէս անշարժ էր յայնժամ։ Ծովն ալ կը հանդարտէր տակաւ։ Հովը կ'ընկնէր։ Նաւուն իրանը կրնար տակաւին քանի մը ժամ դիմանալ։ Առաւօտուն, լուսնալէ յետոյ, Ձոն պիտի քննէր ծովափն։ Եթէ ցամաք ելնելու դիւրութիւն ընծայէր, Նաւուն փոքրիկ կուրն, որ վիայն մնացած էր, կրնար ուղեւորայ և նաւագից փոխադրման ծառայել։ Առնուազն երեք ուղեւորութիւն հարկ էր, վասն զի չորս հոգի միայն կրնային նստիլ կուրին մէջ։ Իսկ մակոյկն, ինչպէս որ տեսնուեցաւ, պահ մ'առաջ յափշտակուած էր ալիքներէն։

Ձոն Մանկլս, իր վիճակին վտանգներուն վրայ խորհելով հանդերձ, նաւագոգին սանդուղը ծածկող տախտակէ կնգուղին յեցած՝ մտիկ կ'ընէր ալեաց ընկրկման չառաչիւնն և կը ջանար թափանցել խոր աղջամուղջը։ Կը հարցնէր ինքնիրեն թէ արդեօք ո՛րչափ հեռի էր բաղձալի և փրանգամայն երկիւղալի ցամաքը։ Խրուանները երբեմն ցամաքէն մինչեւ քանի մը վարսախ հեռի կը տարածին։ Դուշնաքեայ կուրը պիտի կրնա՞ր տակաւ քիչ մ'երկար ուղեւորութեան։

Մինչ Ձոն՝ այս մտածութեամբք զբաղեալ՝ քիչ մը լոյս կը խնդրէր խաւարամած երկինքէն, ուղեւորուհիք, անոր խօսքին վստահելով, հանդարտ կը ննջէին իրենց խշտեակներուն վրայ։ Նաւուն անշարժութիւնը քանի մը ժամ հանգիստ կուտար անոնց։ Ձոն և ընկերք ալ, ոչ ևս լսելով արբեալ նաւագներուն կառանչները, կարճ՝ բայց կապշտուրիչ քուն մը կ'առնուին, և, առաւօտեան ժամը մէկին (կէս գիշերը մէկ ժամ անցած) խոր լռութիւն կը տիրէր երկկայմին մէջ, որ նոյնպէս ննջած էր իր աւազէ անկողնոյն վրայ։

Ժամը չորսին միջոցներն այգուն առաջին նշոյլներն երեւնալ սկսան արեւելեան կողմէն։ Ամպերը թեթեւապէս երանգեցան այգածնին աղօտ լուսով։ Ձոն տախտակամածին վրայ ելաւ։ Հորիզոնին վրայ մշուշի վարագոյր մը կախուած էր։ Քանի մ'անորոշ ծիրեր կը ծածանէին առաւօտեան գորշութիւններուն մէջ, բայց բաւական բարձրութեամբ։ Թեթեւ ծուխ մը տակաւին կը յուզէր ծովը, և համատարածին կոհակներն աներեւոյթ կը լինէին թանձր և անշարժ ամպոց մէջ։

Ձոն սպասեց։ Լոյսը տակաւ աճեցաւ։ Հորիզոնը բոլորովին կարմրեցաւ։ Վարագոյրն յանիրաւար երկնից ընդարձակ համարին մէջ քաշուեցաւ։ Խարակաց տեւ ծայրեր ցցուեցան ջուրէն դուրս։ Յետոյ գիծ մը ծրագրեցաւ փրփուրէ ժապաւէնի մը վրայ, լուսաւոր կէտ մը վառեցաւ նորածին աբեւուն դեռ անտեսանելի սկաւառակին վրայ, իբրև օղակաւոր բեւեռի մը կատարը ղրուած լապտեր մը։ Յանկարծ կը տեսնուէր ինն մղոնէն պակաս հեռաւորութեամբ։

—Յանա՛քը, գոչեց Ձոն Մաննկլս։

Ընկերներն արթննալով անոր ձայնէն, վազեցին տախտակամածին վրայ ելան, և լուռթեամբ ծովեզրը դիտեցին որ հորիզոնին վրայ կը տեսնուէր։ Հիւրընկալ կամ աղիտարեր, իրենց ապաստանը սիրտ լինէր։

—Ո՞ւր է Ուիլ Հալէյ, հարցուց Կլէնարվան։

—Զգիտեմ, Մ՛լորտ, պատասխանեց Ձոն Մաննկլս։

—Իւր նաւաստինե՞րն։

—Անհետացած են իրեն պէս։

—Եւ անշուշտ կոյր-գինով իրեն պէս, աւելցուց Մաք Նապս։

—Փնտռեցէք գտէք, ըսաւ Կլէնարվան, չենք կրնար այս նաւուն մէջ թողուլ զանոնք և երթալ։

Միւրատի և Ուիլսըն յառաջակողման բարձրաւանդակին տակի օթեակը գնացին, և երկու վայրկեան յետոյ դարձան։ Մարդ չկար հոն։ Յայնժամ նաւուն միջնայարկն և ուրիշ ամեն կողմերն աչքէ անցուցին մինչև յատակը։ Բայց ոչ զՈւիլ Հալէյ գըտան և ոչ նաւաստիներն։

—Ի՛նչ, մարդ չկա՞յ, հարցուց Բականէլ։

—Ամեն բան հնարին է, պատասխաննեց Ձոն Մաննկլս յոյժ մտահոգ այս անհետացման վրայ։

Յետոյ դէպ ի յետակողմը դիմելով՝ «Կուրը վար առէք» ըսաւ։

Ուիլսըն և Միւրատի ետեւէն գնացին կուրը ծովէն իջուցնելու համար։ Կուրն աննըրեւոյթ եղած էր։

ԳԼՈՒԽ Ե։

ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ՆԱԻԱՍՏԻՔ

Ուիլ Հալէյ և իւր նաւազք, գիչերին մութէն և ուղեւորաց քունէն օգուտ քաղելով, երկկայմին միակ կուրովը փախեր էին։ Կարելի չէր երկբայիլ։ Այդ նաւապետ, որոյ պարտքն էր աւենէն վերջը դուրս ելնել նաւէն, ամենէն առաջ մեկներ էր։

—Սրիկաները փախեր են, ըսաւ Ձոն

Մանկլս. Աւելի լաւ, Մի՛լորտ, չատ մ՛անհաճոյ տեսարաններէ ազատեցանք։

—Իմ ալ կարծիքս այդ է, պատասխանեց Կլէնարվան, մանաւանդ որ նաւուն մէջ նաւապետ մը կայ միշտ, ձո՛ն, և եթէ ոչ ճարտար, գոնէ քաջասիրտ նաւազք, քու ընկերներդ։ Դու հրամայէ, և մեք պատրաստ ենք հնազանդիլ քեզ։

Հաղարապետը, Բականէլ, Ռոպերթ, Ուիլսըն, Միւլրատի, նոյն իսկ Օլպինէթ, դրուատեօք ընդունեցին Կլէնարվանի խօսքերն, և նաւուն տախտակամածին վրայ հարուելով, ձոն Մանկլսի հրամանին սպասեցին։

—Ի՞նչ պարտինք ընել, հարցուց Կլէնարվան։

Երիտասարդ նաւապետն աչքը ծովուն վրայ պտտցուց, նաւուն անկատար կայմերը դիտեց, և քանի մը վայրկեան խորհելէ զկնի՝ ըսաւ.

—Երկու միջոց ունինք, Մի՛լորտ, մեզ այս վիճակէն ազատելու. կա՛մ նաւը վերահանգնել և ծովուն բացն ելնել, կա՛մ լաստ մը շինելով՝ ցամաքն ելնել։

—Եթէ նաւը կրնայ վերահանգնիլ, վերահանգնենք, պատասխանեց Կլէնարվան. լաւագոյն միջոցն այս է, այնպէս չէ՞։

—Այո՛, Մի՛լորտ, ճան պի, եթէ ցամաքն ելնենք, ի՞նչ պիտի ընենք առանց փոխադրութեան միջոցներու։

—Ձգուշանանք ցամաքէն, աւելցուց Բականէլ։ Պէտք չէ վստահիլ Նոր-Զելանտայի։

—Մանաւանդ որ շատ խոտորած ենք մեր ճանբէն, յարեց ձոն։ Հալլէյի անհոգութիւնը մեզ դէպի հարաւ ձգեց։ Կէս օրին պիտի նեմ մեր դիրքն, և եթէ, ինչպէս որ կը կարծեմ, Օքլանտէն վար ընկած ենք, հոն վերադառնալու փորձ մը կ՛ընենք՝ ծովեզրն ի վեր նաւարկելով։

—Բայց նաւը վնասուած չէ՞, հարցուց տիկին Կլէնա։

—Ձեմ կարծեր որ ծանրապէս վնասուած լինի, պատասխանեց ձոն Մանկլս. խորտակեալ առագաստին տեղ առժամեայ կայմ մը կը գետեղեմ, և թէպետ յամրընթաց, բայց վերջապէս կրնանք մեր ուզած տեղն երթալ։ Իսկ եթէ՝ դժբաղդաբար՝ նաւուն իրանը խրամատած լինի, կամ չկրնանք նաւը խրուտէն հանել, յայնժամ կը հարկադրինք ծովեզրն ելնել և ցամաքէն Օքլանտ երթալ։

—Ուրեմն նաւուն վիճակը տեսնենք նախ, ըսաւ հաղարապետն։ Ամեն բանէ առաջ պէտք եղածն այս է։

Կլէնարվան, ձոն և Միւլրատի բացին

մեծ կափարիչն և նաւուն յատակն իջան։ Երկու հարիւր տակառաչափ յարդարեալ մորթ կար, խառնիխուռն զետեղուած։ Զանոնք մէկ կողմ առին՝ առանց մեծ դժուարութեան՝ կափարիչին մոտէն կախուած փաղանգին միջոցաւ։ Ձոն այն ծրարներուն մէկ մասը ծովը նետել տուաւ, որպէս զի թեթեւնար նաւը։

Երեք ժամ աշխատելէ յետոյ կրցին քընել նաւուն յատակը։ Ձախ կողին տախտակամածն երկու տեղէն բացուած էր։ Արդ, Մոթոռէ այ կողին վրայ պառկած լինելով, ձախ կողը վեր ելած, և բացուած կառանները ծովէն վեր մնացած էին. հետեւաբար ջուրը չէր կրնար ներս մտնել։ Ուիլսըն անմիջապէս փակեց այն խրամատները խծուծով, և վրայէն ալ պղնձէ թիթեղ մը գամեց խնամով։

Նաւուն յատակը զննելով, հազիւ երկու ոտնաչափ ջուր առած էր։ Ջրհանները դիւրաւ կրնային սպառել զայն ջուր և նաւը նոյն չափով թեթեւցնել։

Իրանը քննելով, Ձոն տեսաւ որ խրած ժամանակ շատ վնասուած չէր։ Հաւանական էր որ տակի պլտակ ողնափայտին մի մասն աւազին մէջ մնար, բայց հոգ չէր. կրնային թողուլ զայն։

Ուիլսըն, նաւուն ներսի կողմն այցելէ

յետոյ ծովուն մէջ վերադեցաւ, որպէս զի խրուտին վրայ նաւուն բռնած դիրքը զննէ։

Մոթոռէ, գլուխը դէպ ի հիւսիսային արեւմուտք դարձուցած, սկսաւ աւազէ ծանծաղի մը վրայ խրած էր։ Յառաջակողմեան հեծանին ստորին ծայրն և ողնափայտին գրեթէ երկու երրորդը խորապէս մխուած էր աւազին մէջ։ Իսկ միւս մասը, մինչև յետակողման փոքր հեծանը, կը ծփար հինգ գրկաչափ բարձրութիւն ունեցող ջուրի վրայ։ Հետեւաբար ղեկը խրած չէր և կրնար ազատութեամբ գործել։ Ձոն անօգուտ դատեց հանել զայն, որովհետեւ կրնար պէտք եղածին պէս գործածել։

Մակընթացութիւնք շատ զօրեղ չեն Խաղաղականի մէջ. սակայն Ձոն Մանկլս՝ նաւը վերականգնելու համար՝ մակընթացութեան վրայ դրած էր գիւր յոյս։ Մոթոռէ՝ մակընթացութեան լրանալէն մի ժամու չափ առաջ խրած էր։ Արդ՝ տեղատուութեան զգացուելէն ի վեր նաւն ևս քան զեւս պառկեր էր աջ կողին վրայ։ Առաւօտեան ժամը վեցին, երբոր տեղատուութիւնը լրացած էր, նաւին հակումն իւր ծայրագոյն աստիճանին հասած էր, և անօգուտ եւրեւցաւ նեցուկները դնել անոր։ Այսպէս կրցին նաւուն մէջ պահել առագաստակալ

ներն և ուրիշ գերաններ, զորս Ճոն առած էր ամեն առաջակայր մը չինելու սահմանած էր։

Կը մնար՝ նաւը ջուրին երեսը հանելու համար՝ պէտք եղած վիճակին մէջ դնել զայն։ Յայտնի էր որ կէս օրը քառորդ անցած լիալիր մակընթացութեան պատրաստուիլ անհնարին էր։ Միայն կրնար հաւկցուիլ թէ նաւը՝ մասամբ թեթեւնալով՝ ի՛նչ դիրք պիտի առնուր ալեաց ազդեցութեան տակ, և ըստ այնմ վերջին ճիգ մը թափուիլ յաջորդ մակընթացութեան ժամանակ։

—Օ՛ն, ի գործ» հրամայեց Ճոն Մանկլս։

Իւր յանպատրաստից նաւաստիները պատրաստ էին իւր հրամաններուն։

Ճոն նախ կապել տուաւ այն առագաստներն՝ որք հանդրէճներուն վրայ կեցած էին։ Հազարապետը, Ութպէրթ և Բականէլ, Ռիլսընի առաջնորդութեամբ, մեծ թակաղաղին վրայ ելան, որուն առագաստը, հովին ճիգէն կէս պարզուելով կրնար արգելք լինել նաւուն ազատմանն։ Պէտք էր ամիսուիլ ու կապել զայն։ Ցամառ աշխատութենէ մ՚զկնի, որ անվարժ ձեռաց համար յոյժ դժնդակ էր, մեծ պապակային կայմը տեղէն հանուեցաւ։ Ութպէրթ, կատուի պէս արագաշարժ, նաւաստեակի մը պէս

քաջայանդուգն, մեծ ծառայութիւններ մատուցած էր այս դժուարին գործողութեան միջոցին։

Յայնժամ պէտք եղաւ մի կամ թերեւս երկու խարիսխ զետեղել ծովուն մէջ, նաւուն ետեւի կողմէն, ողնափայտին ուղղութեամբ։ Նաւը խրուտին վրայէն հանելու ճիգն այն խարիսխներուն վրայ պիտի կատարուէր մակընթացութեան բարձրացած միջոցին։ Այս գործողութիւն քնաւ դժուարութիւն չունի մակուկով։ Խարիսխ մը կ՚առնուի և նախապէս որոշուած յարմար կէտի մը վրայ ծովը կը ձգուի։ Բայց աստ մակոյկ կամ կուր չկար, և հարկ եղաւ լնուլ զայդ պակաս։

Կլէնարվան, քաւական վարժ լինելով նաւուղղական գործոց, կը հասկնար այս գործողութեանց կարեւորութիւնը։ Խարիսխ մը պէտք էր նետուիլ, որպէս զի տեղատութեան ժամանակ խրեալ նաւ մը մակընթացութեան ժամանակ կարելի լինէր ազատել։

—Բայց առանց մակուկի ինչպէս պիտի ընենք, հարցուց Կլէնարվան։

—Առաջակայվին բեկորներն և թափուր տակառները կը գործածենք, պատասխանեց երիտասարդ նաւապետը։ Գործողութիւնը դժուարին է, բայց ոչ անհնարին,

վասն զի Մ-ւոռոբէի խարիսխները փոքր են։ Երբոր ծովը նետուին և յատակէն չբաժնուին, մեծ յոյս ունիմ յաջողելու։

—Լաւ։ Ուրեմն ժամանակ չկորսնցնենք, Ճո՛ն։»

Ամեն ոք, նաւաստի և ուղեւոր, տախտակամածին վրայ կոչուելով մասնակից եղան աշխատութեան։ Տասարի հարուածներով խորտակեցին առաջակայմը բռնող կազմածները։ Ստորին կայմը կոտրեր էր տախտակամածին վրայ ընկած ժամանակ, այնպէս որ թակաղաղը կրցաւ դիւրութեամբ հանուիլ։ Ճոն Մանկլը այն միահարթ տանիքը լաստ չինելու սահմանած էր։ Դատարկ տակառներուն վրայ կապեց զայն և խարիսխները կրելու վիճակի մէջ դրաւ։ Թեւճակ մ'ալ պետեղեց, որով կրնային վարել զայն, թէև տեղատութիւնը ճդիւ նաւուն յետակողմը պիտի քշէր։ Յետոյ, երբոր խարիսխները ծովուն յատակն իջնէին, լաստակը դիւրաւ կրնար նաւուն քով վերադառնալ, անկէ երկնցած չուանը քաշելով։ Այս գործ կիսով չափ աւարտած էր, երբոր արեւը միջօրէականին մօտեցաւ։ Ճոն Մանկլը կէնարվանի յանձնեց սկսուած գործողութիւնները շարունակել, և ինք իրենց գտնուած տեղը ճդելու զբաղեցաւ։ Այս ճդումը յոյժ կարեւոր էր։ Բարեբաղդաբար, Ճոն՝ Ոսիլ Հալլէյի սենեկին մէջ՝ Կրինուիչի դիտարանին մի տարեցոյցին հետ՝ անկիւնաչափ մը գտաւ, յոյժ աղտեղի, բայց ճշդելի կէտը գտնելու բաւական։ Ուստի մաքրեց զայն և տախտակամածին վրայ բերաւ։

Այս գործի, կարգ մը չարժուն հայելիներու միջոցաւ արեգակն հորիզոնը կը տանի կէս օր եղած վայրկենին, այսինքն երբոր արեւն իւր ընթացքին բարձրագոյն կէտը կը հասնի։ Կը հասկցուի ուրեմն, թէ այս գործողութեան համար պէտք է ճշմարիտ հորիզոն մը դիտել անկիւնաչափին դիտակովը, այսինքն այն հորիզոնը, զոր երկինքն ու ջուրը կը կազմեն իրարու հետ խառնուելով։ Արդ, երկինքն ընդարձակ սարաւանդի մը նման կ'երկննար դէպ ի հիւսիս, և դիտողին ու ճշմարիտ հորիզոնին միջև մնալով՝ զննութիւնն անհնարին կ'ընէր։

Երբոր այսպէս հորիզոնը կը պակսի, չինծոյ հորիզոն մը կը դնեն անոր տեղ։ Սովորաբար տափակ լականի մը մէջ սնդիկ կը լնուն և անոր վրայ կը կատարեն գործողութիւնը։ Սնդիկն ինքնին կատարեալ պէս հորիզոնաձեւ հայելի մը կը ներկայացնէ։ Ճոն սնդիկ չունէր նաւուն մէջ, բայց այս դժուարութեան առաջն առաւ

լայծ կղրաձիթ լցնելով տաշտի մը մէջ, որոյ մակերեւոյթն ըստ բաւականի կը ցո-լացնէր արեւուն պատկերն։

Արդէն գիտէր երկայնութեան աստի-ճանը, Նոր-Զելանտայի արեւմտեան ծո-վեզրին վրայ գտնուելով բարեբաղդաբար։ ապա թէ ոչ, առանց ժամանակաչափի չպիտի կրնար հաշուել։ Լայնութեան աս-տիճանը միայն կը պակսէր, ուստի զայն գտնելու ձեռնարկեց։

Անկիւնաչափին միջոցաւ արեւուն միջօ-րէական բարձրութիւնն առաւ հորիզոնին վրայէն։ Այս բարձրութիւն $68^0\ 30'$ աստի-ճան էր։ Հետեւաբար արեւուն զենիթէն հեռաւորութիւնն էր $21^0\ 30'$ աստիճան, ո-րովհետեւ այս երկու թիւերն իրարու վրայ աւելցնելով 90 աստիճան կը կազմեն։ Արդ այն օրը, փետրվար 3, արեւուն խոտո-րումը $16^0\ 30'$ աստիճան լինելով ըստ տա-րեցուցին, զայն զենիթական $21^0\ 30'$ աս-տիճանին վրայ աւելցնելով կ'ունենար 38^0 աստիճանի լայնութիւն։

Հետեւաբար Մափուպէի դիրքն այսպէս կը ճշդուէր. երկայնութիւն $171^0\ 13'$, լայ-նութիւն 38^0, հանդերձ քանի մ'աննշան վրիպակներով, որք գործեաց անկատա-րութենէն կրնային յառաջ գալ և չառնուիլ ի հաշիւ։

Ճոնաթընի քարտէսը գննելով, զոր Բա-կանէլ էտէնի մէջ գնած էր, Ճոն Մանկլս տեսաւ որ Մափուպէի նաւաբեկութիւնն Աստէայի ծովախորշին բացը պատահած էր, Փահուայի հրուանդանէն քիչ մը վեր, Օք-լանտի գաւառին ծովափանց վրայ։ Օքլանտ քաղաքն երեսուն-եօթներորդ զուգահե-ռականին վրայ լինելով, Մափուպէի աստիճան մը դէպ ի հարաւ ընկած էր։ Ուստի Նոր-Զելանտայի մայրաքաղաքն երթալու համար աստիճան մը դէպ ի հիւսիս ելնելու էր։

—Այս առաւելն քան-հինգ մղոնի ճան-բայ, ըսաւ Կլէնարվան, մեծ բան մը չէ։

—Ծովու վրայ բան մը չէ, բայց ցամա-քի վրայ երկար և տաժանելի է, պատաս-խանեց Բականէլ։

—Այդ պատճառաւ մեք ալ ամեն հնա-րաւոր ջանք պիտի ընենք, որպէս զի ցուրին երեսն հանենք զՄափուպէի։ Նաւուն դիրքը գտնելէ զկնի, գործողութիւնք վերսկան։ Կէս օրը քառորդ անցած՝ մակընթացու-թիւնը կատարեալ էր։ Ճոն չկրցաւ օգուտ քաղել անկէ, վասն զի խարիսխները դեռ չէին ծովը ձգուած։ Բայց և այնպէս բաւա-կան արտատանգութեամբ դիտեց զՄափուպէի։ Պիտի կրնա՞ր մակընթացութեան ազդեցու-թեամբ ցուրին երեսն ելնել, խնդիրն հինգ վայրկենի մէջ կը լուծուէր։

Սպասեց, քանի մը ճարճատիւն լսուեցաւ, որք՝ եթէ ոչ իրանին վեր եղնելէն, գոնէ ցնցուելէն յառաջ կուգային, բայց վերջապէս նաւը չշարժեցաւ տեղէն։

Աշխատութիւնք չարունակուեցան։ Ժամ երկուքին լաստը պատրաստ էր։ Խարիսխն անոր վրայ դրուեցաւ։ Ձոն և Ուիլսըն ալ ուղեկցեցան, չուան մը կապելով նաւուն խելքին։ Տեղատուութիւնը զանոնք քշեց, և խարիսխը ծովը ձգեցին վաթսուն գրկաչափ նաւէն հեռի և տասն գրկաչափ խոր յատակի մը վրայ։

Դիրքը լաւ էր, և լաստակը վերադարձաւ նաւուն քովէ։

Կը մնար խարսխակալէն կախուած մեծ խարիսխը։ Վար իջուցին զայն բաւական դժուարութեամբ։ Լաստը վերսկսաւ գիւր գործողութիւն, և շատ չանցաւ, երկրորդ խարիսխն ալ ծովը ձգուեցաւ միւսին ետին, տասնևհինգ գրկաչափ խորութեամբ։ Յետոյ, նաւուն կապուած պարանով իրենք գիրենք քաշելով՝ Ձոն և Ուիլսըն նաւը վերադարձան։ Խարիսխին պարանն ու ճոպանը բեռնաբարձ մեքենային կապելով՝ սպասեցին յառաջիկայ մակընթացութեան, որ կէս գիշերէն մէկ ժամ յետոյ պիտի զգացուէր։ Ծանր իրիկուան վեցն էր յայնժամ։ Հետեւաբար եօթն ժամ պիտի սպասէին։

Ձոն Մանկլը գոհութիւն յայտնեց իւր նաւաստեաց, և հասկցուց Բոկանէլի թէ իւր քաջասրտութեան և բարւոք ընթացից օգնութեամբ կրնար օր մը նաւաստեաց տասնապետ լինել։

Սակայն Պ. Օլպինէթ, նաւաստական այլ և այլ գործողութեանց օգնելէ յետոյ, խոհարանը վերադարձած էր։ Կազդուրիչ ճաշ մը պատրաստած էր յոյժ պատշաճաբար։ Բուռն ախորժակ մը կը թախանձէր նաւաձներն, և լիովին գոհ եղաւ. ամեն ոք ինքզինք վերանորոգեալ զգաց ապագայ աշխատութեանց համար։

Ճաշէն յետոյ, Ձոն Մանկլը, յառաջիկայ գործողութեան յաջողութիւնն ապահովելու համար պէտք եղած վերջին պատրաստութիւններն ըրաւ։ Նաւ մը ծանծաղէ հանելու համար՝ ամենամանր բաներն իսկ պէտք չէ անտես ընել։ Շատ անգամ գործը չյաջողիր՝ քանի մը գծաչափ թեթեւացում պակաս լինելուն պատճառաւ, և նաւուն ողնափայտը վեր չելներ աւազին մէջէն։

Ձոն Մանկլս՝ նաւը թեթեւցնելու համար՝ վաճառաց մեծ մասը ծովը նետել տուած էր. բայց մնացեալ կապոցները, ծանր գերանները, փոխանակելի առաջաստականները, քանի մը տակառաչափ

ձոյլ երկաթ, որ նաւախիհը կը կազմէր, նաւուն յետակողմը փոխադրեցան, որպէս զի յառաջակողմը վեր հանելու նպաստեն։ Ռիվսըն և Միւլարթի բաւական թուով ջրաքից տակառներ ալ թաւալեցին այն կողմը, նաւուն քիթը վեր առնելու համար։

Կէս գիշեր կը զարնէր՝ երբոր աւարտեցան այս վերջին աշխատութիւնք։ Նաւազները պարտասած էին, ցաւալի պարագայ այն վայրկենին՝ ուր խարխափիգ մեքենայն դարձնելու համար ուժ պէտք էր։ Այս պատճառաւ Ճոն Մանկլս նոր որոշում մ'ըրաւ։

Նոյն պահուն հովն հանդարտած էր. հազիւ քանի մը քմահաճ խորշոմ կը քաղեցնէր ծովուն մակերեւոյթին վրայ։ Ճոն, հորիզոնը դիտելով, նշմարեց որ հովն հարաւային արեւմուտքէն հիւսիսային արեւմուտք վերադառնալու միտում ունէր։ Նաւաստի մը չէր կրնար խաբուիլ այսպէս գոյներէն և մանաւանդ ձեւերէն։ Ռիվսըն և Միւլարթի ալ համակարծիք էին իրենց նաւապետին։

Ճոն իւր այս դիտողութիւնները Կէնարվանի հաղորդելով, նաւը ծանծաղէն հանելու գործողութիւնն հետեւեալ աւուր թողուլ առաջարկեց։

—Եւ ահաւասիկ պատճառներս, ըսաւ։

Նախ՝ չատ յոգնած ենք, և մեր բոլոր ուժին վարձատ ենք նաւը վեր հանելու համար։ Երկրորդ, երբոր նաւը վեր հանուի, ի՞նչպէս կրնանք վարել այսչափ վտանգաւոր խութերու մէջէն և խոր ժայռի ժամանակ։ Ոտտի լաւագոյն է լուսով գործել։ Ուրիշ պատճառ մ'ալ սպասելու կը յորդորէ զիս։ Հովը մեզ օգնութեան գալ կը խոստանայ, և ես կ'ուզեմ օգուտ քաղել անկէ. կ'ուզեմ որ ետ հրէ զայս հին իրան, երբոր ծովը վեր վերցնէ։ Վաղն, եթէ չեմ սխալիր, հովն հիւսիսային արեւմուտքէն պիտի փչէ։ Յայնժամ կը պարզենք մեծ կայմին առագաստներն, և կը նպաստեն նաւուն վերամբարձման։

Այս պատճառք վճռական էին։ Կէնարվան և բոլանէլ, որ ամենէն անհամբերներն էին, համոզուեցան, և գործողութիւնն հետեւեալ աւուր թողուեցաւ։ Գիշերը լաւ անցաւ։ Խարխափ վրայ հսկելու համար պահակերութիւն մը կազմուեցաւ։

Առաւօտ եղաւ, Ճոն Մանկլսի նախատեսութիւնն իրացաւ։ Հիւսիսային արեւմուտեան հով մը փչել սկսաւ, որ հետզհետէ զովանալու միտում ունէր։ Ուժով յաւելուած մ'էր՝ յոյժ օգտակար։ Նաւաստիք աշխատութեան կոչուեցան։ Ռոպէրթ, Ռիվսըն, Միւլրատի մեծ կայմին վրայ ելան,

հազարապետը, Կլէնարվան և Բականէլ ալ տախտակամածին վրայ կեցած՝ ամեն պատրաստութիւն ըրին առագաստները ճիշդ վայրկենին պարզելու համար։ Մեծ թակաղային առագաստակալը վեր քաշուեցաւ ամբողջովին, երկու մեծ առագաստներն իրենց հանգրէֆներուն վրայ։

Առաւօտեան ժամ ինն էր. տակաւին չորս ժամ պէտք էր մակընթացութեան լրանալուն։ Այս ժամեր ունայն չանցան։ Ճոն իւր առաջամեայ առաջակայմին չինութեան ու զետեղման գործածեց զանոնք։ Այսպէս, նաւը ջուրին երեսը հանուելուն պէս, պիտի կրնար հեռանալ այդ վտանգաւոր ծովեզերքէն։ Աշխատողք նոր ճիգեր թափեցին, և, կէս օր չեղած, առաջակայմին առագաստակալն ամրապէս զետեղուած էր իբրև առաջակայմ։ Տիկին Էլէնա և Մարի Կրանթ յոյժ օգտակար եղան և երկրորդ առագաստ մը կապեցին փոքր պապակային առագաստակալին վրայ։ Ուրախութեան առիթ մ'էր իրենց՝ հասարակաց փրկութեան համար աշխատիլ։ Այս հանգերձանաց ասարտելէն յետոյ, Մաքոռէյ, Թէ և վայելչութեան կողմէ չատ պակաս ունէր, գոնէ կրնար նաւարկել՝ ծովեզրէն չհեռանալու պայմանաւ։

Սակայն մակընթացութիւնը կը կատարուէր։ Ծովուն մակերեւոյթը կը բարձրանար ու ծփին կոհակներով խութերուն գըլուխները տակաւ կ'անհետանային, նըման ծովային կենդանեաց, որք իրենց լոյծ տարրին մէջ կը մտնեն։ Մեծ գործողութիւնը փորձելու ժամը կը մօտենար։ Տենդոտ անհամբերութեամբ կը սրտփէր ամենուն սիրտը։ Ոչ ոք կը խօսէր։ Ամենուն աչքը Ճոնի վրայ ուղղեալ էր. անոր հրամանին կ'սպասէին։ Ճոն Մանկլս, յետակողման բարձրաւանդակին եզրէն վար ծառած՝ մակընթացութեան բարձրացումը կը դիտէր։ Արտատանջ ակնարկ մը կը ձգէր խառնախակալ պարանին և մինչև ի լաստն երկընցած ճոպանին վրայ, որք նաւուն կապուած էին ամրապինդ։ Ժամ մէկին՝ ծովն իւր վերջին բարձրութեան հասաւ։ Հարթ հաւասար էր, այսինքն այն կարճատեւ պահուն մէջ էր, ուր ջուրն ոչ ևս կը բարձրանար, բայց տակաւին իջնել ալ չէր սկսիր։ Հարկ էր գործի ձեռնարկել անյապաղ։ Մեծ կայմին և թակաղային մեծ առագաստները պարզեցան և կայմին գլուխը զարդարեցին հովին ճգան տակ։

—Օ՛ն, ի բեռնաձի՛գն, գոչեց Ճոն։

Հրդեհի ջրհաններուն նման լծակներով մեքենայ մ'էր։ Կլէնարվան, Միլրատի, Ռոպէրթ մի կողմէ, Բականէլ, հազարապե-

տն և Օլսինէթ միւս կողմէ ծանրացան լծակներուն վրայ, որք չարժում կուտային մեքենային: Միանգամայն, Ձոն և Ուիլսըն, կողմնեցուցիչ լծակները կոխելով, իրենց ճիգն աւելցուցին իրենց ընկերներուն ճգանց վրայ:

—Օ՜ն, օ՜ն, և իմիասի՜ն, գոչեց երիտասարդ նաւապետը:

Պարանն ու չուանը ձկտեցան մեքենային զօրեղ գործողութեամբ: Խարիսխներն անշարժ կեցան և իրենց տեղէն չխախտեցան: Պէտք էր չուտով յաջողիլ: Ծովուն բարձրութիւնը քանի մը վայրկեան միայն պիտի տեւէր: Ձիգը կրկնապատկեցաւ: Հոսն ուժգին կը փչէր և առագաստները կայմին կը փակցնէր: Քանի մը ցնցումէ ետք նաւուն իրանին մէջ: Երկկայմը վեր ելնելու վրայ երեւցաւ: Թերեւս բազմի մը յաւելուածը պիտի բաւէր կորզել զայն աւազին մէջէն:

—Էլէնա՜, Մարի՜, գոչեց Կլէնարվան:

Երկու մանկամարդուհիք եկան նպաստել իրենց ընկերներուն ճգանց: Վերջին ճարճատիւն մը լսուեցաւ:

Բայց աւելի բան մը չեղաւ. նաւը չխախտեցաւ տեղէն: Գործողութիւնն ի դերեւ ելած էր: Տեղատուութիւնը կ'սկսէր արդէն, և յայտնի եղաւ թէ, մինչև իսկ հովին և ծովուն օգնութեամբ, այս նաւազք չպիտի կրնային նաւը վեր հանել:

ԳԼՈՒԽ Զ.

ՈՒՐ ՄԱՐԴԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՏԵՍԱԿԱՆՕՐԷՆ ԿԸ ԽՕՍՈՒԻ

Ձոն Մանկլսի փորձած փրկութեան առաջին միջոցն ապարդիւն եղած էր: Չարկ էր երկրորդին դիմել անյապաղ: Յայտնի է թէ չպիտի կրնային վերականգնել զՄոթոռքէ, և ոչ նուազ յայտնի է թէ միացած մեկ միջոցն էր մեկնիլ նաւէն:

Կեղակարծ օգնութիւններ սպասել նաւուն մէջ, անխոհեմութիւն էր, յիմարութիւն էր: Մինչև որ նախանձաբար նաւ մը հասնէր նաւաբեկութեան թատերավայրը, Մոթոռքէ ջախջախաբեկ կը լինէր: Մրրիկ մը, կամ արճակ ծովուն հովերէն յարուցեալ բուռն ալիքներ կը թաւալեն զայն աւազներուն վրայ, կը խորտակեն, ջարդուփշոր կ'ընեն, և բեկորները կը ցրուեն: Այդ անխուսելի վտանգէն առաջ Ձոն ցամաքն հասնիլ կ'ուզէր:

Ուստի առաջարկեց լաստ մը շինել, բաւական ամրապինդ, որպէս զի կարենայ Մոթոռքէի ուղեւորներն և պէտք եղածին

չափ նպարեղէն փոխադրել Ջելանտական ցամաքը։

Վիճաբանելու ժամանակ չէր, այլ գործելու։ Ուստի սկսան աշխատութիւնք, և բաւական յառաջացած էին՝ երբոր գիշերը վրայ գալով ընդմիջեց։

Իրիկուան ժամ ութին միլոցները, ճաշէն յետոյ, երբոր տիկին Էլէնա և Մարի Կրանթ իրենց խնամեակներուն վրայ կը հանգչէին, Բականէլ և իւր բարեկամք, նաւուն տախտակամածին վրայ ճեմելով, ծանր նիւթոց վրայ կը խօսակցէին։ Ոսպերթ չէր ուզած բաժնուիլ անոնցմէ։ Այս քալ պատանեակ խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր զանոնք, և պատրաստ էր ծառայութիւն մը մատուցանելու և վտանգաւոր ձեռնարկութեան մ'ինքզինք նուիրելու։

Բականէլ հարցուցեր ՚էր Ճոն Մանկլի թէ արդեօք լաստը չէ՞ր կրնար մինչև Օքլանտ երթալ ծովեզրն ի վեր, փոխանակ ցամաքն հանելու գիւր ուղեւորներ։ Ճոն պատասխանեց թէ այնպիսի նաւարկութիւն մ'անհնարին էր թերակատար լաստով մը։

—Ուրեմն, ըսաւ Բականէլ, ի՞նչպէս կարելի էր նաւուն կուրսովը կատարել ինչ որ չենք կրնար լաստով փորձել։

—Այո՛, ի հարկին, պատասխանեց Ճոն Մանկլը, բայց պայմանաւ որ ցերեկը նաւարկենք և գիշերը խարիսխ նետենք։

—Ուրեմն, այն թշուառականներն, որք մեզ աստ թողլով մեկնեցան...

—Օ՛, անոնք արբեալ էին, պատասխանեց Ճոն Մանկլը, և շատ կը կասկածիմ որ այս խոր մթութեան մէջ իրենց կեանքով վճարած են իրենց ըրած վատութիւնը։

—Անոնց ալ գէշ, մեզ ալ, ըսաւ Բականէլ, վասն զի այն կուր կրնար շատ օգտակար լինիլ մեզ։

—Ի՞նչ կ'ուզէք, Բականէ՛լ, ըսաւ Նարվան։ Լաստով պիտի երթանք ի ցամաք։

—Ճշդիւ այդ բանէն զգուշանալ կ'ուզէի, պատասխանեց աշխարհագիրն։

—Ինչո՞ւ համար Բամբաներուն և Աւստրալիոյ մէջ մեր ըրած այնչափ ուղեւորութենէն յետոյ՝ քան մղոնի ուղեւորութիւն մը կրնա՞յ վախցնել մեզ պէս յոգնելու վարժուած մարդիկ։

—Բարեկա՛մք, պատասխանեց Բականէլ, ես չեմ երկբայիր ո՛չ մեր անվեհերութեան և ո՛չ մեր ընկերաց քաջութեան վրայ։ Քանի մղո՛ն, բան մ'ըսել չէ ուրիշ որ և է երկրի մէջ, բայց ոչ ի Նոր-Ջելանտա։ Գիտէք որ ես երկչոտ մարդ չեմ. ես թելադրեցի ձեզ ուղեւորիլ Ամերիկայի մէջ, Աւստրալիոյ մէջ։ Բայց աստ, դարձեալ կ'ըսեմ, աւելի լաւ է ամեն բան յանձն առնուլ քան թէ ուղեւորիլ այս դաւաճան երկրի մէջ։

—Աւելի լաւ է ամեն բան յանձն առնուլ քան թէ անհրաժեշտ կորստեան մատնուիլ խրեալ նաւու մը վրայ, ըսաւ ձոն Մանկլը:

—Նոր-Զելանտացին այդ չափ վախնալու ի՞նչ կայ, հարցուց Կլանէրվան:

—Վայրենիները, պատասխանեց Բականէլ:

—Վայրենինե՛րը. ե՞նք կրնար խոստովիլ անոնցմէ, ծովեզրէն ուղեւորելով: Մնաց որ, քանի մը թշուառականաց յարձակումը չկրնար հոգ պատճառել տասն զինեալ և քաջասիրտ եւրոպացւոց:

—Թշուառականաց հետ չէ մեր գործը, պատասխանեց Բականէլ գլուխը ցնցելով: Նոր-Զելանտացիք սարսափելի ցեղեր կազմած են, որք կը կռուին անգլիական տիրապետութեան դէմ, իրենց երկիրն արշաւողներուն դէմ: Շատ անգամ կը յաղթեն անոնց, և միշտ կ'ուտեն զանոնք:

—Մարդակե՛րք, գոչեց Ռոպերթ, մարդակե՛րք:

Յետոյ սա երկու բառը մրմնջեց. «Փո՛յրա, տիկին Էլէնա՛:»

—Մի՛ վախնար, որդեա՛կ, ըսաւ անոր Կլէնարվան սրտապնդել ուզելով տղան: Մեր Բականէլ բարեկամը կը չափազանցէ:

—Չեմ չափազանցեր բնաւ, պատասխանեց Բականէլ: Ռոպերթ ցոյց տուաւ ար-

դէն թէ մարդ է. ես ալ մարդու տեղ դնելով զայն, ճշմարտութիւնը չծածկեցի իրմէ: Նոր-Զելանտացիք՝ մարդակերաց ազգէն անպզտրուքն են, չըսեմ որկրամոլն: Ինչ որ ակռաներնուն տակ ընկնի, կը լափեն: Պատերազմին անոնց համար որորոշութիւն մ'է մարդ կոչուած հաւեղ կենդանւոյն, և պէտք է խոստովանիլ թէ միակ պրամահրանական պատերազմն է: Եւրոպացիք կ'ապաննեն ու կը թաղեն իրենց թշնամիները: Վայրենիք կ'ապաննեն ու կ'ուտեն, և ինչպէս շատ լաւ ըսած է Թուանէլ հայրենակիցս, այնչափ մեծ չարութիւն չէ իր մեռեալ թշնամին խորովելով ուտելն, որչափ ապաննել զայն, երբոր չուզեր մեռնիլ:

—Բականէ՛լ, պատասխանեց հազարապետը, վիճաբանութեան նիւթ կայ, բայց ժամանակը չէ: Ուտուիլը տրամադրական վիճակ կամ ոչ, մեք չենք ուզեր ուտուիլ: Բայց քրիստոնէութիւնն ի՞նչպէս չկրցաւ ջնջել զայդ մարդակերական սովորութիւն:

—Կը կարծէք թէ Նոր-Զելանտացւոց ամենն ալ քրիստոնեա՞յ են, ըսաւ Բականէլ: Փոքր մասն է միայն, և քարոզիչք տակաւին և յոյժ յաճախ զոհ են այդ խուժերուն: Անցեալ տարի վերապատուելի Ուալքնէր նահատակեցաւ տոսկալի կտտանօք: Մատ-

ւիք կախելին զայն: Իրենց կանայք անոր աչերը փորեցին: Յետոյ արիւնը խմեցին և ուղեղը կերան: Եւ այս խժդժութիւն կատարեցաւ 1864 ին Օքտոբիրի մէջ, Օքլանտէն քանի մը փարսախ հեռի, գոեթէ անգլիական իշխանութեանց աչքին առջեւ: Բարեկա՛մք, մարդկային ցեղի մը բնութիւնը փոխելու համար դարեր պէտք են, ինչ որ եղած են Մաուրիք, նոյն պիտի լինին տակաւին երկար ժամանակ: Իրենց բոլոր պատմութիւնն արեամբ չաչախեալ է: Մրջոմի նաւազ խողխողած ու կերած են, թատանի նաւաստիներէն սկսեալ մինչեւ Հաւաի նաւաստիներն: Եւ պէտք չէ կարծել թէ սպիտակամորթ մարդոց միսը գրգռած է նոցա ախորժակն: Եւրոպացւոց գալէն շատ առաջ Զելանտացիք մարդասպանութեամբ կը յագեցնէին իրենց որկրամոլութիւնը: Բազմաթիւ ուղեւորք ապրած են անոնց մէջ և մարդակերական ճաշերու ներկայ գտնուած, ուր բազմականք՝ կնոջ մը կամ տղու մը միսով չինուած փափուկ կերակուր մը ճաշակելու փափաքէն մլայն մղեալ էին:

—Բէ՜հ, ըսաւ Հազարապետն, այդ պատմութիւնք մեծ մասամբ ուղեւորաց երեւակայութենէ ելած են: Ուղեւորք սովորաբար կը սիրեն վտանգաւոր երկիրներէ եւ մարդակերաց ստամոքսներէ վերադարձած համարուիլ:

—Զափազանցութեան բաժինը կը հաներեմ, պատասխանեց Բականէլ: Բայց արժանահաւատ մարդիկ պատմած են իմ ըսածներս, Թէնտալ և Մարտէն քարոզիչք, Տիմոն ա'Իւրվիլ, Լաբլաս նաւապետք եւայլք. և ես կը հաւատամ և պարտիմ հանդատալ նոցա պատմութեանց: Զելանտացիք անագորոյն են բնութեամբ: Իրենց պետրուն մեռած ժամանակ՝ մարդկային զոհեր կը մորթեն: Կը կարծեն այդ զոհագործութեամբք ամոքել վախճանելոյն ցաւուն, որպէս զի չհարուածէ ողջ մնացողներն, և միանգամայն ծառայներ ընծայել նմա միւս կենաց համար: Բայց որովհետեւ այդ ապագայ ծառայներն սպաննելէ յետոյ կ'ուտեն, իրաւունք կ'ունենանք հաւատալու թէ անապաշտութենէ աւելի իրենց ստամոքսն է պիրենք մղողը:

—Սակայն, ըսաւ Ճոն Մանկլը, ես կը կարծեմ թէ նանրահաւատութիւնն ալ դեր ունի մարդակերական սեռարանաց մէջ: Այս պատճառաւ կ'ըսեմ թէ, երբոր կրօնքը փոխուի, բարոյք ալ կը փոխուին:

—Լա՛ւ, բարեկամ իմ Ճոն, պատասխանեց Բականէլ դուք ազատ մարդակերութեան ծագման ծանր խնդիրը կը յուզէք: Կրօ՞նքը թէ քաղցը մղած է մարդիկ պիրար ուտելու: Այս վիճաբանութիւն անօ-

գուտ է այս պահուս: Ինչո՞ւ համար մարդակերութիւն կայ, այս խնդիր լուծուած չէ տակաւին, բայց կայ, և այս ալ ծանր իրողութիւն մ'է, որուն վրայ մտահոգութեամբ խորհելու լուրջ պատճառներ ունինք:

Բականէլի խօսքը ճշմարիտ էր: Մարդակերութիւնն երկարժամանակեայ ախտ մ'է Նոր-Զելանտացի մէջ, ինչպէս նաև Ֆիճի կղզեաց և Թորէսի նեղուցին մէջ: Ընտանեկրօնութիւնն ալ միջամտած է անշուշտ այդ գարշելի սովորութեանց մէջ, բայց մարդակերք կան, ուր որսական կենդանիք հազուագիւտ են և քաղցը մեծ: Վայրենիները նախ իրենց քաղցն յագեցնելու համար սկսած են մարդու միս ուտել: Յետոյ քուրմերը կանոնաւորած և նուիրագործած են զայդ ճիւաղական սովորութիւն: Եւ այսպէս ճաշը կրօնական արարողութիւն եղած է:

Միւս կողմէ, դիւրար ուտելն յոյժ բնական բան մը կը համարին Նոր-Զելանտացիք: Քարոզիչներն յաճախ հարցաքննած են զանոնք մարդակերութեան վրայ: Հարցուցած են թէ ինչո՞ւ համար կ'ուտէին իրենց եղբայրները: Պետերը կը պատասխանէին, թէ ճուկերը զիրար կ'ուտեն, շուներն զմարդիկ կ'ուտեն, մարդիկ շուները կ'ուտեն, շուները զիրար կ'ուտեն: Իրենց դիտաբանու-

թեան մէջ իսկ աւանդութիւն կայ թէ առաջնեկէն մին ուրիշ առաջած մը կերած է: Այսպիսի նախընթացներէ յետոյ ի՞նչպէս կարելի է դիմանալ իր նմանն ուտելու հեշտութեան:

Ակէ զատ, Զելանտացիք կը հաւատան թէ մեռեալ թշնամի մ'ուտելով անոր հոգեկան մասը կը ջնջեն, և հետեւապէս կը ժառանգեն անոր հոգին, զօրութիւնը, քաջութիւնն, որք մասնաւորապէս անոր ուղեղին մէջ պարփակեալ են: Այս պատճառաւ մարդուն այդ մասն ամենէն պատուականն և ընտիր կերակուրն է հացկերոյթներու մէջ:

Սակայն Բականէլ պնդեց, ո՛չ առանց իրաւանց, թէ զգայականութիւնը, մանաւանդ պէտքը մարդակերութեան կը գըրդռէր զՆոր-Զելանտացիս, և ոչ միայն Մելկէանիոյ վայրենիներն, այլ և նոյն իսկ Եւրոպիոյ վայրենիները:

— Այո՛, հազարապետ, մարդակերութիւնն երկար ժամանակ տիրած է ամենէն աւելի քաղաքակրթեալ ազգաց նախնիքներուն մէջ, և անձնականութեան մի՛ տանիք ըսածս, մասնաւորապէս Սկովտացւոց մէջ:

—Ճշմարի՞տ կ'ըսէք, հարցուց Մաք Նապս:

—Այո՛, հազարապետ, ըսաւ Բականէլ: Երբոր Սկովտիոյ Ատոիկոլին վրայ Ս. Հե-

րոնիմոի գրութեան ինչ ինչ հատուածները կարդաք, կը տեսնէք թէ ի՛նչ էին ձեր նախնիք: Եւ առանց պատմական ժամանակներէն անդին անցնելու, Ելիզաբեթի գահակալութեան օրով, նոյն իսկ այն դարուն մէջ, ուր Շէյքսբիր իւր Շայլոքը կ'երազէր, միթէ սկովտացի աւազակ մը, Սաունէյ Պին, մարդակերութեան ոճրին համար չդլխատուեցա՞ւ: Եւ ի՞նչ զգացում մղած էր զայն մարդկային միս ուտելու: Կրո՞նքը: Ո՛չ, այլ քաղցը:

—Քա՛ղցը, ըսաւ Ճոն Մանկլս:

—Այո՛, քաղցը, պատասխանեց Բականէլ, բայց մանաւանդ մարդկային մարմնոյն մէջ գտնուած բորակածինով իւր մարմինը զօրացնելու հարկը: Մոտ և նչայաւոր տուներ (ընդեղէններ) ուտելով թոքերուն աշխատութիւնը կը դիւրանայ, բայց ուժեղ և ժիր լինելու համար պէտք է արտադրիչ կամ կենդանական կերակուրներ ուտել, որք կը զօրացնեն մկունքը: Յորչափ ժամանակ Մաուրիք անդամ չլինին ընդակերաց ընկերութեան, միս պիտի ուտեն, և մարդու միս:

—Ինչո՞ւ համար անասնոց միս չպիտի ուտեն, ըսաւ Կլէնարվան:

—Վասն զի չունին, պատասխանեց Բականէլ, և պէտք է գիտնալ զայս, ոչ թէ չքմեղացնելու, այլ բացատրելու համար անոնց մարդակերական ունակութիւնը: Զորքոտանիք, մինչեւ իսկ թռչունք հազուագիւտ են այս հիւրաւերժ երկրի մէջ: Այս պատճառաւ Մաուրիք, ի վաղուց անտի, մարդկային միս կ'ուտեն: Մինչև իսկ յատուկ եղանակներ կան մարդ ուտելու, ինչպէս որ քաղաքակրթեալ երկիրներու մէջ յատուկ եղանակ կայ որսեղջէն ուտելու: Յայնժամ կը կատարուին մեծ սրսորդութիւնք, այսինքն մեծ պատերազմք, և ամբողջ ցեղեր կերակուր կը լինին յաղթականաց:

—Ուրեմն, Բականէ՛լ, ըսաւ Կլէնարվան, ըստ ձեր կարծեաց, մարդակերութիւնը չպիտի վերնայ Նոր-Զելանտայէն, մինչև որ սչխարները, եզներն ու խոզերը չբազմանան այդ երկրի մարգագետիններուն մէջ:

—Անտարակոյս, սիրելի՛ Լորտս, և դարձեալ տարիներ պէտք են մինչև որ Մաուրիք մարդու միսն ուրիշ ամեն միսերէ աւելի սիրելու ունակութիւնը կորսնցնեն. վասն զի իրենց հարց սիրածն իրենք ալ պիտի սիրեն երկար ժամանակ: Իրենց խօսքին նայելով, մարդկային միսը խոզենուոյ համ ունի, բայց առաւել անուրժելի: Սպիտակամորթ մարդոց միսն այնչափ չեն սիրեր, վասն զի սոքա աղ կը խառնեն իրենց

կերակուրներուն մէջ, որով իրենց միսը մսանալուր համ մը կ'ստանայ, զոր չատ չեն սիրեր փափուկ ճաշակ ունեցող մարդակերք։

—Դժուարահաճ են եղեր, ըսաւ հազարապետը։ Բայց զայդ միս, ճերմակ լինի կամ սև, հո՞ւմ կ'ուտեն թէ եփած։

—Ի՞նչ փոյթ ձեզ, պարո՛ն Մաք Նապս, գոչեց Ռոպէրթ։

—Ի՞նչ ըսել է, տղա՛ս, պատասխանեց հազարապետը լրջաբար։ Եթէ երբէք մարդակերի մ'ակռաներուն տակ պիտի ընկնիմ, աւելի կը սիրեմ եփուած լինիլ։

—Ինչո՞ւ համար։

—Ապահով լինելու համար թէ ողջ չպիտի ուտուիմ։

—Լա՛ւ, հազարապետ, բայց եթէ ողջ եփուիք։

—Ձմարիտն այս է թէ, պատասխանեց հազարապետը, կէս թագադրամի չեմ տար զայդ ընարութիւն։

—Ինչ և իցէ, Մաք Նապս, եթէ կրնայ հաճոյ լինիլ ձեզ, ըսաւ Բականէլ, գիտցիք թէ Նոր-Զելանտացիք մարդկային միսն եփած կամ ապխտած կ'ուտեն։ Կիրթ ճաշակ ունին և խոհարարութիւն գիտեն։ Բայց, իմ հաշուիս, ուտելու գաղափարը դժպհի է ինձ։ Իւր կեանքը վայրենւոյ մը ստամոքսին մէջ աւարտե՛լ, փո՛ւ։

—Վերջապէս, ըսաւ Ճոն Մանկլը, կը հետեւի այդ ամենէն թէ պէտք չէ ընկնիլ այդ վայրենեաց ձեռք։ Ցուսանք նաև թէ օր մը քրիստոնէութիւնը պիտի ջնջէ այդ անհեթեթ սովորութիներն։

—Այո՛, պէտք է յուսանք, պատասխանեց Բականէլ. բայց, հաւաստեցէք ինձ թէ, մարդկային մսին համն առնող վայրենի մը դիւրաւ կը հրաժարի զայն ուտելէ։ Հետեւեալ եկու իրողութիւններէն կրնաք դատել։

—Ո՞յք են, տեսնենք, Բականէ՛լ, ըսաւ Կլէնարվան։

—Առաջինը Պրէզիլիոյ Ճիվվիթաց ընկերութեան տարեգրութիւններուն մէջ պատմուած։ Բորթուկէզ քարոզիչ մը Պրէզիլիացի հիւանդ պառաւի մը կը հանդիպի, որոյ քանի մ'աւուր կեանքը մնացած էր։ Ճիվվիթը քրիստոնէական ճշմարտութիւնները կը հասկըցնէ, զոր օրահասականն առանց հակառակութեան կ'ընդունի։ Քարոզիչն հոգւոյն կերակուրը տալէն ջ'ինի, մարմնոյն կերակուրն ալ հոգալով, քանի մ'եւրոպական անուշեղէն կուտայ իր ապաշխարուհւոյն։ «Աւա՛ղ, կը պատասխանէ պառաւն. իմ ստամոքս բնաւ որ և է տեսակ ուտելիք չկրնար մարսել. բան մը միայն կայ զոր կ'ուզէի ճաշակել, բայց դժբաղդաբար ոչ ոք կրնայ հայթայթել ատ։

—Ի՞նչ, կը հարցնէ Ճիվվիթը։

—Ա՛խ, որգե՛ակ իմ, տղեկի մը ձեռքը կը թուի ինձ թէ մեծ հաճոյքով պիտի կրծէի։»

—Ի՛նչ, այդչափ համե՞ղ է, հարցուց Ռոպէրթ։

—Երկրորդ պատմութիւնս պիտի պատասխանէ քեզ, տղա՛ս, ըսաւ Բականէլ։ Օրին մէկը քարոզիչ մը խստիւ կը դատուէր վայրենւոյ մ՚առջեւ մարդկային միս ուտելու սոսկալի և աստուածընդդէմ սովորութիւնն։ «Անչուշտ անախորժ ալ պարտի լինիլ առելցուց քարոզիչն։

—Ա՛հ, հա՛յր իմ, պատասխանեց վայրենին, ըղձակաթ նայուածք մը ձգելով քարոզչին վրայ, ըսէք թէ Աստուած կ՚արգելու, բայց մի՛ ըսէք թէ անախորժ է։ Եթէ անգամ մը ճաշակած լինէի՛ք . . . ։»

ԳԼՈՒԽ Է.

ՈՒՐ ՎԵՐՋԱՊԷՍ ԿՐ ՄԱՏՉԻՆ ԱՅՆ ՅԱՄԱՌՆ, ՈՒՍՏԻՑ ՓԱԽՉԻԼ ՊԷՏՔ ԷՐ

Բականէլի պատմած իրողութիւնք անվիճելի էին։ Նոր-Զելանտացւոց խժդժութիւնն աներկբայելի էր։ Բայց եթէ հալա-

րապատիկ իսկ մեծ լինէր այդ վտանգ, յանձն առնուլ պէտք էր։

Ճոն Մանկլս կ՚զգար թէ հարկ էր անյապաղ մեկնիլ նաւէն, որ անհրաժեշտ քայքայման դատապարտեալ էր։ Այս երկուց վտանգաց միջև, որոց միւն անտարակուսելի էր և միւսն հաւանական, վարանումի հնար չէր։

Իսկ անցորդ նաւէ մը տեսնուելով հիւրընկալուելու բարեբաղդութեան վրայ յոյս չէր կրնար դրուիլ բանաւորապէս։ Մաթոսէի Նոր-Զելանտիոյ ծովեզերաց մօտ դադար փնտռող նաւուց ճանդուն վրայ չէր։ Այն նաւեր, կամ՝ աւելի վեր՝ Օքլանտ, կամ՝ աւելի վար՝ Նիւ-Բլիմութ կը հանդիպին։ Այդ Մաթոսէի խրտնմն այդ երկու կէտերուն միջեւ տեղի ունեցած էր, Իքա-Նա-Մաուիի ծովափանց ամայի մասին վրայ։ Վտանգաւոր և չարաշուք ծովեզր, յորմէ խուսափիլ կը ջանան միշտ նաւերն, և եթէ հողմը գիրենք հոն տանի, շուտով կը մեկնին։

—Ե՞րբ պիտի չուենք, հարցուց Կլենարվան։

—Վաղ առաւօտ ժամը տասնին, պատասխանեց Ճոն Մանկլս։ Մակընթացութիւնը բարձրանալ կ՚սկսի և մեզ ցամաք կը քշէ։

Հետեւեալ օրը, փետրվար 5, ժամ ու-

թին, լաստին չինուԹիւնն աւարտած էր: Ձոն աւելն հոգ տարած էր այդ չինուԹեան: Առաջակայմին Թակաղաղն, որ խարիսխանեբուն ընկերման ծառայեց, չէր բաւեր ուղեւորներն ու նպարները փոխադրելու: Աւելի ամուր, դիւրաւ վարելի և ծովու դիմացող լաստ մը պէտք էր իննն մղոն տեղ նաւարկելու համար: Նաւուն կայմերը միայն կրնային ընձեռել այնպիսի լաստ մը հարկաւոր եղած ատաղձն:

Ուիլսըն և Միւրատի ձեռն ի գործ արկած էին: Նախ մեծ կայմին կազմածները կտրեցին, յետոյ տապարի հարուածներով կայմը տակէն կտրեցին, որ նաւուն աջակողմեան պատնէշներուն վրայ ընկաւ ճարճատմամբ: Մոթոոլէ պարզ նաւակամուրջ մը դարձաւ: Ստորին կայմը, Թակաղաղի և պապկայի կայմերը սղոցեցան ու բաժնուեցան իրարմէ: Յայնժամ լաստին գլխաւոր մասերը ջուրն իջան, և յառաջակայմին կտորներուն հետ կապուեցան ամրապինդ: Ձոն անոնց անջրպետներուն մէջ վեց-եօթն դատարկ տակառ զետեղեց որք լաստը ջուրէն վեր պիտի բռնէին:

Այս առաջին և ամրապէս զետեղեալ շարքի վրայ Ուիլսըն վանդակաձեւ տախտակ մը զետեղեց, որպէս զի լաստին վրայ խուժող կոհակները չկրնային հոն մնալ, և

ուղեւորք ազատ մնային Թրջելէ: Ասկէ զատ, լաստին չուրջը պատող տակառք կը պահպանէին զայն խոշոր ալիքներէ:

Առաւօտուն Ձոն տեսնելով որ հովը նպաստաւոր էր, փոքր պապկային առաջաստակալը լաստին մէջտեղը տնկեց իբրև կայմ, ապաւանդակներով ու սարաններով ամրապնդեց, և առագաստ մը յարմարցուց: Միանգայն լայնաթի Թեւճակ մը զետեղեց լաստին յետակողմին, որպէս զի կարելի լիներ կառավարել զայն՝ եթէ հովին ըստ բաւականի արագուԹիւն տար նմա:

Այսպէս, այս լաստ, լաւագոյն պայմաններու մէջ դրուած, կրնար դիմանալ ծովուն ծփանաց: Բայց պիտի կրնա՞ր կառավարիլ, պիտի կրնա՞ր ծովեզրը հասնիլ, եթէ հովը փոխուէր: Խնդիրն այս էր: Ժամ ինն ին սկսաւ բեռնաւորումը:

Նախ նպարները դրուեցան բաւական քանակուԹեամբ, մինչեւ Օքլանտ բաւելու չափ, վասն զի պէտք չէր յոյս դնել այդ ապաշնորհ երկրին բերոց վրայ:

Օլսինէթի մառանէն քիչ մ'ապխտեալ միս ելաւ, որ Մոթոոլէի ուղեւորուԹեան առաԹիւ գնուածներուն մնացորդն էր: Ետին նաւուն խոշոր նպարներուն վրայ ընկնիլ հարկ եղաւ, այն է վար տեսակէ պաքսիմատներու և երկու տակառակ ալկերի: Օլսինէթ ամօԹահար մնացած էր:

Այս նպարք արկղներու մէջ դրուելով՝ ամրակէս փակուեցան, ծովուն ջուրէն անթափանց մնալու կերպիւ, և արկղները կայմին ստորոտին կապուեցան դիմացկուն պարաններով։ Նմանապէս ապահով և չոր տեղ մը դրուեցան զէնքերն ու ռազմամթերքը։ Բարեբաղդաբար, ուղեւորք լաւ սպառազինեալ էին հրացաններով ու տորճանակներով։

Խարիսխ մ'ալ հետ առնուեցաւ, որպէս զի, եթէ Ճոն մակընթացութեան մը միջոցին չկրնայ ցամաք հասնիլ, կարենայ ծովուն բացն երկաթ նետելով սպասել։

Ժամը տասնին մակընթացութիւնն կզալի լինել սկսաւ։ Հովը մեղմիւ կը փչէր հիւսիսային արեւմուտքէն։ Թեթեւ կոհակներ կը ծածանէին ծովուն երեսը։

—Պատրա՞ստ ենք, հարցուց Ճոն Մանկլս։

—Ամեն բան պատրաստ է, նաւապետ, պատասխանեց Ուիլսըն։

—Օ՛ն, լաստն իջէք, գոչեց Ճոն։

Տիկին Էլէնա և Մարի Կրանթ, պարանէ կոշտ սանդուղէ մը վար իջան և կայմին ստորոտը կապուած արկղերուն վրայ նստան, միւս ուղեւորք ալ անոնց մօտ։ Ուիլսըն ձեռք առաւ ղեկը. Ճոն առագաստին հանգրէմներուն քով կեցաւ։ Միւրրատի՝ լաստը նաւուն կապող պարանը կտրեց։

Առագաստը պարզեցաւ և լաստն սկսաւ դէպ ի ցամաք դիմել հովին և մակընթացութեան օգնութեամբ։

Ցամաքն իննմղոն հեռաւորութիւն ունէր, զոր լաւ թեւաճակօք գինեալ մակոյկ մը կրնար երեք ժամու մէջ առնուլ։ Բայց լաստով կարելի չէր։ Եթէ հովը չարունակէր, թերեւս մէկ մակընթացութեան միջոցին կարենային հասնիլ։ Բայց եթէ հովը դադրէր, տեղատուութիւնն ետ պիտի քշէր զանոնք, և հարկ պիտի լինէր ծովուն բացը խարխսելով սպասել յաջորդ մակընթացութեան։ Ծանր գործ, որ մեծ մտահոգութիւն կը պատճառէր Ճոն Մանկլսի։

Սակայն կը յուսար յաջողիլ։ Հովը կը զօրանար։ Մակընթացութիւնը ժամը տասնին սկսելով, պարտ էին ժամ երեքին ցամաք հասնիլ, ապա թէ ոչ՝ պիտի հարկադրէին խարիսխ նետել, կամ ծովուն բացը քշուիլ նահանջող ծովէն։

Ուղեւորութեան սկիզբն յաջող եղաւ։ Փիչ քիչ խարակաց սև գլուխներն և խրուտներուն դեղին ծածկոյթն աներեւոյթ եղան ծովուն ջուրերուն բարձրացմամբ։ Մեծ ուշադրութիւն, ծայրագոյն ճարտարութիւն հարկ եղաւ՝ ղեկի չատ չհնազանդող և դիւրաւ խոտորող լաստ մը վարելու և ջուրին մէջ ծածկուած խութերուն չզարնուելու համար։

Կէս օրին, տակաւին հինգ մղոն հեռի էին ցամաքէն։ Օդը բաւական պարզ լինելով, ցամաքին գլխաւոր ելեւէջները կրնար նշմարուիլ։ Հիւսիսային արեւելեան կողմը լեռ մը կը տեսնուէր երկու հազար հինգ հարիւր ոտք բարձրութեամբ։ Տարօրինակ ձեւերով կը պատկերանար հորիզոնին վրայ, և իր ուրուագիրը կապկի մ'ընչացուկ կիսադէմը կը ներկայացնէր գլխիվայր։ Բիրոնժիա լեռն էր, որ ճշդիւ երեսուն-ութերորդ զուգահեռականին վրայ կ'ընկնէր, ըստ աշխարհացոյց քարտիսին։

Կէս օրը կէս ժամ անցած, Բականէլ նշմարել տուաւ թէ բոլոր խարակներն անհետացած էին մակընթացութեան ալիքներուն տակ։

—Բայ ի մէկէն, պատասխանեց տիկին Էլէնա։

—Ո՞րն է, տիկի՛ն, հարցուց Բականէլ։

—Ահա, պատասխանեց տիկին Էլէնա, սև կէտ մը ցուցնելով մղոնի մը չափ հեռի։

—Իրաւ է, պատասխանեց Բականէլ։ Ջանանք նշանակել ադոր դիրքն, որպէս զի չերթանք վրան ընկնինք, վասն զի մակընթացութիւնը՝ չատ չանցած՝ զայդ ալ պիտի ծածկէ։

—Ճշդիւ լեռան հիւսիսային անկիւնին ուղղութեամբն է, ըսաւ Ճոն Մանկլս։ Ուիլ-

սը՛ն, ուշադրութիւն ըրէ որ բացէն անցնինք։

—Այո՛, նաւապե՛տ, պատասխանեց նաւաստին իր բոլոր ծանրութեամբ ետեւի հատ թեւճակը կոխելով։

Կէս ժամու մէջ կէս մղոնի չափ ճանբայ առին։ Բայց, զարմանալի բան, սև կէտը միշտ ծովէն դուրս ցցուած էր։ Ճոն ուշադրութեամբ անոր կը նայէր, և լաւ դիտելու համար Բականէլի դիտակն առաւ։

—Խարակ չէ, ըսաւ յետ վայրկեան մը զննելու, ծփին մարմին մ'է, որ կ'ելնէ ու կ'իջնէ կոհակաց հետ։

—Արդեօք Մափուրէի կայմերէն միոյն կտո՞րն է, հարցուց տիկին Էլէնա։

—Ո՛չ, պատասխանեց Կլէնարվան, այնպիսի բեկորք չեն կրնար այսչափ հեռանալ նաւէն։

—Կեցի՛ք, գոչեց Ճոն Մանկլս, ճանչցեցի, կո՛ւրն է։

—Երկկայմին կո՛ւրն, ըսաւ Կլէնարվան։

—Այո՛, Միլըրտ, երկկայմին կուրը, տակն ի վերայ շրջած։

—Թշուառնե՛րը, գոչեց տիկին Էլէնա, ծովամոյն եղեր են։

—Այո՛, տիկին, պատասխանեց Ճոն Մանկլս, և այնպէս պիտի լինէին, վասն զի այս խութերուն մէջ, ալեծուփ ծովու մը

վրայ, մթին դիշերի մը մէջ, աներկբայաբար ի մահ կը դիմէին։

—Երկինք ողորմի իրենց, մրմնջեց Մարի Կրանթ։

Քանի մը վայրկեանի չափ ուղեւորը լուռ կեցած կը դիտէին զայն չնչին նաւակ, որ հեռզհեռէ իրենց կը մօտենար։ Անտարակոյս վեր ի վայր շրջած էր ցամաքէն չորս մղոն հեռի, և մէջը նաւաղներէն ոչ մին փրկուած։

—Բայց այս կուր կրնայ օգտակար լինիլ մեզ, ըսաւ Կլէնարվան։

—Այո՛, պատասխանեց Ճոն Մանկլս։ Կուրին վրայ ուղղէ լաստը, Ուիլսո՛ն։

Լաստին ուղղութիւնը փոխուեցաւ, բայց հովն ալ քիչ քիչ ընկաւ, և հազիւ երկու ժամէն կրցին հասնիլ կուրին քով։ Միւլրատի, լաստին առջեւը կեցած լինելով, բախման առաջն առաւ, և վերիվայր դարձած կուրն եկաւ լաստին յարեցաւ։

—Ունա՞յն է, հարցուց Ճոն Մանկլս։

—Այո՛, նաւապետ, պատասխանեց նաւաստին, ունայն է, և եղերքը բացուած են, ուստի չկրնար ծառայել մեզ։

—Բնաւ օգտակար չկրնա՞ր լինիլ մեզ, հարցուց Մաք Նապս։

—Բնաւ, պատասխանեց Ճոն Մանկլս, վաւելու միայն կուգայ։

—Շատ կը ցաւիմ, ըսաւ Բականէլ, որովհետեւ այդ կուր կրնար մեզ Օքլանտ տանիլ։

—Համբերութիւն, պարո՛ն Բականէլ, պատասխանեց Ճոն Մանկլս։ Մնաց որ այսպիսի ալեծուփ ծովու մը վրայ մեր լաստն այդ դիւրաբեկ կուրէն աւելի նախամեծար է ինձ համար։ Տկար բախիւն մը բաւական էր զայն չախչախելու։ Ուրեմն, Միւլրա՛տ, ոչ ևս գործ ունինք աստ, մեկնինք։

—Երբ և կ՚ուզես, Ճո՛ն, ըսաւ Կլէնարվան։

—Օ՛ն, Ուիլսո՛ն, ըսաւ Ճոն, և ուղղակի դէպ ի ծովեզրն։

Ծովը սակաւին ժամու մը չափ պիտի բարձրանար, ուստի երկու մղոն ալ ճանբայ առին։ Բայց հովը գրեթէ բոլորովին ընկաւ, և մինչեւ իսկ ցամաքէն փչելու միտում ցուցնել սկսաւ։ Լաստն անշարժ կեցաւ։ Շատ չանցած, դէպ արձակ ծովն արտուղիլ սկսաւ տեղատուութենէն մղուելով։ Ճոն չէր կրնար վարանիլ։

—Երկաթ նետէ, գոչեց։

Միւլրատի, արդէն պատրաստ այս հրամանը կատարելու, խարիսխը ծովը նետեց հինգ գրկաչափ յատակի վրայ։ Լաստն երկու ճոպաչափ ետ գնաց, խարսխին ճկտեալ ճոպանին վրայ։ Լաստին առա-

գաստն աւիւղուեցաւ, և բաւական երկար դադարի մը համար պէտք եղած միջոցները ձեռք առնուեցան։

Արդարև, ծովն իրիկուան ժամ իննէն առաջ չէր կրնար ընթացքը փոխել. և ո. րովհետեւ Ճոն Մանկլը չէր ուզեր գիշերը նաւարկել, ուստի հարկադրեալ էր անդ ձնալ մինչև առաւօտեան ժամ հինգ։ Ցա. մաքն երեք մղոնի չափ հեռի էր։

Սակայն բաւական բուռն ծփանք մ'ա. մէն կը յարուցանէր, և անընդհատ շարժ. մամբ զանոնք դէպ ի ծովեզրը քշել կը թուէր։ Այս պատճառաւ, կրնար, երբ իմացաւ որ գիշերն ի բուն լաստին վրայ պիտի մնային, հարցուց Ճոն Մանկլսի թէ ինչո՞ւ համար ծովուն այս ծածանումէն օ. գուտ չէր քաղեր ցամաքին մատչելու հա. մար։

—Ձեր Ազնուութիւնը պատիր երեւու. թէ մը կը խաբուի, ըսաւ երիտասարդ նաւապետը։ Թէ և կոհակներն ընթանալու երեւոյթ ունին, բայց անշարժ են։ Լոյծ մասնիկներու ճօճումմ մ'է, և ոչ այլ ինչ։ Փայտի կտոր մը նետեցէք այդ ալեաց մէջ, և կը տեսնէք որ անշարժ պիտի կեցայ, քանի որ տեղատուութիւնն զգալի չէ։ Ուս. տի հաւաքերելէ զատ ուրիշ բան չմնար մեզ։

—Եւ ճաշել, աւելցուց հազարապետը։

Օլսինէթ քանի մը կտոր չոր միս և եր. կոտասանեակի մը չափ պաքսիմատ հանեց նպարաց արկղէն։ Խեղճ մարդն առօթէն կա չառագնէր այսպիսի նիհար ճաշ մ'իւր տէ. րերուն տալուն համար։ Բայց մտադիւր զուարթութեամբ ընդունեցաւ մինչև իսկ ուղեւորուհիներէն, որոց ախորժակը փախած էր ծովուն յանկարծական շարժումներէն։ Արդարև կոհակներն ուժգնապէս լաստին ընդհարելով, կը ցնցէին ու կը յոգնեցնէին զանոնք։ Լաստն անդադար տատանելով կարճ և քմահաճ ալիքներու վրայ, չէր կըր. նար աւելի ուժգնութեամբ բախիլ ընդ. ծովեայ խարակի մը, երբեմն այնպէս կը թուէր թէ խութի կը զարնուէր։ Խարսխին պարանը սաստիկ կը ձգտէր, և կէս ժամէն անգամ մը Ճոն գրկաչափ մը կ'երկնցնէր զայն, որպէս զի դիւր առնուր։ Առանց այս նախազգուշութեան՝ անշուշտ կը խզէր, և լաստն ինքնիրեն մնալով ի հարկէ ծովուն բացերը կը քշուէր և վերջապէս կը կորնչէր։

Ուստի Ճոնի կասկածները դիւրաւ կրնան հասկցուիլ։ Կամ իւր խարսխակալ պարանը կրնար խզիլ, կամ խարիսխը ծովուն յատա. կէն զատուիլ և այս երկու պարագային մէջ ալ վտանգը մեծ էր։

Գիշերը կը մերձենար։ Արդէն արեւուն սկաւառակը, բեկբեկումէն երկննալով և

արեւնագոյն կարմրութիւն մ'ստանալով՝ ա-
ներեւութանալու վրայ էր հորիզոնին ետին։
Ջուրին վերջին գիծերը կը պաղպաջէին ա-
րեւմտեան կողմէն և լոյծ արծաթէ թի-
թեղներու պէս կը շողշողէին։ Այն կողմ
համակ երկին և ջուր էր, ի բաց առեալ
մեկնորոշ կէտ մը, Մոթոռաչի անչարժ
կմախքն իւր խրուտին վրայ։

Արագասահ վերջալոյսն հպիւ քանի մը
վայրկեան ուշացուց խաւարին կազմութիւնն,
և, չատ չանցած, ցամաքն, որ արեւելեան
և հիւսիսային հորիզոնները կ'եզերէր, մու-
թին մէջ ձուլեցաւ։

Ցոյժ տագնապալից էր ուղեւորաց վի-
ճակն այն նեղ և խաւարամած լաստակին
վրայ։ Ոմանք կը ննջէին սրտատանջ թմբի-
րով մը, որ շատ նպաստաւոր էր չարագոյժ
երազներու. միւսները չկրցին ժամ մ'իսկ
ննջել։ Առաւօտուն ամենն ալ ընկճեալ
էին գիշերին յոգնութիւններէն։

Մակընթացութեան հետ հովն ալ փչել
սկսաւ ծովուն բացէն։ Առաւօտեան ժամ
վեցն էր։ Ժամանակը նեղ էր։ Ձոն պէտք ե-
ղած պատրաստութիւններն ըրաւ և հրա-
մայեց խարիսխ առնուլ։ Բայց խարսխին
թաթերը, պարանին ցնցմամբ, աւազին մէջ
դրուագած էին. հետեւաբար, առանց մե-
քենայի, մինչեւ իսկ վարգանգի (ճախարա-

կաւոր պարան) միջոցաւ, զոր Ուիլըըն զե-
տեղեց, անհնար եղաւ կորզել։

Կէս ժամ անցաւ ապարդիւն ջանքով։
Ձոն, պահ մ'առաջ չուելու անհամբեր,
կտրել տուաւ պարանն, և խարիսխը ծովուն
մէջ թողուց, որով հնար չէր մնար, ի ստի-
պել հարկին, ծովուն մէջ խարսխելու, եթէ
մակընթացութիւնը չբաւէր ծովեզրն հասնե-
լու։ Բայց չէր ուզեր աւելի յամենալ, և
տապարի հարուած մը հովին հաճոյից մատ-
նեց լաստն, որ մակընթացական հոսանքին
օգնութեամբ կրնար երկու մղոն ճանբայ
առնուլ մէկ ժամու մէջ։

Առաջաստը պարզեցաւ, և յամրաբար
դէպ ի ցամաքն ուղղուեցան, որ գորշախառն
կոյտի մը նման տարածուած էր նորածագ
արեւէն լուսաւորեալ կապոյտ հորիզոնին
վրայ։ Խարակներէն ճարտարապէս խորչե-
լով՝ անվնաս անցան։ Բայց բացէն եկած
կեղակարծ հովը կարծես թէ ցամաքին չէր
մօտեցներ վիրենք։ Մ'րչափ տաժանք այդ
Նոր-Զելանտայի չարաշուք եզերքն հասնե-
լու համար։

Սակայն ժամ իննին, մղոն մը մնա-
ցած էր ցամաքին։ Ծովեզրը դժուարա-
սեպ էր և խարակներով լի։ Հարկ էր դիւ-
րամատոյց տեղ մը գտնել։ Հովը քիչ քիչ
ընկաւ, և յետոյ բոլորովին դադրեցաւ։

Առագաստը թուլցած՝ կայմին կը պարնուէր։ Ձոն կապել տուաւ զայն։ Մակընթացու-թեան կոհակները միայն կը քշէին լաստը դէպ ի ցամաք։ Բայց ղեկավարելէ հրաժարիլ հարկ եղած էր, և ծովային մեծամեծ տուներ առաւել ևս կը ծանրացնէին լաստին ընթացքը։

Ժամը տասնին, Ձոն տեսաւ որ լաստը գրեթէ բոլորովին անշարժ մնացած էր, ցամաքէն վեց հարիւր մէթրի չափ հեռու։ Խարիսխ նետելու երկաթ չկար։ Տեղատուութիւնը մօտ էր. անշուշտ նորէն բացը պիտի քշէր վիրենք։ Ձոն, ձեռները գալարեալ, սիրտը տագնապալից, վայրագ հայեաց մը կը ձգէր անմատոյց ցամաքին վրայ։

Բարեբաղդաբար, այս անգամ, բախտը մ'եղաւ. լաստը կեցաւ. աւազէ ծանծաղի մը վրայ խրեր էր ցամաքէն քսան-հինգ գրկաչափ հեռի։

Կէնարվան, Ռոպէրթ, Ուիլըըն, Միլբատի, ծովը նետուեցան։ Լաստը պարաններով մօտակայ ժայռերուն կապեցին ամրապինդ, և ուղեւորուհիները գիրկ ի գիրկ փոխադրելով ցամաքն հանեցին, առանց անոնց շրջազգեստուց ծալերէն մին թրջելու. և շատ չանցած, ամենն ալ, զինուք և նպարօք, Նոր-Զելանտայի ահաւոր ծովեզրն էին։

ԳԼՈՒԽ Ը.

ՈՒՂԵՒՈՐԱՑ ԳՏՆՈՒԱԾ ԵՐԿՐԻՆ ՆԵՐԿԱՅՆ

Կէնարվան կ'ուզէր, առանց ժամ մ'իսկ կորուսանելու, ծովեզրէն ճանբայ ելնել դէպ Օքլանտ. բայց առաւօտէն ի վեր երկինք թանձր ամպերով լի էր, և ժամը տասն-մէկին միջոցներն, ուղեւորաց ցամաք ելնելէն քիչ յետոյ, գոլորշիները խտանալով բուռն անձրեւի փոխուեցան։ Հետեւաբար անհնարին եղաւ ճանբայ ելնել, և ապաստան մը փնտուելու հարկադրեցան։

Ուիլըըն՝ բարեբաղդաբար՝ քարանձաւ մը գտաւ, զոր ծովը պեղած էր եղերեայ որձաքարերուն մէջ։ Ուղեւորք անդ ապաստանեցան իրենց զինուքն և նպարօք; Անդ չորցած ծովային սիզաբուսոց չեղջ մը կար, զոր ծովուն ալիքները քշած էին ժամանակաւ։ Ուղեւորք այն բնական անկողնին վրայ նստան, և քանի մը կտոր փայտ դիզելով անձաւին մտից առջեւ, վառեցին և կրցածնուն չափ չորցուցին զիրենք։

Ձոն կը յուսար որ այն տեղատարափ՝ իր յորդութեան հակառակ՝ չափով ու կարճատեւ պիտի լինէր. բայց այնպէս չեղաւ։ Ժամերն անցան առանց փոփոխութիւն մը բերելու երկնից վիճակին մէջ։ Հովը զովացաւ ցերեկուան մօտ և մրրիկն աւելի

սաստկացաւ: Այս արգելը կրնար ամենէն երկայնամիտ մարդուն համբերութիւնը կարճել: Բայց ի՞նչ կրնային ընել: Այնպիսի վոթորկի մը ժամանակ առանց կառքի ուղեւորին՝ յիմարութիւն էր: Միւս կողմէ, քանի մ'օր բաւական է Օքլանտ հասնելու համար, ուստի տասներկու ժամու յամեցում մը չէր կրնար վնաս տալ իրենց ուղեւորութեան, եթէ բնիկները վրայ չըգային:

Այս ակամայ դադարի միջոցին, խօսակցութիւնը Նոր-Զելանտայի մէջ չարունակեալ պատերազմին միջադէպերուն վրայ դարձաւ: Բայց լաւ հասկնալու և կշռելու համար այն պարագայից ծանրութիւնն՝ յորում ընկած կը գտնուէին Մաօռիէի նաւաբեկեալը, պէտք է գիտնալ զպատմութիւն այն պատերազմին, որ արեամբ կը շաղախէր յայնժամ. Իքա-Նա-Մաուրի կըղզին:

1642 դեկտեմբեր 16 էն ի վեր, յորում Աբէլ Թասման Ֆուքի նեղուցն այցեց, Նոր-Զելանտացիք, եւրոպական նաւուց յաճախ այցն ընդունելով, ազատ կ'ապրէին իրենց անկախ կղզեաց մէջ: Ոչ մի եւրոպական պետութիւն չէր խորհեր նուաճել զայդ արշիպելագոս, որ խաղաղականի ծովերուն կ'իշխէր: Միայն, քարոզիչք, երկրին այլ և

այլ կողմերն հաստատուելով, քրիստոնէական քաղաքակրթութեան բարիքը կը բերէին այդ նոր երկիրներներու: Սակայն անոնցմէ ոմանք, և մասնաւորապէս անգլիացի քարոզիչք, Զելանտացւոց գլուխներն Անգլիոյ լուծին ներքև խոնարհելու կը պատրաստէին: Սոքա, ճարտարապէս բռնուելով, նամակ մ'ստորագրեցին ուղղեալ առ Վիքթորիա Թագուհին, և անոր պաշտպանութիւնը խնդրելով: Բայց աւելի նրամիտները կ'զգային այդ ձեռնարկին անմտութիւնն, և մէջերնէն մին, իւր կտաճին պատկերը նամակին վրայ դրոշմելէ յետոյ, սա մարգարէական խօսքերն ըսաւ. «Կորուսինք մեր երկիրը. մերը չէ այլ ևս, քիչ ժամանակէն օտարագիք պիտի գան գրաւեն, և մեք ալ անոնց ստրուկը պիտի լինինք:»

Արդարև, 1840 յունվար 20 ին Հէբըլտ մարտանաւը կղզեաց ծովախորշն եկաւ, որ Իքա-Նա-Մաուրիի հիւսիսակողմն է: Հոպսըն նաւապետը Ֆորորա-բէքա գիւղն իջաւ. բնակիչք յընդհանուր ժողով հրաւիրեցան քաղաքականաց եկեղեցին. և անդ հրապարակաւ կարդացուեցան այն պաշտօննեներն ու իրաւունքները զոր Անգլիոյ Թագուհին կուտար Հոպսըն նաւապետին:

Հետեւեալ տարւոյն յունվար 5 ին, Զելանտայի գլխաւոր ցեղապետներն Անգլիոյ

գործակատարին տունն հրաւիրեցան ի ճաշ գիւղ։ Հոպսըն նաւապետն հպատակութեան ուխտ առաջարկեց անոնց, ըսելով թէ թագուհին զօրապետներ և մարտաւէր զրկած էր պիրենք պաշտպանելու համար. թէ իրենց բոլոր իրաւունքները պիտի ապահովէին և իրենց ազատութիւնն անվըթար պիտի մնար։ Միայն թէ իրենց հողերն Անգլիոյ թագուհւոյն պիտի վաճառուէին, և հետեւաբար անոր սեփականութիւնը պիտի լինէին։

Ցեղապետաց մեծագոյն մասը չափազանց թանկ գտնելով այս առաջարկ, չուզեցին ընդունիլ։ Բայց խոստմունք և ընծայք առաւել ազդեցութիւն ունեցան այդ ամեհի բնութեանց վրայ, քան Հոպսըն նաւապետին խոշոր խօսքերն, և երկրին գրաւումն հաստատուեցաւ։ Արդ՝ 1840 տարիէն սկսեալ մինչեւ այն օրն, յորում Տընէտն մեկնեցաւ Բլայտի ծովածոցէն, ինչ որ անցած էր, ամենն ալ գիտեր ծաք բականել և կրնար տեղեկութիւն տալ իւր ընկերաց։

—Տիկի՛ն, ըսաւ պատասխանելով տիկին Էլենայի հարցմանց, պիտի կրկնեմ ինչ որ արդէն առիթ ունեցայ ըսել ձեզ. այսինքն թէ՝ Նոր-Զելանտացիք քաջասիրտ ժողովուրդ մ՚են, որ պահ մը պիջանելէ զլնի, քայլ առ քայլ կը պահպանեն Անգլիոյ ոտնձգութեանց։ Մաուրիները ցեղերն Սկովտիոյ հին ցեղերուն նման կազմաւորեալ են։ Նոյնչափ մեծ գերդաստաններ են, պետի մ՚իշխանութեան ներքեւ, որուն կատարեալ հնազանդութիւն կը պարտին։ Այդ ցեղերուն մարդիկը սեգ և քաջ են, ոմանք յաղթահասակ, ողորկ մազերով, նման Մալթացւոց կամ Պաղատացի Հրէից, և բարձրագոյն տոհմէ. միւսները, միջահասակ և յոյր են խառնածիններուն պէս, բայց ամենն ալ կորովի, խրոխտ և պատերազմասէր։ Նշանաւոր պետ մ՚ունեցան Հինգի անունով, ճշմարիտ վէրկինկէթորիս մը։ Ասոր տիչպիտի զարմանաք եթէ Անգլիոյ հետ պատերազմը մինչեւ Քուա-Նա-Մաուրի հողին վրայ, ուսկից գլ կը բնակի Ոհոյքաթոաց հռչակաւոր ցեղն, որ Ոհիկիմ Թոմսընի հետ միացած է երկրին պաշտպանութեան համար։

—Բայց Անգլիացիք տիրած չե՞ն Նոր-Զելանտայի գլխաւոր կէտերուն, հարցուց ձոն Մանկլս։

—Անշուշտ, սիրելիդ իմ ձոն, պատասխանեց Բականել։ Յետ գրաւման Հոպսըն Նաւապետին, որ ապա կղզւոյն կառավարիչ եղաւ, ինն գաղութք հետզհետէ հաստատուեցան, 1840 էն մինչև 1862, ամենքն ալ նպաստաւոր կէտերու վրայ։ Ասով ինն

գաւառք կազմուած են, չորսը հիւսիսային կղզւոյն մէջ, Օքլանտ, Թարանաքի, Ուէլլինկթըն, և Հաուքս-Պէյ. Հինգն ալ հարաւային կղզւոյն մէջ, Նէլսըն, Մարլպրու, Քէնթըրպրի, Օթակոյ և Սուտլէնտ, հարիւր ութսուն հազար երեք հարիւր քառասուն-վեց բնակչօք, ըստ 1864 յունիս 30 ի վիճակագրութեան: Կարեւոր և վաճառաշահ քաղաքներ կանգնեցան ամեն կողմ: Երբոր Օքլանտ հասնինք, պիտի տեսնունք անպայմանաբար աքանչանալ այդ հարաւային Կորընթոսի դրից վրայ, որ կամուրջի մը նման խաղաղական ովկէանի վրայ ձգուած պարանոցին վրայ կ'իյնէ, և արդէն տասն երկու հազար բնակիչ ունի: Արեւմտեան կողմը Նիւ-Բլիմութ, արեւելեան կողմն Ա-հուհիրի, հարաւի կողմն Ուէլլինկթըն, արդէն ծաղկեալ և յառաջեալ քաղաքներ են: Թաուայի-Բունամու կղզւոյն մէջ պիտի վարանիք ընտրութիւն մ'ընել ընդ մէջ Նէլսընի, որ հակառնէից Մոնբէլիէն, Նոր-Զելանտայի պարտէզն է, և ընդ մէջ Բիքթընի, որ Քուքի նեղցին վրայ է, Քրիսթչըրչի, Ինվէրքարկիլի և Տընտինի, որք Օթակոյի մեծահարուստ գաւառին մէջ են, ուր աշխարհի ամեն կողմերէն ոսկեմոլք կը դիմեն: Եւ նկատեցէք թէ քանի մը տաղաւարներու հաւաքածոյներ, վայրենի ընտանեաց կոյտեր չպիտի տեսնէք աստ, այլ ճշմարիտ քաղաքներ, նաւահանգիստներով, մայր եկեղեցիներով, պանքաներով, տոքերով, բուսաբանական պարտէզներով, բնական պատմութեան թանգարաններով, օդնտելական ընկերութիւններով, լրագրերով, հիւանդանոցներով, իմաստասիրական կաճառներով, ազատ-որմնադրական օթեակներով, երաստներով (քլիւպ), խմբագրական ընկերութիւններով, թատրոններով, տիեզերական արուեստահանդիսի պալատներով, ինչպէս ի Լոնտրա կամ ի Փարիզ: Եւ եթէ յիշողութիւնս հաւատարիմ է ինձ, 1865 ին, այն է այս տարի, և դուցէ ձեզ հետ խօսած վայրկենիս, բովանդակ աշխարհի արուեստական բերքերն ի հանդէս դրուած են մարդակերաց երկրի՛ մը մէջ:

—Ի՛նչ կ'ըսէք, բնիկներուն հետ պատերազմ ընելո՞վ հանդերձ, հարցուց տիկին Էլէնա:

—Անգլիացիք, տիկի՛ն, լաւ հոգ կը տանին պատերազմի, պատասխանեց Բականէլ: Կը կռուին և միանգամայն արուեստահանդէս կ'ընեն: Պատերազմը չչփոթեցներ զանոնք: Մինչև իսկ երկաթուղիներ կը չինեն Նոր-Զելանտացւոց հրացանի հարուածներուն տակ: Օքլանտի գաւառին մէջ Տրիւրիի և Մէր-Մէրի երկաթուղիները՝

ապստամբներուն գրաւած գլխաւոր կէտերէն կ'անցնին։ Գրաւ կը դնեմ թէ գործաւորք հրացանի հարուածներ կը փոխանակեն չոգեկառաց վրայէն։

—Բայց ի՞նչ վիճակի մէջ է այդ անգրաւ պատերազմ։

—Աւասիկ վեց երկայն ամիսներ են որ հեռացած ենք Եւրոպայէն, պատասխանեց Բականէլ, ուստի չեմ կրնար դիտնալ թէ ի՛նչ եղաւ մեր չուելէն ի վեր, ի բաց առեալ սակայն քանի մ'իրողութիւնք, զորս կարդացի Սէյմուրի և Մէրիպորուի լրագրաց մէջ երբոր Աւստրալիայէն կ'անցնէինք։ Բայց այն ժամանակ սաստկապէս կը կռուէին Իքա-Նա-Մաուի կղզւոյն մէջ։

—Ե՞րբ սկսաւ այդ պատերազմ, հարցուց Մարի Կրանթ։

—«Վերակաւ» ըսել կ'ուզէք, սիրելի օրիորդս, պատասխանեց Բականէլ. վասն զի առաջին ապստամբութիւնն 1845 ին ծագեցաւ։ Իսկ այս պատերազմ 1863ի վերջերն սկսաւ. բայց երկար ժամանակ առաջ Մաուրիք Անգլիոյ լուծը թօթափելու կը պատրաստուէին։ Բնիկներուն ազգային կուսակցութիւնը մեծ ջանք կ'ընէր Մաուրի պետ մ'ընտրել տալու համար։ Ծերունի Բոթա-Թոյ ցեղապետը թագաւոր ընել կ'ուզէր, և անոր դիւղն ալ, որ Ուայքաթոյ և Ուայ-

'բա գետերուն միջև է, մայրաքաղաք նոր Թագաւորութեան։ Բոթա-Թոյ՝ առաւել չափանգ քան քաջայանդուգն ծերունի մ'էր, բայց զօրեղ և ուշիմ նախարարապետ մ'ուներ Նկաթիհահուայից ցեղէն, որք Օքլանտի պարանոցին վրայ կը բնակէին անգլիական գրաւումէն առաջ։ Այս նախարարապետ, Ուիլհըմ Թոմսըն, հոգին եղաւ այս անկախութեան պատերազմին. ճարտարապէս զինուորեց Մաուրիները։ Իր ներշնչմամբ, Թարանաքիի ցեղապետներէն մին՝ համախորհուրդ ոգւով միացուց ցան և ցիր ցեղերը։ Ուայքաթոյի ցեղապետ մ'ալ, Լէնտիկի ընկերակցութիւնը կազմեց, ճշմարտապէս հանրօգուտ ընկերակցութիւն մը, որոյ նպատակն էր Թոյլ չտալ բնիկներուն որ իրենց հողերն Անգլիոյ կառավարութեան վաճառեն։ Կոչունքներ տրուեցան, ինչպէս քաղաքակրթեալ երկիրներու մէջ, իբրև նախաշաւիղ յեղափոխութեան։ Բրիտանական լրագիրք ծանուցանել սկսան այս երկիւղալի նշանները, և Լէնտիկի մեքենայութիւնները մտահոգութիւն պատճառեցին կառավարութեան։ Կարճ խօսքով, միտքերը գըրգռեալ էին, ականը պայթելու պատրաստ էր. միայն կայծ մը կը պակսէր։

—Եւ այդ քա՞ռ. . . հարցուց Կէնարվան։

—1860 ին եղաւ, պատասխանեց Բա-
կանէլ, Թարանաքիի գաւառին մէջ, Իքա-
նա-Մաուրիի հարաւային արեւմտեան ծո-
վեզրին վրայ։ Բնիկ մը վեց հարիւր ակրոն հող
ուներ Նիւ-ԲլիմուԹի մօտերն, և Անգլիոյ
կառավարուԹեան վաճառեց։ Բայց երբոր
անդաչափք գնացին չափել զայն հող, Բին-
կի ցեղապետը բողոքեց, և մարտ ամսոյն
մէջ բարձր ցցապատնէշով ամրացած բանա-
կետղ մը չինեց այն վեց հարիւր ակրոն
գետնին վրայ։ Ֆանի մ'օր ետքը, Կոլտ
գնդապետն եկաւ իւր զօրագունդով տիրեց
այն բանակետղին, և այն օրն ազգային
պատերազմին առաջին հրազէնը նետուե-
ցաւ։

—Մաուրիք բազմաԹի՞ւ են, հարցուց
Ճոն Մանկլս։

—Մաուրի ժողովրդեան Թիւը չատ
նուազած է տարիէ մ'ի վեր, պատասխանեց
աչխարհագիրն։ 1769 ին Կուք չորս հարիւր
հազար կը հաչուէր զանոնք։ 1845 ին մար-
դահամարն հարիւր ինն հազարի կ'իյնեցնէր
անոնց Թիւը։ ՖաղաքակրԹիչ ջարդերը,
հիւանդուԹիւններն ու ցրին նուազեցուցին
անոնց Թիւն. բայց երկու կղզեաց մէջ տա-
կաւին իննսուն հազար բնիկ կան, որոց եր-
սուն հազարը պատերազմող են և երկար
ժամանակ կրնան դիմադրել եւրոպական
զօրաց։

—ԱպստամբուԹիւնը կրցա՞ւ յաջողիլ
մինչև ցարդ, հարցուց տիկին Էլէնա։

— Այո՛, տիկին, և նոյն իսկ Անգլիացիք
չատ սքանչացած են Նոր-Զելանտացւոց
քաջասրտուԹեան վրայ։ Սոքա հրոսի պա-
տերազմ կ'ընեն, չառաջամարտի կուիներ կը
փորձեն, սակաւաԹիւ զօրախմբերու վրայ
կը չարձակին, գաղԹականաց սեփականու-
ԹիւնՆերը կը կողոպտեն։ Ֆամէրոն զօրավա-
րը չատ նեղուԹիւն կը կրէր այդ երկրին մէջ,
որուն ամեն Թուփերն ու ճացառներն հե-
տախուզել հարկ էր։ 1863ին երկար եւ ա-
րիւնառուչտ կուէ մ'ղկնի Մաուրիք մեծ ու
ամուր դիրք մը գրաւեցին ՈւայքաԹոյի բար-
ճանց վրայ, սեպացեալ բլրոց գօտիի մը
ձայրն, երեք կարգ պատնէչներով ապահով-
եալ։ Մարգարէներ բովանդակ Մաուրի ժո-
ղովուրդն երկրին պաչտպանուԹեան կը կո-
չէին «Բաքէքա»ներուն (սպիտակամորԹնե-
րուն) բնաջնջումը խոստանալով։ Երեք հա-
զար մարդ կուի կը պատրաստուէին Ֆամէ-
րոն զօրավարին հրամատարուԹեան ներքև,
և անխնայ կ'սպաննէին իրենց ձեռքն ընկած
Մաուրիներն այն օրէն իվեր ուր Մաուրիք
խժդժաբար սպաննեցին ՍրբէնԹ հարիւրա-
պետն։ Արիւնառուչտ ճակատամարտներ տըր-
ուեցան, որոց ոմանք տասներկու ժամ տեւե-
ցին։ Մաուրիք չէին ընկրկիր եւրոպական Թըն-

դանօթներուն առջեւ : Անկախութեան բանակին ընտրելազոյն մասը կը կազմէր Ուայքաթոսաց ամեհի ցեղն, ընդ հրամանատարութեամբ Ուիլիըմ Թոմսընի : Այս քնիկ զօրավար նախ երկու հազար հինդ հարիւր պատերազմողաց կը հրամայէր, ապա ութ հազարի : Երկու ահաւոր ցեղապետաց, Շոնկիի և Հէքիի հպատակներն օդնութեան եկան նմա : Կանայք ալ ամենէն դժնդակ աշխատութեանց մասնակցեցան այս նուիրական պատերազմի մէջ : Բայց լաւագոյն իրաւունքն ամեն ժամանակ չկրնար լաւագոյն զէնքն ունենալ : Բազմախոշխոշկութիւններէ յետոյ, Քամէրոն զօրավարն յաջողեցաւ գրաւել Ուայքաթոյի գաւառն, ամայացեալ դատարկ գաւառ մը, վասն զի Մաուրիք ամեն կողմէ պրծան անոր ձեռքէն : Սքանչելի արութեան գործեր կատարուեցան : Զօրս հարիւր Մաուրիք, Օրաքանի ամրոցին մէջ փակուած, Քարէյ զօրավարին հրամայած հազար Անգլիացիներէ պաշարուած, առանց նպարի, առանց ջրոյ, յանձն չառին անձնատուր լինիլ : Յետոյ օր մը, ցերեկ ժամանակ ամրոցէն դուրս յարձակելով, զինու զօրութեամբ ճանրայ բացին անգլիական տասանորդեակ 40 րդ զօրագունդին մէջէն, և փախան ճախճախուտներն ապաստանեցան :

—Բայց Ուայքաթոյ գաւառին նուաճմամբ չվերջացա՞ւ այդ մարդախանձ պատերազմ, հարցուց Ճոն Մանկլս :

—Ոչ, բարեկամ, պատասխանեց Բականէլ : Անգլիացիք որոշեցին Թարանաքի գաւառին վրայ քալել և Ուիլիըմ Թոմսընի բնակավայրն եղող Մաթայթավա ամրոցը պաշարել : Բայց չպիտի կրնան առանց մեծ կորուստներու գրաւել զայն : Փարիզէն մեկնած ժամանակս իմացեր էի թէ Թարանակայի ցեղն հնազանդութիւն առաջարկեր էր Նոր-Զելանտայի կառավարչին և Քամէրոն զօրավարին, և իր երկրին երեք չորրորդ մասն անոնց կը թողուր : Կ'ըսուէր նաև թէ ապստամբութեան գլխաւոր պետը, Ուիլիըմ Թոմսընն, անձնատուր լինելու տրամադիր էր : Բայց աւստրալիական լրագիրք չհաստատեցին զայս լուր : Ընդհակառակն : Ուստի հաւանելի է որ այս միջոցիս ընդդիմութիւնը նոր կորովով վերակազմուի :

—Ըստ ձեր կարծեաց, Բականէլ, ըսաւ Կլէնարվան, այս պատերազմի թատերն են Թարանաքիի և Օքլանտի գաւառք :

—Կը կարծեմ :

—Նոյն իսկ այս գաւա՞ռ, ուր Մաւոաքիի նաւաբեկութիւնը մեզ բերաւ ձգեց :

—Ճշդիւ : Մեր ցամաք ելած տեղը քանի մը մղոն միայն վեր է Քաուհիա նաւա-

հանգիստէն, ուր Մաուրիներուն ազգային դրօշակը պարտի տակաւին ծածանիլ։

—Ուրեմն խոհեմութիւն կ'ընենք, եթէ դէպի ի հիւսիս ելլենք, ըսաւ Կլէնարվան։

—Մեծ խոհեմութիւն, պատասխանեց Բականէլ։ Նոր-Զելանտացիք կատղած են Եւրոպացւոց և մասնաւորապէս Անգլիացւոց դէմ։ Այս պատճառաւ զգուշանանք անոնց ձեռքն ընկնելէ։

—Թերեւս եւրոպական զօրախումբերու հանդիպինք, ըսաւ տիկին Էլէնա։ Բարեբաղդութիւն կը լինի մեզ համար։

—Թերեւս, տիկին, պատասխանեց աշխարհագիրը, բայց չեմ յուսար։ Զատ զօրախումբերը չեն ուզեր դաշտերն ու լեռները պտըտիլ, վասն զի ամեն թուփերու և մացառներու մէջ ճարտար հրացանաւորք պահուըտած են։ Ուստի չեմ յուսար որ 40րդ գունդին զօրականներէն ուղեկից պահապաններ ունենանք։ Բայց քանի մը քարոզչական կայաններ կան հաստատուած մեր հետեւելիք արեւմտեան ծովեզրին վրայ, և կրնանք դիւրութեամբ մէկէն միւսն իջեւան ընել մինչեւ Օքլանտ։ Կը խորհիմ իսկ գտնել այն ուղին, զոր Պ. Հոխթէթէր բռնած էր Ուայքաթոյ գետին ընթացքին հետեւելով։

—Ուղեւո՞ր է այդ մարդ, պարո՛ն Բականէլ, հարցուց Ռոպէրթ Կրանթ։

—Այո՛, տղաս, անդամ գիտական յանձնախմբին, որ Աւստրիական Նովարա փրեկատին մէջ կը գտնուէր 1858ին, չուրջ զերկրաւ նաւարկած միջոցին։

—Պարո՛ն Բականէլ, հարցուց նորէն Ռոպէրթ, որոյ աչերը կը բոցավառէին աշխարհասիրական մեծ արշաւանքներն յիշած ժամանակ, Նոր-Զելանտա ալ ունի՞ հռչակաւոր ճանապարհորդներ, ինչպէս Պրրք և Ութիւրրթ Աւստրալիա։

—Քանի մը հատ, տղա՛ս, ինչպէս Տոքթէօր Հուքէր բժիշկը, Պրիզար դասատուն, Տիէնֆէնպախ և Ժիւլիուս Հասթ քնագէտները։ Թէ և ասոնց մի քանին իրենց կեանքով վճարեցին իրենց յանդուգն մոլութիւնը, բայց և այնպէս աւստրալիական կամ ափրիկեան ուղեւորաց չափ հռչակաւոր չեն։

—Գիտէ՞ք դուցա պատմութիւնն, հարցուց Կրանթ պատանեակն։

—Անշուշտ, տղա՛ս, և որովհետեւ կը տեսնեմ որ ինձ չափ գիտնալու բաղձանք ունիս, պատմեմ քեզ։

—Շնորհակալ եմ, պարո՛ն Բականէլ։

—Մեք ալ մտիկ կ'ընենք զմեզ, ըսաւ տիկին Էլէնա։ Այս առաջին անգամը չէ որ օդին գէշութիւնն ուսման կը հարկադրէ զմեզ։ Ամենուս համար խօսեցէք, պարո՛ն Բականէլ։

—Պատրաստ եմ ձեր հրամանին, տիկի՛ն, պատասխանեց աշխարհագիրը, բայց պատմութիւնս երկար չպիտի լինի։ Ցկան ատ այն քաջայանդուգն երկրախոյզներն, ոյք դէմ առ դէմ կը կռուէին աւստրալիական վինոտաւրոսին հետ։ Նոր-Զելանտա այնչափ ընդարձակ երկիր մը չէ, որպէս զի կարենայ ինքզինք պաշտպանել մարդկային խուզարկութեանց դէմ։ Այս պատճառաւ ներկայ պատմութեանս դիցազունքը, ճշդիւ խօսելով, երկրախոյզ ուղեւորներ չեն, այլ պարզ ճանապարհորդներ, անցուք արկածներու զոհ։

—Անուննի՞ն, հարցուց Մարի Կրանթ։

—Ուիթքըմպ երկրաչափ և Զարլթըն Հուիթ, որ Պըրքի մարմինը գտաւ այն հրաշակաւոր արշաւանաց մէջ, զոր պատմեցի ձեզ Վիմէրայի եղերքը դադար ըրած ժամանակնիս։ Ուիթքըմպ և Հուիթ երկրախուզական երկու արշաւանաց հրամանատար էին Թաուայի-Բունամու կղզւոյն մէջ։ Երկուքն ալ Քրիսթչըրչէն ճանրայ ընկան 1863 տարւոյն առաջին ամիսներուն մէջ, որպէս զի այլև այլ անցեր գտնեն Քէնթրպըրիի գաւառին հիւսիսային լեռանց մէջ։ Հուիթ, գաւառին հիւսիսային սահմանագլխին վրայ գտնուող լեռնագօտին անցնելով, եկաւ իւր բանակատեղն հաստատեց Պրիւնէր լճին վրայ։ Ուիթքըմպ, ընդհակառակն, Բաքայիայի ճորին մէջ անց մը գտաւ, որ Թինտիլ լեռան արեւելակողմը կը յանգէր։ Ուիթքըմպ ուղեկից մ'ունէր, Ճաքոպ Լուբըր, որ այդ ուղեւորութեան և անոր աղետալի վախճանին պատմութիւնն հրատարակեց Էքսըլսիըր-Թայմզի մէջ։ Ըստ որ կը յիշեմ, 1863 ապրիլ 22 ին, երկու երկրախոյզք առնապատ լերան մ'ստորոտը կը գտնուէին, ուստից ծագում կ'առնու Բաքայիա գետակը։ Մինչեւ լերան գագաթն ելան և նոր անցեր գտնելու աշխատեցան։ Հետեւեալ օրը, ցուրտէն ու յոգնութենէ ուժասպառ, դադար առին թանձր ձիւնի տակ, ծովէն չորս հազար ոտք բարձր լերան վրայ։ Եօթն օր թափառեցան լեռներուն մէջ, ճորերու խորերն, որոց սեպացեալ կողերը քնաւ անց չէին ընծայեր, չատ անգամ առանց կրակի, երբեմն ալ առանց ուտելիքի, քովերնին գտնուած չաքարն օշարակի և պաքսիմատը թաց զանգուածի մը փոխուած, հանդերձներն ու ծածկոյթներն անձրեւաթուրմ, իրենց մարմինը ճմիներու կեր, օրն մերթ առ չատն երեք մղոն, մերթ ալ հազիւ երկու հարիւր եարտա ճանրայ քալելով։ Վերջապէս, ապրիլ 29 ին Մաուրիներու հիւղակի մը հանդիպեցան,

և պարտիզի մը մէջ ալ քանի մը գետնախնձոր գտան։ Վերջին ճաշն եղաւ զոր երկու բարեկամք ըրին ի միասին։ Իրիկունը ծովեզրն հասան, Թարամաքոյ գետին բերնին մօտ։ Կ'ուզէին անոր ալ եզրն անցնիլ, որպէս զի դէպ ի Կրէյ գետն երթան ի հիւսիս։ Թարամաքոյ լայն և խոր էր։ Լուբբր, ժամ մը փնտռելէ յետոյ, երկու փոքրիկ կուր գտաւ միասեալ, զորս կրցածին չափ նորոգելով իրարու կապեց, և իրիկուան դէմ երկու ուղեւորք անոր մէջ մտան։ Բայց հոսանքին մէջ տեղն հասած էին, կուրերը ջրով լցուեցան։ Ուիթքըմպ գետը նետուեցաւ և լողալով ձախ եզրը վերադարձաւ։ Իսկ ձաքոպ Լուբբը, որ չէր գիտեր լողալ, կուրին կառչած կեցաւ, և այսպէս կրցաւ ազատիլ, բայց սարսափելի վտանգներ անցուներով։ Ողորմելին խութերու վրայ քշուեցաւ. առաջին կոհակ մը ծովուն տակն ընկղմեց զայն, երկրորդ մը ջուրին երեսն հանեց. ժայռերու զարնուեցաւ. գիշերն աղջամղջին էր. անձրեւն հեղեղանման կը տեղար։ Լուբբր, մարմինն արիւնլուայ և ծովու ջուրէն ուռած, այսպէս տատանեցաւ ժամերով։ Վերջապէս կուրը ցամաքին զարնուեցաւ, և նաւաբեկեալը ծովեզրը նետուեցաւ ղղայագիրկ։ Հետեւեալ առաւօտուն, ինքզինք քշելով առուակի մը քով գնաց, և հասկցաւ որ հոսանքը գինքը մղոն մը հեռացուցեր էր այն տեղէն, ուր գետն անցնելու փորձ ըրած էր։ Ոտքի վրայ ելաւ, և ծովեզրն ի վեր երթալով գտաւ զտաբաքաղն Ուիթքըմպ, գլուխն ու մարմինը սիկին մէջ թաղուած։ Մեռած էր։ Լուբբր փոս մը փորեց իւր ձեռօք աւազին մէջ, և թաղեց իւր ընկերին դիակն։ Երկու օր յետոյ, սովամահ վիճակի մէջ, ողորմած Մառուրիններու —կը գտնուին ոմանք— ձեռք ընկաւ, որք հիւրընկալեցին զայն, և մայիս 4 ին Պրիւնէր լիճն հասաւ, Զարլթըն Հուիթի բանա՛յատեղն։ Այս վերջին ալ, վեց շաբաթ յետոյ, դժբաղդ Ուիթքըմպի բաղդին պիտի վիճակէր։

—Այո՛, ըսաւ ձոն Մանկլս, կը թուի թէ այդ աղետալի հարուածք կապակցութիւն ունին միւսանց հետ. ձախող կապ մը կը միացնէ ուղեւորներն, և ամենն ալ ի կորուստ կը մատնուին երբոր կեդրոնը խզի։

—Իրաւունք ունիք, բարեկա՛մ, պատասխանեց Բականէլ, ես ալ յաճախ ըրած եմ զայդ դիտողութիւն։ Ի՞նչ համերաչխութեան օրինօք Հուիթ ալ գնաց միևնոյն պարագայից մէջ մեռաւ, չկրնար ըսուիլ։ Զարլթըն Հուիթ պաշտօն ստացած էր

հարօգուտ չինուածեանց պետէն, Պ. Ուայտէն, ձիերու համար դիւրանցանելի ճամբայ մը գծել Հիւրիւնուի դաշտերէն մինչև Թարամաքոյի բերանը: 1863 յունվար 1 ին ճանբայ ելաւ հինգ մարդոց հետ, և անհամեմատ ուշմուածեամբ կատարեց պիւր պաշտօն. քառասուն մղոն երկայնութեամբ ուղի մը բացուեցաւ մինչև Թարամաքոյի մէկ անանցանելի կէտն: Անոնք Հուիթ վերադարձաւ ի Քրիսթչըրչ, և ուզեց չարունակել իւր աշխատութիւնները, առանց ուշ դնելու ձմրան մօտենալուն: Հուիթ գնաց պարենաւորել պիւր բանակատեղն, ուր պիտի անցուներ ձմեռը: Նոյն միջոցին էր որ հիւրընկալեց գաճաքոպ Լուբբը: Յունիս 27 ին, Հուիթ և իւր մարդոցմէն երկուքը, Ռոպերթ Լիթթլ և Չարլի Միլլիս, մեկնեցան բանակատեղէն և Պրիւնէր լիճն անցան: Այնուհետեւ մէկ մ'ալ երեւան չելան: Իրենց փոքրիկ կուբը խըրեալ գտնուեցաւ ծովեզրին վրայ: Ինն չարաթ չարունակ փնտռուեցան, բայց ընդունայն. և տարակոյս չմնաց որ տարաբաղդները, լողալ չգիտնալով, խեղդուած էին լճին մէջ:

—Բայց Թերեւս Զելանտացւոց ցեղերէն միոյն ձեռքն ընկած են ողջ առողջ, ըսաւ տիկին Էլէնա: Գոնէ ներելի է երկբայիլ անոնց մահուան վրայ:

—Աւա՛ղ, ո՛չ, տիկի՛ն, պատասխանեց Բականէլ, որովհետեւ 1864 օգոստոսի մէջ, այն է այդ ոգեաւալի դէպքէն տարի մը յետոյ, երեւան չէին ելած... և երբոր մարդ մը Նոր-Զելանտայի մէջ տարի մ'երեւան չելնէ, մրմնջեց աշխարհագիրը ցած ձայնիւ, տարակոյս չմնար թէ անդարձաբար կորսուած է:

ԳԼՈՒԽ Թ.

ԵՐՍՈՒՆ ՄՂՈՆ Ի ՀԻՒՍԻՍ

Փետրվար 7 ին, առաւօտեան ժամը վեցին, չուի նշանը տուաւ Կլէնարվան: Անձրեւը դադրած էր գիշերը: Երկինք, պարզասառն մանր ամպերով ծածկեալ, գեանէն երեք մղոն վեր կ'արգելուր արեւուն ճառագայթներն: Ուստի օդին չափաւոր տաքութիւնը կը ներէր դիմագրաւել տուընջեընային ուղեւորութեան մը յոգնութիւնները:

Բականէլ՝ երկրացոյց քարտէսին վրայ Քահուայի հրուանդանէն մինչև Օքլանտ ուղտաւն մղոն հեռաւորութիւն չափեր էր, որ օրը տասնական մղոնէն ուղտ աւուր ճանբայ ըսել էր: Բայց, փոխանակ ծովեզրին աղաժող ճանբուն հետեւելու, լաւագոյն

թուեցաւ իրեն Ուայքաթոյ և Ուայրա գետերուն իրար խառնուած տեղն երթալ Նկարնավահիա գիւղն, որ ծովեզրէն երեսուն մղոն հեռի էր, և հասնիլ «Օվէրլէնտ Մայլ Թրաք» կառուղին, որ կղզւոյն մեծ մասին վրէն կ'անցնի՝ Նաբիէրէն մինչեւ Օքլանտ։ Յայնժամ դիւրաւ կրնային ժամանել ի Տրիւրի և հանգիստ առնուլ պատուական օթեւանի մը մէջ, ղոր մասնաւորապէս կը յանձնարարէ Հոխշիլէթէր բնապատումը։

Ուղեւորք, իւրաքանչիւրն իւր նպարի բաժինը բարձած, ճանբայ ելան՝ Աութէա ծովախորշին եզերքէն դառնալով։ Խոհեմութեամբ չէին բնաւ բաժնուիր իրարմէ, և բնազդաբար, իրենց հրացանները պինած, արեւելեան կոհակաձեւ դաշտերը կը դիտէին։ Բականէլ, իւր պատուական քարտէսն ի ձեռին, հաճոյք կ'զգար անոր ամենափոքր մանրամասնութեանց ճշդութիւնը ցուցնելով։

Օրուան մի մասն ուղեւորք կոկատն երկայնութեան խեցիներու փշուրներէ և սպինաց ոսկրերէ բաղկացեալ և մեծ մասամբ երկաթի վերթուածնատով և նախթուածնատով խառն աւազի մը վրայէ քալեց։ Եթէ մագնիս մը գետնին մօտեցնէին, իսկոյն փայլուն բիւրեղներով կը ծածկուէր։

Մակընթացութենէ գգուեալ ծովեզրին վրայ քանի մը ծովային կենդանիք կը խաղային։ Փոկերն, իրենց բոլորչի գլուխներով, լայն ու կոր ճակատով և ոգելից աչերով՝ քաղցր և մինչեւ իսկ սիրալիր դէմք մը կ'ընծայէին։ Կը հասկցուէր որ առաստպելը՝ ծովերուն այս հետաքրքրաշարժ բնակիչները բանաստեղծօրէն զարդարելով դիւթիչ յուշկապարիկներ ըրած լինի, թէև ձայներնին աններդաշնակ խանչիւն մ'էր միայն։ Այս կենդանիք յոյժ բազմաթիւ են Նոր-Զելանտայի ծովեզերաց վրայ, և մեծ առուտուրի նիւթ։ Իրենց իւղին և թաւամորթին համար կ'որսան զանոնք։

Փոկերուն մէջ նշանաւոր էին երեք կամ չորս ծովային փիղեր, գորշ կապուտակ գունով և քսան-հինգէն երեսուն ոտք երկայնութեամբ։ Այս վիթխարի երկակենցաղք, ծովասէզերէ թանձր անկողնոց վրայ յուլաքար տարածուած, կը տնկէին իրենց կնճիթն, և ծամածուռ կերպիւ կը տատանէին իրենց երկայն և գալարուն ընչացքին հաստ թելերն, որք սպնասէրի մը մօրուքին նման խոպոպեալ խցահաններ կը թուէին։ Ոտքերէ կը զուարճանար դիտելով զայս ուշագրաւ կենդանիներ։ Յանկարծ գոչեց զարմանօք.

—Նայեցէք, այս փոկերը քա՛ր կ'ուտեն։

Եւ արդարեւ, անոնցմէ մի քանին ծովեզրին վրայի կոպիճներն որկորստաբար կը կլնէին։

—Ճշմարիտ է, ըսաւ Բականէլ, այդ կենդանիք ծովեզերեայ խիճերը կ'ուտեն։

—Ի՛նչպէս կը մարսեն զայդ զարմանալի կերակուր, ըսաւ Ռոպէրթ։

—Անանելու համար չեն ուտեր, տղա՛ս, այլ իրենց ստամոքսը լցնելու համար կը կլնեն զայդ քարեր։ Իրենց ծանրութիւնն աւելցնելու և դիւրութեամբ ծովուն տակն իջնելու միջոց մ'է։ Երբոր ցամաք ելնեն, դուրս կուտան քարերն։ Ասոնք այժմ ծովուն կոհակաց մէջ պիտի մխրճին։

Արդարեւ, շատ չանցաւ, կէս երկոտանեակի չափ փոկեր, ստամոքսնին ըստ բաւականի քարով լցնելէ յետոյ, դանդաղաբար ծովը մտան և աներեւոյթ եղան հեղուկ տարրին մէջ։

Բայց Կլէնարվան չէր կրնար թանկագին ժամանակ մը կորուսանել անոնց վերադարձն և քարերը դուրս տալու գործողութիւնը տեսնելու համար, և ընդմիջեալ ուղեգնացութիւնը վերսկսաւ, ի մեծ ցաւ Բականէլի։

Ժամը տասնին դադար ըրին բասանաքարէ խոչոր ժայռերու ստորոտն, որք կէտական մահարձաններու պէս տնկուած էին

ծովեզրին վրայ։ Ոտրէներու վտառ մ'առատ ուտելիք մատակարարեց իրենց։ Ոտրէները մանր էին և ոչ ախորժահամ։ Բայց, Բականէլի խորհրդով, Օլվինէթ զանոնք կրակի վրայ չարելով եփեց, և այսպէս պատրաստուելով, երկոտանեակներն իրարու յաջորդեցին ճաշին բոլոր տեւողութեան ժամանակ։

Դադարէն յետոյ նորէն յուզի ընկան առանց ծովեզրէն բաժնուելու։ Ստամնաճև ապառաժներուն վրայ և խարակներու գագաթը ծովային այլազան թռչնոց մեծ բազմութիւն ապաստանած էին. ճղլակք, խօլահաւք, տարմրօրք, ճկնկուլք և այլք։ Իրիկուան ժամը չորսին, տասն մղոն ճանբայ քալած էին առանց յոգնելու և առանց տաժանման։ Ուղեւորութիւնը չկընդրեցին շարունակել ուղեւորութիւնը մինչև գիշեր։ Յայնժամ ճանբուն ուղղութիւնը փոխել պէտք եղաւ։ Հիւսիսի կողմը տեսնուած քանի մը լերանց ստորոտը դառնալէ յետոյ Ուայթայի ձորը մտնել հարկ եղաւ։

Երկիրն ի հեռուստ անհուն մարգագետնի մ'երեւոյթ ունէր, և դիւրին ճեմ մը կը խոստանար։ Բայց ուղեւորք, երբոր այն դալարագեղ դաշտին եզրն հասան, պատրանքնին փարատեցաւ։ Արօտին կը յաջորդէին մանր և սպիտակ ծաղիկներով

թուփեր, անթիւ պտերներով խառն, որք մասնաւորապէս կը սիրեն Նոր-Զելանտայի հողերն: Չարկ եղաւ ճանրայ բանալ անոնց մէջէն և դժուարութիւնը բաւական մեծ եղաւ: Սակայն իրիկուան ժամ ութին, Հաքարիհուաթա լերանց առաջին գագաթնները պատելով անցան, և իջեւանն անյապաղ կազմուեցաւ:

Տասն-չորս ժամ ուղեւորելէ յետոյ ներելի էր հանգիստ առնուլ: Մնաց որ, ոչ վրան ունէին, ոչ սայլ, ուստի հարկ եղաւ Նորֆոլքի գեղեցիկ չոճիներու տակ պառկիլ: Ծածկոյթք պակաս չէին առժամեայ անկողիններ կազմելու համար:

Կլէնարվան խիստ զգուշութիւններ ձեռք առաւ գիշերուան համար: Ընկերներն և ինք, սպառազինեալ, երկերկու հոգի կարգաւ հսկեցին մինչև ի լոյս: Կրակ չվառեցին բնաւ: Խարոյկներն օգտակար են վայրի գազանաց դէմ. բայց Նոր-Զելանտա ոչ վագր ունի, ոչ առիւծ, ոչ արջ և ոչ ուրիշ որ և է վտանգաւոր կենդանի: Ճշմարիտ է որ Նոր-Զելանտացիք անոնց տեղը կը բռնեն բաւականապէս: Ուստի խարոյկն այդ երկթաթեան յովազներն հրաւիրելու միայն կրնար ծառայել:

Կարճ խօսելով, գիշերը լաւ անցաւ. միայն քանի մ'աւազային ճանճերու անհա-

ճոյ խայթումը քիչ մ'անհանգիստ ըրաւ զուղեւորներն, ինչպէս նաև միանց յանդուգն ընտանիք մը, որ նպարաց պարկերը կրծեց:

Հետեւեալ օրը, փետրվար 8, Բականէլ արթնցաւ աւելի վտահ և երկրին հետ գրեթէ հաշտուած: Մաուրիներն, որոցմէ կը վախնար մասնաւորապէս, չէին երեւցած, և այդ ամեհի մարդակերք մինչեւ իսկ երազին մէջ չսպառնացան իրեն: Ասոր համար իւր սրտագին գոհութիւնն յայտնեց Կլէնարվանի:

—Կը յուսամ որ այս փոքր ուղեւորութիւն անխափան կը կատարուի, ըսաւ: Այս իրիկուն Ուայրա և Ուայքաթոյ գետերուն միացած տեղը կը հասնինք, և անկէ անդին քնիկներու հանդիպումէ չատ չվախցուիր Օքլանտի ճանբուն վրայ:

—Ո՞րչափ ճանբայ ունինք այդ գետախառնուրդն հասնելու համար, հարցուց Կլէնարվան:

—Տասն-հինգ մղոնի մօտ, այսինքն գրեթէ երէկուան ճանբուն չափ:

—Բայց չատ ուշ պիտի մնանք եթէ այս անվերջանալի թաւուտք չարունակեն խափանել մեր ուղին:

—Ո՛չ, պատասխանեց Բականէլ, Ուայրայի եղերքէն պիտի երթանք ուր քնաւ

արգելք չկայ· ընդհակառակն՝ դիւրին ճանբայ մ'է։

—Զուենք ուրեմն, պատասխանեց Կէ. Նարվան տեսնելով որ ուղեւորք պատրաստ էին ճանբայ ելնելու։

Օրուան առաջին ժամերուն մէջ թաւուտներն յամրացուցին ուղեւոր չոկատին չուն։ Ոչ սայլ և ոչ ձի չէին կրնար անցնիլ ասոնց անցած տեղերէն։ Ուստի իրենց ա-ըստրալիական սայլը կորուսանելնուն վրայ չատ չցաւեցան։ Մինչև այն օրն, ուր կառուղիներ բացուին այդ թաւուտերուն մէջէն, Նոր-Զելանտա հետեւակաց համար միայն դիւրագնաց պիտի լինի։ Պտերներն, որոց տեսակն անթիւ է այդ երկրի մէջ, Մաուրիներուն չափ յամառութեամբ կը գործակցին ագգային հողը պաշտպանելու։

Ուստի ուղեւոր չոկատը բազում դժուարութիւն կրեց Հաքարիհուաթայի դաշտերէն անցած միջոցին։ Բայց կէս օր չեղած, Ուայքայի եզրն հասաւ, և անաչխատ դէպ ի հիւսիս երթալ սկսաւ։

Գեղեցիկ հովիտ մ'էր, ընդհատեալ վճիտ և զով առուակներով, որք զուարթաբար կը հոսին թուփերու տակ։ Ըստ Չուքըր բուսաբանին, Նոր-Զելանտա մինչև ցայսօր երկու հազար տեսակ բոյս ընծայած է, որոց հինգ հարիւրն իրեն յատուկ է։ Ծաղկունք հազուագիւտ են անդ և քիչ գոնէ. գրեթէ բացարձակ սով կայ տարեւոր բոյսերու, բայց առատութիւն պտերներու և հովանոցակաւոր տունկերու։

Ֆանի մը յաղթաբերձ ծառեր կը տեսնուէին՝ կարմրածագիկ և թխադալար «մետրոսիտերոս»ներու, Նորֆոլքի չոճիներու և «րիմու» կոչուած տեսակ մը տխրատերեւ նոճիներու առաջին յատակագիծերէն դուրս. և այս ամեն ծառաբուն բազմազան պտերներով պաշարեալ էին։

Մեծամեծ ծառոց ոստերուն մէջ և թուփերուն վրայ կարկաչելով կը թռչտէին քանի մը կանանչ «քաքաթովէս»ներ կարմրեգոյ պարանոցով, կրկին սև ու գեղեցիկ ծնօտամօրուքով զարդարուած «թաւբոյ»ներ, և բազի մեծութեամբ չիկափետուր պապկայ մը, զոր բնապատումք «Հարաւային Նեստոր» մականուանած են։

Հաղարապետն և Ռոպէրթ կրցին, առանց հեռանալու իրենց ընկերաց քովէն, քանի մը կաքաւներ ու ջրակոցարներ զարնել, որք գետնին խոռոչներուն մէջ կը թաքչէին։ Օլփինէթ, ժամանակ չահելու համար, ճանբան քալած միջոցին փետրազերծ ըրաւ զանոնք։

Իսկ Բականէլ, առանց կարեւորութիւն տալու այդ որսերուն սննդարար զօրու-

թեան, կ'ուզէր Նոր-Զելանտայի յատուկ թռչուն մը ձեռք անցուներ։ Բնապատումին հետաքրքրութիւնը կը լռեցնէր ուղեւորին ախորժակը։ Իր յիշողութիւնն, եթէ չէր խաբեր զինք, կը յիշեցնէր բնիկներուն «թիւի»ին տարօրինակ ձեւերը։ Մերթ «ծանակիչ» կը կոչէին զայն իր անդուլ քեքեւանաց պատճառաւ, և մերթ «երէց» կը կոչէին, իր սեւաւիետուր լանջին վրայ քահանայի մը պարեգօտին նման ճերմակ օճիք մ'ունենալուն պատճառաւ։

—Այս «թիւի», կ'ըսէր Բականէլ հազարապետին, այնչափ կը գիրնայ ձմեռն, որ կը հիւանդանայ։ Ձկրնալով թռչիլ, կտուցովը կը կեղեքէ զիւր կուրծ, որպէս զի կորզէ մարմնոյն մէջ գոյացած ճարպն և թեթեւնայ։ Զարմանալի չե՞րեւիր ձեզ այս։

—Այ՛ն աստիճան զարմանալի, ըսաւ հազարապետն, որ և ոչ մի տառին չեմ հաւատար։

Բականէլ, ի մեծ ցաւ սրտին, չկրցաւ ձեռք ձգել այդ թռչուններէ մին և անոնց ցտեսալ լանջին արիւնուռւշտ վէրքը ցուցնել Թերեհաւատ հազարապետին։

Բայց առաւել բաղդաւոր եղաւ ուրիշ տարօրինակ կենդանի մը ձեռքն անցուներով, որ մարդոցմէ, կատուներէ և չուներէ հա-

լածուելով անբնակ երկիրներ կը փախչի, և Նոր-Զելանտայի կենդանաբանական ցանկէն անհետանալու վրայ է։ Ռոսէրթ, կատարեալ յուզակի նման խուզելով, չաղահիւսեալ արմատներէ ձեւացած բունի մը մէջ երկու հաւ գտաւ առանց պոչի և թեւերու, քառատատ ոտներով, պեգասոսի երկայն կտուցով և ճերմակ փետուրէ վարսով։ Տարօրէն կենդանիք, որք ձուածիններուն ըստնաւորի փոխուիլը ցուցնել կը թուէին։

Զելանտական «քիվի»ն էր, բնապատումներուն «Ապթէրիս աւսթրալիս» կոչածն, որ անխտրաբար թրթուրներով, միջատներով, որդերով կամ սերմանեօք կը սնանի։ Այդ թռչուն Զելանտիոյ յատուկ է։ Հազիւ կրցած են Եւրոպիոյ կենդանաբանական պարտէզները մտցնել։ Իր կոշտ ձեւերն և հոպիտական չարժումները ճանապարհորդաց ուշադրութիւնը գրաւած են միշտ, և Տիւմոն-տ'Իւրվիլ մասնաւորապէս պաշտօն ստացած էր Գիտութեանց Ձեմարանէն, այդ զարմանալի թռչունին մէկ օրինակը տանելու։ Բայց, հակառակ խոստացուած առատ վարձուց, բնիկները չկրցին ողջ քիվի մը գտնել։

Բականէլ, ուրախ այս բարեբաղդութեան վրայ, իրարու հետ կապեց երկու հաւերն և քաջաբար տարաւ, միտքը դնելով

որ Փարիզի կենդանաբանական պարտիզին նուիրէ «Տո-ետ է Պ. ժոտ Բականէլ»։ Արդէն կը կարդար զայս մեծաքի արձանագրութիւն կենդանաբանական պարտիզին ամենէն գեղեցիկ վանդակներէն միոյն վրայ։

Սակայն ուղեւոր Ջոկատն առանց յոգնելու վար կ'իջնէր Ուայբայի եզերքէն։ Երկիրն ամայի էր. քնաւ հետք չկար բնիկներու. ոչ մի արահետ կամ շաւիղ, որ մարդոց ներկայութիւնը ցոյց տար այդ դաշտաց մէջ։ Գետակին ջուրերը բարձր թուփերու մէջէ կը հոսէին կամ հարթ աւազուտներու վրայէ կը սահէին։ Յայնժամ ուղեւորին աչերը կրնար յածիլ մինչև այդ փոքր լերանց վրայ, որք կը փակէին հորիզոնն արեւելից կողմէ։ Այդ լեռներ, իրենց տարօրինակ ձեւերով, խաբուսիկ մէգի մը մէջ խեղդուած կիսադէմքով, նախաջրհեղեղեան ժամանակաց անհետեթ կենդանիներուն կը նմանէին։ Կարծես թէ տասկավիթեան վիշապաձկանց հօտ մը յանկարծակի քարացեր էր։ Էապէս հրաբխային բնութիւն մը կը բուրէր այդ բռնաքօսիկ կոյտերէ։ Արդարև Նոր-Զելանտա պղուտոնական աշխատութեան (հրաբխային) նոր արտադրութիւն մ'է։ Անդադար վեր կը բարձրանայ ծուխն մէջէն։ Քանի մը կէտեր մէկ ծողաչափ բարձրացած են քան

տարիէ ի վեր։ Հուրը կըշրջի տակաւին անոր ընդերաց մէջ, կը ցնցէ կը տատանէ զայն, և հազար կողմէ դուրս կը փախչի ջերմուկներէն և հրաբխոց խառնարաններէն։

Իրիկուան ժամը չորսին իրեն մղոն ճանբայ առած էին քաջաբար։ Ըստ քարտիսին, զոր Բականէլ կը հարցաքննէր անդադար, հինգ մղոնէն պակաս ճանբայ մնացած էր Ուայբայի և Ուայքաթոյի գետախառնուքն հասնելու համար, որոյ առջեւէն կ'անցնի Օքլանտի ուղին։ Անդ պիտի իջեւանէին գիշերն։ Իսկ մնացեալ յիսուն մղոնն, որ զանոնք կը բաժնէր մայրաքաղաքէն, անցնելու համար երկու կամ երեք օր կը բաւէր, և առ չատն ութ ժամ, եթէ կէնարվան թղթակաւքին հանդիպէր, որ ամիսն երկու անգամ Օքլանտէն Հաուքսի ծովածոցը կ'երթեւեկէ։

—Ըսել է թէ յառաջիկայ դիշերն ալ քացօթեայ լինելու պիտի հարկադրինք, ըսաւ կէնարվան։

—Այո՛, պատասխանեց Բականէլ, բայց կը յուսամ որ վերջինը լինի։

—Անտուաճ տար, վասն զի յոյժ տաժանելի է տիկին էլէնայի և Մարի Կրանթի համար։

—Եւ անտրտունջ յանձն կ'առնուն, աւելցուց ձոն Մանկլս. Բայց եթէ չեմ սխա-

լիր, պարո՛ն Բականէլ, դուք գիւղի մը խօսք կ՚ընէիք երկու գետոց խառնուածքին մօտ։

—Այո՛, պատասխանեց աշխարհագիրն, ահա նշանակուած է Ճոնսթընի քարտիսին վրայ։ Նկարնավան գիւղն է, գետախառնուածքէն երկու մղոնի չափ վեր։

—Ուրեմն չէ՞նք կրնար գիշերօթել անդ։ Տիկին Էլէնա և Մարի Կրանթ կը յօժարին երկու մղոն աւելի ճանբայ քալել՝ յարմար օթեւան մը գտնելու համար։

—Օթեւա՛ն, գոչեց Բականէլ, օթեւա՛ն Մաուրիներու գիւղի մը մէջ, բայց պանդոկ մ՚իսկ չգտնուիր։ Այդ գիւղ՝ բնիկ հիւղերու հաւաքածոյ մ՚է, և ըստ իմ կարծեաց, փոխանակ օթեւան փնտռելու անդ, լաւ կ՚ընենք հեռանալ անտի խոհեմաբար։

—Միշտ այդ երկիւղն ունիք, Բականէ՛լ, ըսաւ Կլէնարվան։

—Սիրելի՛ Լորտս, լաւագոյն է միշտ կասկածով վարուիլ Մաուրիներուն հետ քան թէ վստահութեամբ։ Ձեմ գիտեր ի՛նչպէս են Անգլիացւոց հետ. ապստամբութիւնը զսպուա՞ծ է թէ վրայ եկած, պատերազմի մէջ՞ ենք թէ խաղաղութեան։

Արդ, համեստութիւնը մէկ կողմ, մեզ պէս անձինք լաւ աւար մը կը լինին Մաուրիներուն ձեռք, և ես չեմ ուզեր զեղան-

տական հիւրընկալութիւնը զննելու փորձ ընել։ Ուստի իմաստնագոյն կը գտնեմ զգուշանալ այդ Նկարնավահիա գիւղէ, հեռիէն անցնիլ, և խուսափիլ բնիկներու հանդիպումէն։ Երբոր Տրիւրի հասնինք, խնդիրը կը փոխուի. անդ կրնան մեր քաջարի ընկերուհիք իրենց ուզածին պէս հանդչիլ ուղեւորութեան յոգնութիւնէրէն։

Աշխարհագրին կարծիքն յաղթեց։ Տիկին Էլէնա նախամեծար համարեցաւ վերջին գիշեր մ՚ալ բացօթեա անցուցնել և իւր ընկերները վտանգի մէջ չձգել։ Ոչ Մարի Կրանթ և ոչ տիկին Էլէնա չուզեցին դադար առնուլ, և չարունակեցին գետեզրն ի վար ուղեւորիլ։

Երկու ժամ յետոյ, երեկոյին առաջին ստուերները կ՚սկսէին իջնել լեռներէն։ Արեւն, արեւմտեան հորիզոնին տակ անհետանալէ առաջ, ամպոց յանկարծական մէկ խրամատէն օգուտ քաղեր էր քանի մը վերջին ճառագայթներ արձակելու համար։ Արեւելից հեռաւոր լեռնագագաթները ծիրանազգեստ պճնեցան օրուան վերջին հուրերէն։ Վերջին և արագ ողջոյն մ՚եղաւ այս՝ ուղղեալ առ ուղեւոր ջոկատն։

Կլէնարվան և ընկերք ճեպեցուցին իրենց քայլերը։ Գիտէին որ վերջալոյսն յոյժ

հակիրճ էր լայնութեան այդ բարձր աստիճանին տակ, և գիշերն արագապէս կը հասնէր: Հարկ էր՝ մութը չկոխած՝ հասնիլ երկու գետոց խառնուածքին քով: Բայց թանձր մէգ մ'ելաւ գետնէն և ուղղոյն ծանօթութիւնը մեծապէս դժուարացուց:

Բարեբաղդաբար, լողութիւնը տեսողութեան տեղն անցաւ: Վասն զի, չատ չանցած, աւելի կարկաչուն խոխոջ մ'իմացուց երկու գետերուն միացումը: Ժամ ու թին, ուղեւոր յոկատը կը հասնէր այն կէտն, ուր Ուայբա կը կորնչի Ուայքաթոյի մէջ, ընդհարեալ հասանաց վերջին մռնչիւններն արձակելով:

—Աւասիկ հասանք Ուայքաթոյի եզրը, գոչեց Բականէլ, և Օքլանտի ուղին ասոր ալ եզրէն վեր կ'ելնէ:

—Վազը պիտի տեսնենք, պատասխանեց հազարապետն: Ա՛ւ այժմ իջեւանինք աստ: Կը թուի ինձ թէ սա նշմարուած տուները ծառոց պուրակի մ'տուներն են, որ յատկապէս մեզ պատսպարելու համար բուսած են: Ճաշենք և ննջենք:

—Ճաշենք, ըսաւ Բականէլ, բայց պաքսիմատով և չոր միսով, առանց կրակ վառելու: Մեք առանց ճանչուելու եկանք մինչև աստ, չանանք նոյնպէս առանց նշմարուելու մեկնիլ աստի: Բարեբաղդաբար այս մէգ անտեսանելի կ'ընէ զմեզ:

Ծառոց պուրակին քով հասան, և աշխարհագրին պատուիրանաց համեմատ, առանց կրակ վառելու չոր ճաշ մ'ըրին մութին մէջ անշշունչ, և չատ չանցած՝ ի խոր քուն ընկղմեցան ամենն ալ, պարտասեալ տասն և հինգ մղոն ճանբայ քալելէ:

ԳԼԻՒՒ Ը.

ԱԶԳՈՅԻՆ ԳԵՏ

Հետեւեալ առաւօտուն, բաւական թանձր մէգ մը կը սողար գետին յուրերուն վրայ: Օդը տոգորող գոլորշեաց մի մասը, պաղէն խտացած թանձր ամպով կը ծածկէր յուրին երեսը: Բայց արեւուն ճառագայթները չյամեցան թափանցել զայդ փամփշտային կոյտեր, որք անմիջապէս հալեցան լուսաճաճանչ աստղին հայեացքէն: Միգամած եզերքը բացուեցան, և Ուայքաթոյի ընթացքն երեւան ելաւ իւր բովանդակ այգային գեղեցկութեամբ:

Ցամաքի երկայն ու նուրբ լեզու մը, թուփերով ծածկեալ, սլաքաձեւ կ'աւարտէր երկու գետոց միացած տեղն: Ուայքայի յուրերն, առաւել բռնահոս, Ուայքաթոյի հետ խառնուելէ առաջ, քառորդ

յղոնի չափ ետ մղեր էին անոր ջուրերը։ Բայց Ուայքաթոյ, հզօր և հանդարտ, չատ չանցած նուաճեր էր ամեհի գետակն, և խաղաղաբար կը քշէր կը տանէր զայն իրեն հետ մինչեւ Խաղաղականի ընդունարանն։

Երբոր գոլորշիներն անհետացան, մակոյկ մը տեսնուեցաւ, որ Ուայքաթոյի հոսանքն ի վեր կ'ելնէր։ Եօթանասուն ոտք երկայնութեամբ, հինգ ոտք լայնութեամբ և երեք ոտք խորութեամբ նաւակ մ'էր, գլուխը վենետկեան կոնտոլի մը պէս վեր դարձած, և ամբողջապէս միակ եղեւինի մը բունէն չինուած։ Զոր պտերներու խըշտեակ մը փռուած էր մէջն, և ութ թեւճակներ կը սուրացնէին զայն ջուրին վրայ, մինչ յետակողմը նստած մարդ մը կը վարէր զայն՝ կարճ և լայն թիակի մը միջոցաւ։

Մարդը բնիկ մ'էր իր քառասուն-հինգ տարեկան, յաղթ հասակաւ, լայն կուրծքով, մկնաւէտ անդամներով, զինեալ կորովի ոտներով ու ձեռներով։ Իր կորնթարդ և հաստ խորշոմներով կնճռեալ ճակատը, բուռն նայուածքն և չարագոյժ դէմքն ահեղ անձնաւորութիւն մը կ'ընէին զայն։

Մարմնոյն և երեսին նուրբ, խիտ և երիներանգ կտածոյ նկարներէն կը տեսնուէր թէ բարձրաստիճան Մաուրի ցեղապետ մ'էր։ Իր արծուենդն քթին երկու թեւերէն երկու սեւ պարոյրները դուրս ելնելով կը չրջանակէին դեղին աչերը, ճակտին վրայ իրարու կը կցուէին և իրը երկայն վարսերուն մէջ կ'անհետանային։ Իր սպիտակափայլ ակռաներով բերանն ու կզակը ծածկեալ էին կանոնաւոր խայտերով, որոց ոլորածոյ խոյդները մինչեւ հուժկու լանջերուն վրայ կ'իջնէին։

Կտածոյ մարմնանկարը կամ Նոր-Զելանտացւոց «մոքոն» ականաւորութեան նշան մ'է։ Ով որ մեծ քաջութիւններ ընէ պատերազմի մէջ, նա միայն արժանի է այդ պատուաբեր նշանը կրելու։ Գերիներն և ստորին աստիճանի ժողովրդականք չեն կրնար թեկնածել առ այն։ Հնչակաւոր սպետերն այդ նկարուց նրբութենէն, ճշդութենէն ու բնութենէն կը ճանչուին։ Այդ նկարք կենդանեաց պատկերներ են յաճախ։ Պետեր կան, որ մինչեւ հինգ անգամ կատարել կուտան մոքոյի ամենաղժնդակ գործողութիւնն իրենց մարմնոյն վրայ։ Ո՛րչափ առաւել նշանաւոր լինի ոք, այնչափ առաւել չքեղ մարմնանկար կ'ունենայ Նոր-Զելանտայի մէջ։

Տիւմոն-տ'Իւրվիլ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ տուած է այդ սովորութեան վրայ։ Իրաւամբ դիտել կ'ուտայ թէ մոքոյ հոմանիշ է եւրոպական գինանշաններուն,

որք պարծանաց առիթ մ'են բազմաթիւ գերդաստանաց: Բայց տարբերութիւն մը կը նշմարէ այդ երկու պատուանշաններուն միջև. այսինքն, եւրոպական ազնանշաններն ընդհանրապէս վկայութիւն մ'են առաջին անգամ ստացողին անձնական արժանեաց, իսկ անոր որդւոց համար բան մը չեն ապացուցաներ. իսկ Նոր-Զելանտացւոց անհատական ազնանշաններն անժխտելի վկայութիւն մ'են թէ՝ զանոնք կրելու իրաւունքն ունենալու համար արտասովոր քաջութեան փորձեր տուած են:

Միւս կողմէ, Մաուրիներուն մարմնանկարն ոչ միայն յարգ և պատիւ կը վայելէ, այլ և անժխտելի օգտակարութիւն մ'ունի: Մորթին հաստութիւնը կ'աւելցնէ, որով կարող կը լինի դիմանալ օդին խստութեանց և մեղներու խայթուածոց:

Իսկ մակոյկը վարող պետին բարձրաստիճան անձ մը լինելուն վրայ քնաւ տարակոյս չկար: Զկնկուլի սուր ոսկրն, որ Մաուրիներուն մարմնանկարին կը ծառայէ, հինգ անգամ ակօսած էր անոր երեսն հոծ և խոր գիծերով: Եւ այսպէս հինգերորդ տպագրութեան հասած էր, ինչպէս որ կը տեսնուէր իւր սիգապանծ դէմքէն:

Վրան փորվիոնէ լայն թիկնոց մ'առած էր, չան մորթով զարդարուած. մէջքը վերջին պատերազմէն արիւնաշաղախ եղած առիգած մը պատած էր: Ականջին երկայն բլթակներէն կանանչ յասպիսէ գինդեր կախուած էին և պարանոցին չուրջն ալ «բունամու»ներէ (տեսակ մը նուիրական քարերէ, որոց վրայ նաներահաւատ գաղափարներ ունին Զելանտացիք) քայուեր կը դողդոջէին: Գովը կեցած էր անգլիական գործարանէ ելած հրացան մը, և «բաթու-բաթու» մը, տեսակ մը երկսայրի տապար զմրխտագոյն, տասն-ութ մատնաչափ երկայնութեամբ:

Մօտը նստած էին իրեն մարդիկք ըստորնագոյն աստիճանէ, բայց սպառազինեալ, դժնէադէմ, մի քանին դեռ ցաւակիր վերջին կռիւներուն մէջ ստացած վէրքերէ, անշարժ նստած էին՝ իրենց փորվիոնէ թիկնոցներուն մէջ փաթթուած: Երեք վայրենադէմ չուներ պառկած էին անոնց ոտքին տակ: Ցառաջակողման ութ թիավարք պետին ծառաները կամ ստրուկները կը թուէին: Զօրեղապէս կը թիավարէին: Հետեւաբար նաւակն զգալի արագութեամբ Ուայքաթոյի հոսանքն ի վեր կ'ելնէր, որ այնչափ բուռն չէր:

Նաւակին մէջտեղը նստած էին տասն եւրոպացի կալանաւորք քովէ քով, ոտներնին կապուած, բայց ձեռներնին ազատ:

Այդ կալանաւորք էին Կլէնարվան և տիկին Էլէնա, Մարի Կրանթ, Ռոպէրթ, Բաքանէլ, հաղարապետը, Ճոն Մանկլա, Օլսլինէթ և երկու նաւաստիք:

Առջի երեկոյին, ուղեւոր ջոկատը, թանձր մէգէն խաթուելով, գնացեր խումբ մը բնիկներու մէջ իջեւաններ էին: Կէս գիշերուան մօտ, իրենց քունին մէջ յանկարծակի կոխուելով՝ գերի բռնուեր, և մահկոյկը տարուեր էին: Մինչեւ ցայնժամ բռնութիւն մը չէր եղած իրենց. բայց ընդդիմութեան փորձ մ'ընել անօգուտ էր: Իրենց զէնքերն ու ռազմամթերքը վայրենիներուն ձեռքն անցած էին, ուստի բուն իրենց գնդակներով կրնային դիտապաստ ընկնիլ:

Շատ չանցած, բնիկներուն զօրածածքանի մ'անգլիերէն բառերէն հասկցան թէ ապստամբք մեծ հարուած կրեր էին անգլիական զօրքէն, և ցիրուցան ի փախուստ դառնալով, վերին Ուայքաթոյի գաւառը կը քաշուէին: Մաուրիներու պետն, յամառ դիմադրութենէ մ'զկնի, իր գլխաւոր պատերազմիկները ջարդուելով Անգլիացւոց 42րդ զօրագունդէն, ետ կը դառնար կուգար նոր կռիւ մ'ընել Ուայքաթոյի շուրջը բնակող ցեղերուն, որպէս զի օգնութեան դիմեն աննուաճ Ուիլիըմ Թոմսընի, որ կը մարտնչէր միւս Անգլիացւոց դէմ: Այս պետ Քայ-Քումու կը կոչուէր, չարաշուք անուն մը բնիկներուն լեզուաւ, որ «իւր թշնամւոյն անդամներն ուտող» կը նշանակէ: Քայ և խիզախ էր, բայց նոյնչափ ալ անագորուն: Գութ չէր կրնար երբէք սպասուիլ իրմէ: Անունը քաջածանօթ էր անգլիական զօրաց և Նոր-Զելանտայի կառավարիչը վարձք խոստացած էր զայն սպաննողին:

Այս սարսափելի փորձութեան կը հանդիպէր Լորտ Կլէնարվան այն միջոցին, ուր Օքլանտի բաղձացեալ նաւահանգիստն հասնելու և Եւրոպա վերադառնալու վրայ էր: Սակայն իւր պաղարիւն և հանդարտ դէմքէն չէր կրնար գուշակուիլ իւր սրտին աճեռնաբուռն տագնապը: Կլէնարվան՝ ծանր դժբաղդութեանց մէջ սրտաբեկիլ և լքանիլ չուներ: Կ'զգար որ իւր կնոջ և ընկերաց ուժ և օրինակ պարտէր լինել, ինքն, որ ամուսին էր և գլուխ, պատրաստ ամենէնառաջ մեռնելու հասարակաց փրկութեան համար եթէ պարագաները պահանջէին: Յորին կրօնասէր, չէր ուզեր յուսահատիլ Աստուծոյ արդարութենէն՝ իւր ձեռնարկին սրբութեան առջեւ: Իւր ճանբուն վրայ կուտուած վտանգներուն մէջ չսասրջացաւ այն վեհանձնական խանդին վրայ, որ զինք մինչեւ այս խուժադուժ երկիրները քաշած բերած էր:

Ընկերներն ալ իրմէ վար չէին մնար. բաժանորդ էին իւր ազնիւ խորհրդածութեանց։ Իրենց հանդարտ և խրոխտ դէմքը տեսնողը չէր կարծեր ամենածանր աղէտ մը կ'սպառնար իրենց։ Թէ Լորտ Կլէնարվանի խորհրդին հետեւելով՝ համաձայնութեամբ որոշած էին բոլորովին անհոգ դէմք մը ցուցնել բնիկներուն առջեւ։ Միակ միջոցն էր այս պատկառանք ապդելու այդ ամեհի բնութեանց։ Վայրենիք առ հասարակ, և մանաւորապէս Մաուրիք, տեսակ մ'արժանապատուութեան զգացումի ունին, յորմէ չեն բաժնուիր երբէք։ Կը յարգեն ով որ ինքզինք յարգել տայ իւր պաղարիւնով և քաջասրտութեամբ։ Կլէնարվան գիտէր որ այսպէս վարուելով, թէ՛ ինք և թէ՛ իւր ընկերք ազատ կը մնային խոչտանգանքէ։

Իջեւանէն մեկնելնէն ի վեր, բնիկներն, որք հատակօս չեն, ինչպէս ամեն վայրենիք, հազիւ հաւսակցած էին միմեանց հետ։ Սակայն, միջերնին փոխանակուած քանի մը խօսքերէ Կլէնարվան հասկցաւ որ անգլիական լեզուն ընտանի էր իրենց, ուստի որոշեց հարցնել պետին և իմանալ թէ ի՛նչ պիտի ընէին իրենց։ Ֆայ-Ֆումուի դառնալով, կատարեալ անվեհերութեամբ մ'ըսաւ.

—Ո՞ւր կը տանիս զմեզ, պե՛տ։

Ֆայ-Ֆումու պաղ կերպիւ մ'անոր նայեցաւ՝ առանց պատասխանելու։

—Ի՞նչ պիտի ընես զմեզ, հարցուց նորէն Կլէնարվան։

Ֆայ-Ֆումուի աչերն արագ փայլակով մը բոցավառեցան, և ծանր ձայնիւ մը պատասխանեց.

—Փոխանակել զքեզ, եթէ բուկիններդ ուզեն քեզ. իսկ եթէ չուզեն, սպաննել։

Կլէնարվան աւելի բան մը չհարցուց, բայց յոյս ծագեցաւ սրտին մէջ։ Անշուշտ Մաուրիներուն պետերէն մի քանին Անգլիացւոց ձեռքն ընկած էին, և բնիկները կ'ուզէին փոխանակութեան միջոցաւ ազատել զանոնք։ Ուստի փրկութեան հաւանականութիւն կար, և հետեւաբար իրենց վիճակն յուսահատական չէր։

Սակայն կուրն արագապէս գետն ի վեր կ'ելնէր։ Բականէլ, որոյ յեղեղուկ բնաւորութիւնը ծայրայեղութենէ ի ծայրայեղութիւն կը մղէր զայն, նորէն քաջալերուեր էր։ Կ'ըսէր ինքնիրեն թէ Մաուրիները կ'ազատէին զիրենք մինչեւ անգլիական պահակներն երթալու աշխատութենէն. ուստի, համբերատարութեամբ իւր քարտիսին վրայ Ուայքաթոյի ընթացքը կը դիտէր գաւառին դաշտերուն ու ձորերուն մէջէն։ Տիկին Էլէնա և Մարի Կրանթ, իրենց սարսափը զսպելով, կը խօսակցէին Կլէնարվանի հետ ցած ձայնիւ, և ամենէն ճարտար դիմա-

գէտը չէր կրնար անոնց սրտին տագնապը դէմքերնուն վրայէն գուշակել։

Ուայքաթ-ոյ Նոր-Զելանտայի ազգային գետն է։ Մաուրիները կը պանծան անով, ինչպէս Գերմանացիք Ռէնով և Սլավք Դանուբով։ Իր երկու հարիւր մղոն ընթացիք մէջ հիւսիսային կղզւոյն ամենէն գեղեցիկ երկիրները կ'ոռոգէ, Ուէլլինկթընի գաւառէն մինչեւ Օքլանտի գաւառն։ Իր անունը տուած է համայն եզերեայ ցեղերուն, որք աննուաճելի և աննուաճ, միահամուռ ոտք ելած են իրենց երկիրը գրաւողներուն դէմ։

Գետին ջուրերը դեռ գրեթէ կոյս են օտարական նաւերէ։ Միայն կղզեցւոց նաւակներուն առջեւ բաց են։ Հազիւ քանի մը յանդուգն ուղեւորք կրցած են յառաջ խաղալ այդ նուիրական բայց վտանգաւոր եզերաց միջեւ։ Վերին Ուայքաթ-ոյի մուտքն արգիլեալ կ'երեւի պիղծ Եւրոպացւոց։

Բականէլ գիտէր որ Զելանտացիք կրօնական յարգանք կ'ընծայէին այդ մեծ գետին։ Գիտէր որ անգլիացի և գերման բնապատուիրք՝ Ուայբայի հետ միացած կէտէն անդին ելած չէին։ Քայ-Քումիւի բամհաճոյքը մինչեւ ո՛ր պիտի տանէր իր կալանաւորները։ Պիտի չկրնար գուշակել՝ եթէ «Թաւբոյ» բառն, յաճախ յեղյեղուելով ընդ

միջ պետին և իր մարդիկներուն, չարթընցընէր անոր ուշադրութիւնը։

Քարտէսը նայելով տեսաւ որ Թաւբոյ աշխարհագրական տարեգրութեանց մէջ հռչակաւոր լիճ մ'էր, կղզւոյն ամենէն լեռնոտ մասին մէջ, Օքլանտի գաւառին հարաւային ծայրը։ Ուայքաթ-ոյ գետն այն լճէն կ'ելլէ և գաւառին բովանդակ լայնքէն կ'անցնի։ Իսկ Ուայբայի խառնուած կէտէն մինչեւ լիճն հարիւր քսան մղոնի չափ երկայնութիւն ունի։

Բականէլ, խօսքը ձոն Մանկլսի ուղղելով ֆրանսերէն լեզուաւ, որպէս զի չհասկցուի վայրենիներէն, աղաչեց որ մակոյկին ընթացքը հաշուէ։ Ձոն ժամն իբր երեք մղոն հաշուեց։

—Ըսել է թէ, պատասխանեց աշխարհագիրն, եթէ գիշերն իջեւան ընենք, մեր ուղեւորութիւնը մինչեւ ի Թաւբոյ չորս աւուր չափ պիտի տեւէ։

—Բայց անգլիական պահականոցներն ո՞ր կողմ են, հարցուց Կլէնարվան։

—Դժուարին է գիտնալ, պատասխանեց Բականէլ։ Սակայն պատերազմը բնականաբար Թարանաքիի գաւառը փոխադրուած է, և, ըստ ամենայն հաւանականութեան, անգլիական վաշտերը լճին մօտ գումարուած են, լերանց միւս կողմն, ուր

կենդրոնացած է ապստամբութիւնն։

—Աստուած տայ, ըսաւ տիկին Էլէնա։

Կլէնարվան տխուր նայուածք մը ձգեց իր դեռատի կնոջ և Մարի Կրանթի վրայ, որք այդ ամեհի բնիկներուն ձեռքն ընկած, վայրենի երկիր մը կը տարուէին, հեռի ամեն մարդկային օգնականութենէ։ Բայց տեսնելով որ ֆայ-ֆուամու գինքը կը դիտէր, և խոհեմութեամբ չուզելով որ գուշակէր թէ կալանաւորներէն մին իր կինն էր, իր մտածութիւնները սրտին խորն ընկրկեց և սկսաւ գետին եղերքը դիտել կատարեալ անտարբերութեամբ։

Մակոյկը, գետախառնուրդէն կէս մղոնի չափ վեր, Բոթանիոյ թագաւորին վաղեմի բնակավայրին առջեւէն անցած էր առանց կանգ առնելու։ Ուրիշ ոչ մի մակոյկ չէր տեսնուեր գետին ջուրերուն վրայ։ Քանի մը հիւղեր, իրարմէ բաւական հեռի, ներկայ պատերազմին աղէտները ցոյց կուտային իրենց քայքայեալ վիճակով։ Գետին եղերքն ամայացած էին։ Թռչնական տոհմին քանի մը ներկայացուցիչները միայն կենդանութիւն կուտային այդ տխուր ամայութեան։ Մերթ սեւաթեւ, սպիտակփոր, կարմրակտուց և բարձրասրունն «Թաքարունկա» կը փախչէր ոստոստելով

իւր երկայն թաթերուն վրայ։ Մերթ երեք տեսակ ճայեր, մինչդեռ «մաֆուքու», ապշադէմ վարուժնակ, և սպիտակափետուր, դեղնակտուց և սեւոտն «քոթուքու» խաղաղութեամբ կը դիտէին բնիկ մակուկին տնցնիլը։ Ուր որ գառիվայր ծովափը քիչ շատ ջուրի խորութիւն ցոյց կուտար, ծաղրիկ հաւը, Մաուրիներուն «քոթարէ»ն կը դիտէր այն մանր օձաձուկերն որք միլիոններով կը զեռային զելանտական գետոց մէջ։ Ուր որ թուփերը կ'երեւնային, սէգ յոպոպներ, խորդամարգեր և սուլտանահաւեր՝ իրենց արդուզարդը կ'ընէին արեւուն առաջին ճառագայթներուն առջեւ։ Բոլոր այս թեւաւոր արարածք խաղաղութեամբ կը վայելէին գայն բերկրալի հանգիստ, զոր պատերազմէն վնտուած կամ ջարդուած մարդոց բացակայութիւնը կը թողուր իրենց։

Ուայքաթոյ իւր ընթացքին այս առաջին մասին մէջ լայնածաւալ դաշտերու մէջէ կը հոսէր ընդարձակապէս։ Բայց, աւելի վերօք, նախ բլուրք և ապա լերինք հետզհետէ կը նեղցնէին անոր անցած ձորը։ Խառնուածքէն տասն մղոն վեր, Բականէլի քարտէսը գետին ձախ եզրին վրայ Ֆիրիքիրիրուի դեղը նշանակած էր։ Այդ Ֆիրիքիրիրու գիւղին առջեւ հասան։ Ֆայ-ֆուամու կանգ չա-

ռաւ անդ : Կլէնարվանի և ընկերաց իջեւանէն կապտուած նպարեղէններն անոնց բաժնել տուաւ: Իսկ ինք և իր մարդիկներն ու ստրուկները քնիկներուն ուտելիքներովը բաւականացան, այն էր ուտելի պտերներով, բուսաբաններուն «ֆթէրիս էսքուլէնթա» կոչած տունկով, որոյ արմատները փուռն մէջ եփուելով կ'ուտուին, և «քաթանա» կոչուած գետնախնձորով, որք առատապէս կը մշակուէին երկու կղզեաց մէջ: Ուրիշ որ և է ուտելիք կամ կենդանական նիւթ չէր գտնուեր անոնց ճաշին մէջ: Կալանաւորաց չոր միսը բնաւ ախորժ չազդեց անոնց :

Ժամն երեքին, քանի մը լեռներ տեսնուեցան գետին ալ եզրին վրայ, որք քանդեալ բերդի մ'երեւոյթ ունէին: Սեպաձայր կատարներէն ոմանց վրայ հին ամրութեանց աւերակներ կային, զորս Մաուրի երկրաշարժք չինած էին անառիկ դրից վրայ, և որք արծիւներու մեծամեծ բոյներ կը թուէին :

Արեւն անհետանալու վրայ էր հորիզոնին ետին. մակոյկը չեչաքարերու կոյտի մը բախեցաւ, զորս Ուայքաթոյ, հրաբխային լեռներէ իջնելով իւր հետ կը քշէ կը բերէ: Քանի մը ծառեր բուսած էին անդ, որք իջեւան մը պատսպարելու յարմար եղան : Կլէնարվան և ընկերք իջեւանէն դուրս հանել տուաւ իւր կալանաւորներն : Անոնց ձեռքը կապուեցան, իսկ կանայք ազատ թողուեցան և ամենը մէկէն իջեւանին մէջ տեղը դրուեցան, որոց չուրջը վառուած խարոյկներ՝ անանցանելի հրեղէն պատուար մը կազմեցին :

Դեռ Քայ-Քումու իւր կալանաւորները փոխանակելու դիտաւորութիւնը չյայտնած, Կլէնարվան և Ճոն Մանկլը ազատութեան հնար մը գտնելու վրայ խորհրդակցեր էին : Ինչ որ մակոյկին մէջ չէին կրնար փորձել, կը յուսային փորձել ցամաքի վրայ իջեւանած ժամանակ, դիշերին նպաստաւոր դէպքերէն օգուտ քաղելով :

Բայց Կլէնարվանի և Զելանտայի պետին խօսակցութենէն ի վեր, խոհեմութիւն դատուեցաւ զգուշանալ այնպիսի փորձերէ, և համբերել: Փոխանակութիւնը փրկութեան հաւանականութիւններ կը խոստանար, զորս զէնքով յարձակում մը կամ անծանօթ երկիրներու մէջէ փախուստ մը չէին կրնար ընծայել: Անշուշտ չատ պարագայ կամ դէպք կրնային ծագիլ, որք յաջեցնէին կամ բոլորովին խափանէին այնպիսի բանակցութիւն մը . բայց դարձեալ լաւագոյն էր ելիցն սպասել: Արդարեւ ի՞նչ կրնային ընել տասն անզէն մարդիկ երբեցան : Քայ-Քումու մակոյկէն դուրս հանել տուաւ իւր կալանաւորներն : Անոնց ձեռքը կապուեցան, իսկ կանայք ազատ թողուեցան և ամենը մէկէն իջեւանին մէջ տեղը դրուեցան, որոց չուրջը վառուած խարոյկներ՝ անանցանելի հրեղէն պատուար մը կազմեցին :

Դեռ Քայ-Քումու իւր կալանաւորները փոխանակելու դիտաւորութիւնը չյայտնած, Կլէնարվան և Ճոն Մանկլը ազատութեան հնար մը գտնելու վրայ խորհրդակցեր էին : Ինչ որ մակոյկին մէջ չէին կրնար փորձել, կը յուսային փորձել ցամաքի վրայ իջեւանած ժամանակ, դիշերին նպաստաւոր դէպքերէն օգուտ քաղելով :

Բայց Կլէնարվանի և Զելանտայի պետին խօսակցութենէն ի վեր, խոհեմութիւն դատուեցաւ զգուշանալ այնպիսի փորձերէ, և համբերել: Փոխանակութիւնը փրկութեան հաւանականութիւններ կը խոստանար, զորս զէնքով յարձակում մը կամ անծանօթ երկիրներու մէջէ փախուստ մը չէին կրնար ընծայել: Անշուշտ չատ պարագայ կամ դէպք կրնային ծագիլ, որք յաջեցնէին կամ բոլորովին խափանէին այնպիսի բանակցութիւն մը . բայց դարձեալ լաւագոյն էր ելիցն սպասել: Արդարեւ ի՞նչ կրնային ընել տասն անզէն մարդիկ եր-

սունի չափ սպառազէն վայրենեաց դէմ։ Կէնարվան կ'ենթադրէր թէ Քայ-Քումուի ցեղը քանի մը կարեւոր պետեր կորուսած էր, զորս ազատել կ'ուզէր անշուշտ, և սխալ չէր այս ենթադրութիւն։

Հետեւեալ օրը մակոյկը նորէն գետն ի վեր ելնել սկսաւ նոր արագութեամբ։ Ժամը տասնին վայրկեան մը կանգ առաւ ալ եզրին դաշտերէն աղամողաբար հոսող Բոհայվհէնա գետակին խառնուրքին առջև։

Անդ՝ տասն բնիկներ կրող ուրիշ մակոյկ մ'եկաւ միացաւ Քայ-Քումուի մակոյկին հետ։ Մարտիկներն «այրէ մալրա» (ողջամբ եկ) ողջոյնը փոխանակեցին, և երկու մակոյկներն ի միասին երթալ սկսան։ Նոր եկողներն անգլիական զօրաց դէմ կռուելէ կուգային. իրենց պատառատուն հագուստներէն, արիւնաշաղախ զէնքերէն և արեւնահոս վէրքերէն յայտնի էր։ Տխուր և լուին էին։ Վայրենի ժողովրդոց բնական անտարբերութեամբ բնաւ ուշադրութիւն չէին ընծայեր կալանաւորեալ Եւրոպացւոց։

Օրհասարակին, Մաունկաթոթարիի գագաթները տեսնուիլ սկսան արեւմտեան կողմէն։ Ուայքաթոյի հովիտն անձկանալ կ'սկսէր։ Անդ, գետը խորտակէս ամփոփուելով, բուռն յորձանքի պէս կը հոսէր։ Բայց բնիկներուն կորովը, թեւճակաց բախիւնը

ներդաշնակող երգի մ'օգնութեամբ կրկնապատկելով ու կանոնաւորելով, յափշտակեց տարաբախտ մակոյկը փրփրադէզ ջուրերուն վրայէն։ Յորձանքն անցան և Ուայքաթոյ վերստին իր յամր ընթացքն առաւ, տեղ տեղ իր եզերաց անկիւնէն խորտակելով։

Իրիկուան մօտ Քայ-Քումու ցամաք ելաւ լերանց ստորոտն, որոց առաջին հանդիպած գօտիները գետեզրին նեղ և սեպացեալ բարձրաւանդակներուն վրայ կ'ընկնէին։ Անդ քսանի չափ բնիկներ իրենց մակոյկներէն դուրս ելնելով, դիւերն օթադայելու պատրաստութիւն կ'ընէին։ Խարոյկներ կը վառէին ծառոց տակ։ Պետ մը, որ հաւասարապատիւ էր Քայ-Քումուի, ծանրաքայլ յառաջ եկաւ, և քիթը Քայ-Քումուի քթին քսելով՝ «չոնկու»ի սիրալիր ողջոյնը տուաւ նմա։ Կալանաւորք բանակեցողին վիճակները դրուեցան խիստ հսկողութեան տակ։

Հետեւեալ առաւօտ, Ուայքաթոյի երկար վերելքը շարունակուեցաւ։ Ուրիշ մակոյկներ ալ հասան մանր գետակաց խառնուրքէն։ Վաթոուհի չափ մարդիկք, փայլատեսյք վերջին ապստամբութեան, և քիչ շատ խոչտանգեալ անգլիական գնտակներէն, լեռնային գաւառակները կը վերադառնային։ Մերթ ընդ մերթ երդեր կը

լսուէին իրարու ետեւէ գնացող մակոյկնե-
րէն : Բնիկներէն մին՝ «քիհէ»ի հայրենա-
սիրական տաղերգը կը նուագէր , ազգային
երգ , որ անկախութեան պատերազմի կը
գրգռէ զՄաուրիս: Երգողին ձայնը , զօրեղ
և քաղցրահնչուն , լերանց արձագանգները
կ'արթնցնէր, և յաւարտ մէն մի տան, բնիկ-
ներն , իրենց կուրծքին զարնելով, որ թըմ-
բուկի պէս կը խօսէր , միաձայն կը կրկնէին
պատերազմաշունչ երգն : Յետոյ , թեւաճա-
կաց նոր ճիգով մը՝ մակոյկներն՝ հոսանքին
բռնութեան յաղթելով՝ կը սուրային ջուրին
վրայ :

Նոյն օրը գետին նաւարկութիւնը նչա-
նաւոր եղաւ հետաքրքրաշարժ երեւութով
մը : Ժամը չորսին միջոցները , մակոյկն , ա-
ռանց վարանելու , առանց իւր ընթացքն
յապաղելու, պետին ահուր ձեռքովն ա-
ռաջնորդեալ, նեղ ձորի մը մէջ մտաւ :
Բուռն յորձանքներ , մոլեգնաբար գետին
մէջի կղզեակներուն բախելով կը խորտա-
կէին : Կղզեակներն յոյժ նպաստաւոր էին
արկածից : Ուայքաթոյի այս տասրօրինակ
անցին մէջ մակոյկին չրջիլն յոյժ վտանգա-
ւոր էր , վասն զի գետերն ապաստան չէր
ընծայեր բնաւ : Ով որ եղերաց յերաչերմ
սիկին վրայ սաք դնէր , կորուստն անվրի-
պելի էր :

Արդարեւ , գետն այն չերմ աղբերա-
կանց մէջէն կ'անցնէր, որք աւեն ժամանակ
ուղեւորաց հետաքրքրութիւնը գրաւած էին:
Երկաթի թթուածննատը կարմիր գոյն մը
տուած էր եղերեայ սիկին , ուր կոխողին
ոտքը մինչեւ ի ճողաչափ խորութիւն չէր
կրնար կարծր հող կամ փխրաքար գտնել :
Մթնոլորտը ծծումբի բարկ հոտով տոգոր-
եալ էր: Բնիկները բան մը չէին զգար, բայց
կալանաւորք ծանրակէս կը նեղուէին գետ-
նին ծերպերէն արտաչնչեալ ժանտ հո-
տերէն , և ներքին գազերուն ճկտմամբ
պայթող պղպջակներէն: Բայց ո՛րչափ իրենց
հոտոտելիքը կ'զգածուէր հոտերէն , ա՛յնչափ
աչքը կը պարարէր տեսարանին վսեմութե-
նէն :

Մակոյկներն սպիտակ չոգիներու ամպի
մը մէջ մտան, որուն ակնախտիղ պարոյրները
կամարաձեւ կը դիզուէին գետին վրայ :
Իսկ գետեզրին վրայ հարիւրի չափ ջերմաղ-
բերք, ոմանք չոգիի կոյտեր ժայթքելով , ո-
մանք ալ՝ լոյծ սիւներու պէս դուրս զեղա-
նելով՝ այլազան տեսարան մը կ'ընծայէին ,
մարդկային ձեռքով կազմաւորեալ աւազանի
մը ջրվէժներուն ու ցայտերուն պէս : Կար-
ծես թէ մեքենագէտ մ'իւր ուզածին պէս
կը կառավարէր աղբիւրները : Ջուրերն ու
չոգիներն , օդին մէջ իրարու խառնուելով ,

կը ծիածանէին արեւուն ճառագայթները։

Այն տեղ Ուայքաթոյ չարժուն յատակի մը վրայէ կը հոսէր, որ չարունակ կը տատանի ընդերկրեայ հուրերուն ազդեցութեամբ։ Անտի քիչ հեռի, Ռոթորուա լճին կողմն, ընդ արեւելս, կը մռնչէին Ռոթոմահանայի և Թէթարաթայի ջերմուկներն ու չոգեբուխ ջրվէժները, զորս քանի մը յանդուգն ուղեւորք նչմարած են։ Երկրին այս մասը լի է տաք ջուրի աղբիւրներով, հրաբխային խառնարաններով և ծծմբուտներով։ Անդ դուրս կը սրծի զեղուն մասն այն գազերուն, որք չեն կրցած ելք գտնել Նոր-Զելանտայի երկու բանուկ հրաբուխներուն, Թոնկարիրոյի և Ուաքարիի կափույրներուն անբաւականութենէն։

Երկու մղոն տեղ, քնիկներուն մակոյկները ջուրին երեսը պարուրաձեւ ծածկող ջերմ չոգիէ կամարին տակ նաւարկեցին. յետոյ ծծմբային ծուխը վարատեցաւ, և մաքուր օդ մը, հոսանքին արագութենէն հրաւիրեալ, եկաւ զովացուց թասուն կուրծերը։ Ջերմուկներուն երկիրն անցած էին։

Դեռ իրիկուն չեղած, երկու բուռն յորձանք ևս անցնիլ հարկ եղաւ վայրենեաց կորովի թեւաճակներուն զօրութեամբ, այն էր Հիբաբաթուայի և Թամաթէայի յորձանքներն։ Երեկոյին, Քայ-Քումու՝ Ուայքայի և Ուայքաթոյի գետախառնուն քէն հարիւր մղոն վեր իջեան դրաւ։ Գետն յայնժամ դէպ արեւելք դառնալով Թաւբոյի լճին մէջ կը թափէր, ինչպէս որ ահագին ջուրի ցայտ մը կը թափի աւազանի մը մէջ։

Հետեւեալ օրը, ժաք Բականէլ, քարտէսը նայելով, աչ եզրին վրայ Թաւպարալեռը գտաւ, որ երեք հազար ոտք բարձրութիւն ունէր։

Կէս օրին, բոլոր մակոյկները Թաւբոյի լիճը մտան գետին հետզհետէ լայնացած բերնէն, և բնիկները ջերմեռանդաբար ողջունեցին բեհեզի կտոր մը, զոր հովը կը ծածանէր հիւղի մը վրայ։ Ապգային դրօշակն էր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԹԱԻԲՈՅ ԼԻՃԸ

Քսան-հինգ մղոն երկայնութեամբ և քսան մղոն լայնութեամբ անյատակ վիհ մը կազմուած էր, պատմական ժամանակներէն չատ առաջ, կղզոյն կեդրոնին մէջ ընդարձակ քարանձաւներու փլմամբ հրաբխային լաւաներուն ուժէն։ Այն վիհն եղաւ լիճ, բայց միշտ անդունդ, և խորաչափք տա-

կաւին չեն կրցած չափել անոր խորութիւնը։

Այսպէս է այդ տարօրինակ Թաւրոյ լիճ, ծովուն մակերեւոյթէն հազար երկու հարիւր յիսուն ոտք բարձր, շուրջ պատեալ չորս հարիւր ձողաչափ բարձրութիւն ունեցող կրկէսաձեւ լեռներէ։ Արեւմտեան կողմն անհեթեթ մեծութեամբ սեպ ապառաժք· հիւսիսային կողմը քանի մը հեռաւոր լեռնագագաթք, մանր անտառներով պսակեալ· արեւելեան կողմն ընդարձակ դաշտ մը, որոյ մէջէն ուղի մը կ'անցնի չէչաքարերով զարդարեալ, որք պայծառապէս կը պաղպաջեն զիրենք ծածկող թուփերուն տակէն· հարաւային կողմն ալ հրաբխային լերանց կոնաձեւ կատարներ, որք կարգ մ'անտառաց ետեւէն մեծավայելչաբար կը շրջանակեն զայն լայնածաւալ լիճ, որոյ ահեղագոչ մրրիկները վար չեն մնար Ովկիանի կիրկլոններէն։

Այդ բովանդակ երկիր, ատորերկրեայ բոցերու վրայ կախուած անն հուկաթեայի նման կ'երեւի։ Երկիրը կը դողայ կեդրոնական հուրին գգուանքէն։ Տաք չոգիներ կը թորին հազարաւոր կողմէ։ Չոգին կեղեւը բուռն ճարճատմամբ կը ճեղքռտի՝ շատ ուռած կարկանդակի պէս, և անշուշտ այս սարահարթ ահեղաբորբ հնոցի մը մէջ կը

սուզանէր, եթէ բանտարկեալ չոգիները տասներկու մղոն հեռին դուրս ելնելու անց մը չգտնէին Թոնկարիրոյի հրաբուխէն։

Հիւսիսային եզրէն այս հրաբուխ բոցով ու ծխով ցցուննազարդ ամբարձեալ կ'երեւէր ատրաշուշէ լեռնակաց վրայ։ Թոնկարիրոյ բաւական կնճռոտ լեռնագրական դրութեան մը վերաբերեալ կը թուէր։ Իւր ետին, Ռուաբահոյ լեռը, դաշտին մէջ առանձնացեալ, իւր ամպածրար գագաթին ինն հազար ոտք բարձր օդին մէջ կը տնկէր։ Ոչ մի մահկանացու ոտք չէր դրած անոր անմատչելի կատարին վրայ։ Մարդկային աչքն երբէք չէ կրցած չափել անոր հրաբերանին խորութիւնը, մինչ, քսան տարուոյ մէջ երեք անգամ, Պ. Պ. Պիտուիլ և Տիզրն և վերջերս ալ Պ. Չոլչէթէր կրցին չափել Թոնկարիրոյի դիւրամատոյց գագաթներն։

Այս հրակատարք իրենց աւանդական պատմութիւններն ունին։ Բականէլ չէր թերանար զանոնք իւր ընկերաց պատմելէ, մասնաւորապէս այն վէճն, որ կնոջական խնդրոյ մ'առթիւ ծագած է ժամանակաւ ընդ մէջ Թոնկարիրոյի և Թարանիքիի, որք դրացի և բարեկամ էին յայնժամ։ Թոնկարիրոյ, տաք գլուխ լինելով, ինչպէս ամեն հրաբուխ, չկրցաւ իւր զայրոյթը զսպել,

և ծեարծեց գԹանաքի: Իսկ սա, հարուածեալ և նկուն, փախաւ Հուանկանիի հովտէն, ճանբան երկու լերան կտոր ձգեց իւր վրայէն, և ծովուն եզրն հասաւ, ուր առանձնակի կը բարձրանայ Մոնթ-Էկմոն անուամբ:

Բայց Բականել սիրտ չուներ պատմելու, ոչ ալ իւր ընկերք սիրտ ունէին լսելու: Լուռուժունչ կը դիտէին Թաւբոյի հիւսիսային-արեւելեան եզրն, ուր յուսահատ չարաբաստութիւնը կը տանէր զիրենք: Լճին արեւմտեան եզերաց վրայ Բուքավա ըսուած տեղը վերապատուելի Հ. Կրասի հաստատած քարոզչական կայանն ոչ ևս էր: Քարոզիչը պատերազմին պատճառաւ հալածուեր էր ապստամբութեան գլխաւոր կեդրոնէն: Ուստի Կլէնարվան և ընկերք միայնակ էին, լքեալ քինախնդիր Մաուրիներու ձեռք, և ճչդիւ կղզւոյն վայրենի մասին մէջ, ուր քրիստոնէութիւնը մուտ գտած չէր երբէք:

Ֆայ-Ֆուհու, Ուայքաթոյի ջուրերէն դուրս ելնելէ յետոյ, առուէ մ'անցաւ, որ իբր ձագար կը ծառայէ ընդ մէջ դետին և լճին, սրածայր հրուանդան մը պատեց, և լճին արեւելեան եզրն ելաւ, Մոնկա լերան առաջին դարաւանդներէն մին վրայ, որ երեք հարիւր ոտղաչափ բարձրութեամբ

բլուր մ'է: Անդ կը պարզէին Նոր-Զելանտայի ընտիր վուչին՝ փորմոնի՝ արտերը: Այս օգտակար տունկ, զոր բնիկներն «հարաքէքէ» կը կոչեն, իւր ամեն մասամբ պիտանի է: Ծաղիկը տեսակ մը պատուական մեղր կուտայ: Ցօղունը խժային հիւթ մը կ'արտադրէ, որ մեղրամոմին կամ ոսլային տեղը կը բռնէ. տերեւն, առաւել ևս հաճոյակատար, բազմաթիւ ճեւափոխութեանց կը յարմարի. թարմը թուղթի տեղ կը ծառայէ, չորն ընտիր արեթ մը կ'ընէ. կտրտուելով չուան, պարան և ցանց կը չինուի. բարակ թելերու բաժնուելով ու մաքրուելով կը հիւսուի, և վերմակ, վերարկու, փոխաթ կամ առիպած կը լինի, և կարմիր կամ սեւ ներկուելով՝ ամենէն պըճնասէր Մաուրիներուն հագուստ կը լինի:

Այս պատուական տունկ երկու կղզեաց ամեն կողմը կը գտնուի, ծովերուն, գետերուն և լիճերուն եզերքը: Ասա իւր վայրի թուփերը բովանդակ արտեր ծածկած էին. թուխ կարմիր ծաղիկներն, որք ազաւենեաց ծաղիկներու կը նմանին, ամեն տեղ կը փթթէին՝ երկայն և սայրասուր տերեւոց խառնակոյտէն դուրս ցցուելով: Գեղեցիկ թռչունք, նեկտարեանք, յաճախորդք փորմիոնի արտերուն, երամ երամ կը թռչտէին, և ծաղկանց մեղրորակ հիւթը ծծելով կը հեչտանային:

Լճին ջուրերուն մէջ խումբ խումբ կը ժքթէին գորշ ու կանաչ պիսակներով և սեւորակ փետուրներով բադեր, որք դիւրաւ ընտելացած էին։

Ֆառորդ մղոն հեռի, լերան մը գառիվերին վրայ, «բահ» մը, մաուրիական ամրոց մը կը տեսնուէր անվկանդ դիրքի մը մէջ։ Կալանաւորք, մի առ մի մակոյկէն դուրս հանուելով, ձեռներնին ու ոտներնին ազատ, հոն տարուեցան։

Ամրոցին յանգող արահետը փորմիոնի դաշտերուն մէջէն կ'անցնէր, ուր այլ և այլ դեղեցիկ ծառոց պուրակներ ալ կային, մնայուն տերեւներով և կարմիր հատապտուղներով «գայգաթիա»ներ, աւստրալիական «տրակինա»ներ, որոց գաղթը կաղամբաւոր արմաւենւոյն տեղը կը բռնէ առաւելապէս, և «հուիու»ներ, որք կերպասները սեւի ներկելու կը ծառայեն։ Ոսկեփայլ փետուրներով խոշոր աղաւնիներ, մոխրագոյն անծեղներ և կարմրորակ տարմահաւեր, թուփերուն մէջէն վեր թռան՝ երբոր բնիկները մօտեցան։

Բաւական երկար պտոյտէ մ'զկնի, Կլէնարվան, տիկին Էլէնա, Մարի Կրանթ և ընկերք բահին ներսի կողմը հասան։

Այս ամրոց, տասն–հինգ ոտք բարձր հաստատինդ ցցապատնէշներու առաջին որ-

մով մը չրջապատեալ էր· ցիցերու երկրորդ գիծ մ'և ուռենեաց ծերպաւոր պատուար մը կը փակէր երկրորդ միջավայրն, այսինքն բահին սարահարթն, որոյ վրայ մաուրիական չէնքեր կառուցեալ էին և քառսունի մօտ հիւղեր չափակցապէս տրամադրեալ։

Կալանաւորք հոն մնած ժամանակ սոսկալի տպաւորութիւն մ'զգացին՝ երկրորդ չրջափակին ցիցերը զարդարող մարդկային կառափնները տեսնելով։ Տիկին Էլէնա և Մարի Կրանթ աչերնին անդին դարձուցին՝ գարչելով մանաւանդ քան թէ սարսափելով։ Այն կառափունք պատերազմին մէջ անկեալ թշնամեաց գլուխներ էին, որոց մարմինք կերակուր եղած էին յաղթողաց։

Աչխարհագիրն այսպէս ճանչեց զանոնք իրենց խոռոչացեալ և անաչք կապիճներէն։

Եւ արդարեւ, այդ գինուորական պետերուն աչերը կերուած էին· իսկ կառափներուն ուղեղը պարպելէ և մորթը քերելէ զկնի, քիթն իւր տեղը կ'ամրապնդէին մանր տախտակի կտորներով, ռունգերը փորմիոնով կը թխէին, բերանն ու կոպերը կը կարէին, և ապա փուռը դնելով երսուն ժամ ծխոցի կ'ենթարկէին։ Այսպէս պատրաստուելով, այդ կառափք անսահ-

մանաքար կը պահուին առանց աւրուելու կամ խորշոմելու, և յաղթանակի նշաններ կը կազմեն:

Մաուրիք իրենց բուն պետերուն կառափներն ալ կը պահեն, բայց անոնց աչերը կը մնան կապիճներուն մէջ և կը նային: Նոր-Զելանտացիք պանծանօք կը ցուցնեն զանոնք, դեռատի մարտիկներուն քաջանշացման կը ներկայեն, և հանդիսաւոր արարողութեամբ կը մեծարեն:

Հայց Քայ-Քումուի բահին մէջ, մըշնամեաց կառափները միայն կը զարդարէին զայդ սոսկալի թանգարան, և անդ՝ անշուշտ՝ մեկէն աւելի Անգլիացիք, դատարկ սկնակապիճներով կ'աւելցնեն Մաուրի պետին հաւաքածոյն:

Քայ-Քումուի տնակը, չըլլապատեալ քանի մը նուազ կարեւոր հիւղերէ, բահին խորը կառուցուած էր, ընդարմակ բայց գետնի մ'առջեւ, զոր Եւրոպացիք «ճակատամարտի դաշտ» կրնային կոչել: Տնակը ցիցերու զօդուած մ'էր ոստերու հիւսքով պատած և ներսի կողմէն փորմիոնէ սրահակներով ծածկուած: Քանի ոտք երկայնութիւն, տասն-հինգ ոտք լայնութիւն և տասն ոտք բարձրութիւն՝ երեք հազար խառնարդ ոտնաչափ բնակարան մը կ'ընծայէին Քայ-Քումուի: Զելանտացի պետի մը բնակութեան համար ասկէց աւելիի պէտք չկար:

Միակ մուտք մ'ուներ տնակը: Բուսական թանձր հիւսքով չինուած հեծանաւոր վիեղկ մը դրան տեղ կը ծառայէր: Ծածքը քուաձեւ դուրս երկնցած էր, և հեծանակներուն ծայրը պատկերներ քանդակուած էին: Տնակին ճակատը՝ տերեւներ, խորհրդաւոր պատկերներ, ճիւաղներ և պղտաքանդակներ, վերջապէս բնիկ դրուագչի մը մկրատէն ծնած հետաքրքրաշարժ խառնակոյտ մը կ'ընծայէր այցելուներուն աքանչացման:

Իսկ ներսի կողմը, գետնէն կէս ոտք բարձր սալայատակ մը կար կռեալ հողէ: Քանի մը եղեգնեայ վանդակներ, և չոր պտերներով լցուած ակումբներ, որք «թիփա» կոչուած տունկի մ'երկայն և դիւրաթեք տերեւներէն հիւսուած փսխաթով մը ծածկեալ էին, անկողնոյ տեղ կը ծառայէին: Մէջտեղը քարէ ծակ մը վառարան կը կազմէր, և ծածքին վրայ բացուած ծակ մ'ալ ծխնելոյզ: Կրակին ծուխն, երբոր ըստ բաւականի թանձրանար, կը հաճէր վերջապէս օգուտ քաղել ծածքին վրայի ծակէն, ամենագեղեցիկ սեւ ներկ մը թողլով տնակին որմերուն վրայ:

Տնակին քով չինուած էին նախ՝ պետին չտեմարաններն, ուր իր նպարները

կը պահուէին, այսինքն փորվիոնի, պատատի, թարոյի և պտերի հունձերն. երկրորդ՝ փուռերն, ուր այս զանազան ուտեստք կ'եփուէին տաքցած քարերու միջոցաւ: Փիչ մը հեռուն կը մակաղէին այծեր ու խոզեր, հազուագիւտ սերունդք այն օգտակար կենդանեաց, զորս Քուք տարած և կլիմային ընտելացուցած էր: Շուներ կը վազվզէին մի կամ միւս կողմ, իրենց նիհար ուտելիքն որոնելով: Իբրեւ Մաուրիներուն հանապազօրեայ սնունդին ծառայող կենդանիք՝ լաւ չէին խնամուեր:

Կէնարվան և ընկերք մէկ նայուածով տեսեր էին այս ամենը: Թափուր տնակի մը քով կեցած կ'սպասէին պետին քմահաճ կամաց, մինչդեռ միւս կողմէ խումբ մը ջատուկներ ամեն թշնամանք կը տեղային անոնց վրայ: Այդ հարպիներուն(*) վոհմակ կը չրջապատէր զանոնք, բռնցի կ'սպառնար, կ'ոռնար ու կը պոռչտէր: Քանի մ'անգլիերէն բառեր, անոնց խոշոր չրթունքէն դուրս պրծելով, բացորոշապէս նշմարել կուտային թէ անվիճական վրէժխնդրութիւն կը պահանջէին:

Այն կառանչներուն և սպառնալեաց մէջ,

(*) Անոնք երեք առասպելեալ խառնագաղանաց, որ կիսով դեմք և անգղի մարմին ու ճիրաններ ունէին:

տիկին Էլէնա առերեւոյթ հանդարտութիւն մը կը կեղծէր, որ սրտին մէջ տեղի չէր կրնար ունենալ: Այդ քաջասիրտ կինն Լորտ Կլէնարվանի պաղարիւնութիւնը չխանգարելու համար, դիւցազնական ճգամբ կը զսպէր ինքզինք: Խեղճ Մարի Կրանթ ալ թալոկ կ'զգար, բայց Ճոն Մաննկլս կը քաջալերէր զայն, և պատրաստ էր զայն պաշտպանելու համար՝ իւր կեանքը տալու: Ընկերներն ալ զանազան զգացմամբ կը կրէին հայհոյութեանց և սպառնալեաց տեղատարափը, ոմանք հազարապետին պէս անհոգութեամբ, ոմանք ալ Բականէլի պէս հետզհետէ զայրանալով:

Կէնարվան ուզելով ազատել տիկին Էլէնա այդ կատաղի մեգերաներուն թըշնամանքէն, ուղղակի Քայ-Քումուի քով գընաց և ժանտատեսիլ խումբը ցուցնելով:

—Վռնտէ սոնք, ըսաւ:

Մաուրի պետն ուշադրութեամբ իւր կալանաւորին նայեցաւ առանց պատասխանելու. յետոյ ձեռքի չարժմամբ մը լռեցուց ոռնացող խուժանը: Կէնարվան գլուխը խոնարհեցուց ի նշան շնորհակալեաց, և ծանրաքայլ վերադարձաւ իւրայնոց քով:

Նոյն միջոցին հարիւրի չափ Մաուրիք գումարուած էին բահին մէջ, ծերեր, չափահասներ, պատանիներ, ոմանք հանդարտ,

բայց տխուր, ֆայ-ֆուամուի հրամաններուն ապատելով, ոմանք ալ վերջին կռիւներուն մէջ ազգականաց և բարեկամաց վրայ ողբ ու կոծ ընելով:

Ուիլիըմ Թոմսընի հրաւէրով ոտք ելնող համայն պետերէն ֆայ-ֆուամու միայն կը վերադառնար ի Թաւթոյ լիճ, և ամենէն առաջ նա կը գուժէր իւր ցեղին թէ ազգային ապստամբութիւնն յաղթուեր էր ստորին Ուայքաթոյի դաշտերուն մէջ: Իւր հրամանին տակ երկրին պաշտպանութեան դիմող երկու հարիւր մարտիկներէն հարիւր չիսուննը ետ չէին դարձած: Եթէ ոմանք գերի ընկած էին Անգլիացւոց ձեռք, շատերը, պատերազմի դաշտին մէջ դիւցազնաբար ընկած, ոչ եւս պիտի կրնային վերադառնալ իրենց նախնեաց երկիրն:

Այս էր այն բուռն թաղծութեան պատճառը, որով բովանդակ ցեղն զգածուեցաւ ֆայ-ֆուամուի վերադարձած ժամանակ: Դեռ բան մ'իմացուած չէր վերջին պարտութեան վրայ, և ազետալի դոյժն յանկարծակի պայթեր էր:

Վայրենեաց մէջ՝ բարոյական կսկիծը ֆիզիքական ցոյցերով կը յայտնուի միշտ: Այս պատճառաւ, մեռեալ մարտիկներուն ազգականներն ու բարեկամները, մանաւանդ կանայք, իրենց երեսն և ուսերը կը խզրատէին սուր խեցիներով. արիւնը կը ցայտէր և անոնց արտասուաց հետ կը խառնուէր: Խորագոյն վէրքերը դառնագոյն կսկիծներու նշանակ էին: Թշուառ ջենլանտացիք, արիւնաշաղախ և մոլեգնեալ, սոսկալի տեսք մ'ունէին:

Ուրիշ պատճառ մ'ալ, որ աւելի ծանր էր բնիկներուն համար, առաւել ևս կ'ազեցնէր անոնց յուսահատութիւնն: Ոչ միայն իրենց զրաւամահ ազգականներն ու բարեկամները կ'ողբային, այլ և անոնց ոսկերքը, զորս չպիտի կրնային զետեղել ընտանեկան դամբարանին մէջ: Այդ մեծաւորդաց պահպանութիւնը, Մաուրիներուն կրօնին մէջ, անհրաժեշտ է ապագայ կենաց համար: Մեռելոց ոսկերքն, և ոչ կորստական մարմինը, խնամով կը հաւաքուին, կը մաքրուին, կը քերթուին, կը չղկուին խոկ, և վերջապէս կը զետեղուին «Ուտուբա»յին, այսինքն «փառաց տան» մէջ: Այդ դամբարանք փայտէ արձաններով զարդարուած են, որոց վրայ կատարեալ հաւատարմութեամբ կ'ընդօրինակուին մեռեալին կտաւոյ մարմնանկարները: Բայց այժմ դամբարանք դատարկ պիտի մնային, կրօնական արարողութիւնք չպիտի կատարուէին, և վայրի չանց ակռաներէն զերծ մնացած ոսկերք անթաղ պիտի ճերմկէին պատերազմի դաշտին վրայ:

Ցայնժամ հրկնապատկեցան Թաղծութեան ցոյցերը։ Կանանց սպառնալիքներուն յաջորդեցին արանց անէծներն ընդդէմ Եւրոպացւոց։ Հայհոյութիւնք կը գոռային, սպառնական ցոյցերն առաւել բուռն կերպարանք կ'առնուին։ Ձիչերուն ու կառանչներուն՝ խժդժական գործեր պիտի յաջորդէին։

Ֆայ-Ֆումու վախնալով որ իւր մոլեռանդ ցեղակցաց կատաղութիւնը ծայրայեղութեան կրնար հասնիլ, իւր կալանաւորները նուիրական տեղ մը փոխադրել տուաւ, որ բահին վիս ծայրն էր, ապակեր սարահարթի մը վրայ։ Այդ հիւղ իրմէ հարիւր ոտնաչափ բարձր կոյտի մը յեցած էր, որ բաբաւական սեպ զառիվերով մը կ'աւարտէր ցցապատնէշին այն կողմը։ Այն «Ուարէ-Աֆուա»յի (սրբանուէր տան) մէջ, քուրմերը կամ արիքիներն եռանձնեայ աստուածութիւն մը կ'ուսուցանեն Ջելանտացւոց, հայր, որդի և Թուչուն կամ հոգի։ Այս ընդարձակ և ամրափակ հիւղին մէջ կը պահուէին այն սուրբ և ընտիր կերակուրները, զորս Մաուի-Բանկա-Բանկուի կ'ուտէ իւր քուրմերուն բերնով։

Անդ, կալանաւորք, առժամապէս պատըսպարեալ բնիկներուն կատաղութենէն, փորվիոնէ փսիաթներու վրայ տարածուեցան։

Տիկին Էլէնա, ուժասպառ, բարոյական կորովը ընկճեալ, իւր ամուսնոյն Թեւերուն մէջ ընկաւ։

Կէնարվան, սրտին վրայ սեղմելով զայն, կը յեղյեղէր.

—Մի՛ վախնար, սիրելի՛ Էլէնա; Աստուած չթողուր մեզ։

Ռոպերթ, նուիրական հիւղին մէջ մըտնելուն պէս, Ուիլսընի ուսերուն վրայ ելաւ, և ծածկին ու որմին մէջ տեղը կեցած անջրպետէ մը, ուստից համայական համրիչները կախուած էին, գլուխը դուրս հանեց և տեսաւ որ բահին ամեն կողմն աչքին առջեւն էր մինչեւ Ֆայ-Ֆումուի տնակը։

—Պետին շուրջը դումարուած են, ըսաւ ցած ձայնիւ... Թեւերնին կը տատանեն... կաղկանձներ կ'արձակեն... Ֆայ-Ֆումու խօսիլ կ'ուզէ...։

Տղան լռեց քանի մը վայրկեան. յետոյ ըսաւ.

—Ֆայ-Ֆումու կը խօսի...։ Վայրենիները կը հանդարտին...։ Մտիկ կ'ընեն զայն...։

—Յայտնի կը տեսնուի որ այդ պետ իւր անձնական շահուն համար զմեզ պաշտպանել կ'ուզէ, ըսաւ Մաք Նապս։ Իւր ցեղին պետերուն հետ փոխանակել կ'ուզէ։ Բայց իւր մարտիկները պիտի հաճի՞ն։

—Այո՛ . . . մութիկ կ'ընեն զայն . . . յա-
րեց Ռոպէրթ : Կը ցրուին . . . : Ոմանք ի-
րենց հիւղակները կը վերադառնան , ոմանք
ալ կը մեկնին ամրոցէն . . . :

—Ձմարի՞տ կ'ըսես , գոչեց հազարա-
պետը :

—Այո՛ , պարոն Մաք Նապս , պատաս-
խանեց Ռոպէրթ : Քայ-Քուռմա միայնակ մնաց
իր մակոյկին մարտիկներուն հետ . . . : Ա՛,
անոնցմէ մին դէպ ի մեր տնակը կուգայ . . . :

—Վար իջիր, Ռո՛պէրթ, ըսաւ Կլէնար-
վան :

Նոյն միջոցին , տիկին Էլէնա , որ ուրի
վրայ եկած էր , մկկէն բռնեց ամուսնոյն
թեւէն :

—Եղուա՛րդ , ըսաւ ամուր ձայնիւ , ո՛չ
Մարի Կրանթ և ո՛չ ես պէտք չէ որ ողջ
ընկնինք այդ վայրենիներուն ձեռք :

Եւ, այս խօսքն ըսելով , լցուն ատրճա-
նակ մը կարկառեց Կլէնարվանի :

—Չէ՛նք , գոչեց Կլէնարվան, աչերն յան-
կարծ բոցավառելով :

—Այո՛ , Մաուրիները չեն խուզեր ի-
րենց կալանաւորուհիները : Բայց այս գէնք
մեզ համար է , Եղուա՛րդ , և ո՛չ անոնց
համար . . . :

—Կլէնարվա՛ն, ըսաւ իսկոյն Մաք Նապս,
պահեցէք զայդ ատրճանակ , դեռ ժամա-
նակը չէ . . . :

Ատրճանակն անհետացաւ լորտին զգ-
գեստներուն տակ : Տնակին մուտքը փակող
փոխարը բացուեցաւ , քնիկ մը ներս մտաւ :

Նշան ըրաւ կալանաւորաց որ իր ե-
տեւէն երթան : Կլէնարվան և ընկերք ,
հոծ խմբով , անցան բահէն և կանգ առին
Քայ-Քուռմուի առջեւ :

Պետին չուրջը ժողովուած էին ցեղին
գլխաւոր մարտիկներն : Անոնց մէջ կը տես-
նուէր այն Մաուրին , որու մակոյկը Քայ-
Քուռմուի մակոյկին հետ միացած էր Ռոհէն-
հէննա գետակին Ուայքաթոյի հետ խառ-
նուած տեղը : Քառուն տարեկան հուժ-
կու մարդ մ'էր , ամեհի և վայրագ դէմ-
քով : Անունը Քարա-Թէթէ էր , որ զե-
լանտական լեզուաւ «ցասկոտ» ըսել է :
Քայ-Քուռմու , մինչեւ մէկ աստիճան յար-
գանօք կը վարուէր անոր հետ , և մարմնա-
նկարին նրբութենէն կը հասկցուէր թէ
Քարա-Թէթէ բարձր դիրք մը կը բռնէր
ցեղին մէջ : Սակայն , դիտող աչք մը կրնար
գուշակել թէ այս երկու պետերուն միջեւ
նախանձորդութիւն կար : Հազարապետը
դիտեց որ Քարա-Թէթէի ազդեցութիւնը
դժպհի էր Քայ-Քուռմուի : Երկուքն ալ Ուայ-
քաթոյի կարեւոր ցեղերուն կը հրամայէին
հաւասարազօր իշխանութեամբ : Ուստի ներ-
կայ տեսակցութեան մէջ , Քայ-Քուռմուի քե-

րանը թէև ժպտէր, աչերը խոր թշնամութիւն կ'արտայայտէին։

Ֆայ-Ֆուման հարցուց Կլէնարվանի.

—Անգլիացի՞ ես դու։

—Այո՛, պատասխանեց ըրտն առանց վարանելու, վասն զի այդ ազգութիւն առնել կը դիւրացնէր փոխանակութիւն մը։

—Ձեր ընկերնե՞րն, ըսաւ Ֆայ-Ֆուման։

—Ընկերներս ալ Անգլիացի են ինձ պէս։ Մեք ճանապարհորդներ ենք, նաւաբեկեալներ։ Բայց, եթէ կ'ուզէք գիտնալ, մեք մասնակցած չենք պատերազմին։

—Փոյթ չէ, պատասխանեց Ֆարա-Թէթէ բրտաբար։ Ամեն Անգլիացի մեր թշնամին է։ Ձեր ազգակիցքդ մեր երկիրն արշաւեցին, մեր գիւղերն այրեցին։

—Դէշ ըրին, պատասխանեց Կլէնարվան լուրջ ձայնիւ։ Ձայս կ'ըսեմ, իմ կարծիքս լինելուն համար, և ոչ թէ քու ձեռքդ ընկած լինելուս պատճառաւ։

—Մտիկ ըրէ, ըսաւ Ֆայ-Ֆուման, Նուի-Աթուային(*) քրմապետը՝ Թոհոնկա՝ մեր եղբարց ձեռքն ընկած, Բաքէքաներուն (Եւրոպացւոց) գերի եղած է։ Մեր Աստուածը կը հրամայէ մեզ գնել անոր կեանքը։ Ես կ'ուզէի կորզել հանել քու սիրտդ, կ'ուզէի որ քու և ընկերացդ գլուխները մշտըն-

(*) Զելանտացւոց Աստուծոյն անունն է։

ջենապէս կախուէին այս ամրոցին ցիցերէն։ Բայց Նուի-Աթուա խօսեցաւ։

Զայս ըսած միջոցին, Ֆայ-Ֆուման, որ ցայնժամ ինքզինք զսպած էր, կը դողար բարկութենէն, և իւր դէմքը վայրագ գրգռութիւն մը կ'արտայայտէր։

Ֆանի մը վայրկեան լռելէ յետոյ, յարեց պաղութեամբ.

—Կը կարծե՞ս որ Անգլիացիք մեր Թոհոնկան փոխանակեն քու անձիդ հետ։

Կլէնարվան վարանեցաւ պատասխանելու, և սեռին երեսը նայեցաւ ուշադրութեամբ։

—Չեմ գիտեր, ըսաւ վայրկեան մը լռութենէ վկնի։

—Խօսէ, ըսաւ Ֆայ-Ֆուման. քու կեանքդ մեր Թոհոնկային կենաց չափ արժէք ունի՞։

—Ո՛չ, պատասխանեց Կլէնարվան. ես ոչ պետ մ'եմ, ոչ քահանայ մ'եմ մերայնոց մէջ։

Բայց անէլ, զարհուրելով այս պատասխանէն, Կլէնարվանի նայեցաւ զարմանօք։

Ֆայ-Ֆուման ալ զարմացած երեւցաւ։

—Ըսել է թէ աներկբայ չես, ըսաւ։

—Չեմ գիտեր, պատասխանեց Կլէնարվան։

—Քուկիններդ քեզ չե՞ն ընդունիր մեր Թոհոնկային փոխարէն։

—Միայն զի՞ս, ո՛չ, կրկնեց Կլէնարվան. մեզ ամենքս, դուցէ ընդունին։

—Մաուրիներուն մէջ, ըսաւ Քայ-Քուման, գլխու փոխարէն գլուխ է։

—Նախ այս կանայքն առաջարկէ քուրմիդ փոխարէն, ըսաւ Կլէնարվան ցոյց տալով զտիկին Էլէնա և Մարի Կրանթ։

Տիկին Էլէնա ուզեց իւր ամուսնոյն քով վազել, հազարապետը թող չտուաւ։

—Ահա երկու տիկնայք, յարեց Կլէնարվան ակնածաբար խոնարհելով դէպ ի տիկին Էլէնա և Մարի Կրանթ, բարձր աստիճան ունին երեսց երկրին մէջ։

Քայ-Քուման պաղատեալ իւր կալանաւորին նայեցաւ. չար ժպիտ մ՚անցաւ չրթունքին վրայէն. բայց գրեթէ իսկոյն զսպեց, և գրգռեալ ձայնիւ մը պատասխանեց։

—Անիծեա՛լ Եւրոպացի, միս խաբե՞լ կը յուսաս սուտ խօսքերով։ Կը կարծես թէ Քայ-Քուման աչերը չե՞ն կրնար սիրտերուն խորը կարդալ։

Եւ ցուցնելով զտիկին Էլէնա,

—Ահա՛ կինդ, ըսաւ։

—Ո՛չ, ի՛մս, գոչեց Քարա-Թէթէ։

Յետոյ ետ մղելով կալանաւորները, ձեռքը տիկին Էլէնայի վրայ երկնցուց, որ իսկոյն ժժգունեցաւ դողէն։

—Եղուա՛րդ, գոչեց տարաբաղդ կինը չուարեալ։

Կլէնարվան, առանց խօսք մ՚արտասանելու, թեւը վեր վերցուց։ Հրազէն մը պայթեցաւ, Քարա-Թէթէ գետինն ընկաւ դիտապաստ։

Հրազէնին բոմբիւնը լսելնուն պէս, բնիկները դուրս վազեցին հիւղերէն. բահը վայրկեան մը մէջ լցուեցաւ բազմութեամբ. հազար ձեռք բարձրացան տարաբաղդ կալանաւորաց վրայ։ Կլէնարվանի ատրճանակը խլեցաւ ձեռքէն։

Քայ-Քուման տարօրէն նայուածք մ՚արձակեց Կլէնարվանի վրայ. յետոյ մի ձեռքովն սպանիչը ծածկեց, միւսովն ալ ամբոխընդարգիլեց, որ կալանաւորաց վրայ կը խուժէր։

—Թապո՛ւ, Թապո՛ւ, գոչեց։

Այս խօսքի վրայ խուժանը կանգ առաւ Կլէնարվանի և ընկերաց առջեւ, որք գերբնական զօրութենէ մը պահպանուեցան առժամապէս։

Քանի մը վայրկեան յետոյ վերստին Ուարէ-Ամթուա տարուեցան, որ բանտի տեղ կը ծառայէր անոնց։ Բայց Ռոպէրթ Կրանթ և ծաք Բականէլ անոնց հետ չէին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՄԱՈՒՐԻ ՊԵՏԻ ՄԸ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Ֆայ-Ֆումու, Նոր-Զելանտայի մէջ բազմական յաճախ տեսնուած օրինակի մը համեմատ, ցեղապետի աստիճանին հետ արիքի տիտղոսն ալ կը կրէր, և իբր այն՝ կրնար Թապուի նանրահասատ պաշտպանութիւնը ծաւալել անձանց և իրաց վրայ:

Պոլինեսական ցեղէ ժողովրդոց մէջ՝ Թապուին անմիջական արդիւնքն է ամեն յարաբերութիւն կամ կիրառութիւն արգիլել Թապուացեալ անձին կամ նիւթին հետ: Ըստ մաուրիական կրօնի, ով որ Թապու հրատարակեալ բանի մը ձեռք դպցընէ, Աստուծոյ ցասումը կը գրգռէ, և մահուամբ կը պատժուի իբրեւ սրբապիղծ: Եթէ Աստուած յապաղէ գիւր վրէժխնդրութիւն, քուրմերը կը փութացնեն:

Թապուն շատ անգամ աշխարհավարական նպատակներով կը գործադրի պետերուն կողմէ. երբեմն ալ առանձնական կեանց սովորական վիճակներէ կը ծագի: Բնիկ մը, շատ պարագայից մէջ, կը Թապուանայ քանի մ'օր. օրինակի համար, երբոր իւր մազերը կարէ, տուն չինէ, մահացու մը հիւանդութենէ բռնուի, մեռնի:

եթէ գետակի մը ձուկերը կամ պատատի տունկերն աննախատեսաբար շատ ուտուելով՝ սպառնալու հասնելու վտանգ սպառնան, Թապու կը հրատարակուին պաշտպանողական կամ խնայողական նպատակաւ: Եթէ պետ մը զինքն ճանճրացնող մարտիկն իւր տունէն հեռացնել ուզէ, Թապու կը հրատարակէ զայն. եթէ օտար նաւումբ յարաբերութիւններն իւր չահուն միայն ծառայեցնել ուզէ, Թապու կը հրատարակէ զայն. եթէ եւրոպացի վաճառականէ մը գոհ չլինելով՝ ամեն յարաբերութենէ արգելուլ ուզէ զայն, Թապու կը հրատարակէ, ըստ օրինակի Թագաւորաց հին «վէթոյ»ին:

Երբոր մարդ մը կամ իր մը Թապու հրատարակուի, ոչ ոք կրնայ անոր դպչիլ: Երբոր բնիկ մ'այդ արգելքին ենթարկի, ինչ ինչ ուտելիքներէ կը զրկուի սահմանեալ ժամանակի մը մէջ: Երբոր արձակուի այդ խիստ պահեցողութենէ, եթէ հարուստ է, իւր ծառաները կ'օգնեն իրեն՝ կոկորդն ի վար խոթելով այն կերակուրներն որոց չկրնար ձեռք դպցունել. իսկ եթէ աղքատ է, կը պարտաւորի անոնց պէս բերովը վերցնել այն ուտելիքներն, և այսպէս Թապուն կ'անատնացնէ զայն:

Վերջապէս, այս զարմանալի սովորու-

թիւն կը վարէ կամ կը փոփոխէ Նոր-Զե-
լանտացւոց ամեն գործերը: Աստուածային
անդուլ միջամտութիւն մ'է ընկերական կե-
նաց մէջ: Օրինաց ուժ ունի, և կրնայ ըս-
ուիլ թէ քնիկներուն բովանդակ օրինա-
գիրքն, որոյ վրայ կարելի չէ վիճել կամ
դիտողութիւն ընել, Թապուի յաճախ գոր-
ծադրութեան մէջ կը կայանայ:

Գալով Ուարէ-Ա֊թուայի մէջ փակեալ
կալանաւորաց Թապուին, խուժանին կա-
տաղութենէն զանոնք ազատելու համար
դրուած կամածին Թապու մ'էր: Բնիկնե-
րէն ունանք, Քայ-Քումուի բարեկամք և
կուսակիցք, յանկարծ կանգ առեր էին ի-
րենց պետին ձայնէն և պաշտպաններ էին
կալանաւորները:

Սակայն Կլէնարվան ինքզինք չէր խա-
բեր պատիր յոյսերով· գիտէր թէ իւր մահ-
ուամբ միայն կրնար վճարուիլ պետի մ'ապա-
նութիւնը: Վայրենի ժողովրդոց մէջ, մահն
երկար չարչարանաց վախճան մ'է միշտ:
Հետեւաբար, Կլէնարվան կ'ապաստէր դառն
կտտանօք քաւել զայն օրինաւոր զայրոյթ
որ գիներ էր գիւր բազուկ, բայց կը յուսար
որ Քայ-Քումուի ցասումն իւր վրայ միայն
կը ծանրանար:

Աւելորդ է ըսել թէ դժնդակ գիշեր
մ'անցուցին ինքն և ընկերներն: Անհնար է

նկարագրել անոնց կրած դառն տագնապն
ու անձկութիւնն: Խեղճ Ռոպէրթ և Բակա-
նել երեւան չէին ելած: Կարելի՞ էր երկ-
բայիլ անոնց վիճակին վրայ· քնիկներուն
վրիժառութեան առաջին զոհերն եղած էին:
Ամեն յոյս կորած էր, մինչեւ իսկ Մաք
Նապի սրտին մէջ, որ դիւրաւ յուսահա-
տիլ չէր գիտեր: Ձոն Մանկլս խելքը թըռ-
ցնելու վրայ էր տեսնելով Մարի Կրանթի
յուսահատական թախիծն իւր եղբօր կո-
րուստին վրայ: Կլէնարվան կը յիշէր տի-
կին Էլէնայի այն սարսափելի խնդիրն,
որ չարչարանքէ կամ գերութենէ զերծ
մնալու համար կ'ուզէր իւր ձեռքէն մեռ-
նիլ: Պիտի կրնա՞ր ունենալ զայդ սոսկալի
քաջութիւն:

Եւ Մարի Կրանթ, ի՞նչ իրաւունքով
սպաննել, կը խորհէր Ձոն կեզեքեալ սրտիւ:

Փախուստի գալով, պարզապէս անհնա-
րին էր: Տասն մարտիկք, յոտից ցգլուխ
պինեալ, կը հսկէին Ուարէ-Ա֊թուայի դրան
առջեւ:

Փետրվար 13 ին, բնաւ հաղորդակցու-
թիւն տեղի չունեցաւ ընդ մէջ քնիկներուն
և Թապուացեալ կալանաւորաց: Տնակին
մէջ բաւական նպարեղէն կար, բայց տա-
րաբաղդներն հազիւ ձեռք դպցուցին ա-
նոնց: Քաղցը կ'անհետանար սրտաճանչ

տագնապին առջեւ : Օրն անցաւ առանց փոփոխութիւն կամ յոյս մը բերելու : Անշուշտ՝ մեռեալ պետին թաղման և իրենց կատարած սպանման ժամն ի միասին պիտի հնչէր :

Սակայն, թէև Կլէնարվան չէր երկբայեր թէ փոխանակութեան գաղափարն հեռացած էր Քայ-Քուտուէն, հազարապետը տակաւին յուսոյ նշոյլ մը կը պահէր այս կէտի վրայ :

—Ո՛վ գիտէ, կ'ըսէր յիշեցնելով Կլէնարվանի զայն տպաւորութիւն, զոր Քարա-Թէ-Թէի սպանումն ըրած էր պետին վրայ, ո՛վ գիտէ թէ Քայ-Քուտու սրտին մէջէն գոհ եղած չէ ձեզնէ :

Բայց Մաք Նապսի դիտողութեանց հակառակ, Կլէնարվան ոչ ևս կ'ուզէր յուսալ : Հետեւեալ օրն ալ անցաւ առանց որևէ պատրաստութեանց : Աւասիկ այս յապաղման պատճառը :

Մաուրիք կը հաւատար թէ մեռեալ մարդուն հոգին երեք օր անոր մարմնոյն մէջ կը բնակի, այս պատճառաւ երեք անգամ քսան-չորս ժամ անթաղ կը մնայ դիակն : Այս առկախիչ սովորութիւն պահուեցաւ իր բոլոր ճշդութեամբ :

Մինչեւ փետրվար 15, բահն ամայի մնաց : Ճոն Մանկլս Ուիլսընի ուսն ելնելով

յաճախ դիտեց արտաքին ցցապատնէշներն, և ոչ մի քնիկ տեսաւ, ի բաց առեալ պահապաններն, որք փոփոխակի կը հսկէին Ուարէ-Աթուայի դրան առջև :

Բայց, երկրորդ օրն, հիւղակաց դռնակները բացուեցան, և վայրենիներն, արք, կանայք, տղայք, այսինքն քանի մը հարիւր Մաուրիք, բահին մէջ գումարեցան լռին և հանդարտ :

Քայ-Քուտու դուրս ելաւ իւր տնակէն, ցեղին գլխաւորներէն չրջապատեալ, և քանի մ'ոտք բարձր հողակոյտի մը վրայ ելաւ ցցապատնէշին մէջ տեղը : Բնիկներուն բազմութիւնը քանի մը ձողաչափ ետին կէս չրջանակի ձեւով կեցած էր : Բացարձակ լռութիւն կը տիրէր ժողովին մէջ :

Քայ-Քուտուի մէկ ակնարկին վրայ՝ մարտիկ մ'ուղղուեցաւ դէպ ի Ուարէ-Աթուա :

—Ձմռնաս իմ խնդիրս, ըսաւ տիկին Էլէնա իւր ամուսնոյն :

Կլէնարվան՝ կնոջը փաթթուելով՝ սրտին վրայ սեղմեց զայն : Մարի Կրանթ ալ Ճոն Մանկլսի մօտեցաւ :

—Լորտ և տիկին Կլէնարվան, ըսաւ, պիտի մտածեն անշուշտ որ եթէ կին մը՝ ամօթալի կեանքէ մ'ազատ մնալու համար՝ կրնայ իւր ամուսնոյն ձեռքէն մեռնիլ, նշանած մ'ալ կրնայ իւր նշանածին ձեռքէն մեռ-

նիլ։ Ճո՛ն, այս գերագոյն վայրկենի մէջ կրնամ բսել քեզ. մինչ երկար ժամանակէ ի վեր քու նշանածդ չե՞մ սրտիդ գաղտնեաց մէջ։ Կրնա՞մ վստահիլ քու վրայ, սիրելի Ճոնս, ինչպէս տիկին էլէնա Լորտ Կլէնարվանի վրայ։

—Մարի՛, գոչեց երիտասարդ նաւապետը չուարեալ, ա՛հ, սիրելի՛ Մարիս...

Զկրցաւ աւարտել. մուտքին փոխաթը բացուեցաւ, և կալանաւորք բռնուելով Ֆայ-Ֆումուի առջեւ տարուեցան։ Երկու կանայք հաւակերպուհիւն կը ցուցնէին իրենց բաղդին։ Արք կը ծածկէին իրենց սրտին տագնապն այնպիսի հանդարտութեամբ մը, որ գերբնական կորովոյ նշան էր։

Հասան գլխաւոր պետին առջեւ։

Ֆայ-Ֆումու չյամեցուց պիւր գատաստան։

—Դո՛ւ սպաննեցիր զԲար-Թէթէ, հարցուց Կլէնարվանի։

—Ես սպաննեցի, պատասխանեց Լորտը։

—Վաղը պիտի մեռնիս արեւուն ծագման ժամանակ։

—Միայնա՞կ, հարցուց Կլէնարվան, որոյ սիրտն ուժգնութեամբ կը բաբախէր։

—Ա՛, եթէ մեր Թոհանկային կեանքը քուկինէդ աւելի թանկագին չլինէր, գոչեց Ֆայ-Ֆումու, որոյ աչերը վայրագ կսկիծ մը կ'արտայայտէին։

Նոյն միջոցին, յուզում մը ծագեցաւ բնիկներուն մէջ։ Կլէնարվան արագ նայուածք մը նետեց իր շուրջն։ Իսկոյն ամբոխը բացուեցաւ, և մարտիկ մ'երեւցաւ քրտնաթաթաւ և պարտասեալ։

Ֆայ-Ֆումու, զայն տեսնելուն պէս, հարցուց անգլիերէն լեզուաւ, անշուշտ իր կալանաւորներէն հասկցուելու դիտաւորութեամբ։

—Բաքէքաներուն բանակէտէ՞ն կուգաս։

—Այո՛, պատասխանեց Մաուրին։

—Տեսա՞ր մեր գերի բռնուած Թոհոնկան։

—Տեսայ։

—Ո՞ղջ է։

—Մեռա՛։ Անգլիացիք հրացանի բռնեցին զայն։

Ալ լմնցած էր Կլէնարվանի և ընկերաց գործն։

—Ամե՛նդ ալ, գոչեց Ֆայ-Ֆումու, պիտի մեռնիք վաղ առաւօտ, արեւուն ծագած ժամանակ։

Այսպէս ահա ընդհանուր պատիժ մ'անխտրաբար պիտի հարուածէր տարաբաղդները։

Տիկին էլէնա և Մարի կրանթ չնորհակալեցաց հայեցաւ մտաբերմին դէպ յերկին

Կալանաւորք վերստին չտարուեցան յՈւարէ-Ա֊թուա։ Պետին յուղարկաւորութեան և անոր յարակից արիւնռուչտ ա֊րարողութեանց ներկայ պիտի գտնուէին այն օր։ Բնիկներու խումբ մը զանոնք ծա֊ռի մը տակ տարաւ, և անդ իրենց պա֊հապանները մօտերնին կեցան՝ առանց աչ֊քէ վրիպեցնելու։ Մնացեալ Մաուրիք իրենց պաշտօնական սգովն գբաղեալ, զանոնք մոռցած կը թուէին։

Կանոնական երեք օրերն անցած էին Քարա-Թէթէի մեռնելէն ի վեր։ Վախճա֊նելոյն հոգին վերջապէս մեկնած էր անոր մարմինէն։ Չետեւաբար արարողութիւնն սկսաւ։

Մարմինը փոքր հողակոյտի մը վրայ դըր֊ուեցաւ ամրոցին մէջտեղը։ Շքեղ գգեստ մը հագուցած և փորմիոնէ գեղեցիկ փսիաթի մը մէջ փաթթած էին։ Փետրազարդ գլուխը կանանչ տերեւներէ պսակ մը կը կրէր։ Երեսը, թեւերն ու կուրծքն իւղով չըփ֊ուած էին և փտութեան նշան չունէին բնաւ։

Մեռելոյն ազգականքն և բարեկամք հո֊ղակոյտ բարձրաւանդակին ստորոտն եկան, և յանկարծ, իբր երաժշտապետի մը կողմէ տրուած նշանի մը վրայ, լալեաց և հեծու֊թեանց անհուն նուագահանդէս մ'օդը

թնդացնել սկսաւ։ Վախճանեալը կ'ողբա֊յին տխուր և ծանրապէս չափակցեալ եր֊դաչնակութեամբ։ Մերձաւորք իրենց գլուխը կը կոծէին, ազգականուհիք իրենց երեսները կը կեղեքէին եղունգներով, և արտասուքէ աւելի արիւն կը հոսէին։ Այդ թշուառ կանայք խղճի մտօք կը կատարէին իրենց խժդժական պարտականութիւն։ Բայց այս ցոյցք բաւական չէին վախճանելոյն հոգին ողոքելու, որոյ ցասումն անշուշտ պիտի հարուածէր իւր ողջ մնացած ցեղա֊կիցներն. և որովհետև իւր մարտիկները չէին կրցած ի կեանս կոչել զայն, ուզեցին որ միւս աշխարհի մէջ չդիւրէ երկրաւոր կե֊նաց բարեբաստութիւններն և չգանկայ ա֊նոնց։ Այս պատճառաւ պէտք չէր որ Քարա֊Թէթէի կինը մինակ թողուր իւր այրը գե֊րեզմանին մէջ, մանաւանդ որ թշուառու֊հին ինքն ալ չէր ուզեր ապրիլ անոր վրայ։ Այս էր սովորութիւնն, հաւաճայն պարտ֊եաց, և այսպիսի զոհողութեանց օրինակներ պակաս չեն Զելանտացւոց պատմութեան մէջ։

Կինն երեւցաւ. դեռ նորատի էր։ Իւր գիսախուիւ մազերը կը ծածանէին ուսե֊րուն վրայ։ Իւր ճիչերն ու հեծեծանք դէպ ի երկինք կ'ամբառնային։ Տարտամ ու կցկտուր խօսքեր, կսկիծներ, որովք մեռելոյն առա֊

քինութիւնները կը հոչակէր, կ'ընդմիջէին իւր հեծութիւններն, և պահ մը չդիմանալով կսկիծին բռնութեան, դնաց պառկեցաւ բարձրաւանդակին ստորոտն և դլուխը գետնին զարնել սկսաւ։

Նոյն միջոցին, ֆայ-ֆումու անոր քովդնաց։ Յանկարծ հէք կինն ոտքի վրայ եւլաւ, բայց պետին ձեռքին մէջ դարմող «մէրէ»ի (լախտ) ուժգին հարուած մ'ի գետին տախտապարեց զայն։ Թշուառուհին չանթահար ընկաւ։

Զարհուրելի աղաղակներ ամբարձան իսկոյն։ Հարիւրաւոր բազուկներ սպառնալ սկսան կալանաւորաց, որք սարսափած էին այս սոսկալի տեսարանէ։ Բայց ոչ ոք տեղէն չարժեցաւ, վասն զի եղերական արարողութիւնն աւարտած չէր։

Ֆարա-Թէթէի կինն իւր ամուսնոյն հետ միացած էր գերեզմանին մէջ։ Երկու մարմինք քովէ քով տարածուած էին։ Բայց յաւիտենական կենաց համար իւր հաւատարիմ լծակիցը բաւական չէր վախճանեալ պետին։ Ո՛վ պիտի սպասաւորէր անոնց Նուի-Աֆուայի քով, եթէ իրենց գերիներն ալ հետ չերթային միւս աշխարհ։

Վեց ողորմելիք բերուեցան իրենց աէրանց դիակներուն քով։ Ծառայներ էին, զորս պատերազմին անողոք օրէնքը գերու-

թեան դատապարտած էր։ Պետին կենդանութեան ժամանակ, ամենախիստ զրկանք և խոշտանգանք կրած էին, հաղիւ սնունդ ստանալով և գրաստական աշխատութեանց գործածուելով, և այժմ, մահուրիական անապաշտութեան համեմատ, այդ ստրկական դժնդակ կեանքն յաւիտենականութեան մէջ ալ պիտի շարունակէին։

Տարաբաղդներն համակերպեալ կ'երեւէին իրենց բաղդին։ Չէին բնաւ զարմանար այդ ի վաղուց նախատեսեալ զոհողութեան վրայ։ Ձեռներնուն ամեն կապերէ ազատ թողուիլը կը ցուցնէր, թէ առանց ընդդիմութեան յանձն պիտի առնուին մեռնիլ։

Մնաց որ, արագ մահուամբ և առանց տանջանքի մեռան։ Տանջանքն սպանութեան հեղինակներուն վերապահեալ էր, որ քսան քայլ անդին կեցած, աչերնին կը դարձուէին սարսափելի տեսարանէն, որոյ սոսկումն ևս քան զեւս կ'աւելնար։

Մէրէի վեց հարուած, վեց հուժկու մարտիկներէ տրուելով, զոհերն ի գետին փռեցին, արեան լճակի մը մէջ։

Մարդակերութեան զարհուրելի տեսարանի մը նշան եղաւ այս։

Ստրկաց մարմինը պաշտպանեալ չէր Թապուէն, ինչպէս պետին դիակն. այլ ցե-

ղին սեփականութիւնն էր։ Յուղարկաւորութեանց լալկաններուն առջեւ նետուած մանր դրամն էր։ Այս պատճառաւ, զոհողութիւնը կատարուելուն պէս, քնիկներուն բովանդակ ամբոխը, ցեղապետք, մարտիկք, ծերք, կանայք, տղայք, առանց սեռի և հասակի տարբերութեան, գաղանական կատաղութենէ բռնուած խուժեցին զոհերուն դիականց վրայ, և արագ գրչի մը գծելուն չափ չտեւեց, դեռ տաք մարմինները փողոտեցան, յօշոտեցան, և մանր մասերու կամ փչուրներու բաժնուեցան։ Ներկայ գտնուող երկերիւր Մաուրիներուն ամենն ալ բաժին ունեցան այդ մարդկային մսէն։ Ձիրար կը հրմշտկէին, իրարու հետ կը կռուէին և իրարու ձեռքէ կը քաշքշէին մսի ամենափոքր մասունքը։ Ջերմ արեան կաթիլները կը ցայտէին հրէշ կոչնականաց վրայ, և գարշելի ամբոխը կը զեռար կարմիր անձրեւի մը տակ։ Կարծես թէ ամեհի վագրեր էին՝ մոլեգնեալ իրենց որսին վրայ։ Ցետոյ քսանի չափ խարոյկ վառուեցան բահին այլ և այլ կողմերն, այրած միսերուն հոտը վարակեց մթնոլորտն. և առանց այդ խնջոյից զարհուրելի ժխորին, առանց մսով խճողեալ կոկորդներէն արձակուած կառանչներուն, կալանաւորք պիտի կրնային լսել զոհերուն ոսկերաց ճարճատիւնը մարդակերաց ակռաներուն տակ։

Կէնարվան և ընկերք, սիրտ ի բերան, կը ջանային ծածկել զայս քստմնելի տեսարան երկու դժբաղդ կանանց աչքէն։ Կը հասկնային այն ժամանակ թէ ո՛րպիսի դժնդակ մահ կ'սպասէր իրենց հետեւեալ օրն, ի ծագել արեւուն, և անշուշտ ո՛րպիսի դառն կտտանօք պիտի սպաննուէին։ Սարսափահար մնացած էին անշշունչ։

Ցետոյ եղերական պարերն սկսան։ Բարկ ըմպելիներ, պղպեղի ոգիէն հանուած, առաւել ևս արծարծեցին վայրենեաց արբեցութիւնը։ Մարդկութեան ոչ մի նշան չմնաց։ Գուցէ իսկ մռնալով պետին թապուն, վերջին ծայրայեղութեանց պիտի ձեռնարկէին կալանաւորաց վրայ, որք սարսափահար եղած էին անոնց մոլեգնութենէն։ Բայց Քայ-Քումու պահած էր զիւր բանավարութիւն այդ ընդհանուր արբեցութեան մէջ։ Ժամ մը միջոց չնորհեց արիւնախանձ խրախճանին, որպէս զի կարենար իւր վերջին ուժգնութեան հասնիլ և ապա չիջանիլ։ Ցետոյ թաղման վերջին արարողածը խաղցուեցաւ սովորական արարողութեամբ։

Քարա-Թէթէի և կնոջը դիակները վերցուցին, անդամները կքելով փորերնուն վրայ ամփոփեցին ըստ վելանտական սովորութեան։ Կը մնար յայնժամ թաղել, ոչ

վերջնապէս, այլ մինչեւ այն ժամն, ուր միսերն սպառելով՝ ոսկերք եւեթ մնային։

«Ուտուբա»յին, այն է գերեզմանին տեղն ամրոցէն դուրս տեղ մ՚ընտրուած էր, երկու մղոնի չափ հեռի, Մաուներկանամու կոչուած փոքր լերան մը կատարը, լճին ալ եզրը։

Հոն պիտի փոխադրուէին մարմինք։ Երկու գահաւորակ, յոյժ նախնական, կամ առաւել անկեղծաբար խօսելով՝ երկու պատգարակ բերուեցան բարձրաւանդակին քով։ Դիակները, ծալապատիկ, նստած մանաւանդ քան թէ պառկած, և բաղեղէ չրջանակով մ՚իրենց հանդերձներուն մէջ ծածկուած, անոնց մէջ դրուեցան։ Զորս մարտիկ ուսերնուն վրայ վերցուցին զանոնք, և համայն ցեղն, իւր դամբանական երգը նուագելով, թափոր կազմեց անոնց ետեւէն մինչեւ թաղման տեղը։

Կալանաւորք, միշտ հսկողութեան տակ, հանդիսատես եղան թափորին, որ բահին առաջին չրջափակէն մեկնեցաւ. յետոյ երգերն ու աղաղակները քիչ քիչ նուաղեցան։

Կէս ժամու չափ ժամանակ եղերական թափորն անտես մնաց անոնց աչքէն ձորին խորերուն մէջ։ Ցետոյ վերստին երեւցաւ, լերան գալարապտոյտ շաւիղներուն վրայ։ Վերջապէս կանգ առաւ ուղիղ հարիւր ոտք

բարձրութեան, այն է Մաուներկանամուի կատարին վրայ, Քարա-Թէփէի թաղման համար պատրաստուած տեղը։

Հասարակ Մաուրիի մը գերեզմանը ծակ մ՚է հողին մէջ և քարերու կոյտ մը։ Բայց զօրեղ և ահաւոր պետի մը համար, որ մօտ ժամանակէն աստուածանալու սահմանեալ էր անշուշտ, իւր ցեղը փառաւոր չիրիմ մը կը վերապահէր, արժանի անոր քաջագործութեանց։

Ուտուբան ցցապատնէշով պատած էր, և դիականց հանդչելիք փոսին մօտ, կարմրանկար պատկերներով զարդարեալ չերտեր տնկուած էին։ Ազգականք մոռցած չէին թէ «ուայտուա», այն է մեռելոց հոգին, նիւթական ուտեստով կը սնանի, ինչպէս մարմինն այս կորստական կեանց մէջ։ Այս պատճառաւ նպարեղէնք դրուած էին չրջափակին մէջ, ինչպէս նաև վախճանելոյն գէնքերն ու հանդերձները։

Գերեզմանին հանգստութեան համար բան մը պակաս չէր։ Երկու ամուսինք քովէ քով դրուեցան անոր մէջ, յետոյ հողով ու խոտերով ծածկուեցան՝ կարգ մը նոր լաց ու կոծերէ զկնի։

Յայնժամ թափորը լեռնէն վար իջաւ լճին, և այնուհետեւ ոչ ոք կրնար՝ առանց մահուան պատժոյ՝ Մաուներկանամու լեռն

ելնել, վասն զի թապուացեալ էր Թոնկարիրոյի պէս, ուր թաղուած է ուրիշ պետ մը, որ 1846ին Զելանտայի մէջ պատահած բուռըն գետնաշարժէ մը ջախջախուելով մեռած էր։

ԳԼԻՒՒ ԺԳ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄՔ

Երբոր արեւը կ'անհետանար Թարոյ լճէն անդին, Թուհահուա և Բուքէթաբու լերանց ետին, կալանաւորք իրենց բանտը տարուեցան, ուր պիտի մնային մինչև այն ժամն, ուր Ուահիթի-Բէննկսի կատարները լուսավառէին օրուան առաջին հուրերէն։

Գիշեր մը կը մնար իրենց՝ ի մահ պատրաստուելու համար։ Հակառակ իրենց ընկճեալ վիճակին, հակառակ զրկանք զգածեցնող սոսկման, ճաշեցին ի միասին։

—Մեր ուժը չատ սկսած է մեզ, ըսեր էր Կլէնարվան, որպէս զի անվեհեր քայքայեմք մեռնինք։ Պէտք է ցոյց տալ այս բարբարոսաց թէ Եւրոպացիք չեն վախնար մեռնելէ։

Յաւարտ ճաշին, տիկին Էլէնա երեկոյեան աղօթքը կարդաց բարձր ձայնիւ, և իւր բոլոր ընկերք ձայնակցեցան գլխաբաց։

Ո՞ւր է այն մարդն որ մեռած ժամանակ միտքը չբերէ զԱստուած։

Այս պարտականութեան կատարումէն յետոյ կալանաւորք համբուրեցին զիրար։

Մարի Կրանթ և տիկին Էլէնա, հիւղին մէկ անկիւնը քաշուելով փսիաթի մը վրայ տարածուեցան։ Քունն, որ վիշտերն առժամապէս կը դադրեցնէ, չատ չանցած՝ ծանրացաւ անոնց կոպերուն վրայ, և ննջեցին միմեանց թեւերուն մէջ, պարտեալ ի խոնջութենէ և երկար քննհատութիւններէ։ Կլէնարվան յայնժամ մի կողմ առաւ իւր բարեկամներն և ըսաւ.

—Սիրելի ընկերք իմ, մեր և այս խեղճ կանանց կեանքն Աստուծոյ ձեռքն է։ Եթէ այնպէս անօրինած է որ վաղը պիտի մեռնինք, աներկբայ եմ, որ պիտի գիտնանք քաջարար մեռնիլ, իբրեւ քրիստոնեայ, պատրաստ աներկիւղ երեւելու առաջի գերագոյն դատաւորին։ Աստուած, որ սրտից խորերը կը տեսնէ, գիտէ թէ ազնիւ նպատակի մը հետամուտ եղած էինք մեք։ Եթէ՝ փոխանակ յաջողութեան՝ մահ կ'սպասէ մեզ, ըսել է թէ իւր կամքն այնպէս է. չեմ տրտնջեր իրեն դէմ։ Բայց աստ մահը լոկ մահ չէ,

այլ կտտանք է, անպատուութիւն է թերեւս, և ահա երկու կանայք:

Անտ յուզուեցաւ Կլէնարվանի ձայնն, որ ցայնժամ անյողդողդ էր: Իւր սրտայուզութիւնը զսպելու համար լռեց: Պահ մ'անցնելէ յետոյ,

—Ձո՛ն, ըսաւ երիտասարդ նաւապետին, ինչ որ ես Էլէնայի խոստացայ, նոյնը դու ալ Մարիի խոստացար: Ի՞նչ պիտի ընես:

—Այն խոստումէ, պատասխանեց Ձոն Մանկլը, կը կարծեմ թէ կատարելու պարտականութիւն ունիմ Անտուծոյ առջեւ:

—Այո՛, Ձոն, բայց ձեռնք չունինք:

—Ասանիկ, ըսաւ Ձոն, դաշոյն մը ցուցնելով: Քարա-Թէթէի ձեռքէն խլեցի երբոր տապաստ ընկաւ ձեր ոտից տակ: Մի՛լորտ, մեր երկուքէն ով որ ողջ մնայ միւսին վրայ, նա պիտի կատարէ տիկին Էլէնայի և Մարի Կրանթի փափաքը:

Այս խօսքերէ յետոյ խոր լռութիւն տիրեց հիւղին մէջ: Վերջապէս հազարապետը խզեց զայն ըսելով.

—Բարեկա՛մք, վերջին վայրկենին պահեցէք զայդ ծայրագոյն միջոց: Ես չատ կողմնակից չեմ անդարմանելի բաներու:

—Ես մեզ համար չըսի, պատասխանեց Կլէնարվան: Ինչ որ ալ լինի, մեք պիտի դի-

մադրաւենք մահուան: Ա՛, երէ մեք միայն լինէինք, արդէն քսան անգամ պիտի դոչէի ձեզ. «Բարեկա՛մք, ելք մը փորձենք. յարձակինք սա թշուառականաց վրայ:» Բայց այս կանա՛յք. այս կանա՛յք . . .:

Ձոն, նոյն միջոցին, մուտքին փսխաթը վեր առնելով՝ քսան-հինգ քնիկ հարեց, որք կը հակէին Ուարէ-Ալթուայի դրան առջեւ: Մեծ խարոյկ մը վառած էին, որ չարագոյժ նըշոյլներ կը ձգէր բահին ցցուեալ մասերուն վրայ: Վայրենիներէն ոմանք պառկած էին հրատին շուրջը, ոմանք ալ, ոտքի վրայ, անշարժ կեցած, սեւ պատկերներ կը ձեւացնէին բոցերուն լուսափայլ վարագուրին վրայ: Բայց ամենուն ալ աչքն իրենց հսկողութեան յանձնեալ հիւղին վրայ կ'ուղղուէր ստէպ:

Կ'ըսուի թէ հսկող բանտապանի մ'և փախչիլ ուզող բանտարկելոյ մը միջև, յաջողութեան հաւանականութիւնք վերջինին կողմն են: Արդարեւ, միոյն չահը միւսոյն չահէն մեծ է: Բանտապանը կրնայ մոռնալ զիւր պահպանութիւն, բայց միւսը չկրնար մոռնալ զիւր արգելափակութիւն: Կալանաւորն աւելի յաճախ կը խորհի փախչիլ, քան պահապանն արգելուլ զանոր փախուստ:

Այս է ահա ստէպ պատահած հրաշալի փախուստներու պատճառը:

Բայց աստ, ատելութիւնն ու ոխակալութիւնն էր որ կը հսկէր կալանաւորաց վրայ, և ոչ անտարբեր բանտապան մը։ Եթէ բանտարկեալը կապուած չէին, պատճառն այս էր որ կապանաց պէտք չկար, որովհետեւ քսան-հինգ մարդ կը հսկէր Ուարէ-Աթուայի միակ մուտքին առջեւ։

Այդ հիւղ, ետեւի կողմէն ցցապատնէշին ծայրն եզերող ապառաժի մը յեցած էր, և առջեւի կողմէն ալ հողի նեղ լեզուով մը միայն մատչելի էր բահին սարահարթին։ Իսկ երկու կողմերը լերան սեպաձեւ կողմերուն վրայ բարձրացած և հարիւր ոտք խոր վէմ մը վրայ կարկառած էին։ Այն կողմերէն վար իջնել անհնարին էր։ Ձեղունին քովի ճեղքէն ալ փախչիլ կարելի չէր՝ առջեւը կեցած ահագին ապառաժին պատճառաւ։ Միակ ճանբան նոյն իսկ Ուարէ-Աթուայի մուտքն էր, ուր Մաուրիք կը պահէին զայն նեղ հողալեզուս, որ չարժական կարգի մը պէս բահին կը կցէր զայն։ Ուստի փախուստ անհնարին էր, և Կլէնարվան, քաներորդ անգամ իւր բանտին պատերը քննելէ յետոյ, հարկադրեցաւ ճանչնալ զայս անհնարութիւն։

Սակայն տագնապալից դիշերին ժամերը կ'անցնէին։ Թանձր խաւար մը ծածկած էր լեռը։ Ոչ լուսին և ոչ աստեղք չէին խառնվեր զայն խոր աղջամուղջ։ Մերթ ընդ մերթ վարէն փշաթ հովեր կը կոծէին բահին կողերն, և հիւղին ցիցերը կը ճարճատեցնէին։ Պահապաններուն խարույկն յանկարծ կ'արծարծէր այն վաղանցիկ հովէն, և արագ շողեր կը նետէր Ուարէ-Աթուայի վրայ։ Բանտարկեալք կը լուսաւորուէին վայրկենապէս։ Խեղճերն իրենց վերջին մտածութեանց մէջ սուզեալ էին։ Մահելական լռութիւն մը կը տիրէր հիւղին մէջ։

Կէս գիշերը չորս ժամու չափ անցած էր, հազարապետին ուշադրութիւնն արթնցաւ թեթեւ դղրդիւնէ մը, որ հիւղին յետակողման հեծաններուն ետեւէն գալ կը թուէր, լերան կրթնած կողմէն։ Մաք Նապ ի սկզբան կարեւորութիւն չտաւ այն դղրդիւնին. բայց տեսնելով որ կը շարունակէր, հետաքրքրութիւնը շարժեցաւ, և լաւ հասկընալու համար ականջը գետնին դրաւ։ Թուեցաւ իրեն թէ հեռուէն կը քերթէին և հողը կը փորէին։

Երբոր սուզեց զայս, հազարապետը Կլէնարվանի և Ճոն Մանկլսի քով սողոսկեցաւ, և զանոնք իրենց դառն մտախոհութիւններէն կորզելով հիւղին յետակողմը տարաւ։

—Ականջ դրէք, ըսաւ ցած ձայնիւ։ Քերթելու դղրդիւնն ևս քան զեւս զգա-

ւի կը լինէր· կը լսէին որ մանր քարեր կը ճռնչէին սրածայր մարմնոյ մը ճնշումէն և դուրս կը թափէին։

—Գազան մ'է իւր որջին մէջ, ըսաւ Ճոն Մանկլա։

Կլէնարվան ճակտին զարկաւ.

—Ո՛վ գիտէ, Թերեւս մարդ մ'է...

—Մարդ կամ գազան, պատասխանեց հազարապետն, հիմա կը հասկնամ։

Ուիլսըն և Օլվինէթ անոնց հետ միացան և սկսան պատը փորել, Ճոն իւր դաշունով, միւսները գետնէն հանած քարերով կամ իւրեանց եղունգներով. իսկ Միւրաթի, գետնին վրայ պառկած, պահապաններուն խումբը կը դիտէր մուտքը ծածկող փսիաթին Թերաքամ ծերպէն։

Այդ վայրենիք խարուկին չուրջն անշարժ նստած, չէին խմանար իրենցմէ քանի քայլ անդին անցածը։

Գետինը կակուղ և դիւրաւխրելի հողով ծածկեալ էր։ Այս պատճառաւ, թէ և առանց դործիքի, ծակն արագապէս յառաջացաւ։ Շատ չանցած, յայտնի եղաւ թէ մարդ մը կամ մարդիկ, բահին կոպին կառչած, անոք մը կը ծակէին դուրսէն։ Ի՞նչ նպատակաւ։ Գիտէի՞ն ներսը բանտարկեալները գտնուիլը· կամ թէ ըսո դիպաց փո՞րձ մ'էր։

Բանտարկեալք կրկնապատկեցին իրենց ջղունքը։ Մատերնին ճեղքրտուելով արիւն կը հոսէին, բայց կը պեղէին միշտ։ Կէս ժամու չափ աշխատութենէ յետոյ, բացուած ծակը կէս մաղաչափ խորութեան հասած էր, և դղրդին առաւել որոշ թնդիւններն կը հասկնային թէ հողի բարակ խաւ մը միայն արգելք մնացած էր ծակին բացման։

Քանի մը վայրկեանք ևս անցան և յանկարծ հազարապետն իւր ձեռքն ետ քաշեց սուր երկաթէ մը կտրեալ, և հազիւ կրցաւ զսպել կոկորդէն դուրս վազած գոչիւնը։ Ճոն Մանկլա, իւր դաշունին երկաթը դէմ բռնելով պատռպատեց գինքը ծակէն դուրս ելած դանակին ճօճումէն, և մկկէն բռնեց զայն չարժող ձեռքը։

Կնոջ կամ տղու մը ձեռք էր, Եւրոպացւոյ ձեռք մը։

Երկու կողմէ ալ ձայն չէր հանուած կամ խօսք մ'արտասանուած։ Յայտնի էր թէ երկուստեք փոյթ կար լուռ կենալու։

—Արդեօք Ռոպէրթն է, մրմնջեց Կլէնարվան։

Բայց, որչափ և ցած ձայնիւ արտասանեց զայս անուն, Մարի Կրանթ, հիւղին մէջ եղած չարժումէն արթննալով, ոտքի եցաւ Կլէնարվանի քով, և այն հողոտ ձեռքն իւրկոյն բռնելով համբուրել սկսաւ։

—Դո՛ւ ես, դո՛ւ ես, կ'ըսէր աղջիկն առանց սխալելու, դո՛ւ ես, Ռոպէ՛րթ։

—Այո՛, քուրիկս, պատասխանեց Ռոպէրթ, ես եմ, ձեզ ազատելու եկած եմ, բայց լռութիւն։

—Քա՛յ տղայ, կը յեղյեղէր Կլէնարվան։

—Դուրսի վայրենիներուն վրայ հակեցէ՛ք, ըսաւ Ռոպէրթ։

Միւլրատի, որ պահ մ'իւր ուշադրութիւնը Ռոպէրթի երեսան ելնելուն զբաղեցուցած էր, նորէն ձեռք առաւ զիւր հակողութիւն։

—Վախ չկայ, ըսաւ, չորս պահապանք միայն կան արթուն։ Միւսները քնացած են։

Վայրկենի մը մէջ ծակը մեծցաւ, և Ռոպէրթ իւր քրոջ թեւերուն մէջէն տիկին Էլէնայի թեւերուն մէջ անցաւ։ Մարմնոյն շուրջը փորմիոնէ երկայն ճոպան մը փաթթուած էր։

—Որդեա՛կ, որդեա՛կ, կը մրմնջէր տիկին Էլէնա, վայրենիները չսպաննեցի՞ն քեզ։

—Ո՛չ, տիկին, պատասխանեց Ռոպէրթ։ Չեմ գիտեր ի՛նչպէս եղաւ, չիմթուխեան միջոցին կաւացուկ մը փախայ անոնց քովէն, չրջափակէն դուրս ելայ, և երկու օր թուփերու՝ մէջ՝ պահուեցայ։ Գիշերը կը թափառէի։ Կ'ուզէի տեսնել զձեզ։ Երբոր բո-

վանդակ ցեղը պետին յուղարկաւորութեամբ զբաղած էր, ցցապատնէչին այս կողմն եկայ, աչքէ անցուցի, և տեսայ որ պիտի կրնայի ձեր քով հասնիլ։ Ամայի հիւղակի մը մէջէ գողցայ զայս դանակ և ճոպան. խոտերու խուրձերն և թուփերու ստերը սանդուղ եղան ինձ. դիպուածով քարայրի պէս խոռոչ մը գտայ այն ապառաժուտին մէջ ու րում յեցած է այս հիւղ, և քանի մ'ոտնաչափ կակուղ հող պեղելով ահա ձեր քով հասայ։

Քսան մունջ համբոյր միայն պատասխան եղան պատանեակին խօսքերուն։

—Զուեննք, ըսաւ կտրուկ ձայնիւ։

—Բականէլ վա՞րն է, հարցուց Կլէնարվան։

—Պարոն Բականէ՞լ, պատասխանեց տըղան զարմացմամբ։

—Այո՛, ու՞ղ կ'սպասէ։

—Բայց ո՛չ, Մի՛լրատ։ Ի՞նչ կ'ըսէք, պարոն Բականէլ աստ չէ՞։

—Ո՛չ, Ռոպէ՛րթ, պատասխանեց Մարի Կրանթ։

—Չտեսա՞ք զայն, հարցուց Կլէնարվան, այն աղմուկին մէջ իրարու չհանդիպեցա՞ք, ի միասին չփախա՞ք։

—Ո՛չ, Միլրատ, պատասխանեց Ռոպէրթ, յարտաբեկեալ իւր Բականէլ բարեկամին անհետացումը լսելով։

—Ձուե՛նք, ըսաւ հազարապետը, վայրկեան մ'իսկ չկոյ կորանցնելու։ Ուր և ալ լինի Բականէլ, մեզնէ աւելի գէշ վիճակի մէջ չկրնար լինիլ։ Ձուե՛նք։

Արդարեւ վայրկեաններն յոյժ թանգ էին։ Փախուստը մեծ դժուարութիւններ չէր ներկայեր, ի բաց առեալ քարայրէն դուրս գրեթէ ուղղահայեաց պատուար մը, քսանի չափ ոտք։ Անկէ անդին զառիվայրը բաւական հեշտին էջ մը կ'ընծայէր մինչեւ լերան ստորոտը։ Անտի բանտարկեալք կրնային արագապէս վարի ձորերն հասնիլ, մինչ Մաուրիք, եթէ նշմարէին սոցա փախուստը, պիտի հարկադրուէին՝ ետեւնուն հասնելու համար՝ երկար պտոյտ մ'ընել, որովհետեւ չէին դիտեր թէ Ուարէ-Ամուայի մէջէն մինչեւ դուրսի զառիվայրը ներքնուղի մը բացուած էր։

Փախուստն սկսաւ։ Ամէն նախապատրաստութիւնք ձեռք առնուեցան յաջողեցնելու համար։ Բանտարկեալք մի առ մի դուրս ելան անձուկ ներքնուղիէն, և քարայրին մէջ հասան։ Ձոն Մանկլս, հիւղէն մեկնելէ առաջ, անհետացնել տուաւ ներքնուղիէն պեղուած հողերն, և ապա ինքն ալ սողոսկելով դուրս ելաւ այն ծակէն, որոյ վրայ քաշեց ծածկեց հիւղին փոսիկներն։ Այսպէս ներքնուղւոյն ծակը կատարելապէս անտեսանելի կը լինէր։

Կը մնար ուղղաբերձ պատուարէն վինչեւ զառիվայրն իջնելու գործն, որ անհնարին կը լիներ եթէ Ռոպէրթ փորմիոնէ ճոպանը բերած չլիներ։ Քակեցին զայն, մի ծայրը դուրս ցցուեալ ժայռի մը կապեցին, և միւս ծայրը վար թողլ տուին։

Ձոն Մանկլս, թոյլ տալէ առաջ որ իւր բարեկամք փորմիոնի թելերէ հիւսուած ճոպանին հաւատան իրենք զիրենք, նախ փորձեց զայն թելեր և տեսաւ որ շատ դիմացկուն չէին. մտածեց որ պէտք էր անխոհեմաբար իրենք զիրենք անկման մը վտանգին ենթարկել, որ կրնար մահաբեր լինել։

—Այս պարան, ըսաւ, երկու մարմնոց ծանրութենէ աւելի չկրնար վերցնել. ուստի ըստ այնմ նախ Լորտ և տիկին Կլէնարվան վար սահին. երբոր զառիվայրին վրայ հասնին, երեք անգամ ճոպանն երերցնելով իմացնեն մեզ, և մեք ալ հետզհետէ վար սահինք։

—Նախ ես իջնեմ, ըսաւ Ռոպէրթ։ Զառիվայրին ստորոտը փոպար մը գտած եմ, ուր առաջին իջնողները կրնան պահուըտիլ, միւսներուն սպասելով։

—Գնա՛, տղաս, ըսաւ Կլէնարվան պատանեակին ձեռը սեղմելով։

Ռոպէրթ աներեւոյթ եղաւ քարայրին բերնէն։ Վայրկեան մը յետոյ պարանին ե-

րիցս չարժումն իմացուց թէ տղան յաջողութեամբ կատարած էր պիւր էջ։

Անմիջապէս Կլէնարվան և տիկին Էլէնա դուրս ելան քարայրէն։ Մութը թանձր էր տակաւին, բայց քանի մը գորշախառն երանգներ կ'երփնէին արդէն արեւելեան լեռնագագաթները։

Առաւօտեան կծու ցուրտն ոգեւորեց դեռատի կինն։ Ինքզինք աւելի ուժեղ զգաց և սկսաւ պիւր վտանգաւոր փախուստ։

Նախ Կլէնարվան և ապա տիկին Էլէնա ճոպանն ի վար սահեցան մինչեւ այն տեղն, ուր ուղղաբերձ պատուարը զառիվայրին գագաթը կը հասնէր։ Յետոյ Կլէնարվան, իր կնոջն առջեւն անցնելով և զայն բռնելով, յետսերեւակի վար իջեալ սկսաւ։ Խոտերու թաւուտներն ու թուփերը կը փնտռէր յենակէտ ընելու համար. նախ ինք կը փորձէր զանոնք, և ապա տիկին Էլէնա իր ոտքը կը դնէր անոնց վրայ։ Քանի մը թռչունք, յանկարծ արթննալով, թռան մանր ճռուողիւններ արձակելով, և փախստեայք կը դողային երրոր քար մը տեղէն բերդելով թաւալգլոր վար կ'ընկնէր մինչեւ լերան ստորոտը։

Զառիվայրին կէսն հասած էին, ձայն մը լսուեցաւ քարայրին բերնէն.

—Կեցիք, կ'ըսէր Ճոն Մանկլս։

Կլէնարվան մի ձեռամբ դեդրագոնի փունջի մը կառչած, միւսովն ալ իր կինը բռնած սպասեց, հազիւ չունչ առնելով։

Ուիլսըն Ուարէ-Աթուայի դուրսէն դղրդիւն մը լսելով, հիւղին մէջ մտեր, և փսիաթը վեր առնելով՝ Մաուրիները կը դիտէր։ Անոր երած ազդարարութեան վրայ, Ճոն Մանկլս արգիլեց զԿլէնարվան։

Արդարեւ, պահապաններէն մին, անսովոր շրինդ մը լսելով, ոտքի վրայ ելեր, Ուարէ-Աթուայի քով գնացեր, և երկու քայլ մօտը կեցած և գլուխը ծռած, մտիկ կ'ընէր։ Ժամու մը չափ երկար տեւող վայրկեան մը կեցաւ այն դրից մէջ, ականջը ճկտած, ակնդէտ։ Յետոյ գլուխը ցնցելով իբրեւ խաբուած մարդ մը, ետ դարձաւ իր ընկերաց քով, չոր փայտերու խուրձ մ'առաւ, և կիսաշէջ խարոյկին մէջ նետեց, որոյ բոցերը վերստին արծարծեցան։ Վայրենւոյն դէմքը, պայծառապէս լուսաւորուելով, ոչ ևս կ'արտայայտէին որ և է մտահոգութիւն, և յետ դիտելոյ արշալուսին առաջին նշոյլներն որք հորիզոնը կը ճերմկցնէին, կրակին քով տարածուեցաւ իր մաճ անդամները տաքցնելու համար։

—Վտանգ չկայ, ըսաւ Ուիլսըն։

Ճոն նշան ըրաւ Կլէնարվանի որ չարունակէ գիւր էջ։

Կլէնարվան մեղմով վար սահեցաւ զառիվայրէն, և չատ չանցած, տիկին Էլէնա և ինք այն նեղ շաւղին վրայ հասան, ուր Ռոպէրթ կ'սպասէր։

Պարանն երիցս չարժեցաւ, և Ճոն Մանկլս, իւր հետ առնելով զՄարի Կրանթ, վտանգաւոր էջին ձեռնարկեց։ Յաջողեցաւ իւր գործադրութիւնն, և Լորտ ու տիկին Կլէնարվանի քով հասաւ Ռոպէրթի նշանակած փապարին մէջ։

Հինգ վայրկեան յետոյ, բանտարկելոց ամենն ալ, յաջողութեամբ փախչելով Ուաըէ-Ափուայէն, մեկնեցան իրենց առժամեայ ապաստանէն, փութապէս հեռացան լճին բնակաւէտ եզերքէն, և լերանց խորերը մտան նեղ շաւիղներէ։

Կը ճեպեցնէին իրենց քայլերը, զգուշանալով այն ամեն կէտերէ, ուր դիտող աչերու կրնային հանդիպիլ։ Բնաւ չէին խօսեր, ստուերաց պէս կը սահէին թուփերուն մէջէն։ Ո՛ւր կ'երթային, չէին գիտեր, բայց ազատ էին։

Ժամ հինգին մօտ լոյսը ծագիլ սկսաւ։ Կապուտակ երանգներ կճակերպ կը գունաւորէին ամպերուն բարձր երիզները։ Միգամած լեռնագագաթներն երեան ելնել կ'սկսէին առաւօտեան գոլորշիներուն մէջէն։ Յերեկուան աստղն երեւնալու վրայ էր, և փոխանակ բանտարկելոց կոտորմահ սպանման նշան լինելու, ընդհակառակըն՝ անոնց փախուստը պիտի յայտնէր։

Ուստի պէտք էր որ, այն վտանգաւոր վայրկենէն առաջ, փախստեայք հեռացած լինէին վայրենեաց հասողութենէն, որպէս զի չկրնային իրենց հետքը գտնել։ Բայց չէին կրնար չուտ քալել· վասն զի չաւիղներն յոյժ խորտաբորտ էին։ Տիկին Էլէնա զառիվերները կը մագլէր Կլէնարվանի օգնութեամբ, և Մարի Կրանթ ալ Ճոն Մանկլսի թեւերուն կթթնած էր։ Ռոպէրթ, ուրախ, յազթական, իւր յաջողութեան վրայ սիգապանծ, առաջէն կ'երթար, երկու նաւատիք ալ ամենուն ետեւէն։

Տակաւին կէս ժամ և լուսաճաճանչ աստղն երեւան պիտի ելնէր միգապատ հորիզոնէն։

Կէս ժամու չափ փախստեայք ըստ դիպաց քալեցին։ Բականել հոն չէր որ ճանբայ ցուցնէր իրենց, Բականել որ ծանր սրտաուանջութեան նիւթ մ'էր իրենց, և որոյ բացակայութիւնը սեւ կէտ մը կը կազմէր իրենց բարեբաղդութեան մէջ։ Սակայն հնար եղածին չափ դէպ յարեւելք կը դիմէին, և գեղեցիկ արշալուսոյ մ'ընդառաջ կ'երթային։ Շատ չանցած Թաւբոյ լիճն հինգ հարիւր ոտք բարձր բլրոյ մը կատարն

հասան, և առաւօտեան պաղն, աճելով այն բարձրութենէն, սաստկապէս կը կծէր զանոնք։ Բլրոց և լերանց անորոշ ձեւեր աստիճանաձեւ կը բարձրանային իրարու վրայ, բայց կէնարվան անոնց մէջ կորնչելէ զատ ուրիշ բան չէր ուզեր։ Յետոյ կրնար այն լեռնային բաւիղէն դուրս ելնելու հնարը խորհիլ։

Վերջապէս ծագեցաւ արեւն և իւր առաջին ճառագայթները փախստէից առջեւ ղրկեց։

Յանկարծ հարիւրաւոր կառանչներու կաղկանձ մը գոռաց օդին մէջ։ Բահին մէջէն կուգար, որոյ ճիշդ դիրքը չէր գիտեր յայնժամ կէնարվան, մանաւանդ որ մառախլոյ թանձր վարագոյր մ'իւր ոտից տակ քաշուած, չէր թողուր նմա որոշապէս տեսնել ստորին դաշտերն ու ձորեր։

Բայց փախստեայք չէին կրնար երկբայիլ· իրենց փախուստն երեւան ելած էր։ Պիտի կրնայի՞ն պրծիլ վայրենեաց հետապընդումէն։ Տեսնուա՞ծ էին։ Իրենց հետքը չպիտի՞ մատնէր գիրենք։

Նոյն միջոցին վարի մէգը վեր ելաւ, լոռնաւ ամպով մը գիրենք պատեց, և իրենցմէ երեք հարիւր ոտնաչափ վար բնիկներուն կատաղի ամբոխը տեսան։

Կը տեսնէին, բայց տեսնուած էին։ Մեծա-

խուռն կաղկանձիւն լսուեցաւ հաչիւններու հետ խառն, և վայրենեաց բովանդակ ամբոխն, Ուարէ-Ամթուայի ապառաժը վերելակելու ումպէտ փորձ մ'ընելէ յետոյ, չըջափակներէն դուրս խուժեց, և ամենէն կարճ արահետներէ հետապնդիլ սկսաւ բանտարկելոց ետեւէն, որք իւր վրէժխնդրութենէն կը փախչէին։

ԳԼՈՒԽ ԺԴ·

ԹԱՊՈՒ ԼԵՌԸ

Լերան գագաթը տակաւին հարիւր ոտքի չափ բարձր էր։ Փախստեայք լերան ետին անցնելով անտեսանելի լինելու համար, հոն հասնելու պէտք ունէին։ Կը յուսային որ դիւրանցանելի կատար մը թոյլ կուտար իրենց մօտակայ լեռնագագաթներն հասնիլ, որք իրարու հետ խառնուած էին այնպիսի լեռնագրական դրութեամբ, որոյ կնճիռներն անչուշտ պիտի լուծէր խեղճ բականէլ, եթէ հոն լինէր։

Ուստի փախստեայք ճեպեցուցին իրենց վերելքը՝ վայրենեաց սպառնալից աղաղակներուն տակ, որք տակաւ առ տակաւ կը մօտենային։ Չետապնդող խուժանը լերան ստորոտը կը հասնէր։

—Մի՛ վախնաք, մի՛ վախնաք, բարեկա՛մք, կը գոչէր Կլէնարվան, ճայնիւ և չարժմամբք քաջալերելով զիւր ընկերները։

Հինգ վայրկեանի մէջ լերան կատարն հասան։ Անդ ետեւնին դարձան, որպէս զի իրաց վիճակը կշռելով, այնպիսի ուղղութեան մը հետեւին, որ Մաուրիք չկրնան իրենց հետքը գտնել։

Այս բարձրութենէն ամբողջապէս կը տեսնուէր Թաւրոյ լիճն, որ դէպ յարեւմուտք կը տարածուէր իւր գեղատեսիլ լեռնապատ շրջանակով։ Հիւսիսի կողմէն՝ Բիրոնկիա լերան գագաթներն. հարաւի կողմէն Թոնկարիրոյի բոցաչունչ հրաբերանը։ Բայց արեւելեան կողմէն աչաց տեսութեան կը բախէր Ուայհիթի-Բէնկս լեռներն իրարու հետ կցող գագաթանց պատուարն, այն մեծ լեռնագօտին, որոյ անընդմէջ շղթայները Ֆուքի նեղուցէն մինչեւ յարեւելեան հրուանդան կը տարածին և հիւսիսային կողմն ամեն մասերն իրարու հետ կը կապեն։ Հարկ էր ուրեմն լերան միւս մեղկէն վար իջնել և նեղ ու թերեւս անել կիրճերու մէջ մտնել։

Կլէնարվան արտասանջ հայեաց մը նետեց իւր շուրջը։ Մէգը լուծուած լինելով արեւուն ճառագայթներէն, իւր աչքն երկրին ամեն խորշերուն մէջ կը թափանցէր

ստակապէս։ Մաուրիներուն ոչ մի չարժումը չէր կրնար վրիպիլ իւր տեսութենէն։

Բնիկները հաղիւ հինգ հարիւր ոտք հեռի էին իրմէ, երբոր հասան այն սարահարթն, որոյ վրայ նստած էր ամայի գագաթը։

Կլէնարվան չէր կրնար քնաւ երկարել զիւր դադար։ Պարտաւորեալ կամ ոչ, փախչիլ հարկ էր, որպէս զի չպաշարուէին վայրենիներէն։

—Իջնե՛նք, գոչեց, իջնենք քանի որ ճանբանիս կտրուած չէ։

Բայց, այն վայրկինին ուր խեղճ կապայք վերջին ճիգ մ'ընելով ոտքի վրայ կ'ելնէին որ քալեն, Մաք Նապս արգիլեց զանոնք ըսելով.

—Անօգուտ է, Կլէնարվա՛ն, տեսէ՛ք։

Եւ արդարեւ ամենն ալ վար նայելով տեսան զայն անբացատրելի փոփոխութիւն որ յանկարծ կատարուեր էր Մաուրիներուն շարժման մէջ։

Հետապնդումին մէկէն ի մէկ ընդհատուեր էր. լեռնէն վեր յարձակումը դադրեր էր անդիմադրելի հրամանաւ մը։ Բնիկներուն հրոսախումբը սանձեր էր զիւր թռիչք, և ընկրկեր էր, ինչպէս ծովուն կոհակներն անանցանելի ժայռի մ'առջեւ։

Արեան ծարաւի վայրենիները, լերան

ստորոտը չարուած, կ'ոռնային, կը չարժ-
տկէին, հրացաններ ու տապարներ կը ճօ-
ճէին, բայց մատնաչափ մ'իսկ չէին կրնար
յառաջանալ: Իրենց չուներն ալ տէրերնուն
նման գետնին գամուած, կը հաչէին կա-
տաղաբար:

Ի՞նչ կ'անցնէր: Ի՞նչ անտեսանելի զօ-
րութիւն կ'արգելուր վայրենիները: Փա-
խուստեայք կը նայէին առանց հասկնալու,
վախնալով որ Քայ-Քումուի ցեղը կապող
դիւթութիւնը կը լուծուէր:

Յանկարծ Ճոն Մանկլս աղաղակ մ'ար-
ձակեց, որ առ ինքն դարձուց իւր ընկեր-
ները: Ձեռօքը փոքրիկ ամրոց մը կը
ցուցնէր լերան կատարին վրայ:

—Քարա-Թէթէի գերեզմա՛նն է, գոչեց
Ռոպէրթ:

—Իրա՞ւ կ'ըսես, Ռոպէ՛րթ, հարցուց
Կլէնարվան:

—Այո՛, Միլորտ, անոր գերեզմանն է,
կը ճանչեմ՛...:

Ռոպէրթ չէր սխալեր: Ցիսուն ոտք վեր,
լերան կատարին վրայ, նոր ներկուած ցի-
ցեր փոքրիկ շերտափակ մը կազմած էին:
Կլէնարվան ալ ճանչեց զելանտացի պետին
դամբարանն: Իւր յախուռն փախստեամբ
նոյն իսկ Մաունկանամու լերան կատարն
ելած էր:

Լորտն և ընկերք լեռնագագաթին վեր-
ջին զառիվերն ալ մագլելով մինչեւ Ուտու-
բային (դամբարանին) քով հասան: Փսիաթ-
ներով ծածկեալ լայն ծակ մը դրան տեղ
կը ծառայէր: Կլէնարվան՝ ներս մտնելու
վրայ էր, յանկարծ ընկրկեցաւ:

—Վայրենի՛ մը, գոչեց:

—Վայրենի՛ մը, այս դամբարանի՞ մէջ,
հարցուց հազարապետն:

—Այո՛, Մաք Նապս:

—Ի՞նչ փոյթ, մտնենք:

Կլէնարվան, հազարապետը, Ռոպէրթ և
Ճոն Մանկլս չրջափակին մէջ մտան: Մաու-
րի մը կար անդ, փորմիոնէ լայն վերարկու
մը հագած, Ուտուբային կէս մղուխիւնը
չէր թողուր լաւ տեսնել անոր դէմքը: Ցոյժ
հանդարտ կերպարանք մ'ուներ, և կատար-
եալ անհոգութեամբ ճաշ կ'ընէր: Կլէնար-
վան կը պատրաստուէր խօսք ուղղել անոր,
բայց բնիկը կանխելով, քաղցր ձայնիւ և
կանոնաւոր լեզուաւ մ'ըսաւ նմա.

—Նստեցէք, սիրելի՛ Լորտս, նախաճաշը
ձեզ կ'սպասէ:

Բականէլ էր: Ձայնը լսելնուն պէս, ամէնն
ալ ներս վազեցին և պատուական աչխար-
հագրին երկայն թեւերուն մէջ նետուեցան:
Բականէլ գտնուա՛ծ էր: Հասարակաց փըր-
կութիւնն էր որ կը ներկայանար յանձին

նորա։ Հարցումներ պիտի ընէին անոր, կ'ուզէին գիտնալ թէ ի՞նչպէս և ինչո՞ւ Մաուննկանամուի կատարը կը գտնուէր, բայց Կլէնարվան մէկ խօսքով արգիլեց զայս անպատեհ հետաքրքրութիւն։

—Վայրենինե՛րն, ըսաւ։

—Վայրենինե՛րը, պատասխանեց Բականէլ ուսերը թօթվելով. տիրաբար կ'արհամարհեմ զայդ անհատներ։

—Բայց չե՞ն կրնար . . . ։

—Այդ ապուշնե՞րն. եկէք որ տեսնէք։

Զայս ըսելով, Բականէլ դուրս ելաւ. Կլէնարվան և ընկերք ալ ետեւէն։ Զեղանտացիք նոյն տեղն էին, լեռնադագաթին ստորոտը շրջապատած և զարհուրելի կառանչներ արձակելով։

—Գոչեցէ՛ք, ոռնացէ՛ք, թօքերնիդ պատռեցէ՛ք, տխմա՛ր արարածք, ըսաւ Բականէլ։ Եթէ կրնա՛ք, վեր ելլէք այս լեռնէ։

—Ինչո՞ւ չեն կրնար, հարցուց Կլէնարվան։

—Վասն զի պետը թաղուած է աստ, վասն զի այս դամբան կը պաշտպանէ զմեզ, վասն զի այս լեռ Թապու է։

—Թապո՞ւ։

—Այո՛, բարեկա՛մք, և ահա այս պատճառաւ է որ աստ ապաստանած եմ ես իբրեւ այն ապաստանարաններէն միոյն մէջ, որք միջին դարուց մէջ բացուած էին տաբաքազդից առջեւ։

—Անտուած մեզ հե՛տ է, գոչեց տիկին Էլէնա ձեռները դէպ յերկին վերցնելով։

Արդարեւ լեռը Թապու էր, և այս պատճառաւ ազատ էր նաներահաւատ վայրենիներուն յարձակումէն։

Բայց ասով փախստէից միրկութիւնը կատարուած չէր, այլ միւսաւիթ ժամանակամիջոց մը միայն ունէին, յորմէ պարտ էին օգուտ քաղել։ Կլէնարվան, սաստկապէս յուզեալ, չէր խօսեր բնաւ. հազարապետն ալ գլուխը կ'երերցնէր՝ իսկապէս գոհ դէմքով։

—Եւ այժմ, բարեկա՛մք, ըսաւ Բականէլ, եթէ այդ անբանք կը կարծեն որ համբերութեամբ կրնան մեզ յաղթել, չարաչար կը սխալին։ Երկու օր չանցած, բոլորովին կ'ազատինք այդ դուժերուն ձեռքէն։

—Պիտի փախչի՛նք, ըսաւ Կլէնարվան, բայց ի՞նչպէս։

—Զեմ գիտեր, պատասխանեց Բականէլ, բայց պիտի փախչինք։

Յայնժամ աւելն ոք իմանալ ուզեց աշխարհագրին արկածները։ Տարօրինա՛կ բան և զարմանալի զգուշաւորութիւն այն աստիճան առատախօսարդու մը կողմէ. խօսքերը գրեթէ մի առ մի բերնէն կորզել

պէտք եղաւ։ Բականէլ, որ այնչափ կը սիրէր պատմել, խուսափողական պատասխաններ կուտար իւր բարեկամաց հարցումներուն։

—Բականէլս փոխուեր է, կ'ըսէր Մաք Նապս։

Արդարեւ պատուարժան գիտունին դէմքն առաջուանը չէր։ Իւր փորմիոնէ լայն վերարկուին մէջ կը փաթթուէր խստաբար, և ինքզինք ծածկել կը թուէր յոյժ հետաքրքիր աչերէ։ Իւր վրայ եղած հարցմանց պատասխանելու մասին ցոյց տուած վարանումը նշմարուեցաւ իւր ընկերներէն, բայց ամենն ալ չենչմարել կեղծեցին քաղաքավարութեամբ։ Իսկ իւր վրայ խօսք չեղած ժամանակ, Բականէլ իւր սովորական զուարթութիւնը ձեռք կ'առնուր։

Գալով իւր յիշատակութեանց, հետեւեալ տեղեկութիւնները միայն պատշաճ դատեց տալ իւր ընկերաց, երբոր աւելն ալ նստան իւր մօտ, Ուտուբային ցիցերուն ստորոտը։

Ֆարա-Թէթէի սպանումէն յետոյ, Բականէլ՝ Ռոպէրթի պէս՝ բնիկներուն իրարանցումէն օգուտ քաղելով՝ Բահին չրջափակէն դուրս նետուեր էր, բայց Կրանթ պատանիէն նուազ բարեբաղդ, գնացեր Մաուրինեռու բանակետղի մը մէջ ընկեր էր։ Անդ կը

հրամայէր գեղեցիկ հասակաւ և ուշիմ դէմքով պետ մը, որ իւր ցեղին աւելն քաջ մարտիկը լինել կը թուէր։ Այն պետ լաւ անգլիերէն կը խօսէր, և բարի գալուստ ըղձաց՝ քթին ծայրն աչխարհագրին քթին քսելով։

Բականէլ կը մտածէր թէ արդեօք ինքզինք իբր գերի՞ պէտք էր նկատէր թէ ոչ։ Բայց տեսնելով որ չէր կրնար քայլափոխ մ'ընել՝ առանց պետին ընկերակցութեան, որ սիրալիր քաղցրութեամբ կը վարուէր իրեն հետ, չուտով հասկցաւ գիւր վիճակ։

Այդ պետ, որոյ անունն էր «Հիհի», այսինքն «ճառագայթ արեւու», չար մարդ չէր։ Կը թուէր թէ աչխարհագրին ակնոցն ու դիտակը բարձր գաղափար մը տուած էին նմա Բականէլի վրայ, ուստի զայն իւր քով կապեց մանաւորապէս, ոչ միայն իւր բարեկամական չնորհներով, այլ և փորմիոնէ լաւ պարաններով, մանաւանդ գիշերը։

Այս նոր վիճակ երեք օր տեւեց։ Այդ երեք աւուրց միջոցին Բականէլ բարեկամութի՞ւն տեսաւ թէ թշնամութիւն։ «Այո՛ և ո՛չ» ըսաւ առանց բացատրութիւն մը տալու։ Վերջապէս գերի ընկած էր, և, առանց անմիջապէս կտտամահ սպաննուելու, իւր վիճակ լաւագոյն չէր երեւեր իրեն քան գիւր տարաբաղդ բարեկամաց վիճակ։

Բարեբաղդաբար, գիշեր մը յաջողեցաւ կրծել գինքը կապող պարաններն և փախչիլ։ Հեռին ականատես եղեր էր սպանեալ պետին Թաղման, գիտէր թէ Մաուկանամուի գադաթը թաղած էին զայն, և այդ պատճառաւ լեռը Թապու կը լիներ։ Ուստի որոշեց հոն ապաստանիլ, որովհետեւ չէր ուզեր հեռանալ այն երկրէն, ուր իւր ընկերք գերի ընկած էին։ Յաջողեցաւ իւր վտանգալից ձեռնարկ։ Նախընթաց գիշերը Քարա-Թէթէի դամբարանն հասաւ, և անդ, ինքզինք կազդուրելով, սպասեց որ երկինք իւր բարեկամներն ալ ազատէ որ և է միջոցաւ։

Ա՛յս եղաւ Բականէլի պատմութիւնն։ Արդեօք դիտմամբ չյիշե՞ց բնիկներուն քով կենալուն ինչ ինչ պարագաները։ Քանի մ՚անգամ ցոյց տուած վարանումէն այնպէս կարծուեցաւ։ Ինչ և իցէ, Կլէնարվան և ընկերք միաձայն խնդակցութիւն յայտնեցին նմա, և այսպէս անցեալն իմացուելէ ետոյ, կարգն եկաւ ներկային։

Ուղեւորաց վիճակը միշտ ծանր էր։ Բնիկները, թէպէտ չէին համարձակեր Մաուկանամուէն վեր մագլել, իրենց կալանաւորները ձեռք անցունելու համար իրենց յոյսը քաղցի և ծարաւի վրայ դրած էին, որ ժամանակի գործ էր։ և վայրենիք ալ շատ համբերող են։

Կլէնարվան քաջ խելամուտ էր իւր վիճակին դժուարութեանց, բայց որոշեց նպաստաւոր պարագայից սպասել, և ի հարկին՝ ծնանիլ։

Նախ ուզեց խնամով զննել զՄաուկանամու, այսինքն գիւր առժամեայ ամրոց, ոչ թէ պաշտպանելու համար, վասն զի պաշարումէ երկիւղ չունէր, այլ մէջէն դուրս ելնելու համար։ Հազարապետը, ձոն, Ռոպերթ, Բականէլ և ինք, լերան ձեւն ու դիրքը ճշդիւ չափեցին. չափիղներուն ընթացքը, գետիվայրութեան աստիճանն և ուր յանգիլը զննեցին։ Կատարը մղոն մը երկայնութիւն ունէր, Ուահիթի լերանց գօտիին հետ կը կապէր զՄաուկանամու, և դէպ ի դաշտը կը խոնարհէր։ Նեղ և ոլորապտոյտ կողը միայն կը ներկայէր դիւրին չափիղ մը, երբոր փախուստն հնարաւոր լիներ։ Եթէ փախստեայք՝ գիշերին օգնութեամբ՝ առանց նշմարուելու անցնէին անտի, թերեւս յաջողէին Րէնկի խորաձորերուն մէջ մտնել, և իրենց հետքը Մաուրիներէն ծածկել։

Բայց այդ ուղի մէկէն աւելի վտանգ կ՚ընծայէր։ Վարի կողմն հրացանի հարուածոց մատչելի էր։ Ստորին գաբերուն վրայ սպասող բնիկներուն գնացականները կրնային իրար կտրել անդ, և երկաթէ

ցանց մը լարել, զոր ոչ ոք կրնար անցնիլ անպատուհաս։

Կլէնարվան և ընկերք, քիչ մ'առելի յառաջանալով կատարին վտանգաւոր մասին վրայ, կապարեայ կարկուտով մ'ողջունեցան, որ չդպաւ իրենց։ Քանի մը խոծուծք, հովէն քշուելով, իրենց քով հասան։ Տպեալ թուղթերէ չինուած էին, զորս Բականէլ հետաքրքրութեամբ վերցուց գետնէն և բաւական դժուարութեամբ կարդաց։

—Գէշ չէ, ըսաւ. գիտէ՞ք, բարեկա՛մք, ինչո՞վ կը լծկեն այս կենդանիք իրենց հրացանները։

—Ձենք գիտեր, պատասխանեց Կլէնարվան։

—Ս. Գրոց թերթերո՛վ։ Եթէ այսպէս կը յարգեն Աստուծոյ խօսքերը, կը ցաւիմ իրենց քարոզչաց վրայ. շատ դժուարութիւն պիտի կրեն մաուրիական մատենադարաններ հաստատելու։

—Ս. Գրոց ո՞ր խօսքերն արձակած են մեր կուրծին այդ վայրենիք, հարցուց Կլէնարվան։

—Ամենազօրին Աստուծոյ մէկ խօսքը, պատասխանեց Ձոն Մանկլս, որ նոյնպէս հրացէնին պայթիւնէն սեւցած թուղթը կարդացեր էր։ Այս խօսք կ'ըսէ մեզ թէ

պարտինք յուսալ ի Նա, աւելցուց Նաւապետն իւր սկովտեան հաւատոյն անդրդուելի համոզմամբ։

—Կարդա՛, Ճո՛ն, ըսաւ Կլէնարվան։

Եւ Ճոն կարդաց Սաղմոսին սա հատուածը, զոր վառօդն յարգելով այրած չէր։

—«Քանզի յուսացաւ ինձ, և ազատեցից զնա։»

—Բարեկա՛մք, ըսաւ Կլէնարվան, պէտք է զայս յուսատու խօսքեր մեր սիրելի և արիասիրտ ընկերուհեաց հաղորդել, որպէս զի զօրանան։

Կլէնարվան և ընկերք գագաթին ափափայ չաւիղներէն վեր ելնելով դէպ ի դամբարանն ուղղուեցան, որպէս զի քննեն։

Ճանբան զարմացմամբ տեսան, որ գետինը մէջ ընդ մէջ կը դողդոջէր։ Շարժ չէր, այլ այն չարունակեալ թրթռումն, զոր կատասյի մը կողերը կը կրեն՝ եռացեալ ջրոյ մղումէն։ Անչուշտ ընդերկրեայ հրոց բորբոքումէն ծնած բուռն գոլորշիք մթերեալ էին ներքան պատեանին տակ։

Այս մասնաւորութիւն չէր կրնար սքանչացնել Ուայքաթոյի ջերմաղբիւրներուն մէջէն անցնող մարդիկը։ Գիտէին թէ Իքա-Նա-Մաուիի այդ կեդրոնական մասն էապէս հրաբխային է։ Մաղ մ'է, որոյ հիւաքէն կ'արտաչէին գետնին գոլորշիներն՝ եռացեալ աղբիւրներու և ծծմբուտներու միջոցաւ։

Բականէլ, որ արդէն դիտած էր գայթ, իւր բարեկամաց ուշադրութիւնն հրաւիրեց լերան հրաբխային բնութեան վրայ։ Մառնականամուն մին էր այն բազմաթիւ կոներէն, որք խոզանաձեւ ցցուելով են կղզւոյն կեդրոնական մասին մէջ, այն է ասլաքայ հրաբուխ մը։ Մեքենական ամենափոքր գործողութիւն մը կրնար խառնարան մ'արտադրել կայծքարային և ապիտակ փխրաքարերէ կողերուն վրայ։

—Արդարեւ այդպէս է, ըսաւ Կլէնարվան, բայց այնչափ վտանգի մէջ չենք աստ, որչափ վտանգի մէջ չէինք Տըֆոնի կատաստին քով։ Գետնին այս պատեանն ամրակուռ երկաթեայ տախտակէ տարբերութիւն չունի։

—Կը համաձայնիմ, պատասխանեց հազարապետը, բայց կատայ մը, որչափ և ամրակուռ լինի, վերջապէս կը պայթի երկար գործածութենէ յետոյ։

—Մաք Նա՛պ, ըսաւ Բականէլ, ես չեմ ուզեր մնալ այս կոնի վրայ։ Թող երկինք դիւրանցանելի ճանբայ մը ցուցնէ ինձ և իսկոյն կը մեկնիմ աստի։

—Ա՛, ինչո՞ւ այս Մառնականամու չկրնար մեզ քշել տանիլ, պատասխանեց Ճոն Մանկլս, քանի որ այդչափ մեքենական զօրութիւն վակուած է կողերուն մէջ։ Թերեւս մեր

ոտից տակ քանի մը վիլոն ձիու ուժ կայ ամուլ և կորսնցաալ։ Մեր Տըֆոնն այդ ուժին հազարերորդ մասն իսկ չխնդրեր վերջ աշխարհի ծայրը տանելու համար։

Տըֆոնի այս յիշատակութեն ամենատխուր մտածութիւնները արթնցուց Կլէնարվանի մտաց մէջ։ Վասն զի որչափ և յուսահատական լինէր իւր վիճակ, յաճախ կը մխրճէր իւր նաւաստիները վիտքը բերելով և անոնց դժբաղդութեան վրայ հեծելով։

Ա.յս մտածութեան մէջ էր, երբոր Մառնկականամուի կատարն հասնելով իւր տարաբաղդութեան ընկերուհիները գտաւ։

Տիկին Էլէնա, զայն տեսնելուն պէս, քովն եկաւ։

—Սիրելի՛ եղուարդս, ըսաւ, քննեցի՞ր մեր դիրքն. յուսալի՞ է թէ երկիւղալի։

—Յուսալի է, սիրելի՛ Էլէնաս, պատասխանեց Կլէնարվան։ Վայրենիներն երբէք չպիտի կրնան անցնիլ այս լերան տակամանն, և ժամանակ կատպիր մեզ վախուստի յատակագիծ մը խորհելու։

—Մանաւանդ որ, տիկի՛ն, ըսաւ Ճոն Մանկլս, նոյն ինքն Աստուած կը պատուիրէ մեզ յուսալ։

Ճոն Մանկլս Ս. Գրոց խօսքը պարունակող թուղթի կտորը տիկին Էլէնայի տուաւ։ Երկուս մանկամարդուհիք, յուսալից հոգւով և

ամեն երկնային միջնորդութեանց պատրաստաբաց սրտիւ, փրկութեան անսխալ գուշակութիւնմը տեսան Ս. գրոց այն խօսքին մէջ։

—Այժմ Ուտուբան մտնենք, գոչեց Բականել զուարթութեամբ։ Մեր ամրո՛ցն է, մեր դղեա՛կն է, մեր ճաշարա՛նն է, մեր աչխատութեան խո՛ւցն է։ Ոչ ոք կրնայ անհանգիստ ընել զմեզ աստ։ Տիկնա՛յք, նեղրեցէք ինձ որ ասպնջականեմ զձեզ այս սխրալի բնակարանի մէջ։

Զայս ըսելով սիրուն Բականել առաջնորդեց անոնց։ Երբոր տեսան վայրենիները թէ փախստեայք վերտին կը պղծէին թապուացեալ դամբարանը, բազմաթիւ հրացանի հարուածներ և զարհուրելի կաղկանձներ արձակեցին իրարմէ աւելի չռնդալից։ Բայց, յոյժ բարեբաղդաբար, գնտակներն ալ կառանչներուն պէս չկրցին շատ հեռի հասնիլ, և կէս ճանբան թափեցան, մինչ սպառնական աղաղակներն ալ յօդս կը ցնդէին։

Տիկին Էլէնա, Մարի Կրանթ և ընկերք կատարելապէս քաջալերեցան տեսնելով որ Մաուրիներուն անապաշտութիւնն իրենց ցասումէն աւելի զօրաւոր էր, և դամբարանը մտան։

Կարմրաներկ ցիցերով չինուած չերտա-

փակ մ'էր Չելանտացի պետին Ուտուբան։ Խորհրդաւոր պատկերներ, փայտի վրայ ճչմարտապէս կտաճոյ նկարներ, վախճանելոյն աշնուականութիւնն ու քաջագործութիւնները կը պատմէին։ Յուռութնեբէ, խեցիներէ և կոփեալ քարերէ համրիչներ կ'որրէին մէկ ցիցէն միւսը։ Ներսի կողմը կանանչ տերեւներէ գորգ մը ծածկուած էր գետնին վրայ։ Մէջ տեղը թեթեւ ուռոյց մը նոր պեղուած գերեզմանը ցոյց կուտար։

Անդ դրուած էին պետին զէնքերը, լցուած ու լարուած հրացէնները, նիզակը, կանանչ յաստկաքարէ գեղեցիկ տապարը, բազում ռազմամթերաց հետ, որք լիապէս կը բաւէին յաւիտենական որսորդութեանց։

—Աւասիկ կատարեալ գինարան մը, ըսաւ Բականել, զոր մեք վախճանելէն լաւագոյն կերպիւ կրնանք գործածել։ Լաւ խորհուրդ է այս վայրենեաց խորհուրդն, որ իրենց զէնքերը միւս աշխարհ կը տանին։

—Է՛հ, բայց անգլիական գործարաններէ ելած հրացաններ են սոքա, ըսաւ զարապետն։

—Անշուշտ, պատասխանեց Կլէնարվան, և բաւական անմիտ սովորութիւն մ'է հրացէններ ընծայել վայրենեաց, որք յետոյ իրենց երկրին տիրողներուն դէմ կը գոր-

ծածեն, և իրաւունք ունին: Ինչ և իցէ, այս հրազէնք կրնան օգտակար լինել մեզ:

—Բայց առաւել օգտակար պիտի լինին մեզ, ըսաւ Բականել, Բարա-Թէթէի նաւին նետել ուտեստն ու ջուրն:

Արդարեւ, մեռելոյն ազգականքն և բարեկամք խնայութեամբ չէին վարուած: Կեցած ուտեստը տասն մարդ կրնար կերակրել տասն-հինգ օր, կամ մանաւանդ մեռեալն յաւիտենապէս: Ուտեստք կը բաղկանային պտերներէ, անուշահամ պատատներէ և եւրոպական դետնախնձորներէ, զոր երկար ժամանակէ ի վեր Եւրոպացիք տարած էին անդ: Մեծ սափորներով ալ ականակիտ ջուր կար, զոր Զելանտացիք կ'ըմպեն իրենց ճաշին հետ, և տասն-երկուքի չափ ճարտարահիւս կազմակներ, որք բոլորովին անձանօթ կանաչ խէժէ մը չինուած չիքոլաթաճեւ սափտակներ կը պարունակէին:

Ուստի քանի մ'օր ազատ էին քաղցէ ու ծարաւէ, հետևաբար առանց աղաչուելու՝ իրենց առաջին ճաշն ըրին՝ պետին համար պատրաստեալ ուտեստներով:

Կէնարվան իւր ընկերներուն պէտք եղած ուտելիքները բերաւ և Պ. Օլպինէթի խնամոց յանձնեց, Մատակարարը, միշտ մանրակրկիտ, մինչև իսկ ամենածանր պա-

րագայից մէջ, կերակուրները քիչ մը նիհար գտաւ. մանաւանդ չէր գիտեր թէ ի՛նչպէս պիտի հերիք այն արմատները, վասն զի կրակ ալ չունէր:

Բայց Բականել ազատեց զայն դժուարութենէ, խորհուրդ տալով որ պտերներն ու պատատները պարզապէս հողին մէջ թաղէ:

Արդարեւ, գետնին վերին խաւերը սասոիկ տաք էին, այնպէս որ, երէկ ջերմաչափ մը խոթուեր, վաթսուն-վաթսուն-հինգ աստիճան ջերմութիւն կը գտնուեր: Օլպինէթ մազ մնաց որ պիտի խարշեր. վասն զի, երբոր իւր արմատները դնելու համար ծակ մը փորեց, տաք խոնաւ շոգի մը պոռթկաց չէլով՝ մինչեւ իմաղաչափ բարձրութիւն:

Մատակարարը զարհուրելով կրնկին վերայ ընկաւ:

— Փակեցէք ծորակը, գոչեց հապարատպետն, և երկու նաւաստիներուն հետ վազելով ծակը գոցեց չեչաքարերու կտորուանքով, մինչ Բականել, զարմանալի դէմքով մը դիտելով զայս երեւոյթ, սա խօսքերը կը մրմնջէր.

— Հէ՛, հէ՛, ինչո՞ւ չէ:

— Վնաս մ'եղա՞ւ ձեզ, հարցուց Մաք Նապս Օլպինէթի:

—Ո՛չ, պարոն Մաք Նապս, պատասխա-

նեց մատակարարը, բայց չէի սպասեր...

— Երկնից այդչափ բարերարութեան, գոչեց Բականէլ ուրախ ձայնիւ։ Ֆարա-Թէթէի ջուրէն ու նպարեղէններէն յետոյ, գետնին կրա՛կը։ Բայց այս լեռ արքայութիւն մ'է։ Կ'առաջարկեմ գաղութ մը հիմնել աստ, մշակել և մեր կենաց մնացորդն աստ անցուցանել։ Մաուն-Կանամուի Ռոպէնսոնները կը լինինք։ Ձմեռրիտն ըսելով, ընդունայն կը մնտռեմ ու պակաս բան չեմ տեսներ այս հանգստաւէտ լերան վրայ։

— Եթէ հաստատուն չինի, պատասխանեց Ճոն Մանկլս։

— Լա՛ւ, բայց այդ վիճակ նոր բան չէ, ըսաւ Բականէլ։ Երկար դարերէ ի վեր կը դիմանայ ընդերկրեայ հուրերուն, և մինչեւ մեր չուելու ժամանակն ալ կրնայ դիմանալ։

— Նախաճաշը պատրաստ է, ըսաւ Օլիպինէթ նոյն ծանրութեամբ, որով կը կատարէր գիւր պաշտօն Մալքոլմի դղեակն եղած ժամանակ։

Իսկոյն փախստեայք, ցցապատնէշին մօտ բոլորուելով, սկսան ուտել այն ճաշերէն մին, զոր ժամանակէ մ'ի վեր նախախնամութիւնը ճշդիւ կը ղրկէր իրենց՝ ամենածանր պարագայից մէջ։

Ուտեստներուն ընտրութեան մասին բծախնդրութիւն չեղաւ. բայց ուտելի պըտերին արմատներուն վրայ կարծիքներն օձտեցան։ Ոմանք անուշ և ախորժահամ գտան զանոնք. ոմանք ալ հուզաւոր, անհամ, և կաշիի պէս պինդ։ Ֆաղցր պատատները, տաք գետնին մէջ եփուելով՝ պատուական էին։ Աչխարհագիրը դիտել տուաւ թէ Ֆարա-Թէթէի վիճակը գէշ չէր։

Փորերնին կշտանալէ յետոյ, Կլէնարվան առաջարկեց փախուստի յատակագիծ մը խորհիլ անյապաղ։

— Արդէ՞ն, ըսաւ Բականէլ դժգոհ ձայնիւ. այս հեշտալի տեղէն չուե՞լ կը փութաք։

— Բայց, պարո՛ն Բականէլ, պատասխանեց տիկին Էլէնա, ենթադրելով թէ կապույտի (*) մէջ լինինք, գիտէք որ պէտք չէ նմանիլ Աննիբաղի։

— Տիկի՛ն, ըսաւ Բականէլ, չեմ ներեր ինձ ընդդիմադրել ձեզ, և որովհետեւ խորհրդակցիլ կ'ուզէք, լաւ, խորհրդակցինք։

— Կը խորհիմ նախ թէ, ըսաւ Կլէնարվան, քաղցը դեռ մեզ չստիպած՝ փախչելու ճարը պարտինք խորհիլ։ Ուժերնիս տեղն է, պարտինք օգուտ քաղել։ Այս գիշեր

(*) Ֆաղաք Իտալիոյ, երբեմն նշանաւոր իւր հեշտութեամբք, որք Աննիբաղի յաղթական բանակը մեղկացնելով ի կորուստ մատնեցին։ Ծ. Թ.

փորձ փորձենք՝ մութին օգնութեամբ՝ բը-
նիկներուն չրջանակին մէջէն անցնելով ա-
րեւելեան ձորերն հասնիլ։

—Շատ լաւ, պատասխանեց Բականէլ, եթէ Մաուրիք անցուներն զմեզ։

—Եւ եթէ թոյլ չտա՞ն, ըսաւ Ճոն Մանկլս։

—Յայնժամ մեծ մկրճները կը գործա-
ծենք, պատասխանեց Բականէլ։

—Մեծ մկրճնե՞ր ունինք ուրեմն, հար-
ցուց հազարապետը։

—Եւ չեմ գիտեր ի՛նչ բանի գործածեմ, ըսաւ Բականէլ առանց բացատրելու։ Ուստի կը մնար գիշերուան սպասել՝ բնիկներուն գիծն անցնելու համար։

Վայրենիք լերան ստորոտը պաշարած էին միշտ։ Մինչեւ անգամ իրենց կարգերն ստուարացած էին՝ ցեղին յետամնացներն ալ եկած միացած ինելուն պատճառաւ։ Տեղ տեղ վառեալ հրատներ՝ կրակէ գօտի մը ձեւացուցած էին լերան շուրջը։ Երբոր գիշերին մութը ծածկեց չրջակայ հովիտնե-
րը, Մաուներանամու ընդարձակ վառարանէ մը չկապատեալ կ'երեւէր, իսկ գագաթը թանձր խաւարի մէջ։ Վեց հարիւր ոտք վարէն կը լսուէր թշնամւոյն բանակեցողին յուզումը, մրմունջն ու աղաղակները։

Ժամ ննջին, գիշերուան խոր մութին մէջ, կլէնարվան և Ճոն Մանկլս որոշեցին՝ իրենց ընկերները վտանգաւոր փորձին են-
թարկելէ առաջ՝ հետազօտութիւն մ'ընել։ Ուստի լռելեայն վար իջան տան վայրկե-
նի չափ, և բնիկներուն գծէն անցնող նեղ արահետի մը մէջ մտան, բանակեցողէն յի-
սուն ոտնաչափ վեր։

Մինչեւ ցայնժամ յաջող գնաց։ Մաուրիք, իրենց խարոյկներուն քով տարածուած, կը թուէր թէ չէին նշմարեր երկու փախստե-
այներն, որք տակաւին քանի մը քայլ յառաջացան։ Բայց յանկարծ միխուուն հրացանութիւնք սկսան լերան ալ ու ձախ կողմերէն։

—Ետ դառնանք, ըսաւ կլէնարվան, այս չարաճճիները կատուի աչք և կարբնա-
ւորի հրացանն՛ր ունին։

Ուստի իսկոյն ետ դարձան լերան դըժ-
ուարակոխ դարն ի վեր, և եկան քաջալե-
րեցին իրենց ընկերներն, որք հրազինուց գոռումը լսելով զարհուրեր էին։ Երկու գնատակ կլէնարվանի փեղկերը ծակեր անցեր էին։ Հասկցուեցաւ որ անհնարին էր լերան երկայնաձիգ գագաթն անցնիլ երկու կող-
մը կեցած հրացանաւորաց մէջէն։

—Առ վաղիւ, ըսաւ Բականէլ, և օրով-
հետեւ չենք կրնար այդ բնիկներուն արթ-
նութիւնը խաբել, թոյլ տուէք ինձ որ գիտ-

ցածիս պէս կերակուր մը կերցնեմ ադոնց։

Օդը բաւական պաղ էր։ Բարեբաղդաբար Քարա-Թէթէ իր լաւագոյն գիշերագգեստներն հետը բերած էր. փորվիոնէ տաքուկ վերմակներ, որոց մէջ փաթթուեցան փախստեայք առանց խղճմտութեան, և շատ չանցած, հանգիստ քուն մը քաշել սկսան ցցապատնէշներուն չրջափակին մէջ, գաղջ և ներքին եռանդէ սարսռող գետնին վրայ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԲԱԿԱՆԷԼԻ ՄԵԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հետեւեալ օրը, դեկտեմբեր 17, արեւն իր առաջին ճառագայթներով արթնցուց Մաունկանամուի քնէածները։ Մաուրիք, արդէն երկար ժամանակէ ի վեր կ'երթեւեկէին սարին ստորոտն, առանց բաժնուելու իրենց հսկողութեան գծէն։ Կատաղի աղաղակներով ողջունեցին Եւրոպացւոց երեւումն, երբոր դուրս կ'ելնէին պղծեալ չրջափակէն։

Ամենն ալ իրենց առաջին ակնարկը նետեցին չրջակայ լերանց վրայ, միգապատ ձորերուն վրայ, Թաւբոյ լճին վրայ, զոր այգուն հովը թեթեւասպէս կը խորչմեցնէր։

Ցետոյ, ամենն ալ, Բականէլի մեծ միջոցներն իմանալու տենչիւ, անոր չուրջը բոլորեցան և հարցաքննեցին զայն աչօք։

Բականէլ անմիջապէս պատասխանեց իր ընկերաց արտատանջ հետաքրքրութեան։

«Բարեկա՛մք, ըսաւ, իմ ծրագիրս սա պատուական առաւելութիւնն ունի, որ եթէ սպասած արդիւնքս ամբողջապէս չարտադրէ, եթէ վրիպի իսկ, մեր կացութիւնը չվատթարանար։ Բայց պարտի յաջողիլ, և պիտի յաջողի։

—Եւ այդ ծրագի՞ր, հարցուց Մաք Նապ։

—Ասասիկ, պատասխանեց Բականէլ։ Բնիկներուն նանրահաւատութիւնն ապատանարան մը ըրած է զայս լեռ. պէտք է որ նոյն նանրահաւատութիւնն ասկէ դուրս ելնելու ալ օգնէ մեզ։ Եթէ յաջողիմ հաւատացնել Քայ-Քուլուի թէ մեք մեր ըրած սրբապղծութեան զոհ եզանք, թէ երկնից ցասումն հարուածեց զմեզ, և թէ, վերջապէս, սատակամահ եղանք սարսափելի մահուամբ, կը հաւատա՞ք թէ կը թողու զայս Մաունկանամուի սարահարթ, և իւր գիւղը կը վերադառնայ։

—Անտարակոյս, ըսաւ Կլէնարվան։

—Եւ ի՞նչ սարսափելի մահ կ'սպառնաք մեզ, հարցուց տիկին Էլէնա։

—Սրբապիղծներու մահը, բարեկա՛մը, պատասխանեց Բականէլ։ Վրէժխնդիր բոցերը մեր ոտքին տակն են։ Բանանք անոնց ճանբան։

—Ի՞նչ կ'ըսէք, հրաբո՞ւխ արտադրել կ'ուզէք, դոչեց Ճոն Մանկլս։

—Այո՛, չինճու հրաբուխ մը, առժամեայ հրաբուխ մը, որով մոլեգնութիւնը մեր պիտի կառավարենք։ Ընդերկրեայ հրոց շոգիի մթերք մը կայ, որ դուրս ելնել կ'ուզէ։ Արուեստական բորբոքում մը կազմենք մեր օգտին համար։

—Գէշ գաղափար չէ, ըսաւ հազարապետը, լաւ մտածեր էք, Բականէ՛լ։

—Կը հասկնաք, յարեց աչխարհագիրը, թէ մեր զելանտական պղուտոնի բոցերէն լափլիզեալ պիտի ձեւանանք, և հոգեւորապէս պիտի աներեւութանանք Բարա-Թէթէի դերեզմանին մէջ . . .։

—Ուր պիտի մնանք երեք օր, չորս օր, հինգ օր, եթէ հարկ լինի, այսինքն մինչև որ վայրենիք, մեր մեռած լինելուն համոզուելով՝ հեռանան աստի։

—Բայց եթէ մեր պատժուած լինիլն ստուգել ուզե՛ն, եթէ այս սարն ի վեր մագլե՛ն, ըսաւ օրիորդ Կրանթ։

—Ո՛չ, սիրելի՛ Մարիա, պատասխանեց Բականէլ։ Այս լեռ Թապու եղած է, և երբոր ինքնին լափէ գինքը պղծողները, Թապուն առաւել ևս կը զօրանայ։

—Այդ ծրագիր ոտուգիւ լաւ մտածուած է, ըսաւ Կլէնարվան, միայն մէկ հանգամանութիւն մ'ունի իր դէմ, այն է թէ վայրենիները՝ յամառելով՝ տակաւին երկար ժամանակ ապասեն Մաունկանամուի ստորոտն, և մեր պարէնն սպառի։ Բայց քիչ հաւանական է այս, մանաւանդ եթէ մեր վառօդը ճարտարապէս խաղանք։

—Ե՞րբ պիտի փորձենք զայդ վերջին բազդ, հարցուց տիկին Էլէնա։

—Այս իրիկուն, պատասխանեց Բականէլ, թանձր մութին ժամանակ։

—Յոյժ լաւ, պատասխանեց Մաք Նապս, Բականէ՛լ, մեծահանճար մարդ էք դուք։ Ես, որ դիւրաւ հաւոզուող մարդ չեմ, ձեր այդ ծրագրին յաջողութեան վրայ աներկմիտ եմ։ Ա՛, այդ չարաճճիները փոքրիկ հրաչք մը պիտի տեսնեն, որ իրենց ի քրիստոնէութիւն դառնալը դար մ'ևս պիտի ուշացնէ։ Քարոզիչք ներում չնորհեն մեզ։

Բականէլի ծրագիրն ընդունուած էր ուրեմն. և արդարեւ, վայրենիներուն սնապաշտութեան նայելով, կրնար և պարտ էր յաջողիլ։ Կը մնար կատարումը։ Գաղափարը լաւ էր, բայց գործադրութիւնը դժուարին։ Չէր արդեօք կրնար լափել խառնարան մը

բանալու յանդգնողները։ Պիտի կրնայի՞ն սանձել, կառավարել անոր յանկարծական հրաշնչումն, երբոր իւր շոգիները, բոցերն ու հրահոսանքը մէկէն իմէկ դուրս ժայթքէին կատաղաբար։ Բովանդակ գագաթը չէ՞ր կրնար հրեղէն վհի մը մէջ սուզիլ։ Այնպիսի երեւոյթի մը դպչիլ էր, որոյ բացառիկ մեծաշնորհն իրեն վերապահած էր բնութիւնը։

Բայանէլ նախատեսած էր այդ դժուարութիւնները, բայց կը յուսար խոհեմութեամբ գործել և գործն ի ծայրայեղութիւն չհղել։ Թերեւս երեւոյթ մը բաւական կը համարէր վայրենիները խաբելու, և ոչ հրաբուխ մը բորբոքելու ահեղ իսկութեան կ'ուզէր ձեռնարկել։

Որչափ երկար երեւցաւ այն օր։ Ամեն ոք անոր անվախճան ժամերը կը համրէր։ Ամեն ինչ պատրաստ էր փախուստի համար։ Ուտուբային մէջի նպարները մանր ծրարներու բաժնուած էին դիւրակրելի լինելու համար։ Քանի մը փոխարկ և հրազէնները կ'ամբողջացնէին սեաին դամբարանէն վերցուած թեթեւ կարասին։ Աւելորդ է ըսել թէ այս պատրաստութիւնք չերտափակին մէջ կատարուեցան, առանց վայրենիներէն նշմարուելու։

Ժամը վեցին Օլսինէթ կազդուրիչ ճաշ

մը պատրաստեց։ Ո՛ր և եր՛ը պիտի կրնային ճաշել իրենց փախուստի միջոցին, ոչ ոք կրնար նախատեսել։ Ուստի ապագային համար ճայեցին։

Գլխաւոր կերակուրը կը բաղկանար կէս երկոտանեակի չափ խոշոր մուկերէ, զորս Ուիլսըն բռնած էր և փակ սանի մէջ եփած։ Տիկին Էլէնա և Մարի Կրանթ յանձն չառին աչքակել ո, զայն որսեցնիր մեծ յարգանի Նոր-Զելանտայի մէջ, բայց այրերն աւելորժիւ կերան զայն իբրեւ ճշմարիտ Մաուրիք։ Եւ արդարեւ յոյժ համեղ և պատուական միս մ'ուներ, ուստի վեց կրծողաց միսէեւ ոսկրները կրծուեցան։

Իրիկուան վերջալոյսն եկաւ։ Արեւն առներեւութացաւ թանձր և մրրկապատ ամպոց ետին։ Քանի մը փայլատակունք կը լուսաւորէին հորիզոնն, և հեռաւոր որոտմունք կը գոռային երկնից խորերուն մէջ։

Բայանէլ ուրախութեամբ ողջունեց մրրիկըն, որ օգնութեան կուգար իւր դիտաւորութեանց, և իւր թատերախաղը կ'ամբողջացնէր։ Վայրենիք անապաշտաբար կ'ըզգածուին բնութեան մեծամեծ երեւոյթներէն։ Որոտումն իրենց նուի-Ամուայի բարկութեան ձայնը կը համարին։ Փայլակն ալ անոր ցասուցեալ աչաց փայլատակունքն։ Ուստի այնպէս պիտի թուէր այդ տխմարաց

թէ աստուածութիւնն անձամբ կուգար պատժել Թապուն պղծողները։ Ժամուին չարագոյժ խաւար մը պատեց Մաւնկանամուի գագաթն։ Երկինք սեւամած երես մը կը ներկայէին այն բոցերուն, զորս Բականէլ ցոլացնել պիտի տար անոր վրայ։ Մաուրիք ոչ ևս կրնային տեսնել իրենց կալանաւորները։ Գործելու ժամանակն էր։

Պէտք էր փութալ, Կլէնարվան, Բականէլ, Մաք Նապս, Ռոպերթ, մատակարարն և երկու նաւաստիք միահաղոյն գործի ձեռնարկեցին։

Խառնարանին տեղը Քարա-Թէթէի գերեզմանէն երսուն քայլ հեռի որոշուեցաւ։ Արդարեւ կարեւոր էր, որ Ուտուբան անվըթար մնար հրաբուխէն, որովհետեւ անոր հետ կը ջնջուէր նաև լերան Թապուն։ Բականէլ մեծահատոր վէմ մը նշմարեր էր, որոյ շուրջէն բաւական թանձր շոգի կ'արտաշնչէր։ Այն վէմ լերան կոնին մէջ բնական փոքրիկ խառնարան մը ծածկած էր, և ընդերկրեայ բոցերուն զեղումը կ'արգելուր իւր ծանրութեամբ։ Եթէ յայղղէին մէկ կողմ քշել զայն իւր խորչէն, բոցերն և հրահոսանք դուրս կը խուժէին բացուած բերնէն։

Բականէլ և ընկերք՝ Ուտուբային մէջէն ձիեր կորզելով լծակներ չինեցին և վէմը տեղէն խախտելու ձեռնարկեցին ամենայն զօրութեամբ։ Իրենց միասնական ճգանց տակ՝ շատ չանցած՝ ժայռը խախտեցաւ։ Լերան զառիվայրին վրայ փոքրիկ խոուշ մը պեղեցին, որպէս զի վէմը դիւրաւ վար սահի զառավայրէն։ Քանի որ քարը վեր կ'առնէին, գետնին ցնցումն առաւել ուժգնութեամբ կ'զգացուէր։

Բոցերու խոր մռնչիւնք և բորբոքեալ հրատի շչիւնք կը լսուէին գետնին նրբացեալ խաւին տակէն։ Յանդուգն գործաւորք, կիկլոպաց նման գետնին տակի հուրերը ոտք հանելու կ'աշխատէին լռելեայն։ Շատ չանցաւ, քանի մը ճեղքուածք և ջերմերմ շոգիներու ցայտք իմացուցին անոնց թէ կեցած տեղերնին վտանգաւոր լինել կ'սկսէր։ Բայց վերջին բուռն ճիգ մը կորզեց վէմն իւր տեղէն, որ լերան զառիվայրին վրայ սահելով անյայտ եղաւ։

Իսկոյն գետնին նուրբ խաւը պատռեցաւ, և հրեղէն սիւն մը վեր ցայտեց բուռն որոտմամբ, մինչդեռ մի կողմէ ալ եռացեալ ջրոյ և հրահոսանաց աղբիւրներ կը թաւալէին դէպ ի վայրենեաց բանակետղն և ստորին ձորերը։

Բովանդակ լեռնագագաթը դղրդեցաւ, և պահ մ'այնպէս թուեցաւ թէ անյատակ վէմ մը մէջ կ'անդնդատուզէր։ Կլէնարվան

և ընկերք հազիւ ժամանակ ունեցան հրաբուխին հարուածէն պատսպարուելու։ Ուտուբայի չրջափակին մէջ փախան առանց զերծ մնալու քանի մը կաթիլ ջուրէ, որ իննսուն-չորս աստիճան ջերմութիւն ունէր։ Իսկոյն այդ ջուր արգանակի թեթեւ հոտ մը ծաւալեց, որ յետոյ ծծումբի հոտի վերածուեցաւ յոյժ զգալի կերպիւ։

Յայնժամ հրաբխային սիկերը, լաւաներն և այլ հրանիւթերն իրարու հետ խառնուեցան։ Հրեղէն ուղխեր կ'ակօսէին Մաունկա-Նամուի կողերը։ Մերձակայ լեռներն ու ճորերը լուսաւորեցան հրաբուխին բոցանըշոյլ ցոլերէն։

Վայրենիք համայն ոտք ելած էին ոռնալով հրահոսանաց խածուածքէն, որք իրենց բանակետին մէջ կը ծաւալէին ջերայրերմ։ Շատերը՝ չրջակայ բլուրներէն վեր փախչելով՝ սարսափահար կը դիտէին զայս ահեղ երեւոյթ, որով իրենց ցասուցեալ Աստուածը չարաչար կը պատուհասէր սուրբ լեռը պղծողները։ Մերթ ընդ մերթ, երբոր հրաբուխին ճայթիւնները կը մեղմանային, վայրենեաց կաղկանձիւնը կը լսուէր, որք իրենց նուիրական «Թապո՛ւ, Թապո՛ւ, Թապո՛ւ» աղաղակը կ'ոռնային։

Սակայն Մաունկանամուի խառնարանէն անբաւ չոգի, բոցավառ քարեր ու լաւաներ

կը բղխէին։ Իսլանտի Հէքլա լերան մօտակայ ջերմաջրոց աղբիւրներուն պէս բան չէր, այլ նոյն ինքն Հէքլա լեռն էր։ Մինչեւ ցայնժամ այդ հրաբխային նիւթեր զսպեալ մնացեր էին լեռնագագաթին պատեանին տակ, վասն զի Թոնկարիրոյի կափոյրները կը բացէին անոր արտազեղման։ Բայց երբ նոր ելք մը բացուեցաւ, արգիլափակ հրանիւթերն անկէ դուրս պոռթկացին ծայրագոյն ուժգնութեամբ, և այն գիշեր, հաւասարակշռութեան օրինօք, կղզւոյն վիւս հրաբուխները կորուսին իրենց սովորական ուժգնութիւն։

Հրաբխման սկսելէն ժամ մը յետոյ, հրահոսանաց լայն ուղխեր կը հոսէին լերան կողերն ի վար։ Մկանց լեգէոններ իրենց անբնակելի ծակերէն դուրս կը փախչէին։

Գիշերն ի բուն, և երկնից բարձունքին մէջ որոտացող փոթորկին տակ, հրաբերանը չարունակեց զիւր պաշտօն այնպիսի ուժգնութեամբ մը, որ երկիւղ պատճառել սկսաւ Կլէնարվանի։ Հրաշնչութիւնը կը մաշեցնէր խառնարանին եզերքը։

Բանտարկեալք, ներտափակին ետին պահուըտած, երեւոյթին զարհուրելի յառաջդիմութիւնը կը դիտէին։

Առաւօտն եկաւ, հրաբուխին մղեգնութիւնը կը չարունակէր։ Դեղնորակ թանձր

չոգիներ կը խառնուէին քաղերուն հետ. հրահոսանաց ուղիներ օճախատեղ կ'ընթանային ամեն կողմ։

Կլէնարվան, ակնդէտ, սրատարափ, չերտափակին ամեն ճեղքերէն դուրս նայելով՝ բնիկներուն բանակետղն աչքէ կ'անցուներ։

Մաուրիք չրջակայ բլրոց վրայ վախած էին հրահոսանաց հասողութենէն դուրս։ Քանի մ'ածխացեալ դիակունք կը տեսնուէին լերան ստորոտը։ Հրահոսանքը քահին մօտ քսանի չափ հիւղակ այրեր էր, որք դեռ կը ծխէին։ Զելանտացիք, տեղ տեղ խումբեր կազմելով, Մաունկանամուի ցցունազարդ գագաթը կը դիտէին կրօնական սարսափով։

Քայ-Քուամու իր մարտիկներուն մէջ եկաւ Կլէնարվան ճանչեց զայն։ Պետը վինչեւ լերան ստորոտն յառաջացաւ հրահոսանքին չհոսած կողմէն, բայց առաջին աստիճանէն վեր չելաւ։

Անդ, դիւակոչ կախարդի մը պէս թեւերը բանալով՝ քանի մը ծուկոուկներ ըրաւ, որոց նշանակութիւնն անհասկանալի չմնաց բանտարկեալներէն։ Ինչպէս որ նախատեսած էր Կլէնարվան, Քայ-Քուամու առաւել խիստ փապու մը կ'արձակէր վրէժխնդիր լերան վրայ։

Քիչ յետոյ, վայրենիներն իրարու ետեւէ վար իջնել սկսան, դէպ ի քահը տանող ծամածուռ արահետներէն։

—Կը չուե՞ն, գոչեց Կլէնարվան, կը մեկնի՞ն իրենց պահպանութեան կէտերէն։ Օրհնեա՛լ ես Աստուած, մեր դաշն յաջողեցաւ։ Սիրելի՛ եղէնաս, քա՛յլ ընկերներս, ահա մեռա՛նք մեք, թաղուեցա՛նք։ Բայց այս իրիկուն, երբոր մութը կոխէ, յարութի՛ն պիտի առնունք, պիտի չուե՛նք մեր գերեզմանէն, պիտի հեռանա՛նք այս բարբարոսներէ։

Դժուարին է երեւակայել Ուտուբային մէջ տիրող ուրախութիւնը։ Յոյսը վերածնած էր սիրտերուն մէջ։ Ուղեւորք կը մոռնային անցեալը, կը մոռնային ապագան, և միմիայն ներկան կը մտածէին։ Եւ սակայն դիւրին գործ չէր հեռանալ այս անծանօթ երկիրներէ և եւրոպական հաստատութիւն մը հասնիլ։ Բայց Քայ-Քուամու ձեռքէն պարծելով՝ գիրենք ազատած կը կարծէին Նոր-Զելանտայի համայն վայրենեաց ձեռքէն։

Հաղարապետը չծածկեց Մաուրիներուն վրայ զգացած խորին արհամարհանքն, և դարուիչ ածականք չպակսեցան իրեն։ Մըրցումի մը բացուեցաւ անոր և Բականէլի միջև։ Անհերելի անբաններ, տխմար աւազնակներ, խաղաղականի ապուշներ, Պէտլամի խուժեր, Հակառակից կրետիններ եւն, եւն,

կը կոչէին զանոնք և չէին յագենար։

Տակաւին ամբողջ օր մը պիտի անցնէր վերջնական փախուստէն առաջ։ Ուստի փախուստի ծրագիր մը պատրաստելու գործածեցին զայն։ Բականէլ իւր Նոր-Զելանտայի քարտէսը խնամով պահած էր, ուստի կրցաւ ամենէն անքոյթ ճանբաները փնտռել անոր մէջ։

Ցետ խորհրդակցութեան՝ որոշեցին ապրեւելեան կողմն երթալ դէպ ի Բլէնթի ծովածոցն։ Անձանօթ՝ բայց հաւանաբար ամայի երկիրներէ պիտի անցնէին։ Ուղեւորը արդէն վարժ էին բնական դժուարութեանց դէմ մաքառելու. միայն Մաուրիներուն հանդիպումէն կը վախնային, հետեւաբար կ'ուզէին անպատճառ խուսափիլ անոնցմէ և արեւելեան ծովեզրը հասնիլ, ուր քարոզիչ քանի մը կայաններ հաստատած են։ Ասկէ զատ, կղզւոյն այդ մասը մինչեւ ցարդ ձերժ մնացած էր պատերազմին աղէտներէն, և բնիկներն աստատակութիւն չէին ըներ անդ։

Իսկ Թաւրոյ լիճը Բլէնթի ծովածոցէն բաժնող հեռաւորութիւնը կրնար հարիւր մղոն հաշուիլ։ Տան աւուր ճանբայ, զոր կարելի չէր ընել առանց տաժանման։ Բայց քաջարի խմբակին մէջ ոչ ոք կը համրէր իւր քայլերն։ Երբոր քարոզչաց կայաններն հասնէին, անդ կրնային հանգիստ առնուլ և նպաստաւոր առթի մ'սպասել Օքլանտ երթալու համար, վասնզի այդ քաղաքն հասնիլ կ'ուզէին միշտ։

Այս զանազան կէտեր որոշուելէ յետոյ, բնիկները դիտելու գործը չարունակեցաւ մինչեւ իրիկուն։ Ոչ մի Մաուրի չէր մնացած լերան ստորոտն. և երբոր պիէրուան մութը Թաւրոյի ձորերը պատեց, ոչ մի խարոյկ չէր տեսնուեր լերան շուրջը, բնիկներուն ներկայութիւնը ծանուցանող։ Ձանբան բաց էր։

Գամ ինկնին, թ խպայորդ մութի մը մէջ, կլէնարվան չուի նշանը տուաւ։ Ընկերքն և ինք, գինեալ և հանդերձեալ Քարա-Թէթէի ճախիւք, սկսան յառհեմութեամբ վար իջնել Մաունկանամուի դարերէն։ Ձոն Մանկլս և Ուիլսըն առջեւէն կ'երթային, աչք և ականջ ի դարանի։ Ամենափոքր ձայն մը լսելնուն պէս կանգ կ'առնուին, ամենադոյզն նշոյլ մը նշմարելնուն պէս՝ խնամով կը դիտէին։ Ամենն ալ գրեթէ պառկած վար կը սահէին լերան դարերէն, որպէս զի չկրնային նշմարուիլ։

Լերան գագաթէն երկու հարիւր ոտք վար, Ձոն Մանկլս և իւր նաւաստին բնիկներուն յամառաբար պաշտպանած կողն հասան։ Եթէ Մաուրիք, փախստեայներէն ա-

ւելի խորանանգ բրդելով՝ նահանջ կեղծած էին, որպէս զի իրենց թակարդը ձգէին, եթէ հրաբխական երեւոյթներէն խաբուած չէին, այն տեղ պիտի յայտնուէր իրենց ներկայութիւնը։ Կլէնարվան, իւր վտահութեան և բականէլի ծաղրածութեանց հակառակ, դողալ սկսաւ։ Իւրայնոց փրկութիւնը բովանդակապէս վտանգի մէջ էր այն տասն վայրկեաններուն միջոցին, որք հարկաւոր էին լերան կողն անցնելու։ Իւր թեւերուն կառչած տիկին Էլէնայի սրտին բաբախումը կ'զգար։

Սակայն ո՛չ ինք և ո՛չ ձոն չէին մտաբերեր ետ դառնալ։ Երիտասարդ նաւապետն ամենուն առջեւ ընկած և լիապատար մութ մը նպաստաւորեալ, կը սողար լերան նեղ կողին վրայ, կանգ կ'առնուր երբոր քար մը բրդելով վար կը գլորէր մինչեւ սարահարթին ստորոտն։ Եթէ վայրենիները տակաւին դարանամուտ եղած լինէին, այդ անսովոր շռինդք ահեղ հրաձգութիւն մը կը հրաւիրէին։

Սակայն, փախատեայք, այդ զառիվայր կողին վրայ օձի պէս սահելով՝ չէին կրնար չուտ երթալ։ Երբոր ձոն Մանկլս կողին ամենէն ցած կէտը հասաւ, քսան-հինգ ոտք հազիւ կը զատէին վինքն այն սարահարթէն, ուր առջի օրը բանակած էին բնիկնե-

րըն։ Անտի լերան կողը նորէն վեր կ'ելլէր բաւական դժուարին զառիվերէ մը, և դէպ ի թաւուտ մը կ'ուղղուէր քառորդ մղոնի չափ հեռի։

Սակայն կողին այդ ստորին մասն անցան անվտանգ, և նորէն վեր ելլել սկսան լրիւ։ Ծառոց պուրակը չէր տեսնուեր, բայց գիտէին որ կար, և եթէ դարան մը պատրաստուած չէր անդ, Կլէնարվան ապահով ապաստան մը կը յուսար գտնել։ Բայց դիտեց որ այն վայրկենէն սկսեալ ոչ ևս Թապուի պաշտպանութեան տակ էր։ Վեր ելնող կողը Մաունկանամուի չէր վերաբերեր, այլ Թաւրոյ լճին արեւելեան կողմը բարձրացած լեռնագօտիին։ Ուստի ոչ միայն բնիկներուն հրաձգութենէն, այլ և գրկախառն կուգէն կը վախցուէր։

Տասն վայրկենի չափ ուղեւոր ջոկատը դէպ ի վերին սարահարթն ելաւ անզգալի չարժմամբ։ Ձոն դեռ չէր նշմարեր խաւարամած թաւուտը, բայց երկու հարիւր ոտքէ պակաս հեռի էր անտի։

Յանկարծ կանգ առաւ և գրեթէ ընկերկեցաւ։ Մութին մէջ չշուկ մը լսել կարծեր էր։ Իւր վարանումն ընկերներուն ալ ընթացքը կասեցուց։

Անշարժ կեցաւ բաւական ժամանակ, որով երկիւղի մէջ ձգեց իւր ընկերներն։

Ուստի սպասեցին անդ այնպիսի բուռն անձկութեամբ մը, զոր անհնարին է նկարագրել։ Արդեօք ետ դառնալու և նորէն Մաունկանամուի կատարն ապաստանելո՞ւ պիտի հարկադրուէին։

Բայց ձոն տեսնելով որ չռինդը չէր նորոգուեր, վերելքը նորէն չարունակել սկսաւ կողին նեղ ճանբէն։

Շատ չանցած, թաւուտը նկարիլ սկսաւ մութին մէջ, և քանի մը քայլ յետոյ՝ փախստեայք հոն մտնելով կծկեցան ծառոց թանձրախիտ տերեւներուն մէջ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

Գիշերը կը նպաստէր այս փախստեան։ Ուստի պէտք էր օգուտ քաղել և հեռանալ Թաւբոյ լճին չարաչուք եզերքէն։ Բականէլ առաջնորդ եղաւ Ջոկատին, և իր ուղեւորական հրաշալի բնազդումէ վերստին ի յայտ եկաւ այս լեռնային տաժանելի ուղեւորութեան մէջ։ Հիանալի ճարտարութեամբ կը գործէր մութին մէջ, առանց վարանելու ընտրելով գրեթէ անտեսանելի շաւիղներ, չարունակեալ ուղղութիւն մը բռնելով առանց

զարտուղելու։ Արդարեւ, իւր ցայգատեսութիւնն մեծապէս կ'օգնէր իրեն, և իւր կատուի աչերուն զօրութեամբ ամենափոքր նիւթերը կը զանազանէր այն թանձրամած խաւարին մէջ։

Երեք ժամ անդադար քալեցին արեւելեան զառիվայրին երկար դարերուն վրայ։ Բականէլ քիչ մը հարաւային արեւելք կը հակէր, Քայմանվալի և Ուահիթի-Բէննկսի միջեւ բացուած նեղ կիրճն հասնելու համար, ուր կը սահի Օքլանտէն Չաբբս ծովախորշը տանող ուղին։ Այն կիրճէն անցնելէ յետոյ կը յուսար ճանբէն դուրս ընկնիլ, և բարձր լեռնագօտիներէն պատսպարուելով՝ դէպ ի ծովեզրը դիմել գաւառին անմարդաբնակ կողմերէն։

Առաւօտեան ժամ իննին տասն-երկու մղոն ճանբայ առած էին տասն-երկու ժամու մէջ։ Ակկեց աւելի չէր կրնար պահանջուիլ քայլարի կիներէն, մանաւանդ որ տեղն ալ յարմար երեւցաւ իջեւանելու։ Փախստեայք երկու լեռնագօտիները բաժնող կիրճն հասած էին։ Օպէրլանտի ուղին աջ կողմը կը մնար և դէպ ի հարաւ կը դիմէր։ Բականէլ, քարտէսն ի ձեռին, խոտորումի մ'երաւ դէպ ի հիւսիսային արեւելք, և ժամը տասնին ուղեւոր Ջոկատը լերան դուրս ցցուած մի մասէն ձեւացած տեսակ մը ժա-

նեւոր պատուարի քով հասաւ։ Նպարներն հանուեցան սարկերէն և մեծ ախորժով կերուեցան։ Մարի Կրանթ և հազարապետն, որք ցայնժամ գոհ չէին եղած ուտելի պատերէն, սիրով կերան։ Դադարն երկարեցաւ մինչեւ կէս օրն երկու ժամ անցած, և ապա նորէն ճանբայ ելան դէպ յարեւելք։ Իրիկուան, լեռներէն ուժգին մղոն հեռի իջեւան դրին և յօժարակամ յանձն առին բացօթեայ իննլել։

Հետեւեալ օրն ուղին բաւական ծանր դժուարութիւններ ընծայեց։ Չարկ եղաւ հրաբխային լիճերուն, ջերմուկներուն եւ ծծմբուտներուն հետաքրքրաշարժ երկրէն անցնիլ, որ Ուահիթի-Րէնկոի արեւելակողմը կը տարածի։ Ուղեւորաց ոտներէն աւելի աչերը գոհ եղան այդ երեւոյթէ։ Ամեն քառորդ մղոն տեղ, պոռոտներ, արգելքներ, և խոտորումներ կային յոյժ յոգնեցուցիչ։ բայց ի՛նչ տարօրէն տեսարան և ի՛նչ անհուն սլեսպիտութիւն, զոր բնութիւնը տուած է այդ վսեմ տեսարանաց։

Քսան քառակուսի մղոն տարածութեան վրայ, ընդերկրեայ զօրութեանց գեղումն ամեն ձեւերով կ'արտադրի։ Տարօրինակ թափանցկութեամբ աղային աղբիւրներ կը հոսէին բնիկ թէյեններաց թաւուտներուն մէջէն, սիլիոնաւոր միջատներով լի։ Այրած վառօդի կծու հոտ մը կը բուրէին, և ակնախիղ ձեան պէս ճերմակ մնացորդ մը կը թողուին գետնին վրայ։ Իրենց վճիտ ջուրերն եռալու չափ տաք էին, մինչդեռ ուրիշ մօտակայ աղբիւրներ սառոյցի պէս պաղ ջուր կը բղխէին։ Հակայ պաերները կ'ածէին անոնց եզերքը, Սիլուրեան տնկոց աճման նմանակերպ պայմաններով։

Ամեն կոլմէ չոգիով մրրկեալ լոյծ խուրձեր կը ցայտէին գետնէն, դարաստներուն աւազաններէն ցայտող ջրոց պէս, ոմանք շառաչունակեալ, ոմանք ալ ընդհատ, իբրեւ անճնակամ Պղուտոնի մը քմահաճոյից են թակայ։ Այդի աւազաններուն պէս իրարու հետեւէ աստիճանաձեւ բարձրացած էին ամփիթատրոնի պէս։ Իրենց ջուրերը քիչ քիչ իրարու հետ կը խառնուէին ճերմակ գոլորշեաց պարոյրներներու տակ, և այն հրաշակայական սանդղոց կէս թափանցիկ աստիճանները մաչեցնելով ամբողջ լիճեր կը բուծանէին իրենց եռանդնուտ ջրվէժներով։ Աւելի հեռին, չառաչկոտ ջերմուկներուն յայտնուեցին ծծմբուտք։ Բոլոր գետինը կոճկուած կ'երեւէր խաչոր պալարներով, որք կէս մարած խառնարաններ էին, բազմաթիւ ծերպերով հերձոտեալ, յորոց այլ և այլ գազեր կ'արտաչնչէին։ Մթնոլորտը ծծմբային թթուներու բարկ և անախորժ

հոտերով տոգորեալ էր։ Ծծումբը սառնարակ կեղեւներ կազմելով կը ծածկէր գետինն, և այսպէս երկար դարերէ ի վեր անհաշուելի և ամուլ հարստութիւնք կը դիզուէին։ Եթէ օր մը Սիկիլիոյ ծծմբահանքերն սպառին, եւրոպական ճարտարութիւնք Նոր-Զելանտայի այս քիչ ծանօթ հանքերէն պիտի քաղեն իրենց պէտք եղած ծծումբը։

Դիւրաւ կը հասկցուի թէ ո՛րչափ յոգնեցան ուղեւորք այս խոչերով լի երկիրն անցնելու համար։ Իջեւանք դժուարին էին անդ և որսորդաց կարբինները Պ. Օլպինէթի ձեռօք փետուելու արժանի թռչնոյ մը չէին հանդիպիր։ Այս պատճառաւ հարկ եղաւ պտերներով և անուշահամ պատատով չատանալ յաճախ։ Նիհար ճաշեր, որք չէին կրնար կազդուրել ուղեւոր ջոկատին սպառեալ ուժերը։ Ոտի աւելն ալ կ՛ուզէին ժամ առաջ հեռանալ այս կորդ և ամայի երկրէ։

Սակայն, առ նուազն չորս օր պէտք էր այդ դժուարակոխ երկիրն անցնելու։ Վերջապէս փետրվար 23ին կրցին իջեւանիլ Մաունկանամուէյն յիսուն մղոն հեռի անանուն լեռան մ՛ստորոտը։ Թվալից դաշտեր տարածուած էին լերանն առջեւ, և ընդարձակ անտառներ կը տեսնուէին հորիզոնին վրայ։

Բարի նշան մ՛էր այս, բայց սա պայմանաւ որ այս երկիրներուն ամայութիւնը շատ բնակիչ բերած չլինէր անդ։ Մինչեւ ցայնվայր ուղեւորք բնիկի մ՛ստուերն իսկ չէին տեսած։

Նոյն օրը, Մաք Նապս եւ Ռոպէրթ երեք քիվի զարկին, որք պատուաւորապէս երեւցան այն իրիկուան ճաշին մէջ, բայց ոչ ընդ երկար, վասն զի քանի մը վայրկենի մէջ կերուեցան թաթերէ մինչեւ ի կտուց։

Ցետոյ, աղանդերի, այն է անուշ պատառներու եւ դեռնախնձորի միջոցին, Բալկանէլ առաջարկ մ՛ըրաւ, որ մեծ ուրախութեամբ ընդունուեցաւ։

Առաջարկեց Կէնարվան անուանել այն անծանօթ լեռն, որ երեք հազար ոտք բարձրութեամբ ամպերուն մէջ կը կորնչէր, եւ խնամով իւր քարտիսին վրայ նշանակեց Սկովտացի ըրտին անունը։

Աւելորդ է պատմել այն գրեթէ միօրինակ եւ անկարեւոր միջադէպերն որք պատահեցան այս ուղեւորութեան մնացորդ մասին մէջ։ Երկու կամ երեք իրողութիւնք միայն նշանաւոր ըրին լիճերէն ի խաղաղական ովկէան կատարուած զայս ուղեւորութիւն։

Օրն ի բուն դաշտաց եւ անտառաց մէջէ կ՛անցնէին։ Ճոն՝ արեւին եւ աստեղաց նա-

յելով կ'ուղղէր իւր ճանբան։ Երկինք, բաւական գթած, կը խնայէր իւր տապերն ու անձրեւները։ Բայց եւ այնպէս ճանբուն յոգնութիւնն աւելնալով կը յամեցնէր այնչափ վիշտերով ու սրտադողերով տառապեալ խեղճ ուղեւորներն, որք ժամ մ'առաջ քարոզչական կայաններն հասնիլ կ'ուզէին։ Կը խօսակցէին միմեանց հետ, սակայն մասնակի եւ ոչ ընդհանուր կերպիւ։ Զոկատը քանի մը խմբակի բաժնուած էր, որք ոչ թէ սերտագոյն համակրութիւն, այլ պաղափարաց առաւել անձնական հաղորդակցութիւն մը կը կազմէին։

Կլէնարվան յաճախ միայնակ կ'երթար, Տըֆֆանն եւ մէջի նաւաստիները միտքը բերելով, քանի որ ծովեզրին կը մտեներ։ Կը մոռնար այն վտանգներն որոց ենթակայ էր տակաւին միչեւ Օքլանտ, եւ իւր ջարդուած նաւաստեաց վրայ կը խորհէր։ Այս սոսկալի պատկեր չէր հեռանար անոր երեւակայութեան առջեւէն։

Ոչ եւս կը խօսուէր Հարրի Կրանթի վրայ։ Ի՞նչ օգուտ ունէր, քանի որ չէին կրնար եւս բան մ'ընել անոր համար։ Միայն օրիորդ Կրանթի եւ Ճոն Մանկյսի խօսակցութեանց մէջ կը յիշուէր մերթ տարաբաղդ նաւապետին անունը։

Ճոն քնաւ յիշած չէր Մարիի այն խօսքը զոր ըսած էր իրեն Ուարէ-Ափուայի վերջին գիշերուան մէջ։ Իւր խոհեմութիւնը չէր ուզեր իբր վաւերական յայտարարութիւն բռնել յուսահատական վայրկենի մը մէջ արտասանուած խօսք մը։

Երրոր Հարրի Կրանթի վրայ խօսէր Ճոն, ապագայ խուզարկութեանց ծրագրեր կը յօրինէր։ Կը հաւաստէր Մարիի թէ Լորտ Կլէնարվան վերստին ձեռք պիտի առնուր գայս վիժեալ խոյզ, պնդելով թէ ծովէն եւ լաճ գրին ստուգութիւնն երկբայելի չէր կրնար լինիլ։ Ուրեմն Հարրի Կրանթ ողջ էր տեղ մը։ Ուրեմն, եթէ բովանդակ աշխարհի մէջ որոնել հարկ լինէր, պէտք էր գտնել։

Մարի կ'արբենար այս խօսքերէ, եւ Ճոն ու Նա, մի եւ նոյն մտածութեամբք միացեալ, մի և նոյն յուսով ալ կը միանային այժմ։ Յաճախ տիկին Էլէնա կը մասնակցէր անոնց խօսակցութեան, բայց անձնատուր չէր լիներ անոնց ցնորական յոյսերուն։ Սակայն կ'զգուշանար տխուր իրականութեան վերադարձնել զայդ երկու դեռատի բարեկամներ։

Նոյն միջոցին Մաք Նապս, Ռոպերթ, Ուիլսըն և Միւլրատի որսորդութիւն կ'ընէին առանց Զոկատէն հեռանալու, և իւրաքանչիւրն իւր որսի բաժինը կը մատակարարէր։ Բականէլ, իւր փորմիոնէ վերարկուին մէջ

փաթթուած, մի կողմ կը կենար մունջ և խոկուն։

Եւ սակայն, — պէտք է ըսել, — հակառակ այն բնական օրինաց, որով ամենէն ընտիր բնաւորութիւնք իսկ, երբոր վչտաց նեղութեանց և տառապանաց մէջ ընկնին, կը տխրին ու կը դառնանան, իւր տարաբաղդութեան բոլոր ընկերք՝ միացեալ և անձնուէր մնացին, պատրաստ իրարու համար մեռնելու։

Փետր. 25 ին, գետ մ'ելաւ իրենց դէմ, որ Բականէլի քարտիսին մէջ նշանակուած Ուայքարի գետակը սարտէր լինիլ։ Հուն մը գտնելով՝ անցան։

Թափուտ դաշտերն երկու օր իրարու յաջորդեցին անընդհատ։ Թաւրոյ լիճը ծովեզրէն բաժնող հեռաւորութեան կէսն անցած էին, եթէ ոչ առանց յոգնութեան, գո՛նէ առանց չար պատահարի։

Յայնժամ երեւցան անհուն և անվախճան անտառներ, որք Աւստրալիոյ անտառները կը յիշեցնէին։ բայց աստ կաւրիներն եւկալիպտոսաց տեղն անցած էին։ Թէ և քառամսեայ ուղեւորութենէ ի վեր իրենց աքանչացումը զարմանալի կերպիւ մաշեցուցած էին, բայց և այնպէս, Կլէնարվան և ընկերք դարձեալ աքանչացան տեսնելով այն յաղթաբերձ չոմիներն, որք արժանի նախանձորդներն էին Լիբանանի մայրերուն և Քալիֆորնիոյ մամմութներուն։ Այս կաւրիք, որք բուսաբանական լեզուաւ «ապիէթասէ տամարին» կը կոչուին, հարիւր ոտք բարձրութիւն ունէին ոստերէ վար։ Ուրոյն պուրակներ կը կազմէին, այնպէս որ անտառն ոչ թէ ծառերէ կը բաղկանար, այլ անթիւ պուրակներէ, որոց սաղարթախիտ հովանոցներն երկու հարիւր ոտք բարձրութեան կը հասնէին։

Այդ չոմիներէն ոմանք, տակաւին դեռատի, հազիւ հարիւր տարեկան, Եւրոպիոյ կարմիր եղեւիններուն կը նմանէին։ Թխորակ պսակ մ'ունէին սուր գագաթով մ'աւարտեալ։ Սոցա անդրանիկներն, ընդհակառակն, հինգ կամ վեցհարիւրամեայ ծառեր, անհուն կանանչ վրաններ կը կազմէին իրենց երկմեղքեալ ահագին ոստոց վրայ։ Ձելանտեան անտառին այս նահապետք մինչեւ յիսուն ոտնաչափ չրջաբերութիւն ունէին, այնպէս որ ուղեւորաց ամենուն թեւերը միանալով չէին կրնար չրջանակել անոնց բունը։

Ուղեւոր ջոկատն երեք օր այդ ընդարձակ կամարներուն տակէն անցաւ կաւոտ գետնի մը վրայէ, զոր մարդկային ոտք կոխած չէր երբէք, ինչպէս որ կը տեսնուէր այն ռետնաբեր խէժերուն կոյտերէն, որք

դիզուած էին կաբրիներուն ստորոտն, և երկար տարիներ կրնային բաւել բնիկնե-րուն արտածութեան։

Որսորդք բազմախուռն տարվեր գտան քիվիներու, որք յոյժ հազուագիւտ են Մաուրիներուն յաճախած երկիրներուն մէջ։ Զելանտացւոց չուներէն հալածուելով՝ այս անմատոյց անտառներուն մէջ ապաստանած էին այդ հետաքրքրաշարժ թռչունք։ Ուստի առատ և սննդարար կերակուր մը մատա-կարարեցին ուղեւորաց ճաշերուն։

Մինչեւ իսկ Բականէլ հեռիէն զոյգ մը վիթխարի թռչուն նշմարեց խիտ թաւուտի մը մէջ։ Իւր բնազատուժի բնազդումն ար-թընցաւ։ Կոչեց ընկերներն, և, հակառակ իրենց խոնջութեան, հազարապետը, Ռո-պէրթ և ինք՝ այդ կենդանեաց ետեւէն ընկան։

Դիւրաւ կը հասկցուի աշխարհագրին բուռն հետաքրքրութիւնը, վասն զի տեսեր էր կամ տեսնել կարծեր էր «մովայ» կոչ-ուած թռչուններն, որք «տինորմի»ներուն տեսակին կը վերաբերին, զոր գիտուններէ չատեր անհետացեալ կենդանեաց կարգը կը դասեն։ Արդ, այս հանդիպումն կը հաստա-տէր Պ. Հոխչթէթէրի և այլ ուղեւորաց կար-ծիքը թէ Նոր-Զելանտայի այդ անթեւ հսկայք կը գտնուէին տակաւին։

Այդ մովաները, որոց հետամուտ եղած էր Բականէլ, մեգաթերիումաց և պտերո-դակտիղաց այդ ժամանակակիցք, տասն-ուրթ-ոտք բարձրութիւն պարտ էին ունենալ։ Անհեթեթ և վատասիրտ չայլեաններ էին, վասն զի սաստիկ արագութեամբ կը փախ-չէին, բայց ոչ մի գնտակ չկրցաւ արգե-լուլ անոնց վազքը։ Քանի մը վայրկեան հա-լածուելէ յետոյ, աներեւոյթ եղան այդ անըմբռնելի թռչունք մեծամեծ ծառոյ ե-տին, և որսորդաց յոգնութիւնն ու վա-ռօդները յումպէտս վատնեցան։

Նոյն երեկոյին, մարտ 1, կէնարվան և ընկերք, վերջապէս դուրս ելնելով կաբրի-ներուն անտառէն, իջեւանեցան Իքիրանկի լերան ստորոտն, որոյ կատարն հինգ հա-զար հինգ հարիւր ոտք բարձրութիւն ու-նէր։

Յայնժամ հարիւր մղոնի չափ ճանբայ ըրած էին Մաունկանաուէէն ի վեր, և տա-կաւին երեսուն մղոն կը մնար ծովեզերին։ Ճոն Մանկլը յուսացեր էր որ տասն աւուր մէջ կրնային կատարել զայս ուղեւորութիւն, բայց յանժամ չէր գիտեր երկրին ընծայած դժուարութիւններն։

Արդարեւ, ճանբուն պտոյտներն ու խո-չերն, ինչպէս նաեւ իրենց ուղղութիւնը գտնելու միջոցներուն անբաւականութիւնը,

մէկ հինգերորդ երկնցուցած էին զայն, և՝ դժբաղդաբար՝ ուղեւորը Իքիրանկի լեռն հասած ժամանակ կատարելապէս պարտասեալ էին։

Ուրդ, տակաւին երկու երկայն օրեր քալել պէտք էր ծովեզրը ժամանելու համար. և այժմ նոր փութաջանութիւն, ծայրագոյն արթնութիւն հարկ կը լինէր, որովհետեւ այնպիսի երկիր մը կը մտնէին, ուր բնիկներն ստէպ կը յաճախէին։

Սակայն, ամենն ալ զսպեցին իրենց խոնջութիւն, և հետեւեալ առաւօտ, ուղեւորը ջոկատը ճանբայ ելաւ։

Ընդ մէջ Իքիրանկի լերան, որ այլ կողմ թողուեցաւ, և Հարտի լերան, որոյ գագաթը ձախ կողմէ մինչեւ յերեք հազար եօթն հարիւր ոտք կը բարձրանար, ուղեւորութիւնն յոյժ տաժանելի եղաւ։ Տասն մղոն երկայնութեամբ դաշտ մը տարածուած էր, բովանդակապէս ծածկեալ չաղապատուն բաղեղներով, որք «խեղդիչ բաղեղունք», կը կոչուին իրաւամբ։ Ամեն քայլափոխի, ուղեւորաց թեւերն ու սրունքներն անոնց մէջ կը չաղէին, և այդ բաղեղներ, ճչմարիտ օձերու պէս, մարմնոց կը փաթթուէին իրենց գալարոլոր մաներով։ Երկու օր չարունակ հարկ եղաւ տապար ի ձեռին յառաջանալ, մարտնչելով այդ հարիւր հազարգլխով հիդրայի դէմ, զոր Բականէլ կրնար կենդանատնկոց կարգը դասել յօժարակամ։

Անդ, այդ դաշտաց մէջ, որսորդութիւնն անհնարին եղաւ, եւ որսորդք չկրցին իրենց սովորական հարկը բերել։ Նպարներն սպառելու վրայ էին եւ կարելի չէր նորոգել. ջուր չկար, որպէս զի ողբքէին իրենց ծարաւը, զոր խոնջութիւնն առաւել կը բորբոքէր։

Յայնժամ Կլէնարվանի եւ ընկերաց տառապանքը սարսափելի եղաւ։ Առաջին անգամ բարոյական կորովը զանոնք լքանելու մօտ հասաւ։

Վերջապէս ոչ եւս կը քալէին, այլ իրենք զիրենք կը քաշէին, անհոգի մարմիններ, վարեալ ինքնապահութեան միակ բնազդմամբ, որ ուրիշ ամեն զգացումներէ աւելի կ'ապրէր, եւ այսպէս հասան Լոթինի հրուանդանը, Խաղաղականի եզերաց վրայ։

Անդ կը տեսնուէին քանի մ'ամայի հիւղակներ, վերջին պատերազմէն աւերեալ գիւղի մ'աւերակներ, լքեալ արտեր, ամեն կողմ աւարառութեան եւ հրդեհի նշաններ։ Անդ՝ դժխեմ բաղդը նոր եւ սարսափելի փորձ մը կը վերապահէր հէք ուղեւորաց։

Ծովեզրին վրայ կը թափուէին, յանկարծ ծովեզրէն մղոնի մը չափ հեռի բնիկ-

ներու գումարտակ մը տեսան, որ ասոնց վրայ վազել սկսան իրենց գէնքերը ճօճելով։ Կլէնարվան, ծովէն արգիլեալ, չէր կրնար փախչիլ, եւ իւր վերջին ուժն ամփոփելով կռուելու կը պատրաստուէր։ Յանկարծ Ճոն Մանկլը գոչեց.

—Մակո՛յկ մը, մակո՛յկ մը։

Արդարեւ, քսան քայլ անդին, վեց թեւճակով նաւակ մը խրեալ էր ծովեզրին վրայ։ Զայն ջուրին երեսն հանել, մէջը նետուիլ և հեռանալ այն վոանգաւոր ծովեզրէն, վայրկենի մը գործ եղաւ։ Ճոն Մանկլը, Մաք Նապս, Ուիլսըն, Միւլրատի, Թիավարել սկսան։ Կլէնարվան ղեկը ձեռքն առաւ. երկու կանայք, Օլայինէթ և Ռոպէրթ անոր քով նստան։

Տասն վայրկենի մէջ նաւակը քառորդ մղոն հեռացաւ ծովեզրէն։ Ծովն հանդարտ էր։ Փախստեայք խոր լռութիւն կը պահէին։

Սակայն, Ճոն, չուզելով շատ հեռանալ ծովեզրէն, պիտի հրամայէր ղեկավարին որ շատ չբացուի։ Յանկարծ թեւճակը կեցաւ ձեռքին մէջ։

Տեսեր էր որ Լոթինի հրուանդանէն երեք նաւակ կը մեկնէին, իրենց ետեւէն հասնելու ակներեւ դիտումով։

—Բացուի՛նք, բացուի՛նք, գոչեց. ծո-

վասոյզ լինինք մանաւանդ, քան թէ սոցա ձեռքն ընկնինք։

Նաւակն իւր չորս թիավարաց զօրութեամբ սկսաւ բացուիլ ծովուն մէջ։ Կէս ժամու չափ կրցաւ պահել գիւր հեռաւորութիւն։ Բայց խեղճերը յոգնելով տկարանալ սկսան, իսկ միւս երեք նաւակներն առաւել ճանքայ կ'առնուին և զգալաբար կը մօտենային։ Հազիւ երկու մղոն հեռի էին։ Ուստի ճար չկար բնիկներուն յարձակումէն խուսելու, որք իրենց երկայն հրացաններով զինեալ, կրակ ընելու կը պատրաստուէին։

Ի՞նչ կ'ընէր յայնժամ Կլէնարվան։ Նաւակին յետակողմը կանգնած, երեւակայական օգնութիւն մը կը փնտռէր հորիզոնէն։ Ի՞նչ կ'սպասէր, ի՞նչ կ'ուզէր, նախազգացո՞ւմ մ'ուներ։

Յանկարծ, աչերը բոցավառեցան, ձեռքն անեզր տարածութեան մէջ նշմարած կէտի մ'երկնցուց։

—Նա՛ւ մը, գոչեց, նա՛ւ մը, բարեկա՛մք, թիավարեցէք, ուժով թիավարեցէք։

Թիավարողներէն ոչ մին ետին չդարձաւ այդ անյուսալի նաւը տեսնելու համար, վասն զի թեւճակի միակ հարուածն իսկ պէտք չէր կորսնցնել։ Միայն Բականէլ ոտքի վրայ ելնելով, նշանակեալ կէտին վրայ ուղղեց գիւր դիտակն։

—Այո՛, բսաւ, նա՛ւ մ՚է, չոգենա՛ւ մ՚է, լիաշոգի կը նաւարկէ և մեր կողմը կուգայ։ Սի՛րտ առէք, ընկե՛րք իմ։

Փախստեայք նոր կորովով մ՚սկսան թիավարել, և կէս ժամու չափ ալ կրցին պահել իրենց հեռաւորութիւնն։ Արագ թիավարութեամբ կը սրացնէին նաւակը։ Շոգենաւն ևս քան զեւս տեսանելի կը լինէր։ Իւր երկու կայմերն և սեւ չոգիին խոշոր մրրիկները կ՚որոշուէին։ Կլէնարվան, ղեկը Ռոպէրթի թողլով, աչխարհագրին դիտակը ձեռքն առեր, չոգենաւին չարժմունքը կը դիտէր։

Բայց ի՞նչ խորհեցան արդեօք Ճոն Մանկլս և ընկերներն, երբ տեսան որ Լորտին ղէմքը կծկեցաւ, դժգունեցաւ, և դիտակն ընկաւ ձեռքէն։

Միակ բառ մը բացատրեց զայս յանկարծական յուսահատութիւն։

—Տըխո՛ւն, գոչեց Կլէնարվան, Տըխո՛ւն և փոնվիքնե՛րը։

—Տըխո՛ւն, գոչեց Ճոն թեւաճակը ձեռքէն թողլով և ոտքի վրայ ելնելով։

—Այո՛, մահ երկու կողմէ, մրմնջեց Կլէնարվան, ընկճեալ այսչափ տագնապներէ։

Արդարեւ Տըխուն էր, կարելի չէր սխալիլ, Տըխունն էր իւր փոնվիքներով։ Հազարապետը չկրցաւ ինքզինք բռնել և անէծք մ՚արձակեց երկնից դէմ։

Սակայն նաւակն ինքն իրեն թողուած էր։ Ո՞ր կողմ վարել, ո՞ւր փախչիլ։ Վայրենիներո՞ւն ձեռքն ընկնիլ թէ փոնվիքներուն, հնա՞ր էր ընտրութիւն ընել։

Հրացան մ՚արձակուեցաւ բնիկներուն մօտաւորագոյն նաւակէն և գնդակն եկաւ Ռիչըրնի թեւաճակը զարկաւ։ Յայնժամ Ճոն և ընկերք քանի մը թեւաճակի հարուածներով նաւակը դէպ ի Տըխունի կողմը մղեցին։

Շոգենաւը լիաշոգի կ՚ընթանար, և կէս մղոն միայն հեռի էր նաւակէն։ Ճոն Մանկլս երկու կողմէ հալածուած, չէր գիտեր ո՞ւր դիմել, ո՞ր կողմ փախչիլ։ Երկու խեղճ կանայք, շուարեալ, ծունդի վրայ եկած կաղաթէին։

Վայրենիներն՝ անընդհատ հրացան արձակելով գնտակ կը տեղային նաւակին չուրջը։ Նոյն միջոցին որոտընդոստ բոմբիւն մը լսուեցաւ, և շոգենաւին թնդանօթէն արձակուած ռումբ մ՚անցաւ փախստէից գլուխն վրայէն։ Խեղճերն, երկու կրակի մէջ բռնուած, անշարժ մնացին շոգենաւին և վայրենեաց նաւակներուն մէջ տեղը։

Ճոն Մանկլս յուսահատութենէն խելայեղեալ, տապարը ձեռքն առաւ և ուզեց նաւակը ծակելով ծովասոյզ լինել իւր ընդ

կերաց հետ։ Ռոպէրթ արգիլեց զայն գոչելով.

—Թոմ Աւսթի՛ն, Թոմ Աւսթի՛ն, չոգենաւին մէջն է, ահա կը տեսնե՛մ զայն. մեզ ճանչե՛ց, փեղկերը կը տատանէ՛։

Տապարը կախուած մնաց ձոնի թեւն ի վար։

Երկրորդ ռումբ մը չէլով անցաւ գըլխուն վրայէն և գնաց երկու կտոր ըրաւ վայրենեաց երեք նաւերէն մօտաւորագոյնը, մինչ Տըֆոնի մէջէն ալ «հուրա՛» լսուեցաւ։

Վայրենիները՝ զարհուրելով՝ դէպ ի ծովեզրը փախչիլ սկսան։

—Մեք ենք, Թո՛մ, մեք ենք, գոչեց ձոն Մանկլս ուժեղ ձայնիւ։

Եւ քանի մը վայրկեան յետոյ, տասն փախստեայք, առանց գիտնալու թէ ի՛նչպէս, և առանց բան մը հասկնալու, Տըֆոնի մէջ գտան զիրենք։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԻՆՉՊԷ՞Ս ՀԱՄԱՐ ՏՐՆԲԱՆ ՆՈՐ-ԶԵԼԱՆՏԱՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾՈՎԱՓԱՆՑ ԱՌՋԵՒ ԿԸ ԴԵԳԵՐԷՐ

Անհնար է նկարագրել Կլէնարվանի և ընկերաց զգացումն երբոր Հին Սկովտիոյ երգերն հնչեցին իրենց ականջին։ Երբոր Տըֆոնի տախտակամածին վրայ ոտք կը դնէին, նաւաստիներէն մին, իր հովուական տիկն ուռեցուցած, Մաքդոլմի ցեղին ազգային երգերը կը նուագէր, և զօրեղ հնչիւններ Լորտին վերագարձը կ'ողջունէին։

Կլէնարվան, ձոն Մանկլս, Բականէլ, Ռոպէրթ և նոյն իսկ հազարապետը լալով զիրար կը համբուրէին։ Ուրախութեան չափազանցութենէն կը զառանցէին։ Աչխարհագիրը բացարձակապէս խենդեցեր էր. կը ցատկրտէր և իր երկար դիտակով նշան կ'առնուր ծովեզրը փախչող վայրենեաց նաւակներուն։

Բայց երբոր տեսան Կլէնարվանի և ընկերաց պատառատուն զգեստներն և տոսկալի տառապակրութեամբք տպաւորեալ դէմգոյն և նիհար դէմքը, Տըֆոնի նաւաստիներն ընդհատեցին իրենց ուրախական ցոյցերն։ Ուրուականներ էին որ կը վերադառ-

նային ի չոգենաւն, և ոչ այն անվեհեր և փայլուն ուղեւորներն, որք երեք ամիս առաջ յուսալից ճանբայ ելած էին ի խոյզ նաւարեկելոց։ Դիպուածը միայն կը վերադարձնէր զանոնք յայդ չոգենաւ, զոր ոչ ևս կը յուսային տեսնել։ Եւ ի՛նչ հիւծեալ ու տմոյն վիճակի մէջ։

Բայց իւր յոգնութիւնն և քաղցն ու ծարաւը մոռնալէ առաջ, կլէնարվան հարցաքննեց զԹոմ Աւսթինն այն կողմերը գըտնուելուն վրայ։

Ինչո՞ւ համար Տըֆֆան Նոր-Զելանտայի արեւելեան ծովափանց առջեւ կը դեգերէր։ Ի՞նչպէս չէր ընկած պէն Ձոյսի ձեռք։ Ի՞նչ նախախնամական տնօրէնութեամբ փախստէից ճանբուն վրայ եկած էր։

Ինչո՞ւ համար, ի՞նչպէս, ի՞նչ պատճառաւ։ Այսպէս կ՛սկսէին Թոմ Աւսթինի վրայ միահաղոյն տեղացած հարցմունք։ Ծերուկի նաւաստին չէր գիտեր ո՛ւմ պատասխանել։ Ուստի որոշեց մի միայն Լորտ կլէնարվանի ականջ դնել և նմա միայն պատասխանել։

—Բայց Քոնվիքնե՛րը, հարցուց կլէնարվան, ի՞նչ ըրիք Քոնվիքները։

—Քոնվիքնե՛րը . . . պատասխանեց Թոմ Աւսթին բան մը չհասկնալով այս հարցումէ։

—Այո՛, չոգենաւին վրայ յարձակող թըշուառականնե՛րը։

—Ո՞ր չոգենաւին, հարցուց Թոմ Աւսթին, ձեր Ազնուութեա՞ն չոգենաւին։

—Այո՛, Թոմ, Տըֆֆէ, և այն պէն Ձոյիս որ այս չոգենա՛ւն եկաւ։

—Չեմ ճանչեր զայդ պէն Ձոյիս, երբէք չեմ տեսած զայն, պատասխանեց Աւսթին։

—Երբէ՞ք, գոչեց կլէնարվան յապուշ կրթելով վաղեմի նաւաստւոյն պատասխանները։ Ուրեմն, ըսէք ինձ, Թո՛մ, ինչո՞ւ համար Տըֆֆան այս միջոցիս Նոր-Զելանտայի ջուրերուն մէջ կը դեգերի։

Եթէ կլէնարվան, տիկին Էլէնա, օրիորդ Կրանթ, հազարապետը, Ճոն Մանկլա, Օլպինէթ, Միւլրատի և Ուիլսըն բան մը չէին հասկնար ծերունի նաւաստւոյն զարմանքէն, ո՛րչափ մեծ եղաւ իրենց ապշութիւնն երբ Թոմ պատասխանեց հանդարտ կերպիւ.

—Բայց Տըֆֆան ձեր Ազնուութեան հրամանովը կը դեգերի աստ։

—Իմ հրամանո՞վս, գոչեց կլէնարվան։

—Այո՛, Միլրատ, ձեր յունվար 14 նամակին մէջ նշանակեալ հրահանգներուն միայն հետեւեցայ։

—Իմ նամակի՛ս, իմ նամակի՛ս, գոչեց կլէնարվան։

Նոյն միջոցին տան ուղեւորք չրջապատած էին զԹոմ Ալսթին և իրենց աչերն անոր վրայ սեւեռած : Սնուի-Րիվըրէն գրած նամակն հասած էր ուրեմն Թոմ Ալսթինի ձեռք :

—Օ՛ն , յարեց Կլէնարվան , բացատրեցէք զայս իրողութիւն, վասն զի կը թուի ինձ թէ երազ կը տեսնեմ : Նամակ մ՛ստացա՞ք ինձմէ , Թո՛մ :

—Այո՛ , ստացայ :

—Ի Մէլպո՞ւրն

—Ի Մէլպուրն, այն միջոցին ուր չոգենաւին Նորոգութիւնն աւարտելու վրայ էր

—Եւ այն նամա՞կ :

—Ձեր գիրը չէր , բայց դուք ստորագրած էիք , Մի՛լորտ :

—Այո՛ , ճիշդ է : Այն նամակս պէն Ճոյիս անուն փոնվիք մը բերաւ ձեզ :

—Ո՛չ , էյրթըն անուն նաւաստի մը , որ Պէլֆաստէյի նաւաստեաց տանտապետն էր :

—Այո՛ , էյրթըն , պէն Ճոյիս , ու և նոյն անձն է : Էյ , ի՞նչ կ՛ըսէր այդ նամակ :

—Կը հրամայէր ինձ որ Մէլպուրնէն մեկնիմ անյապաղ և երթամ դեգերիմ . . .

—Ալստրալիոյ արեւելեան ծովափանց առջեւ , գոչեց Կլէնարվան այն աստիճան անհամբեր կրքով մը , որ սաստանեցուց ծերունի նաւաստին :

—Ալստրալիո՛յ , կրկնեց Թոմ աչերը բանալով , բայց ո՛չ , Նոր-Զելանտայի :

—Ալստրալիո՛յ , Թո՛մ , Ալստրալիո՛յ , պատասխանեցին միաձայն Կլէնարվանի ընկերները :

Նոյն միջոցին Թոմ Ալսթինի վրայ չուաբուտ մ՛եկաւ : Կլէնարվան ա՛յն աստիճան աներկեւանութեամբ կը խօսէր , որ խեղճ նաւապետն սկսաւ վախնալ թէ նամակը սխալ կարդացեր էր : Ինքը , ճշդապահ և հաւատարիմ նաւազ , արդեօք այնպիսի սխա՞լ մը գործած էր : Կարմրեցաւ և չփոթեցաւ :

—Մի՛ վրդովիր , Թո՛մ , Նախախնամութիւնն ուզեց որ . . .

—Բայց ո՛չ , տիկի՛ն , ներեցէք ինձ , ըսաւ Թոմ ո՛չ , կարելի չէ· ես չեմ սխալած : Էյրթըն ալ ինձ պէս կարդաց նամակն , և նա , ընդհակառակն , կ՛ուզէր Ալստրալիոյ ջուրերը տանիլ վիս :

—Էյրթը՞ն , գոչեց Կլէնարվան :

—Նոյն ինքն : Նա պնդեց թէ նամակը սխալ գրուած էր , թէ դուք կ՛ուզէիք Թուոմոլտ պէյ ծովածոցն երթալ ու հրահանգ տալ ինձ :

—Նամակը կեցա՞ծ է , Թո՛մ , հարցուց Հաղարապետն , առաւելապէս հետաքրքրեալ :

—Այո՛, պարոն Մաք Նապս, պատասխանեց Ասթին, երթամ բերեմ։

Ասթին իր խցիկը վազեց յառաջակողման բարձրաւանդակին տակ։ Նորա բացակայութեան կարճ վայրկենին մէջ՝ Կլէնարվան և ընկերք իրարու երես կը նայէին լուին, ի բաց առեալ հազարապետն, որ աչքը բականէլի վրայ ուղղելով և թեւերը կուրծքին վրայ կապելով.

—Բա՛ըէ, պէտք է խոստովանիլ, Բականէլ, թէ քիչ մը չափազա՛նց բան կը լինի, ըսաւ.

—Հէ՛, ըսաւ աչխարհագիրն, որ կրնակը կքած և ակնոցները ճակտին վրայ հանած՝ անհեթեթ հարցական նշանի մը կը նմանէր։

Ասթին վերադարձաւ՝ բերելով այն նամա՛կը, զոր Բականէլ գրած և Կլէնարվան ստորագրած էր։

—Ձեր Ազնուութիւնը թող կարդայ, ըսաւ ծերունի նաւազը։

Կլէնարվան առաւ նամակն ու կարդաց.

«Հրաման առ Թոմ Ասթին, որ անյապաղ ճանբայ ելնէ և տանի զՏըխան լայնութեան 37 աստիճանին տակ Նոր-Զելանտայի ար...

—Նոր-Զելանտայի՛, գոչեց Բականէլ վեր ցատկելով։

Եւ յափշտակեց նամակը Կլէնարվանի ձեռքէն, աչերը չփեց, ակնոցը քթին վրայ իջուց և ինքն ալ կարդաց.

—Նոր-Զելանտա՛, գոչեց աննկարագրելի ձայնիւ մը, և նամակն ընկաւ մատներուն մէջէն։

Նոյն միջոցին ձեռք մ'ղզաց իւր ուսին վրայ, և չտկուելով՝ ինքզինք դէմ առ դէմ տեսաւ հազարապետին հետ։

—Օ՛ն, քալ Բականէլ, ըսաւ Մաք Նապս լուրջ դէմքով մը, բարեբաղդութիւն մ'է որ Քոչինչին չէք ղրկած զՏըխան։

Այս հեգնութիւն բոլորովին լմնցուց խեղճ աչխարհագիրն։ Ընդհանուր քրքիջ մը բրդաւ չոգենաւին նաւաստեաց մէջ։ Բականէլ, խելագարեալի պէս կ'երթեւեկէր, և գլուխն երկու ձեռքով բռնած, մազերը կը փետէր։ Ոչ ըրածը գիտէր, և ոչ ուզածը։ Մեքենաբար վար իջաւ դունակին սանդուղքէն, մեծաքայլ ընթանալ սկսաւ նաւուն տախտակամածին վրայ, դանդաչելով, առանց նպատակի, և գլխուն բարձրաւանդակին վրայ ելաւ։ Անդ ոտները պարանոց ծրարի մը փաթթուելով՝ ընկաւ. ձեռները դիպուածով չուանի մը կառչեցան։

Յանկարծ զարհուրելի բոմբիւն մը լսուեցաւ։ Բարձրաւանդակին վրայի թնդանօթը նետուեցաւ երկաթներու և գնտակներու

տարափ մը տեղալով ծովուն խաղաղ ա-
լիքներուն վրայ։ Բականէլ ճախողաբար թըն-
դանօթին չուանը քաշեր էր, և կայծհանը
պայթուցիկ խանձին վրայ ընկելով, թնդա-
նօթը կրակ առեր էր։ Աչխարհագիրը բարճ-
րաւանդակին սանդուղին վրայ ընկնելով,
մինչեւ վար գլորեր էր նաւաստեաց կայա-
նին մէջ։

Թնդանօթին բումբիւնէն պատճառեալ
ապշութեան յաջորդեց պահման աղաղակ
մը։ Ամէնն ալ կարծեցին թէ դժբաղդու-
թիւն մը պատահած էր։ Տան նաւաստիք
շոգենաւին մէջնայարկը դիմեցին, և վեր-
ցուցին բերին գԲականէլ կրկնաձաղ։ Աչ-
խարհագիրն ոչ ևս կը խօսէր։

Դուռնակին վրայ փոխադրեցին զայն եր-
կայն մարմին։ Բարի Ֆրանսացւոյն ընկեր-
ները ծանրասէր տրտմեցան։ Հազարապետն,
որ միշտ բժիշկ էր մեծ առիթներու մէջ,
դժբաղդ Բականէլի վէրքերը պատելու հա-
մար մերկացնել ուզեց զայն. բայց հագիւ
ձեռքն օրհասականին վրայ դրած էր, նա
մէկէն ի մէկ ուղղուեցաւ, ելեքտրական ճա-
խարակէ մը կարծես չփուելով։

—Երբէ՛ք, երբէ՛ք, գոչեց, իւր քաքաեալ
հանդերձներն իւր նիհար մարմնոյն վրայ
քերելով և տաբօրէն խուճապաւ մը կոմ-
կելով։

—Բայց, Բականէ՛լ, ըսաւ հազարապետն։

—Ո՛չ, կ՚ըսեմ ձեզ։

—Պէտք է զննել...

—Չպիտի զննէք։

—Թերեւս կոտրած մ՚ունիք... ըսաւ
հազարապետն։

—Այո՛, պատասխանեց Բականէլ՝ իսկոյն
ելնելով ուղղակէս կանգնելով իւր երկայն
սրունքներուն վրայ. բայց իմ կոտրածս կըր-
նայ ատաղձագործը նորոգել։

—Ի՞նչը։

—Ներաստեաց կայանին նեցուկը կոտ-
րեցաւ իմ անկումէս։

Այս պատասխանին վրայ քրքիջները վեր-
ըսկսան։ Պատուարժան աչխարհագրին բո-
լոր բարեկամները քաջալերեցան անոր այս
պատասխանէն, և հասկցան որ անվնաս
ազատած էր Թնդանօթին արկածէն։

—Ինչ որ ալ է, աւասիկ տարօրինակէս
ամրթխած աչխարհագի՛ր մը, ըսաւ հա-
զարապետն լինքնիրեն։

Սակայն Բականէլ, իւր ծանր սրտայու-
զումներէն ուշաբերուելով, պարտաւորեցաւ
պատասխանել այնպիսի հարցման մը, յորմէ
չէր կրնար խուսափիլ։

—Այժմ, Բականէ՛լ, ըսաւ նմա Կլէնար-
վան, անկեղծօրէն պատասխանեցէք։ Կը
խոստովանիմ որ ձեր մտագբաղութիւնը նա-

խախճամական բարիք մ'եղաւ։ Անշուշտ, առանց ձեր այդ մտազբաղութեան, Տընտան ֆոնվիքներուն ձեռքը պիտի ընկնէր. առանց ձեզ, մեք ալ վերստին Մաուրիններուն ձեռքը պիտի ընկնէինք։ Բայց, իմ սէր Աստուածոյ, ըսէք ինձ թէ գաղափարաց ո՛րպիսի տարօրէն զուգակցութեամբ, մտաց ո՛րպիսի գերբնական մոլորութեամբ Նոր-Զելանտայի անունը գրեցիք Աւստրալիոյ տեղ։

—Է՛հ, բարէ, գոչեց Բականէլ, վասն զի...

Բայց նոյն վայրկենին, աչերը Ռոպէրթի և Մարի Կրանթի վրայ դառնալով, լռեց. յետոյ պատասխանեց։

—Ի՞նչ պիտի ընէք, սիրելիդ իմ Կլէնարվան, ես ապուշ մ'եմ, յիմար մ'եմ, անուղղայ էակ մ'եմ, և աշխարհի ամենէն հրաշակաւոր մտազբաղին մորթին մէջ պիտի մեռնիմ...։

—Եթէ մորթեզերծ չընեն զձեզ, աւելցուց հազարապետը։

—Մորթեզերծ ընե՛ն զիս, գոչեց աշխարհագիրը բարկացայտ դէմքով։ Ակնարկութի՞ւն մ'է ըրածնիդ։

—Ի՞նչ ակնարկութիւն, Բականէլ, հարցուց Մաք Նապս իւր հանդարտ ձայնիւ։

Միջադէպն հետեւութիւն չունեցաւ։ Տընտանի ներկայութեան գաղտնիքը պարզուած էր. ուղեւորք, այսպէս հրաշիւք փրկուելնուն վրայ ուրախ, իրենց հանգստացուէտ խուցերը քաշուիլ և լաւ ճաշ մ'ընել միայն խորհեցան։

Սակայն Կլէնարվան և ձոն Մանկլս, թողլով զտիկին Էլէնա, Մարի Կրանթ, հազարապետը, Բականէլ և Ռոպէրթ, որ դուռնակին մէջ մնային, իրենք վար դրին իրենց քով զԹոմ Ասթին, և նորէն հարցաքննել ուզեցին։

—Այժմ, ծերունի՛ Թոմս, ըսաւ Կլէնարվան, պատասխանեցէք ինձ։ Նոր-Զելանտայի ծովափանց առջեւ դեգերելու հրամանը զարմանալի չերեւցա՞ւ ձեզ։

—Այո՛, Միլորդ, պատասխանեց Ասթին, չատ զարմացայ, բայց ես սովորութիւն չունիմ ինձ տրուած հրամանները քննադատելու, և հնազանդեցայ։ Կրնայի՞ ուրիշ կերպ ընել։ Եթէ, ձեր հրահանգները կէտ առ կէտ չգործադրելէս ալէտ մը ծագէր, յանցապարտ չէի՞ լիներ։ Ուրիշ կերպ կ'ընէի՞ք, նաւապե՛տ։

—Ո՛չ, Թոմ, պատասխանեց ձոն Մանկլս։

—Բայց ի՞նչ խորհեցաք այդ հրամանի վրայ։

—Խորհեցայ թէ Հարրի Կրանթի օգտին համար պէտք էր ձեր ըսած տեղն երթալ։ Խորհեցայ թէ, նոր տնօրէնութեանց համե-

մատ՝ նաւ մը ձեզ Նոր-Զելանտա պիտի տանէր, և ես ալ կղզւոյն արեւելեան ծովեզրին վրայ ձեզ պիտի սպասէի։ Մնաց որ, Մէլպուրնէն մեկնած ժամանակ ծածուկ պահեցի երթալու տեղս, և նաւապէտ այն ժամանակ իմացան երբոր ծովուն բացն հասած էինք և Աւստրալիոյ հողերն ոչ ևս կը տեսնուէին։ Բայց յայնժամ չոգենաւին մէջ դէպք մը պատահեցաւ, որ մեծ տագնապի մէջ ձգեց զիս։

—Ի՞նչ ըսել կ՚ուզէք, Թո՛մ, հարցուց Կլէնարվան։

—Ըսել կ՚ուզեմ թէ, պատասխանեց Թոմ Աւսթին, երբոր նաւապետաց տասնապետ էյրթըն հետեւեալ օրն իմացաւ Տքն-ին երթալու տեղն . . .

—Էյրթը՛ն, գոչեց Կլէնարվան։ Ուրեմն աստ չոգենաւիս մէ՞ջ է։

—Այո՛, Միլորտ։

—Էյրթըն ա՛ստ, կրկնեց Կլէնարվան՝ ձեռն Մանկլըի նայելով։

—Աստուած այնպէս կամեցեր է, ըսաւ երիտասարդ նաւապետը։

Վայրկեանի մէջ և փայլակի արագութեամբ, էյրթընի ընթացքն, երկարօրէն նիւթած դաւաճանութիւնը, Կլէնարվանի վիրաւորումը, Միլրատիի վրայ ըրած սպանութեան փորձը, ուղեւորաց Սնուլի ճանչնալը, ամէն բան միտքս եկաւ։ Ես այժմ, պարագայից տարօրէն գործակցութեամբ, ձեռքին մէջ կը դտնուէր։

—Ո՞ւր է, հարցուց Կլէնարվան։

—Յառաջակողման բարձրաւանդակին խցիկներէն մէյն մէջ փակուած է, պատասխանեց Թոմ Աւսթին, ամեն հալորդակցութենէ զուրկ։

—Ինչո՞ւ համար այդ բանտարկութիւն։

—Վասն զի, երբ տեսաւ որ չոգենաւը Նոր-Զելանտա կ՚ուղևորէր, զայրացաւ, ուզեց նաւուն ընթացքը փոխելու հարկադրել զիս, սպառնացաւ ինձ, և վերջապէս նաւատիներս յապստամբութիւն գրգռեց։ Հասկցայ որ վտանգաւոր մարդ էր, և ըզգուշութեան միջոցներ ձեռք առի իր դէմ։

—Եւ այն ժամանակէն ի վե՞ր։

—Այն ժամանակէն ի վեր իր խցիկին մէջ բանտարկեալ մնաց, առանց դուրս ելնելու

—Լա՛ւ, Թո՛մ։»

Նոյն միջոցին Կլէնարվան և Ճոն Մանկլը դուռնակը կոչուեցան։ Նախաճաշն, որուն յոյժ ստիպողական պէտք մ՚ունէին, պատրաստած էր։ Քառակուսիին սեղանը բազ-

հիւններուն մէջ արդիլուելն և կրած տապանքը, մէկ խօսքով Թշուառականին բոլոր անցեալն այս երկու մարդոց աչքին առջեւ եկաւ։ Եւ այժմ, պարագայից տարօրէն գործակցութեամբ, Քոնվիքն իրենց ձեռքին մէջ կը դտնուէր։

—Ո՞ւր է, հարցուց Կլէնարվան։

—Յառաջակողման բարձրաւանդակին խցիկներէն մէյն մէջ փակուած է, պատասխանեց Թոմ Աւսթին, ամեն հալորդակցութենէ զուրկ։

—Ինչո՞ւ համար այդ բանտարկութիւն։

—Վասն զի, երբ տեսաւ որ չոգենաւը Նոր-Զելանտա կ՚ուղևորէր, զայրացաւ, ուզեց նաւուն ընթացքը փոխելու հարկադրել զիս, սպառնացաւ ինձ, և վերջապէս նաւատիներս յապստամբութիւն գրգռեց։ Հասկցայ որ վտանգաւոր մարդ էր, և ըզգուշութեան միջոցներ ձեռք առի իր դէմ։

—Եւ այն ժամանակէն ի վե՞ր։

—Այն ժամանակէն ի վեր իր խցիկին մէջ բանտարկեալ մնաց, առանց դուրս ելնելու

—Լա՛ւ, Թո՛մ։»

Նոյն միջոցին Կլէնարվան և Ճոն Մանկլը դուռնակը կոչուեցան։ Նախաճաշն, որուն յոյժ ստիպողական պէտք մ՚ունէին, պատրաստած էր։ Քառակուսիին սեղանը բազ-

մեցան, և էյրթընի խօսքը բնաւ չըրին։

Բայց ճաշէն յետոյ, երբոր բազմականք, կազդուրուած ու նորոգուած, տախտակամածին վրայ գումարեցան, կլէնարվան իմացուց անոնց թէ էյրթըն չոգենաւին մէջ էր, միանգամայն ծանոյց թէ իրենց առջեւ բերել պիտի տար ու հարցաքննէր։

«Կրնա՞մ ես ներկայ չգտնուիլ այդ հարցաքնութեան, հարցուց տիկին էլէնա։ Կը խոստովանիմ, սիրելի՛ եդուարդս, թէ այդ Թշուառականին տեսքն յոյժ դժնդակ կը լինի ինձ։

— Լոկ երեսուիլ մ'է, էլէնա՛, պատասխանեց Լորտ կլէնարվան։ Կեցէք, կ'ազաչեմ։ Պէտք է որ Պէն Ճոյիս ինք գինք դէմ առ դէմ տեսնէ իւր ամեն զոհերուն հետ։

Տիկին էլէնա հաւանեցաւ։ Ինքն և Մարի Կրանթ նստան Լորտ կլէնարվանի քով, և սոցա չուրջը շարուեցան հազարապետը, Բականէլ, Ճոն Մանկլս, Ռոպէրթ, Ուիլսըն, Միւլրատի, Օլպինէթ, որք ամեն ալ ծանր վտանգի մէջ ընկած էին Գոնվիքին դաւաճանութեամբ։ Շոգենաւին մէջի նաւազները, դեռ չհասկնալով այս տեսարանի ծանրութիւնը, լուռ թեամբ կը դիտէին։

—Բերէք զէյրթըն, ըսաւ կլէնարվան։

ԳԼՈՒԽ ԺԷ։

ԷՅՐԹԸՆ ԿԱՄ ՊԷՆ ՃՈՅԻՍ

Էյրթըն երեւցաւ։ Նաւուն տախտակամածէն անցաւ վստահ քայլերով և դուռնակին սանդուղքէն վեր ելաւ։ Աչերը տխուր էին, ակռաները սեղմած, բռունքը ջղաձգաբար փակած։ Անձին վրայ ոչ սիգութիւն կը տեսնուէր, ոչ խոնարհութիւն։ Երբոր Լորտ կլէնարվանի առջեւ եկաւ, թեւերը կուրծքին վրայ կապեց մունջ և հանդարտ, և հարցափորձի սպասեց։

—Էյրթը՛ն, ըսաւ կլէնարվան, աւազակ դուք և մեք այն Տը+ան՝ի մէջ, զոր Պէն Ճոյիսի Գոնվիքներուն հատնել կ'ուզէիք։

Ա.յս խօսքի վրայ էյրթընի չրթունքը դողացին թեթեւապէս։ Արագ կարմրութեամբ մը գունաւորեցաւ անզգած դէմքն, ոչ խղճի խայթէն, այլ անյաջողութեան ամօթէն։ Այն չոգենաւին մէջ, ուր տիրաբար հրամայել կ'ուզէր, բանտարկեալ էր, և իւր բաղդը պիտի որոշուէր քանի մը վայրկեանի մէջ։

Սակայն չպատասխանեց։ Կլէնարվան սպասեց համբերութեամբ։ Բայց էյրթընն կը յամառէր և բացարձակ լռութիւն կը պահէր։

—Խօսեցէք, էյրթը՛ն, ի՞նչ ունիք ըսելիք, հարցուց Լորտ Կլէնարվան։

Էյրթըն վարանեցաւ, ճակտին խորշոմները խորունկցան, յետոյ հանդարտ ձայնիւ պատասխանեց.

—Բան մը չունիմ ըսելիք, Միլո՛րտ։ Անմտութեամբ ձեր ձեռքն ընկայ այսպէս։ Ըրէք ինչ որ հաճոյ թուի ձեզ։

Այս պատասխանէն յետոյ՝ էյրթըն աչքը դէպ ի ծովեզրը դարձուց որ տարածուած էր արեւմտեան կողմէն, և խոր անփութութիւն մը ցոյց տուաւ իր չուրջը դարձածներուն վրայ։ Զայն տեսնողը բոլորովին անծանօթ կը կարծէր այս ծանր գործի։ Բայց Կլէնարվան միտքը դրած էր երկայնամիտ մնալ։ Զօրաւոր չահ մը կը մղէր զայն էյրթընի գաղտնածածուկ կեանց ինչ ինչ պարագաներն իմանալու, մանաւանդ Հարրի Կրանթի և Պէլլանէյի վերաբերեալներն։ Ուստի նորէն ձեռք առաւ հարցաքննութիւնը, ծայրագոյն քաղցրութեամբ խօսելով և սրտին բուռն գրգռութիւնը կատարեալ հանդարտութեամբ ծածկելով։

—Կը յուսամ որ, էյրթը՛ն, ըսաւ, չէք դժկամակիր պատասխանել քանի մը հարցմանց, զորս կը փափաքիմ ընել ձեզ։ Եւ նախ էյրթը՞ն պարտիմ կոչել զձեզ թէ Պէլլանէյի մտիկ, դուք Պէլլանէյի նաւաստեաց տասնապե՞տն էք, այո՛ կամ ո՛չ։

Էյրթըն անզգած մնաց, ծովեզրը դիտելով, առանց լսելու իրեն ուղղուած հարցումը։

Կլէնարվան, որոյ աչերը բոցավառիլ կ՚սկսէին, չարունակեց հարցաքննել.

—Կը հաճի՞ք իմացնել ինձ թէ ի՞նչպէս թողուցիք զՊէլլանէյ, և թէ ի՞նչ պատճառաւ Աւստրալիա կը գտնուէիք։

Նոյն լռութիւն, նոյն անզգածութիւն։

—Մտի՛ք ըրէք պիտ, էյրթը՛ն, ըսաւ Կլէնարվան։ Ձեր չահն է խօսիլ. ձեր անկեղծութիւնն, որ ձեր փրկութեան վերջին ապաւէնն է, կրնայ ի հաչիւ առնուիլ։ Վերջին անգամ կը հարցնեմ ձեզ, պիտի պատասխանէ՞ք իմ հարցմանցս։

Էյրթըն, գլուխը Լորտ Կլէնարվանի դարձնելով, աչերուն մէջ նայեցաւ։

—Մի՛ լորտ, ըսաւ, պատասխան չունիմ տալիք։ Դատական արդարութեան կը վերադրի ապացուցանել ինձ դէմ եղած մեղադրութիւնները, և ոչ ինձ։

—Ապացոյցը դիւրին են, պատասխանեց Կլէնարվան։

—Դիւրի՛ն, Միլո՛րտ, ըսաւ էյրթըն հեգնիչ ձայնիւ։ Կարծեմ թէ Ձեր Ազնուութիւնը չատ առաջ կ՚երթայ։ Ես կը համարեմ թէ դատական պաշտօնատան ամենաեռանդ դատաւորը չկրնար իմ ոտքս ճարտար դատաւորը չկրնար իմ ոտքս

նիլս հասկնալ։ Ո՛վ պիտի ըսէ թէ ինչո՛ւ եկած եմ Աւստրալիա, որովհետեւ Կրանթ նաւապետ ներկայ չէ։ Ո՛վ պիտի ապացուցանէ թէ ոստիկանութեան նշանակած պէն Ճոյսն եմ ես, որովհետեւ ոստիկանութիւնն երբէք ձեռք չանցուց պիս, և ընկերներս ալ ազատ են։ Ձեզնէ զատ ո՛վ պիտի ապացուցանէ ինձ դէմ, ոչ թէ ոճիր մը, այլ պարսաւելի գործ մը։ Ո՛վ կրնայ հաստատել թէ ես այս նաւը գրաւել և ֆոնվիքներուն ձեռքը մատնել ուզեր եմ։ Ոչ ոք, կը լսե՞ք, ոչ ոք։ Դուք կասկածներ միայն ունիք։ բայց մարդ մը դատապարտելու համար հաւաստիք պէտք են, և այդ հաւաստիք կը պակսին ձեզ։ Մինչեւ որ հակառակն ապացուցուի, ես էյրթըն եմ, Պրէնէյի նաւաստեաց տասնապետ։

Էյրթըն ոգեւորեր էր խօսած ժամանակ։ Երբոր լռեց, իւր առջի անտարբերութեան վերադարձաւ։ Կ'երեւակայէր անշուշտ թէ իւր յայտարարութեամբ կը վակուէր հարցափորձը։ Բայց կլէնարվան նորէն խօսեցաւ։

—Էյրթը՛ն, ըսաւ, ես քննիչ դատաւոր չեմ, որ ձեզ դէմ քննութիւն բանամ. իմ գործ չէ այդ. պէտք է որ մեր երկոցուն վերադարձ կացութիւնն յայտնապէս որոշուի։ Ես չեմ հարցներ ձեզ այնպիսի բան մը, որ կարենայ ձեր յանցապարտութիւնը հաստատել։ Դատական արդարութեան կը պատկանի այդ։ Բայց դուք գիտէք օ՛րպիսի խուզարկութեան մը հետամուտ եղած եմ ես, և կրնաք մէկ խօսքով գտնել տալ կորուսած հետքս։ Ուստի խօսեցէք։

Էյրթըն գլուխն երերցուց իբրեւ խօսիլ չուզող մարդ։

—Կը հաճի՞ք ըսել ինձ թէ ո՞ւր է Կրանթ նաւապետ, հարցուց կլէնարվան։

—Ո՛չ, Միլըրտ, պատասխանեց Էյրթըն։

—Կը հաճի՞ք ցոյց տալ ինձ Պրէնէյի խրած տեղը։

—Ո՛չ։

—Էյրթը՛ն, ըսաւ կլէնարվան գրեթէ աղերսական ձայնիւ, կը հաճի՞ք, եթէ գիտէք Հարրի Կրանթի ո՛ւր լինիլն, իմացնել սա խեղճ տղայոց, որք միակ բառի մը կ'ըսպասեն ձեր բերնէն։

Էյրթըն վարանեցաւ. դէմքին գծերը կծկեցան, և ցած ձայնիւ մրմնջեց.

—Ձեմ կրնար, Միլը՛րտ։

Եւ աւելցուց դառնութեամբ, իբր թէ զղջալով իւր պահ մը տկարանալուն վրայ.

—Ո՛չ, չպիտի խօսիմ։ Եթէ կ'ուզէք կախել տուէք զիս։

—Կախե՛ք, գոչեց Կլէնարվան ի զայրոյթ գրգռեալ։

Բայց անվիջապէս զսպեց զիւր ցասումն և հանդարտ ձայնիւ պատասխանեց.

—Էյրթը՛ն, աստ ոչ դատաւորք կան, ոչ դահիճք։ Առաջին նաւահանգիստ մը հասնելնուս, անգլիական իշխանութեանց ձեռքը կը յանձնուիք։

—Ես ալ զայդ կը խնդրեմ, պատասխանեց Նաւաստեաց տասնապետն։

Յետոյ հանդարտ քայլերով իրեն բանտ եղող խցիկը վերադարձաւ, և երկու նաւաստիք պահապան դրուեցան անոր դրան առջեւ՝ ամենափոքր շարժումներն իսկ դիտելու համար։ Այս տեսարանի ներկայ գտնուողք մեկնեցան ցասումեալ և յուսահատ։

Որովհետեւ Կլէնարվան չկրցաւ յաղթել Էյրթընի յամառութեան, ի՞նչ կը մնար իրեն ընել։ Անշուշտ գործադրել Եւրոպա վերադառնալու որոշումն զոր ըրած էր Էտէն հասած ժամանակ, պայմանաւ որ յետոյ վերստին յառաջ տանի գիւր վրիպեալ ձեռնարկ։ Վասն զի Պրէնանցի հետքն անդարձաբար կորսուսեալ կը թուէր այս անգամ. ծովէն ելած գրութիւնը նոր մեկնութեան մը չէր յարմարեր. ասկէ զատ ուրիշ որ և է երկիր չէր գտնուեր երեսուն–եօթներորդ

զուգահեռականի ճանբուն վրայ, հետեւաբար Եւրոպա վերադառնալէ զատ ուրիշ գործ չէր մնար Տընէսնի։

Կլէնարվան, իւր բարեկամաց կարծիքն առանալէ յետոյ, մանաւորապէս Ճոն Մանկլսի հետ խորհրդակցեցաւ վերադարձի խնդրոյն վրայ։ Ճոն աչքէ անցուց չոգենաւին մէթերանոցներն. ածխոյ պաշարն հազիւ տասն–հինգ օր կը տեւէր։ Ուստի հարկ էր ածուխ գնել մօտագոյն նաւահանգստէն։

Ճոն առաջարկեց թալքահուանոյի ծովածոցն երթալ, ուր Տընէսն արդէն պարենաւորուեր էր իւր ընկերութեան ձեռնարկելէ առաջ։ Այս ծովածոցին ճանբան ուղիղ էր, և ճշդիւ երեսուն–եօթներորդ զուգահեռականին վրայ կը գտնուէր։ Անտի Տընէսն, լիապէս պարենաւորուելէ յետոյ, կրնար դէպի հարաւ ուղեւորիլ, և Հորնի հրուանդանը պատելով՝ Ադլանդեանի ճանբէն Սկովտիա ժամանել։

Այս ծրագիր ընդունուելէ յետոյ, հրաման եղաւ մեքենավարին որ ուժ տայ չոգիին։ Կէս ժամ յետոյ չոգենաւը թալքահուանոյի վրայ ուղղուեցաւ իւր անուան արժանի ծովով մը, և իրիկուան ժամ վեցին՝ Նոր–Զելանտայի վերջին լեռներն անհետացան կը լինէին հորիզոնին ջերմ մառախուղներուն մէջ։

Այսպէս վերադարձի ուղեւորութիւնն էր որ կ'սկսէր : Տխուր ուղեւորութիւն այս քաջարի հետախոյզներուն համար, որք նաւահանգիստը կը վերադառնային՝ առանց Կրանթ նաւապետը բերելու : Այս պատճառաւ, նաւազք, որ այնչափ ցնծութեամբ, այնչափ վստահութեամբ ճանբայ ելած էին, այժմ պարտեալ, վհատեալ, յԵւրոպա կը վերադառնային : Այն քաջ նաւաստեաց ոչ միւն չէր յուզուեր իւր հայրենիքը տեսնելու մտածութեամբ, այլ ամենն ալ յօժարափոյթ էին Կրանթ նաւապետը գտնելու համար՝ տակաւին երկար ժամանակ դիմադրաւել ծովուն վտանգաց :

Հետեւաբար Կլէնարվանի և ընկերաց վերադարձն ողբունող ցնծագին հուրանեբուն՝ չատ չանցած՝ վհատութիւն յաջորդեց : Ոչ եւս կը տեսնուէին այն անդուլ հաղորդակցութիւնք ուղեւորաց միջեւ, ոչ եւս կը լսուէին այն խօսակցութիւնք, որք երբեմն կը զուարթացնէին զուղին : Իւրաքանչիւր ոք իւր խցիկին մէջ առանձնացած էր, և հազիւ երբեմն միւն կամ միւսը կը տեսնուէր Տըֆոնի տախտակամածին վրայ :

Այն մարդն, որոյ վրայ սովորաբար կը չափազանցէին չոգենաւին մէջ տիրող դժընդակ կամ բերկրառիթ զգացմունք, բականէլ, որ ի հարկին կրնար յոյս հնարել, բա-

կանէլ տխուր և մունջ կը կենար : Հազիւ երեւան կ'ելնէր . իւր բնական չատխօսութիւնը, ֆրանսական աշխոյժը, լքման և համրութեան փոխուած էր : Մինչեւ իսկ իւր ընկերներէն աւելի վհատեալ կը թուէր : Եթէ Կլէնարվան իւր հետախուզութիւնները վերսկսելու խօսք ընէր, բականէլ գլուխը կը թօթվէր իբրեւ յուսակորոյս մարդ, որոյ համոզումը կատարեալ կ'երեւէր Պէնէնէյի նաւաբեկելոյ խսպառ կորսուած լինելուն վրայ :

Սակայն չոգենաւին մէջ մարդ մը կար, որ կրնար վերջին խօսքն ըսել այդ աղետալի արկածի վրայ, և որոյ լռութիւնը կը չարունակէր : Այն մարդն էր Էյրթըն : Տարակոյս չկար որ այն թշուառականը գիտէր եթէ ոչ Կրանթ նաւապետին արդի վիճակը, գէթ նաւաբեկման տեղը : Բայց, յայտնի էր, որ եթէ Կրանթ գտնուէր, ամբաստանիչ վկայ մը սլիտի լինէր իրեն դէմ : Այս պատճառաւ բուռն ցասում կը տիրէր, մանաւանդ նաւաստեաց վրայ, որք, եթէ թոյլ տրուէր, կը սատկեցնէին զայն :

Ֆանի մ'անգամ Կլէնարվան նորոգեց իւր ջանքը նաւաստեաց տասնապետին քով : Խոստմունք, սպառնալիք, ամենն ալ ապարդիւն եղան : Էյրթընի կամակորութիւնն այն աստիճան անդրդուելի էր և այնչափ ան-

քացատրելի, որ հալարապետան եղրակացուց վերջապէս թէ բան մը չէր գիտեր։ Ա.յս էր նաև աշխարհագրին կարծիքն, որ հաստատութիւն կուտար Չարրի Կրանթի մասին ունեցած յուսահատական հասկնալն։

Բայց եթէ էյրթըն բան մը չէր գիտեր, ինչո՞ւ չէր խոստովաներ զիւր տգիտութիւն, ի՞նչ ընայ կրնար ունենալ իրեն։ Ա.յլ իւր լռութիւն կ'ապեցնէր նոր ծրագիր մը կազմելու դժուարութիւնը։ Պրէնտէյլի նաւաստեաց տասնապետին Ա.ւստրալիոյ մէջ տեսնուելէն կրնա՞ր մակաբերիլ թէ Չարրի Կրանթ ալ այն երկրին մէջ էր։ Պէտք էր անպատճառ խօսեցնել զէյրթըն այս կէտի վրայ։

Տիկին Էլէնա, տեսնելով իւր ամուսնոյն անյաջողութիւնը, թոյլտուութիւն խնդրեց իւր ամուսնէն, որ ինքն ալ մասնակցելու փորձ մ'ընէ նաւաստեաց տասնապետին յանձնարարեան դէմ։ Ուր այր մ'անյաջող եղնէ, թերեւս կին մը յաջողի իւր քաղցր ազդեցութեամբ։ Հանրածանօթ առակին խըրատաչուն հոգին է, որ չկրնար ուղեւորին վերարկուն կորզել ուսերէն, իսկ արեւուն ամենափոքր ճառագայթն իսկոյն կը խլէ։ Կլէնարվան, գիտնալով իւր դեռատի կնոջ ուշմութիւնը, լիարձակ ազատութիւն տուաւ նմա գործելու։

Այն օրն, 5 մարտի, էյրթըն տիկին Էլէնայի ներեակը բերուեցաւ։ Մարի Կրանթ ալ ներկայ գտնուեցաւ այս տեսակցութեան, որովհետեւ անոր ազդեցութիւնն ալ կրնար մեծ լինիլ, և տիկին Էլէնա չէր կրնար անտես ընել յաջողութեան որ և է հաւանականութիւն։

Ժամու մը չափ, երկու կանայք փակուած մնացին Պրէնտէյլի նաւաստեաց տասնապետին հետ, բայց բան մ'ի յայտ չեկաւ իրենց տեսակցութենէն։ Ինչ որ ըսին, ինչ փաստեր որ գործածեցին Քոնվիքին գաղտնիքը կորզելու համար, վերջապէս, եղած հարցափորձին բոլոր մանրամասնութիւնները անծանօթ մնացին։ Սակայն, երբոր մեկնեցան էյրթընի քովէն, յաջողած չէին երեւեր. դէմքերնին ճշմարտապէս վհատում կ'արտայայտէր։

Ուստի, երբոր նաւաստեաց տասնապետն իւր խցիկը տարուեցաւ, նաւաստիք բուռն սպառնալիքներ ըրին անոր անցած ժամանակ։ Իսկ էյրթըն ուսերը թօթվեց, որով առաւել եւս գրգռեցաւ նաւաստեաց կատաղութիւնը, զոր զսպելու համար ձոն Մանկլսի և Կլէնարվանի միջամտութիւնն հարկ եղաւ։

Բայց տիկին Էլէնա չյուսահատեցաւ։ Ուզեց մինչեւ ցվերջ մաքառիլ այն ապա-

ռում սրտի հետ, և հետեւեալ օրն ինքն անձամբ գնաց էյրթընի խցիկն, որպէս զի չնորոգուէին այն անհաճոյ տեսարանք, զոր Ֆոնվիքին տեսքը կը գրգռէր նաեւն տախտակամածէն անցած ժամանակ։

Երկու երկայն ժամեր, բարեսիրտ և քաղցրահամբոյր Սկովտուհին առանձին կեցաւ Ֆոնվիքաց պետին հետ դէմ առ դէմ։ Կլէնարվան, ջղային յուզումէ բռնուած, կը թափառէր խցիկին չուրջը, մերթ որոշելով մինչեւ ցծայր սպառել յայողութեան յոյսերը, մերթ ալ որոշելով կորզել գիւր կինն այն դժնդակ բանակցութենէն։

Բայց այս անգամ, երբոր տիկին Էլէնա երեւցաւ, դէմքը վստահութիւն կ'արտաչընչէր։ Յայողե՞ր էր գթութեան վերջին թելերը չարժել թշուառականին սրտին մէջ և անդ արգիլափակ եղած գաղտնիքը խլել։

Մաք Նապս, որ ամենէն առաջ տեսաւ զայն, չկրցաւ թերեհաւատութեան բնական չարժուում մը զսպել։

Սակայն լուր տարածեցաւ իսկոյն չոգենաւին մէջ թէ նաւաստեաց տաճնապետը վերջապէս գիջեր էր տիկին Էլէնայի թախանձանաց։ Հասյն նաւաստիք, գոգ ելեքտրական մղմամբ, տախտակամածին վրայ գումարեցան, աւելի արագ քան Թոմ Ա.ս-

թինի չչակին ճայնէն որ գիրենք գործողութեան մը կոչէր։

Սակայն Կլէնարվան իւր կնոջ առջև վազեր էր։

—Խօսեցա՞ւ, հարցուց։

—Ո՛չ, պատասխանեց տիկին Էլէնա, բայց, գիջանելով իմ աղաչանաց, էյրթըն կ'ուզէ տեսնել զձեզ։

—Ա՛հ, սիրելի՛ Էլէնաս, յաջողեցա՛ք։

—Կը յուսամ, եգուա՛րդ։

—Խոստում մ'ըրի՛ք, զոր ես պարտաւորիմ հաստատել։

—Միակ խոստում մը, սիրելի՛ս, այսինքըն թէ դուք ձեր բոլոր ազդեցութիւնը գործածելով մեղմացնել տաք այդ տարաբաղդին կրելիք պատիժը։

—Լա՛ւ, սիրելի Էլէնաս։ Թող հի՛մա գայ էյրթըն։

Տիկին Էլէնա իւր խուցը քաշուեցաւ Մարի Կրանթի հետ, և նաւաստեաց տասնապետը քառակուսին տարուեցաւ, ուր նմա կ'սպասէր Լորտ Կլէնարվան։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԻՐԱՒԱԽՈՀՈՒԹԻՒՆ ՄԸ

Երբոր նաւաստեաց տասնապետը Լորտին առջեւը բերուեցաւ, պահապանները մեկնեցան։

—Ինձ հետ խօսի՞լ ուզեր էք, էյրթը՛ն, ըսաւ Կլէնարվան։

—Այո՛, Միլըրտ, պատասխանեց նաւաստեաց տասնապետը։

—Միայն ի՞նձ հետ։

—Այո՛, բայց կը կարծեմ որ եթէ Մաք Նապս հազարապետն և պարոն Բականէլ ալ ներկայ գտնուին, լաւագոյն կը լինի։

—Որո՞յ համար։

—Ինձ համար։

Էյրթըն հանդարտութեամբ կը խօսէր։ Կլէնարվան ուշադիր աչքով մ'անոր երեսը նայեցաւ, յետոյ հրաւէր ղրկեց Մաք Նապսի և Բականէլի, որ իսկոյն եկան։

—Խօսեցէ՛ք, ըսաւ Կլէնարվան Էյրթընի, երբոր իւր երկու բարեկամք նստան քառակուսիին սեղանին առջեւ։

Էյրթըն, քանի մ'երկվայրկեան խորհելէ յետոյ, ըսաւ.

—Մի՛ըրտ, սովորութիւն է որ ամեն

պայմանագրութիւնք կամ իրաւախոհութիւնք վկայից առջեւ կը կնքուին. ուստի ես ալ այս պատճառաւ խնդրեցի որ Պ. Մաք Նապս և Պ. Բականէլ ներկայ գտնուին, վասն զի, ճշդիւ խօսելով, պայման մը պիտի առաջարկեմ ձեզ։

Կլէնարվան, վարժուած լինելով էյրթընի ձեւերուն, բնաւ չպատեց յօնքերը, թէև անոր և իւր միջեւ պայմանագրութիւն մը տարօրինակ կը թուէր իրեն։

—Ի՞նչ պայման է, ըսաւ։

—Աւասիկ, պատասխանեց Էյրթըն։ Դուք կը փափաքիք ինչ ինչ մանրամասնութիւններ իմանալ ինձմէ, որք կրնան օգտակար լինիլ ձեզ։ Ես ալ կը փափաքիմ ինչ ինչ օգուտներ ստանալ ձեզնէ, որք ինձ համար թանկագին են։ Ստանալ և փոխարէնն տալ, Միլը՛րտ, կ'ընդունի՞ք թէ ոչ։

—Ի՞նչ են այդ մանրամասնութիւնք, հարցուց Բականէլ հետաքրքրաբար։

—Ո՛չ, յարեց Կլէնարվան, ի՞նչ են այդ օգուտք։

Էյրթըն, գլուխը թեթեւ մը խոնարհեցնելով՝ ցոյց աւաւ թէ կը հասկնար Կլէնարվանի դիտած նուրբ զանազանութիւնը։

—Աւասիկ, ըսաւ, իմ պահանջած օգուտ-

ներս։ Դուք դիս անգլիական իշխանութեանց ձեռքն յանձնելու դիտաւորութիւն ունիք, այնպէս չէ՞, Միլրտ։

—Այո՛, էյրթըն, և արդարութիւն է։

—Ձեմ ժխտեր, պատասխանեց էյրթըն հանդարտութեամբ։ Ըսել է թէ քնաւ չպիտի՞ հաճիք ազատութիւն շնորհել ինձ։

Կլէնարվան վարանեցաւ պատասխանել այս բացորոշ հարցման։ Թերեւս իւր տալիք պատասխանէն կախեալ էր Կրանթ նաւապետին բաղդը։

Սակայն՝ վերջապէս արդարութեան նկատմամբ ունեցած պարտականութեան զգացումն յաղթեց։

—Ո՛չ, էյրթըն, չեմ կրնար ազատութիւն շնորհել ձեզ, ըսաւ։

—Ես ալ չեմ խնդրեր, պատասխանեց սիգաբար նաւաստեաց տասնապետն։

—Ի՞նչ կ'ուզէք ուրեմն։

—Միջին վիճակ մը, Միլո՛րտ, ընդ միջ կախաղանին՝ որ կ'սպասէ ինձ, և ազատութեան՝ զոր չէք կրնար շնորհել ինձ։

—Ո՞րն է։

—Ձիս խաղաղականին անմարդաբնակ կղզիներէն միոյն մէջ թողուլ՝ կենաց առաջին պիտոյքներով։ Ես կրցածիս չափ կ'սպրիմ անդ, և կ'սպասխարեմ, եթէ ժամանակ ունենամ։

Կլէնարվան պատրաստեալ չլինելով այս առաջարկի, իւր երկու բարեկամաց նայեցաւ, որք լուռ նստած էին։ Ջանի մը վայրկեան խորհելէ յետոյ՝ պատասխանեց։

—Էյրթը՛ն, եթէ ձեր այդ խնդիրը չնորհեմ ձեզ, դուք ալ իմ գիտնալ ուզած բաներս ամբողջապէս կը յայտնէ՞ք ինձ։

—Այո՛, Միլրտ, այսինքն ինչ որ գիտեմ Կրանթ նաւապետին Ամբլեանիայի վրայ։

—Բովանդակ ճշմարտութի՞ւնը։

—Բովանդակ։

—Բայց ո՞վ պիտի երաշխաւորէ...

—Ո՛հ, կը հասկնամ ձեր կասկածը, Միլո՛րտ։ Զարագործի մը խօսքին չվստահուիր։ ճշմարիտ է։ Բայց ի՞նչ պիտի ընէք գործին վիճակն այս է։ կ'ընդունիք կամ կը մերժէք։

—Ես պիտի հաւատամ ձեզ, էյրթը՛ն, ըսաւ Կլէնարվան պարզապէս։

—Եւ իրաւունք պիտի ունենաք, Միլորտ։ Մանաւանդ որ, եթէ խաբեմ զձեզ, կրնաք միշտ վրէժ առնուլ։

—Ի՞նչպէս։

—Գալով զիս առնլով այն անմարդի կղզիէն, ուստից չպիտի կրնամ փախչիլ։

Էյրթըն ամեն բանի պատասխան ունէր։ Ամեն դժուարութեանց առաջքը կ'առ-

նուր. անհերքելի փաստեր կը մատակարա-
րէր իրեն դէմ։ Իւր առաջարկին վրայ ան-
վիճելի ուղղութեամբ բանակցելու անկեղծ
երեւոյթ մ'ուներ։ Անհնարին էրաւելի կա-
տարեալ վստահութեամբ չհաւատալ իրեն։
Եւ սակայն անկեղծութեան ճանբուն մէջ
աւելի առաջ երթալու հնարը գտաւ։

—Միլորտ և տիա՛րք, ըսաւ, կ'ուզեմ որ
համոզուիք սա բանի վրայ. այսինքն թէ ես
թուղթ կը խաղամ սեղանի վրայ։ Չեմ ու-
զեր ձեզ խաբել, և ահա նոր փորձ մ'ալ
պիտի տամ ձեզ իմ անկեղծութեան։ Ես
ուղղութեամբ կը վարուիմ, վասն զի վստահ
եմ ձեր ուղղամտութեան վրայ։

—Խօսեցէք, Էյրթը՛ն, պատասխանեց
Կլէնարվան։

—Միլո՛րտ, դեռ խօսք չառի ձեզնէ իմ
առաջարկս ընդունելնուդ վրայ, և սակայն
չեմ վարանիր ըսել ձեզ թէ ես քիչ բան
գիտեմ Հարրի Կրանթի վրայ։

—Ինչ բա՛ն, գոչեց Կլէնարվան։

—Այո՛, Միլորտ, ձեզ հաղորդելիք տե-
ղեկութիւններս ինձ վերաբերեալ են, իմ
անձիս վրայ են, և շատ չեն օգներ ձեր կո-
րուսած հետքը գտնելու։

Բուռն յուսախաբութիւն մը նկարուե-
ցաւ Կլէնարվանի և հազարապետին դիմաց
վրայ։ Կը կարծէին թէ նաւաստեաց տա-

նապետին քով կարեւոր գաղտնիք մը կար,
իսկ նա կը խոստովանէր թէ իւր ընելիք
յայտնութիւնք գրեթէ ոչինչ են։ Իսկ բա-
կանէլ անզգած կը կենար։

Ինչ և իցէ, Էյրթընի այս խոստովանու-
թիւն, որ կը մատներ զայն առանց երաշ-
խաւորութեան, զարմանալի կերպիւ չար-
ժեց ունկնդրաց սիրտը, մանաւանդ երբոր
նաւաստեաց տասնապետն աւելցուց իբր
եզրակացութիւն.

—Ահա իմացաք, Միլորտ, առաջարկս
նուազ օգտակար է ձեզ՝ քան ինձ։

—Հոգ չէ, պատասխանեց Կլէնարվան,
կ'ընդունիմ ձեր առաջարկն, Էյրթը՛ն, եւ
խօսք կուտամ ձեզ որ խաղաղական Ովկէա-
նի կղզիներէն մին հանեմ զձեզ։

—Լա՛ւ, Միլորտ, պատասխանեց նա-
ւաստեաց տասնապետն։

Այս տարօրէն մարդ գոհ եղա՞ւ այս ո-
րոշումէ. կրնար կասկածուիլ, վասն զի իւր
անայլայլակ դէմքը բնաւ չզգածուեցաւ։ Կը
թուէր թէ ուրիշի մը համար կը բանակցէր
քան թէ իրեն։

—Պատրաստ եմ պատասխանել ձեր հարց-
մանց, ըսաւ։

—Հարցմունք չունինք ձեզ ընելիք, ըսաւ
Կլէնարվան։ Ինչ որ գիտէք՝ զայն ծանու-
ցէք մեզ, Էյրթը՛ն, յայտնելով նախ թէ
ո՞վ էք դուք։

—Տիա՛րք, պատասխանեց Էյրթըն, ես իսկապես Թոմ Էյրթըն եմ, Պրինձէյի նաւատեաց տասնապետը։ Հարրի Կրանթի նաւով մեկնեցայ Կլասկովէն 1861 մարտ 12 ին։ Տասն–չորս ամիս խաղաղականի ծովերը շրջեցանք ի միասին, դիպան տեղ մը փնտռելով սկովտիական գաղութ մը հիմնելու համար։ Հարրի Կրանթ մեծ բաներ ընելու յարմար մարդ մ'էր, բայց յաճախ ծանր վիճաբանութիւնք կը ծագէին մեր մէջ։ Նորա բնաւորութիւնը չէր յարմարեր ինձ. վասն զի ես չեմ կրնար թեքիլ։ Արդ, Հարրի Կրանթի հետ, երբոր միաքը բան մը դնէ, ընդդիմութիւն անհնարին է։ Երկաթէ մարդ մ'է թէ՛ իրեն և թէ՛ այլոց համար։ Բայց և այնպէս համարձակեցայ ընդվզիլ, և նաւաստիներն ալ ինձ հետ ապստամբեցնելով նաւուն հրամատարութիւնը ձեռքս անցունելու փորձ ըրի։ Յանցա՞նք էր գործածս թէ ոչ, չեմ գիտեր։ Ինչ և իցէ, Հարրի Կրանթ չվարանեցաւ, և 1862 ապրիլ 8 ին Աւստրալիոյ արեւմտեան ծովեզրն հանեց զիս։

—Աւստրալիո՛յ, ըսաւ հազարապետն ընդմիջելով Էյրթընի պատմութիւնն. ըսել է թէ դուք անոր Քալլավոյ հանդիպելէն առաջ արտաքսուած էք Պրինձէյէն. վասն զի իւր վերջին լուրերը Քալլավոյէն թուագրեալ են։

—Այո՛, պատասխանեց նաւաստեաց տասնապետն, որովհետեւ իմ նաւուն մէջ եղած ժամանակս Քալլավոյ չհանդիպեցանք. և եթէ Բատտի Օ՛Մուրի ագարակին մէջ Քալլավոյի խօսք ըրի ձեզ, ձեր ըրած պատմութենէն իմացած էի զայդ մանրամասնութիւն։

—Շարունակեցէք, Էյրթո՛ն, ըսաւ Կէնարվան։

—Ուստի զիս լքեալ գտայ գրեթէ ամայի ծովեզրի մը վրայ, քսան մղոն հեռի Աւստրալիոյ Բէրթ մայրաքաղաքին զգաստարաններէն։ Երբոր ծովեզրին վրայ կը թափառէի, Բէրթէն փախչող գոնվիքաց հրոսախմբի մը հանդիպելով՝ անոնց հետ միացայ։ Թոյլ տուէք ինձ, Միլըր՛տ, լռութեամբ անցնիլ երկուք ու կէս տարի վարած կեանքս։ Գիտցէք միայն թէ փախստեայ գոնվիքներուն պետ եղայ Պէն Ճոյիս անուամբ։ 1864 սեպտեմբեր ամսոյ մէջ Իւլանտացւոյն ագարակը գնացի, և իբրեւ ծառայ ընդունուեցայ անդ իմ բուն Էյրթըն անուամբս։ Անդ առթի մը կ'սպասէի նաւ մը ձեռքս անցնելու։ Իմ գերագոյն նպատակս էր։ Երկու ամիս յետոյ Տըֆֆոն հոն հասաւ։ Երբոր դուք ագարակն այցելիք, Կրանթ նաւապետին պատմութիւնն ըրիք. յայնժամ ես ալ իմացայ չգիտցածներս,

այսինքն Պրէնէնէյի Քալլավոյ հանդիպիլը, 1862 յունիսէն թուագրեալ վերջին լուրերը, ծովէն ելած գրութեան գործը, նաւուն կորուստը երսուն-եօթներորդ զուգահեռականին մի կէտին վրայ, և վերջապէս այն կարեւոր պատճառներն, որովք պարտաւորուած էիք Աւստրալիոյ ցամաք երկրին մէջ որոնել զՀարրի Կրանթ: Զվարանեցայ, միտքս դրի ձեռքս անցունել զՏընէտն, աքանչելի չոգենաւ մը, որ Անգլիոյ ծովային զօրութեան ամենէն արագընթաց չոգենաւները կը գերազանցէր: Բայց ծանր վնասներ ունէր նորոգելիք: Ուստի թող տուի որ Մէլպուրն երթար, և ես ձեր քով մնայ նաւաստեաց տասնապետի բուն հանգամանօքս, յանձն առնելով առաջնորդել ձեզ նաւաբեկութեան թատերավայրը, զոր դիտմամբ Աւստրալիոյ արեւելեան ծովեզերաց վրայ դրի: Այսպէս առաջնորդեցի ձեր արշաւանաց վիքթորիոյ գաւառին մէջէն, մերթ հետեւելով ի հեռուստ Քոնվիքաց հրոսախմբիս, մերթ ալ անոր առջեւէն երթալով: Իմ մարդիկս անօգուտ ոճիր մը գործեցին ի Քամբէն-Պրիճ, որովհետեւ Տընէտն, ծովեզրն հասնելէ յետոյ, չէր կրնար պրծիլ ձեռքէս, և անոր միջոցաւ տէր կը լինէի Ովկէանի: Այսպէս առաջնորդեցի ձեզ անկասկած մինչև

ի Մնուի-Րիվըր: Զիանն և եզինք հետզհետէ տապաստ ընկան կատրոլոբիումով թունաւորեալ: Սայլը Մնուիի մօրուտներուն մէջ խրեցի: Իմ խնդրանօքս . . . : Բայց գիտէք ծնացեալը, Միլ'րտ, և կրնաք հաւաստի լինիլ թէ, առանց Պ. Բալանէլի մտազբաղութեան, այժմ ես տէր եղած էի Տընէտի: Այս է իմ պատմութիւնս, տիա'րք: Իմ յայտնութիւնք դժբաղդաբար չեն կրնար զձեզ Հարրի Կրանթի հետոց վրայ ձգել, և կը տեսնէք որ ինձ հետ իրաւախոհութեան մտնելով՝ ձախող գործ մ'ըրիք:

Էյրթըն լռեց, թեւերը խաչաձեւ կուրծին վրայ դրաւ ըստ սովորութեան և սպասեց: Կլէնարվան և ընկերք լուռ կեցած էին: Կ'զգային թէ բովանդակ ճշմարտութիւնը խօսուեցաւ այդ տարօրինակ չարագործէ: Տընէտի գրաւումն իւր կամքէն անկախ պատճառով մը վրիպած էր: Իւր համախոհք Թուոֆոլտ-Պէյի ծովեզրն եկած էին, ինչպէս կ'ապացուցանէր Քոնվիքի հին թիկնոցակը, զոր Կլէնարվան գտած էր: Անգ, ըստ հրամանի իրենց պետին, չոգենաւը դիտեր էին, և վերջապէս ձանձրանալով ընդունայն սպասելէ, վերստին իրենց ապատակի արհեստը գործել սկսեր էին, կողոպտելով և հրկիզելով հարաւային Նոր-Կալէսի դաշտերը:

Հազարապետը, Պէլճանէյի վերաբերեալ Թուրականները ճշդելու համար, վերստին ձեռք առաւ հարցաքննութիւնը։

—Ըսել է թէ, հարցուց նաւաստեաց տասնապետին, 1862 ապրիլ 8ին հանուեցաք դուք Աւստրալիոյ արեւմտեան ծովեզրը։

—Ճշդիւ, պատասխանեց Էյրթըն։

—Գիտէ՞ք ի՛նչ էին յայնժամ Հարրի Կըրանթի դիտաւորութիւնները։

—Տարտամ կերպիւ։

—Խօսեցէք, Էյրթը՛ն, ըսաւ Կլէնարվան, ամենադոյզն նշան մը կրնայ անոր հետքը ցուցնել մեզ։

—Աւասիկ ինչ որ կրնամ ըսել ձեզ, Միլո՛րտ, պատասխանեց նաւաստեաց տասնապետը։ Կրանթ նաւապետ միտքը դրած էր այցել զՆոր-Զելանտա։ Իւր ծրագրին այս մասը չգործադրեցաւ երբոր ես նաւուն մէջ էի։ Ուստի անհնարին չէ որ Պէլճանէյ, Քալէվոյէն մեկնելէ յետոյ, եկած լինի Նոր-Զելանտայի ծովեզերքն։ Այս բանը կը համաձայնի 1862 յունիս 27 թուականին հետ, զոր ծովէն ելած թուղթը նշանակած է եռակայմին նաւարեկման։

—Յայտնապէս, ըսաւ Բականէլ։

—Բայց, ըսաւ Կլէնարվան, թուղթին վրայ մնացած կիսակտուր բառերէն ոչ մին կրնար պատշաճիլ Նոր-Զելանտայի։

—Անդոր չեմ կրնար պատասխան մը տալ, ըսաւ նաւաստեաց տասնապետը։

—Լա՛ւ, Էյրթըն, ըսաւ Կլէնարվան։ Դուք բռնեցիք ձեր խօսքը, ես ալ իմս պիտի բռնեմ։ Պիտի որոշենք այժմ թէ խաղաղական Ովկիանոսի ո՛ր կղզւոյն մէջ պիտի թողունք զձեզ։

—Ո՛հ, փոյթ չէ ինձ, Միլո՛րտ, պատասխանեց Էյրթըն։

—Վերադարձէք ձեր խցիկն, ըսաւ Կլէնարվան, և մեր որոշման սպասեցէք։

Նաւաստեաց տասնապետը մեկնեցաւ ընդ հսկողութեամբ երկու նաւաստեաց։

—Այս սրիկայ կրնար մարդ մը լինիլ, ըսաւ հազարապետն։

—Այո՛, պատասխանեց Կլէնարվան. կորովի և հանճարեղ բնութիւն մ'է։ Յաւալի է որ իւր կարողութիւնք ի չարն ուղղուած են։

—Բայց Հարրի Կրա՞նթ։

—Շատ կը վախնամ որ յաւիտենապէս կորուսեալ է։ Խե՛ղճ տղայք, ո՞վ կրնայ ըսել իրենց հօրն ո՛ւր լինիլն։

—Ես, պատասխանեց Բականէլ, այո՛, ես։

Նշմարուած էր հարկաւ, թէ աչխարհագիրն, որ սովորաբար այնչափ չատախօս, այնչափ անհամբեր էր, հազիւ մէկ երկու

խօսք ըրեր էր էյրթընի հարցաքննութեան միջոցին։ Բայց արտասանած վերջին խօսքը շատ խօսք կ'արժէր, ուստի մէկէն ի մէկ վեր ցատկեցուց զԿլէնարվան։

—Դո՛ւք, գոչեց, դո՛ւք, Բականէլ, գիտէ՞ք ո՛ւր է Կրանթ Նաւապետն։

—Այո՛, որչափ որ հնարին է գիտնալ, պատասխանեց աշխարհագիրն։

—Ինչէ՞ն գիտէք։

—Ծովէն ելած այն յաւիտենական գրուեթենէն։

—Ա՛հ, ըրաւ հազարապետը կատարեալ թերեհաւատութեան ձայնիւ։

—Մտիկ ըրէք նախ, Մա՛ք Նապս, ըսաւ Բականէլ, և ապա թոթվեցէք ձեր ուսերը։ Մինչեւ ցարդ չուզեցի խօսիլ, վասն զի չպիտի հաւատայիք ինձ, մանաւանդ անօգուտ ալ էր։ Բայց այժմ կը խօսիմ, որովհետեւ էյրթընի կարծիքն ալ եկաւ ճշդիւ ուժ տուաւ իմ կարծեաց։

—Ըսել է թէ Նոր-Զելանտա՞... հարցուց Կլէնարվան։

—Լսեցէք և ապա դատեցէք, պատասխանեց Բականէլ։ Առանց պատճառի չգործեցի ես այն սխալն որ վրկեց զմեզ։ Երբոր Կլէնարվան տուն կուտար և ես կը գրէի զայն նամակ, «Զելանտա» բառը ի՛նչ հատեցնէր ուղեղս և ահաւասիկ պատճառը։ Կը յիշէք որ երբ սայլին մէջ էինք, Մաք Նապս Քոնվիքաց պատմութիւնն ըրաւ տիկին Էլէնայի, և «Աւստրալիական և Զելանտական Կազէթ» լրագրին մի թիւը տուաւ, որ Քամտէն Պրիճի արկածը կը պատմէր։ Այդ երբոր ես նամակը կը գրէի, լրագրին թերթը գետինն ինկած էր և այն կերպիւ ծալուած, որ նորա անուան երկու վանկերը միայն կը տեսնուէին։ Այն երկու վանկերն էին Էլանթ։ Յանկարծ լոյս ծագեցաւ մտքիս մէջ։ Էլանթ ծովէն ելած գրուեթեան մէջի բառերէն մին էր. բառ մը, զոր մեք ցայնժամ է ցամաք թարգմանած էինք, բայց Զելանթ յատուկ անուան մասը պարտ էր լինիլ

—Հէ՛, ըրաւ Կլէնարվան։

—Այո՛, յարեց Բականէլ խորին համոզմամբ, այս մեկնութիւն ի սկզբան վրիպած էր միտքս, և գիտէ՞ք ինչո՛ւ։ Վասն զի իմ խուզարկութիւնքս բնականաբար Ֆրանսերէն օրինակին վրայ կատարուած էին, միւսներէն աւելի կատարեալ լինելուն պատճառաւ, և այս կարեւոր բառ չկար անոր մէջ։

—Օ՛, օ՛, ըրաւ հազարապետը, չափազանց երեւակայութիւն է այդ, Բականէ՛լ, և դուք քիչ մը դիւրաւ կը մոռնաք ձեր նախընթաց խորհրդածութիւններն և հաստատ հետեւութիւնները։

—Օ՛ն, հազարապետ, պատրաստ եմ պատասխանել ձեզ։

—Ցայնժամ ի՞նչ կը լինի ձեր առաջին բառն, ըսաւ Մաք Նապս։

—Ինչ որ էր առաջ, «աւսթրալ» (հարաւային) երկիրները միայն կը նշանակէ։

—Լաւ, և այն ենթէ վա՞նկն, որ առաջին անգամ ենթիէն բառին արմատն հանարուեցաւ և երկրորդ անգամ ենթիէն բառին արմատն։

—Երրորդ և վերջին անգամ ալ ենթիանո (չքաւորութիւն) բառին առաջին վանկը կը լինի, պատասխանեց Բականէլ։

—Եւ ո՞նը՞ն, գոչեց Մաք Նապս, տակաւին ո՞նը՞նան (ցամաք երկիր) կը նշանակէ՞։

—Ո՛չ, վասն զի Նոր-Զելանտա կղզի մ՛է։

—Ուրե՞մն . . . հարցուց Կլէնարվան։

—Սիրելի՛ Լորտս, պատասխանեց Բականէլ, ծովէն ելած գրութիւնն իմ երրորդ մեկնութեանս համեմատ թարգմանեմ ձեզ, և դատեցէք։ Բայց երկու դիտողութիւն կ՛ընեմ ձեզ։ 1· Հնար եղածին չափ ժողցէք նախորդ մեկնութիւններն և առջի մտահոգութեանց ամենն ալ վանեցէք ձեր մտքէն։ 2· Քանի մը բառերու իմաստը բռնադատեալ պիտի թուի ձեզ, և կարելի է որ լաւ չթարգմանեմ, բայց բնաւ կարեւորութիւն չունին, ի մէջ այլոց ականէ (հոգեվար) բառն, որ կը խայթէ ականջս, բայց չեմ կրնար ուրիշ կերպ մեկնել։ Մանաւանդ որ Ֆրանսերէն գրութիւնն է իմ մեկնութեանս հիմ եղողն, և ի՛ մտառնաք որ Անգլիացիէ մը գրուած է, որուն Ֆրանսերէն լեզուին յատկութիւնները չեն կրնար շատ ընտանի լինիլ։ Զայս հաստատելէ յետոյ կ՛ակսիմ։

Եւ Բականէլ մէն մի վանկերն յամրաբար յօդելով կարդաց հետեւեալը.

—1862 յունիս 27 ին, Լաւրովէ Պրիանիա եռակայմ երկար ոճեվըրէ (ականի) մ՛զինի ընկղմեցաւ հարաւային (աւսթրալ) ծովերուն մէջ Նոր-Զելանտայէ —անգլիերէն Զիլանտ— ծովափանց վրայ։ Իրեւ նաւապետ և կրանդ նաւապետ կրցին ցամաք ելնել։ Անդ շրջանակարար որս լինելով անագորոն չհաղորդեցին, ծովը նետեցին ձայն ջրհորդի երկայնութեան . . . աստիճանին և լայնութեան 37° 11՛ աստիճանին տակ։ Օգնութեան եկէք իրենց, ապա թէ ոչ, կ՛բռնաբռնեն»

Բականէլ կանգ առաւ, ըրած մեկնութիւնն ընդունելի էր։ Բայց որովհետեւ նախորդներուն չափ ճշմարտանման էր, կրնար նաև սխալ լինիլ անոնց պէս։ Ուստի Կլէնարվան և հազարապետը չուզեցին վիճաբանութեան ենթարկել զայն։ Սակայն, ո-

բովհետեւ Պլիմուխի հետքը չէր գտնուած ոչ Բաթագոնիոյ և ոչ Ափտրալիոյ ծովեզերաց այն կէտերուն վրայ, որք երասուն-եօթներորդ զուգահեռականէն կը կտրուին, հաւանականութիւնք Նոր-Զելանտայի նըպաստաւոր էին։

Բականէլի այս դիտողութիւն խոր ազդեցութիւն մ'ըրաւ իւր բարեկամաց մտքին վրայ։

«Այժմ, Բականէ՛լ, ըսաւ Կէնարվան, կը հաճի՞ք ըսել ինձ թէ ինչո՞ւ հաճար երկու ամէն ի վեր ծածուկ պահեցիք զայդ մեկնութիւն։

—Վասն զի չէի ուզեր դարձեալ սին յոյսեր տալ ձեզ։ Մանաւանդ որ Օքլանտ կ'երթայինք, ճշդիւ ծովէն ելած գրութեանց նշանակած լայնութեան կէտը։

—Բայց այն ժամանակէն ի վեր, երբոր այդ ճանբէն դուրս ընկանք, ինչո՞ւ չյայտնեցիր զայդ։

—Վասն զի, որչափ և ուղիղ լինի այս մեկնութիւն, չկրնար նպաստել նաւապետին ազատման։

—Ի՞նչ պատճառաւ, Բականէ՛լ։

—Այս պատճառաւ, որ եթէ Հարրի Կրանթ Նոր-Զելանտայի ծովեզրն ընկած է, երկու տարիէ ի վեր երեւան չելնելէն կը հասկցուի թէ կա՛մ զոհ եղած է նաւաբեկութեան, կա՛մ Զելանտացւոց ձեռքն ընկած։

—Ուրեմն ձեր կարծիքն է . . . հարցուց Կէնարվան։

—Թէ կարելի է թերեւս նաւաբեկութեան հետքը գտնել, բայց Պլիմուխի նաւաբեկեալք կորուսած են անդարձաբար։

—Լռութիւն պահենք այս ամենուն վրայ, բարեկա՛մք, ըսաւ Կէնարվան, և թոյլ տուէք ինձ ընտրել այն ժամանակն, որ յարմար թուի գուժել զայս լուր Կրանթ նաւապետին որդւոց։»

ԳԼՈՒԽ ԺԹ

ԱՂԱՂԱԿ ՄԸ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄԷՋ

Նաւազք իմացան թէ Կրանթ նաւապետին վիճակը չէր լուսաւորուած էրթիլնի երած յայտնութեամբք։ Խոր սրտաբեկութիւն տիրեց չոգենաւին մէջ, վասն զի մեծ յոյս դրած էին Պլիմուխի նաւաստեաց նպատակին վրայ, և չէր մրցած այնպիսի տեղեկութիւն մը տալ որ կարենար Պլիմուխի հետոց վրայ դնել զՏըխան։

Ուստի չոգենաւին բռնած ճանբան անփոփոխ պահուեցաւ։ Կը մնար որոշել այն կղզին՝ ուր պիտի թողուէր էյրթըն։

Բականէլ և Ճոն Մանկլս աչէք անցուցին չոգենաւին քարտէսը։ Ճիշդ երսուն-եօթներորդ զուգահեռականին վրայ կղզեակ մը կը տեսնուէր Մարիա-Թերէզա անուամբ, ամերիկեան ցամաքէն երեք հազար հինգ հարիւր և Նոր-Զելանտայէն ալ հազար հինգ հարիւր մղոն հեռի՝ կորուսեալ ժայռ մը Խաղաղական Ովկեանի մէջ։ Հիւսիսի կողմէ մօտաւորագոյն ցամաքներն էին Բոմբոթու կղզեաց արշիպիղագոսն ընդ պաշտպանութեամբ Ֆրանսայի։ Իսկ հարաւի կողմէ բնաւ ցամաք երկիր կամ կղզի չէր տեսնուեր մինչեւ հարաւային բեւեռին յաւիտենական սառնակոյտն։ Ոչ մի նաւ կը հանդիպէր այդ ամայի կղզեակ, աշխարհի արձադանգներէն ոչ մին կը հասնէր հոն։ Միայն մրրկախոյս թռչուններ դադար կ'ընէին անդ իրենց երկար ուղեւորութեան միջոցին, և չատ քարտէսք չէին իսկ նշանակեր, այդ ժայռ, զոր Խաղաղականի կոհակները կը կոծէին։

Եթէ երկրի վրայ բացարձակ առանձնութիւն մնտռել հարկ լինէր, մարդկային ուղիներէն դուրս ձգուած այդ կղզոյ մէջ կրնար գտնուիլ։ Մանուցին զայս էյրթընի, և յանձն առաւ ապրիլ անդ հեռի իւր նմաններէն, ուստի չոգենաւը Մարիա-Թերեզա կղզեկին ճամբան բռնեց։

Երկու օր յետոյ, ժամ երկուքին, չոգենաւին դիտաւորն իմացուց թէ ցամաք կէտ մը կը տեսնուէր հորիզոնին վրայ։ Մարիա-Թերեզա կղզեակն էր, ցած, երկայն, հազիւ կոհակաց մէջէն դուրս ելած, իբրեւ վիթխարի վիշապաձուկ մը։ Տակաւին երսուն մղոն հեռի էր չոգենաւէն, որուն առաջակոզման հեծանը մէկ ժամու մէջ տասն և վեց հանդոյց (մղոն) արագութեամբ կը կտրէր կոհակները։

Քիչ քիչ կղզոյն կիսադէմն երեւան ելաւ հորիզոնին վրայ։ Արեւը դէպ յարեւմուտ խոնարհելով՝ իւր ճառագայթներով կը կտրատէր անոր անհարթ թերաստուերը։ Տեղ տեղ քանի մը բլրաձեւ գագաթունք կը տեսնուէին ցերեկուան աստղին ճառագայթներէն վարնուած։

Ժամ հինգին, Ճոն Մանկլս թեթեւ ծուխ մը տեսնել կարծեց, որ դէպ յերկինք կ'ելլէր։

«Հրաբո՞ւխ մ'է արդեօք, հարցուց Բականէլի, որ դիտակն աչքին դրած կը զննէր զայդ նոր ցամաք։

—Չեմ գիտեր ի՛նչ ըսեմ, պատասխանեց աչխարհագիրը։ Մարիա-Թերեզա քիչ

ծանօթ կէտ մ'է։ Սակայն, պէտք չէ զարմանալ եթէ ընդծովեայ և հետեւաբար հրաբխային ուռուցմանց ծնունդ լինի իւր ծագումն։

—Բայց յայնժամ, ըսաւ Կլէնարվան, եթէ հրաբխային բորբոքումէ ծնած է, չի՞ վախցուիր որ նմանօրինակ բորբոքմամբ մ'ալ վայրասուզի։

—Շատ հաւանական չէ, պատասխանեց Բականէլ։ Սորա գոյութիւնը քանի մը դարերէ հետէ ծանօթ է, և այս ալ երաշխաւորութիւն մ'է։ Երբոր Յուլիա կղզին երեւան ելաւ Միջերկրականի մէջ, երկար ժամանակ չկեցաւ ջուրին երեսն, և ծնանելէն քանի մ'ամիս յետոյ անհետացաւ եղաւ։»

—Ի՞նչ կարծե՞ս, Ճո՛ն, ըսաւ Կլէնարվան, թէ գիշերէն առաջ կրնանք ցամաքն ելլել։

—Ո՛չ, Միլորա։ Չեմ կրնար մութին մէջ վտանգել զՏընֆան ինձ անծանօթ եղող ծովեզրի մը վրայ։ Կէս չորսի վրայ կը դեգերինք, և վաղ առաւօտ մակոյկ մը կը դրկենք ցամաքն։»

Իրիկուան ժամ ութին, Մարիա-Թերեզա, թէ և հինգ մղոն միայն հեռի էր, երկար սաւառերի մը նման կ'երեւէր, հազիւ տեսանելի։ Տընֆան կը մօտենար միշտ։

Ժամ իննին, բաւական լուսաւոր նշոյլ

մը՝ բոց մը՝ փայլեցաւ մութին մէջ, անշարժ և չարունակեալ։

«Ահա կը հաստատուի հրաբուխ լինելն, ըսաւ Բականէլ ուշադրութեամբ դիտելով։

—Սակայն, պատասխանեց Ճոն Մանկլս, այսչափ մօտէն պէտք էր լսէինք հրաբուխի բորբոքման յարակից ճարճատիւնն, և արեւելեան հովն այնպէսի չհինդ մը չբերեր մեր ականջին։

Արդարեւ, ըսաւ Բականէլ, այս հրաբուխ կը փայլի, բայց չխօսիր։ Ասկէ զատ, կարծես թէ փարոսի լուսոյն պէս ընդհատումներ ունի։

—Իրաւունք ունիք, ըսաւ Ճոն Մանկլս, և սակայն լուսաւոր ծովեզրի մը վրայ չենք։ Ա՛, գոչեց, աւասիկ ուրիշ հրատ մ'ալ, այս անգամ ծովեզրին վրայ։ Նայեցէ՛ք կը չարժի, տե՛ղ կը փոխէ։»

Ճոն չէր սխալեր. նոր հրատ մ'երեւցեր էր, որ մերթ կը նուաղէր և յանկարծ նորէն կը փայլէր։

«Ինչի՞ չկան ուրեմն այս կղզւոյ մէջ, ըսաւ Կլէնարվան»։

—Անշուտ վայրենիներ, պատասխանեց Բականէլ։

—Բայց յայնժամ չենք կրնար աստ թողուլ նաւաստեաց տառնապետն։

—Ո՛չ, չենք կրնար, պատասխանեց հազարապետը, չատ գէշ բնաւայ մ՚ըրած կը լինինք, մինչեւ իսկ վարենիներու։

—Ներեցէք ուրիշ առայի կղզի մը կը փնտռենք, ըսաւ Կէնարվան՝ չկրնալով ծիծաղը բռնել Մաք Նապսի «փափկութեան» վրայ։ Ես կենաց ազատութիւն խոստացայ էյրթընի, և կ՚ուզեմ բռնել խոստումս։

—Անոնք պարագայի մէջ զգոյշ պարտինք կենալ։ Զելանտացիք չարժուն կրակներով նաւերը խարելու խաղաժական սովորութիւնն ունին, ինչպէս ժամանակ մը Բորնուայի բնակիչք։ Մարի-Թերեզայի բնիկներն ալ կրնան ծանօթ լինիլ այդ նենգութեան։

—Հսկող պահանորդներ դիր, գոչեց Ճոն Մանկլը ղեկին քով սպասող քեղեկալ Նաւաստուին, վաղն, արեւածագին, կը տեսնենք մեր ընելիքն։

Ժամ տասն-մէկին ուղեւորք և Ճոն Մանկլը իրենց խուցերը քաշուեցան։ Հսկող նաւաստիք կը ճեմէին չոգենաւին յառաջակողմեան տախտակամածին վրայ։ Իսկ յետակողմը քեղեկալը միայն կար իւր տեղը։

Նոյն պահուն, Մարի Կրանթ և Ռոպէրթ դուռնակին վրայ եկան։

Կրանթ նաւապետին երկու որդիքն, իրենց արմուկովը չոգենաւին կողնոցին յեցած, փոսփորափայլ ծովին և Տընէտինի լուսաւէտ հետքը կը դիտէին տխրութեամբ։ Մարի՝ Ռոպէրթին ապագային վրայ կը խոսկար. Ռոպէրթ ալ իւր քրոջ ապագային վրայ։ Երկուքն ալ իրենց հայրը կը յիշէին։ Ո՞ղջ էր արդեօք այդ պաշտեցեալ հայր. ե՞րբ էր արդեօք ձեռնթափ լինիլ զայն գտնելէ։ Բայց ո՛չ, առանց անոր ի՞նչ պիտի լինէր իրենց կեաքն. առանց անոր ի՞նչ պիտի լինէին իրենք. և արդէն իսկ ի՞նչ եղած կը լինէին իրենք առանց Լորտ Կլէնարվանի, առանց տիկին Էլէնայի։

Պատանեակը տարաբաղդութեամբ հասունցած, կը գուշակէր իւր քոյրն յուզող մտածութիւնները։ Բռնեց Մարիի ձեռքն և ըսաւ։

«Մարի՛, պէտք չէ երբէք յուսահատիլ։ Յիշէ այն խրատները, զոր կ՚ուտար մեզ մեր հայրն. «Արիութիւնն ամեն բանի տեղը կը բռնէ այս աշխարհի մէջ» կ՚ըսէր։ Ուրեմն արիութիւն ունենանք, այն յամառ արիութիւնն, որ զայն ամեն բանէ վերագոյն կ՚ընէր։ Մինչեւ ցարդ դու լինճ համար աշխատեցար, այսուհետեւ ալ ես քեզ համար պիտի աշխատիմ։

—Սիրելի՛ Ռոպէրթս, կը պատասխանէր քոյրը։

—Պէտք է որ բան մ՚իմացնեմ քեզ,

ըսաւ Ռոպէրթ. չե՞ս սրդոլիր, Մարի՛։

—Ինչո՞ւ սրդոլիմ, եղբայրի՛կս։

—Թոյլ կուտա՞ս որ ընեմ։

—Ի՞նչ ըսել կ՚ուզես, հարցուց Մարի սրտատանջ։

—Ջո՛յր իմ, ես նաւաստի պիտի լինիմ։

—Պիտի բաժնուի՞ս ինձմէ, գոչեց աղջիկը սեղմելով իր եղբօր ձեռքն։

—Այո՛, քոյր. նաւաստի պիտի լինիմ հօրս պէս։ Ձոն Մանկլըի պէս. Մարի՛, սիրելի՛ Մարիս։ Ձոն նաւապետ յուսաբեկ չէ եղած։ Դու ալ ինձ պէս վստահութիւն պիտի ունենաս անոր անձնուիրութեան վրայ։ Նա պիտ լաւ նաւաստի մը, ճարտար նաւաստի մը պիտի ընէ. խօսք տուաւ ինձ, և մինչեւ այն ժամանակ մեր հայրն ի միասին պիտի փնտռենք։ Ըսէ ինձ թէ կ՚ուզե՞ս զայս, քո՛յր իմ։ Ինչ որ մեր հայրը պիտի ընէր մեզ համար, մեր պարտքն է, գոնէ իմ պարտքս է ընել անոր համար։ Իմ կեանքս նպատակ մ՚ունի, որուն կը պարտիմ բոլոր ուժերս. փնտռել, փնտռել միշտ զայն որ մեզ չպիտի թողուր երբէք. սիրելի՛ Մարիս, ո՛րչափ բարեսիրտ էր մեր հայրն։

—Եւ ո՛րչափ ազնիւ, ո՛րչափ առատաձիրտ, աւելցուց Մարի։ Գիտե՞ս Ռոպէրթ, մեր երկրին վաճառքերէն մին էր արդէն, և

եթէ բաղդը չէ՞ր ուզեր զայն իր ընթացքին մէջ, մեր երկրին ականաւոր մարդոց կարգը պիտի դասուէր։

—Ի՞նչպէս չեմ գիտեր, ըսաւ Ռոպէրթ։

Մարի կրանթ սրտին վրայ սեղմեց զԻռլէրթ։ Պատանեակն զգաց որ արտասուաց կայլակներ կը վիժէին իր ճակատն ի վար։

«Մարի՛, Մարի՛, գոչեց, թող ի՛նչ կ՚ուզեն ըսեն, մեր բարեկամները, թող լուռ կենան. ես կը յուսամ տակաւին և պիտի յուսամ միշտ։ Իմ հօրս պէս մարդ մ՚իր պաշտօնը չկատարած չմեռնիր։

Մարի կրանթ չկրցաւ պատասխանել։ Հեծութիւնք կը խեղդէին զայն։ Հազարաւոր պատմութիւնք կը բախէին սրտին մէջ երբոր կը մտածէր թէ նոր ձեռնարկներ պիտի լինէին իր հայրը գտնելու համար, և թէ երիտասարդ նաւապետին անձնուիրութիւնն անսահման էր։

«Պարոն Ձոն կը յուսայ տակաւին, հարցուց Մարի։

—Այո՛, պատասխանեց Ռոպէրթ։ Եղբայր մ՚է նա որ երբէք չպիտի թողու զմեզ։ Ես նաւաստի պիտի լինիմ, քո՛յր, նաւաստի պիտի լինիմ հայրս անոր հետ գտնելու համար։ Կ՚ուզե՞ս։

—Անշուշտ կ՚ուզեմ, պատասխանեց Մարի, բայց կրնա՞նք զատուիլ իրարմէ, մրմնջեց մանկամարդուհին։

—Դու մինակ չպիտի մնաս, Մարի՛, ես գիտեմ։ Ձոն բարեկամ ըսաւ ինձ։ Տիկին Էլէնա չպիտի թոյլ տայ քեզ որ իրմէ բաժնուիս։ Դու կին ես. կրնաս և պարտիս ընդունիլ անոր բարերարութիւնները։ Մերժելն ապերախտութիւն է։ Բայց այր մը, հայրս հարիւր անգամ ըսած է ինձ, այր մը պարտի իւր բաղդն ինքնին չինել։

—Բայց ի՞նչ պիտի ընենք մեր Տրնտէլի սիրելի տունն, որ լի է յիշատակներով։

—Պիտի պահենք, քուրիկս։ Այս ամենը կարգադրած է և յոյժ լաւ կարգադրած մեր Ձոն բարեկամին, ինչպէս նաև Լորտ Կլէնարվան։ Քեզ Մալքոմի դղեակին մէջ պիտի պահէ իւր աղջկան պէս։ Լորտն ըսեր է զայս Ձոն բարեկամիս, և Ձոն բարեկամս ալ կրկնեց ինձ։ Դու անդ իրրև քոյր տանդ մէջ պիտի լինիս, մեր հօր վրայ խօսակցելու մարդ պիտի ունենաս մօտդ, սպասելով որ Ձոն և ես օր մը գտնենք ու քեզ բերենք զայն։ Ա՜հ, ի՜նչ գեղեցիկ օր պիտի լինի այն, գոչեց Ռոպէրթ, որոյ ճակատը կը ճառագայթէր խանդով։

—Եղբա՛յր իմ, սիրելի՛ եղբայր իմ, պատասխանեց Մարի, ո՛րչափ ուրախ պիտի լինէր մեր հայրիկն, եթէ կարենար լսել այդ խօսքերդ։ Ո՛րչափ կը նմանիս անոր, սիրելի՛ Ռոպէրթս, մեր ամենասիրելի հօր։ Երբոր մեծնաս, բոլորովին անոր պիտի նմանիս։

—Աստուած լսէ քեզ, Մարի՛, ըսաւ Ռոպէրթ, որդիական սուրբ հպարտութեամբ մը կարմրելով։

—Բայց ի՞նչպէս պիտի հատուցանենք մեր պարտքն առ Լորտ և տիկին Կլէնարվան, ըսաւ Մարի Կրանթ։

—Ո՛հ, դժուարին չէ, գոչեց Ռոպէրթ իւր մանկական վստահութեամբ։ Կը սիրենք զանոնք, կը պատուենք, կը հարգուրենք. և օր մ'ալ, առաջին առթիւ, կեանքս կը զոհեմ անոնց համար։

—Ընդհակառակն, ապրէ՛ անոնց համար, գոչեց աղջիկն համբուրելով իւր եղբօր ճակատը։ Նոքա զայս կը սիրեն առաւել, նոյնպէս ես ալ։»

Յետոյ անբացատրելի խոկմանց մէջ ընկղմելով, նաւապետին երկու որդիքն իրարու կը նայէին գիշերուան տարտամ մութին մէջ։ Սակայն մտովին կը խօսակցէին միմեանց հետ, հարցումներ կ'ընէին և կը պատասխանէին միմեանց։ Խաղաղ ծովը կ'որորուէր երկար ծածանմամբք, և չոգենաւին պատուտակը լուսափայլ յորձանք մը կը յուզէր ստուերին մէջ։ Յայնժամ տարօրինակ և իսկապէս գերբնական դէպք մը պատահեցաւ։ Եղբայր և քոյր, այն մագնի-

սական հաղորդակցութեամբ, որ սիրտերն իրարու հետ կը կապէ խորհրդապէս, նոյն վայրկեանին մի և նոյն գգայական պատրանքը կրեցին միահաղոյն։ Ծովուն փոփոխապէս մթին և փայլուն կոհակաց մէջէն Մարի և Ռոպէրթ ձայն մը լսել կարծեցին, որոյ խոր և սխուր աւաչն անոնց սրտին բոլոր թելերը ցնցեց։

«Առի՛ս, առի՛ս, կը գոչէր ձայնը։

—Մարի՛, ըսաւ Ռոպէրթ, լսեցի՞ր, լսեցի՞ր։»

Եւ նաւուն կողնոցին վրայ տնկուելով, և գլուխնին դուրս երկնցնելով գիշերին խորերը զննեցին։

Բայց բան մը չտեսան, բաց ի մութէն՝ որ անսահմանաբար կը տարածուէր իրենց առջեւ։

«Ռոպէ՛րթ, ըսաւ Մարի յուզեալ սրտիւ, կարծեցի թէ... այո՛, ես ալ քեզ պէս կարծեցի թէ... երկուքս ալ տեսնենք բըռնուած ննք, սիրելի՛ Ռոպէրթս...։»

Բայց նոր ձայն մը հասաւ իրենց ականջին, և այս անգամ պատրանքն այն աստիճան եղաւ, որ մի և նոյն աղաղակն ելաւ միանգամայն երկուքին սրտէն։

«Հա՛յրս, հա՛յրս...։»

Շատ էր այս Մարի Կրանթի համար։ Սրտին յուզմունքէն ընկճեալ, մարեցաւ ընկաւ Ռոպէրթի թեւերուն մէջ։

«Հասէ՛ք, օգնութեան հասէ՛ք, գոչեց Ռոպէրթ։ Ֆ՛յրս, հա՛յրս, օգնութի՛ւն։»

Ֆեղեկալ նաւաստին վազեց աղջիկը վերցնելու։ Պահանորդ նաւաստիներն ալ վազեցին, յետոյ Ճոն Մանկլս, սիկին Էլէնա, Կլէնարվան յանկարծակի արթննալով դուրս վազեցին։

«Ֆայրս կը մեռնի և հայրերնիս հո՛ն է» կը գոչէր Ռոպէրթ ծովը ցուցնելով։ Բան մը չէր հասկցուեր իր խօսքերէն։

«Ա՛յո՛, կը կրկնէր, հայրս հո՛ն է, լսեցի ձայնը, Մարի ալ լսեց ինձ պէս։»

Նոյն միջոցին Մարի Կրանթ ուշաբերելով, բայց մտամոլ, խելայեղեալ, կը գոչէր եղբօրը պէս։

«Հա՛յրս, հա՛յրս հո՛ն է։»

Տարաբաղդ աղջիկն ոտքի վրայ ելնելով և նաւուն կողնոցին վրայէն վար ծռելով ծովը նետուիլ կ'ուզէր։

«Մլո՛րա, սիկի՛ն Էլէնա, կ'ըսէր ու կը կրկնէր ձեռնամած, հաւատացէք որ հօրս ազիողորմ ձայնը լսեցի, այս կոհակաց մէջէն, իբրեւ վերջին հրաժեշտի ողջոյն։»

Ցայնժամ ջղային ձգտումով եկաւ խեղճ մանկամարդուհւոյն վրայ, և սկսաւ թոլթըլիլ։ Չարկ եղաւ վերցնել իր խցիկը տանիլ։ Տիկին Էլէնա ալ հետը գնաց խնամ տանելու համար։ Իսկ Ռոպէրթ կը յեղյեղէր միշտ։

«Հա՛յրս, հայրս հո՛ն է, աներկբայ եմ Միլո՛րտ։»

Այս սրտաճմլիկ տեսարանին ներկայ գտնուողներն հասկցան վերջապէս թէ նաւապետին երկու որդիքն երեւակայական պանտրանքի մը խաղալիկ եղած էին։ Բայց ի՛նչպէս պիտի կրնային փարատել զայդ բուռն պատրանք։ Կլէնարվան փորձեց սակայն։ Բռնեց Ռոպէրթի ձեռքէն ու ըսաւ.

«Հօրդ ձա՞յնը լսեցիր, սիրելի տղա՛ս.

—Ա՛յո, Միլորտ, սա ալիքներուն մէջէն «առ ի՛ս, առ ի՛ս» կը գոչէր։

—Եւ դուն ճանչեցի՞ր ձայնը։

—Ճանչեցի՞ մի, ո՛հ, այո՛, Մի՛լորտ, ճանչեցի, կ՛երդնում ձեզ։ Ի՞նչպէս կ՛ուզէք որ երկուքս ալ միանգամայն խաբուած լինինք։ Միլո՛րտ, հօրս օգնութեա՛ն երթանք։ Մակո՛յկ մը, մակո՛յկ մը։»

Կլէնարվան տեսաւ որ խեղճ տղուն պատրանքը փարատել անհնարին էր. բայց և այնպէս վերջին փորձ մ՛ընելու համար քեղեկալը կոչեց.

«Հավքի՛նս, ըսաւ դուք դեկին քո՞վ էիք, երբոր Մարի Կրանթ նուաղեցաւ։

—Ա՛յո՛, Միլորտ, պատասխանեց Հավքինս։

—Բան մը տեսա՞ք, ձայն մը լսեցի՞ք։

—Ամենեւին։

—Ահա՛ կը տեսնես, Ռոպէ՛րթ։

—Եթէ Հավքինսի հայրը լինէր, պատասխանեց տղան աննուաճելի կորովով, Հավքինս չ՛պիտի ըսէր թէ բան մը չլսեց։ Իմ հայրս էր, Միլո՛րտ, հա՛յրս, հա՛յրս...։»

Ռոպէրթի ձայնը նուաղեցաւ հեկեկմամբ։ Դժգունեցաւ, լեզուն կապուեցաւ և զգայութիւնը կորսնցուց։ Կլէնարվան իսկոյն իր անկողինը փոխադրել տուաւ զայն, և տղան, ընկճեալ ի սրտայուզութենէ, խոր թմրութեան մը մէջ ընկաւ։

«Դժբա՛ղդ որբեր, ըսաւ Ճոն Մանկլս, Աստուած սարսափելի կերպիւ կը փորձէ զիրենք։

—Ա՛յո՛, պատասխանեց Կլէնարվան, կըսկիծին սաստկութիւնը զառանցանք բերած է երկուքին ալ վրայ։

—Եթկուքի՛ն ալ վրայ, մրմռաց Բականէլ, տարօրինա՛կ բան։ Գիտութիւնը չընդունիր զայդ։

Ցետոյ ծովուն վրայ ծռեցաւ, և նշան ընելով ամենուն որ լռեն, ականջ դրաւ։ Խոր լռութիւն կը տիրէր ամեն կողմ։ Բականէլ գոչեց բարձրաձայն, պատասխան տուող չեղաւ.

«Տարօրինա՛կ բան, կ՛ըսէր ու կը կրկնէր աչխարհագիրն իւր խուցը վերադառնալով։ Մտածմանց և ցաւոց սերտ համակրու-

թիւն մը բաւական չէր երեւոյթ՝ մը մեկնելու :»

Հետեւեալ առաւօտ, մարտ 8, ժամ հինգին, արշալոյսը ծագելուն պէս, ուղեւորք, ինչպէս նաև Ռոպէրթ և Մարի, վառն ի՛ր անհնար եղաւ իրենց խուցին մէջ պահել զանոնք, Տընֆռէի տախտակամածին վրայ գումարուած էին : Ամենն ալ կ'ուզէին զննել այն ցամաքը, զոր հազիւ նշմարած էին իրիկունը :

Դիտակներն ու ակնոցներն անյագաբար պտըտեցան կղզւոյն գլխաւոր կէտերուն վրայ. Շոգենաւը մէկ մըն հեռիէն կը պտըտէր կղզւոյն ծովեզերաց առջեւ, որով կղզւոյն ամեն կէտերը կը տեսնուէին : Յանկարծ Ռոպէրթ աղաղակ մ'արձակեց : Երկու մարդ տեսեր էր որ կը վազէին և ձեռքով չարժուններ կ'ընէին. երրորդ մ'ալ դրօշակ մը կը տատանէր :

«Անգլիոյ դրօշա՛կն է, գոչեց Ճոն Մանկլս՝ իւր դիտակովը նայելով :

—Ճշմարիտ է, գոչեց Բականէլ Ռոպէրթի դառնալով :

—Միլո՛րտ, ըսաւ Ռոպէրթ դողալով, սրտին յուզումէն, Միլո՛րտ, եթէ չէք ուզեր որ ես լողալով կղզին երթամ, մակոյկ մ'իջեցնել տուէք ի ծով : Ա՜հ, Միլորտ, կ'աղաչեմ, կը պաղատիմ, ամենէն առաջ ե՛ս ելնեմ այս կղզին :

Ոչ ոք կը համարձակէր խօսիլ : Երեք մարդ, երեք նաւաբեկեալ անգլիացիք, երեսուն-եօթներորդ զուգահեռականին տակ կղզեակի մը մէջ. պարմանալի՛ բան : Եւ ամենն ալ, առջի իրիկուան անցքն յիշելով, նոյն գիշերուան մէջ Ռոպէրթի և Մարիի լսած ձայնին վրայ կը խորհէին : Տղայքը թերեւս մէկ կէտի մը վրայ սխալած էին. թերեւս ձայն մ'եկեր էր միւնչև անոնց ականջը, բայց կրնա՞ր իրենց հօրը ձայնը լինիլ : Ո՛չ, անհնարին էր, աւա՛ղ : Եւ ամեն ոք, զանոնք սպասող սարսափելի պատրանքը մտածելով, կը դողար որ չպիտի կրնային դիմանալ այս չժնդակ փորձի : Բայց ի՞նչ-պէս կարելի էր արգելուլ զանոնք : Լորտ Կլէնարվան չհամարձակեցաւ :

«Մակոյկն իջուցէ՛ք» գոչեց :

Վայրկենի մը մէջ մակոյկը ծովն իջաւ : Նաւապետին երկու որդիքը, Կլէնարվան, Ճոն Մանկլս, Բականէլ, մէջը նետուեցան, և անմիջապէս ճանբայ ելաւ վեց նաւաստիներու զօրեղ թիավարութեամբ :

Ծովեզրին տասն ոտղաչափ մնացած, Մարի սուր ճիչ մ'արձակեց :

«Հա՛յրս»

Մարդ մը կեցած էր ծովեզրին վրայ, երկու մարդոց միջեւ : Իւր յաղթ ու կորովի հասակը, քաղցր և միանգամայն անվեհեր

դէմքը, Մարիի և Ռոպէրթ Կրանթի դէմքին նշանական մէկ խառնուրդը կ'արտայայտէր։ Ստուգիւ այն մարդն էր, զոր այդ երկու տղայք նկարագրած էին յաճախ։ Իրենց հայրն էր, Կրանթ նաւապե՛տն էր։

Նաւապետը լսեց Մարիի ձայնը, թեւերը բացաւ, և աւազին վրայ ընկաւ իբր չանթահարեալ։

ԳԼՈՒԽ Ի.

ԹԱՒՈՐ ԿՂԶԻՆ

Ուրախութենէ մարդ չմեռնիր. որովհետեւ հայրն և որդիք չոգենաւը տարուելէ առաջ ի կեանս վերադարձան։ Ի՞նչպէս կրնանք նկարագրել զայս տեսարան. խօսք չքաւեր։ Ամենն ալ լացին տեսնելով զայդ երեք էակներ մունջ գրկախառնութեամբ մ'իրարու հետ միացած։ Հարրի Կրանթ տախտակամածին վրայ ոտք դնելուն պէս, ծունգի վրայ եկաւ։ Բարեպաշտ սկովտացին ուզեց, իրեն համար հայրենեաց հող համարուած տեղը կոխած ժամանակ, ամեն բանէ առաջ գոհութիւն մատուցանել Աստուծոյ իր այսպէս հրաշքով ազատման վրայ։

Ցետոյ, տիկին Էլէնայի, Լորտ Կլէնարվանի և ընկերաց դառնալով, չնորհակալութիւն յայտնեց յուզեալ ձայնիւ։ Իւր որդիք, կղզեակէն մինչեւ ի չոգենաւ հակիրճ ուղեւորութեան միջոցին հասկցուցեր էին Տընոնի պատմութիւնը։

Ի՛նչ անհուն պարտք ստանձնած էր այն ազնիւ կնոջ և նորա ընկերաց նկատմամբ, Լորտ Կլէնարվանէն սկսեալ մինչև յետին նաւաստին, ամենն ալ չէի՞ն մրցեր ու տառապեր իրեն համար։ Հարրի Կրանթ իւր սրտազեղ երախտագիտութիւնն յայտնեց ա՛յնչափ պարզութեամբ և ազնուաբար, իւր այրական դէմքն ա՛յնչափ քաղցր սրտայուզութեամբ լուսաւորուած էր, որ ներկայ գտնուողներուն ամենն ալ իրենց կրած տառապանքն առաւելապէս վարձատրեալ զգացին։ Անգլած հազարապետին իսկ աչքը տամկացած էր արտասուաց կաթիլով մը, զոր չէր կրցած արգելուլ։ Իսկ պատուական Բականէլ կուլար յայտնապէս, իբրեւ տղայ մը որ չուզեր ծածկել զիւր արտասուք։

Հարրի Կրանթ չէր յագենար իւր աղջկան նայելէ։ Գեղեցիկ ու սխրալի կը գտնէր զայն, յայտնապէս կ'ըսէր ու կը յեղյեղէր նմա, վկայ բռնելով զտիկին Էլէնա, իբր հաւաստելու համար թէ իւր հայրական աչերը չէր խաբեր զինք։ Ապա, տղուն դառնալով.

«Մրչափ մեծցեր է, մա՛րդ եղեր է, կը գոչէր սքանչացմամբ։»

Եւ երկամեայ բացակայութեան ժամանակ սրտին մէջ մխերեալ հազարաւոր համբոյները կը չռայլէր այդ երկու էակաց։

Ռոպէրթ հօրը ներկայացուց իւր բոլոր բարեկամները, և իւր բանաձեւերն այլազանելու հնարը գտաւ, թէ և կրնար մի և նոյն բանն ըսել իւրաքանչիւրին համար, վասն զի ամենն ալ կատարելապէս համակիր եղած էին երկու որբերուն։ Երբոր ներկայացուելու կարգը Ճոն Մանկլսի եկաւ, երիտասարդ նաւապետը չառագնեցաւ աղջկան մը պէս, և ձայնը կը դողար երբոր կը պատասխաներ Մարիի հօր։

Յայնժամ տիկին Էլէնա ուղեւորութեան պատմութիւնն ըրաւ, և հպարտացուց զկըրանթ նաւապետ իւր որդւոց վրայ։

Հարրի Կրանթ իմացաւ դեռատի դիւցազնին չահատակութիւններն, և թէ ի՛նչպէս այդ տղայ իւր հօր պարտուց մի մասն արդէն հատուցած էր Լորտ Կլէնարվանի։ Ցետոյ Ճոն Մանկլս ալ Մարիի վրայ խօսեցաւ այն կերպիւ, որ Հարրի Կրանթ, տիկին Էլէնայի քանի մը խօսքերէն տեղեկանալով, իւր աղջկան ձեռքն երիտասարդ նաւապետին կորովի ձեռքին մէջ դրաւ, և Լորտ Կլէնարվանի ու տիկնոջը դառնալով՝

«Միլո՛րտ, և դուք տիկի՛ն, ըսաւ, օրհնենք մեր որդիքն։»

Երբոր ամեն բան ըսուեցաւ և հարիւրիցս կրկնուեցաւ, Կլէնարվան էյրթընի վրայ պէտք եղածը ծանոյց Հարրի Կրանթի, նա ալ հաստատեց նաւաստեաց տասնապետին ըրած խոստովանութիւններն Ջաստրալիոյ ծովեզրն հանուած լինելու մասին։

«Ուչիմ և յանդուգն մարդ մ՛է, զոր կիրքը չարութեան մէջ ձգեց, ըսաւ։ Իմի՛ն թէ խորհրդածութիւնն ու զիղջը լաւագոյն զգացմանց վերադարձուներն զայն։»

Բայց ջէյրթընն ի թաքոյր կղզի վոխադրելէ առաջ, Հարրի Կրանթ ուզեց հիւրընկալել զիւր բարեկամներն իւր ժայռին վրայ։ Հրաւիրեց այցել զիւր վայտաչէն տնակ, և ովկէանեան Ռոպէնսոնին սեղանը բազմիլ։ Կլէնարվան և ընկերք մեծ հաճութեամբ ընդունեցին։ Ռոպէրթ և Մարի Կրանթ ըղձատոչոր կը փափաքէին տեսնել այն ամայի վայրերն, ուր նաւապետն այնչափ լացեր էր իրենց վրայ։

Մակոյկ մը պատրաստուեցաւ, և հայրն, երկու որդիքը, Լորտ և տիկին Կլէնարվան, հազարապետը, Ճոն Մանկլս և Բաքանէլ կըզգուոյն ծովեզրն ելան։

Քանի մը ժամ բաւական եղաւ Հարրի Կրանթի հետեւածը պատմելու։ Ճշմարիտն

ըսելով, ընդծովեայ լերան մը գագաթն էր. սարահարթ մը լի բասանաքարէ ժայռերով և հրաբխային բեկորներով։ Աշխարհի երկրաբանական ժամանակաց մէջ, այդ լեռ քիչ քիչ վեր ելեր էր Խաղաղականի խորերէն ստորերկրեայ հրոց ազդեցութեամբ։ Բայց դարերէ ի վեր հրաբուխը խաղաղ լեռ մ'եղեր էր, և խառնարանը լցուելով՝ կղզեակ մը դուրս ելեր էր լոյծ դաշտին մէջէն։ Ցետոյ բուսաբեր հողը կազմուեր և բուսական թագաւորութիւնը տիրեր էր այդ նոր երկրի։ Քանի մ'անցորդ կետորսանաւք ընտանի կենդանիներ հանէր էին անդ, այծեր ու խոզեր, որ անդ աճեր էին վայրենական վիճակի մէջ, և բնութիւնն իւր երեք թագաւորութեամբք (բուսական, կենդանական և հանքային) յայտնուեր էր Ովկէանի մէջ կորուսեալ այդ կղզւոյ վրայ։

Երբոր Պէնէնէյի նաւաբեկեալը հոն ապաստանեցան, մարդկային ձեռքը կանոնաւորեց բնութեան գործունքն, և երկուք ու կէս տարւոյ մէջ Հարրի Կրանթ և իւր երկու նաւաստիք կերպարանափոխ ըրին իրենց կղզեակը։ Քանի մ'ակրոն հող, խնամով մշակեալ, պաուսական ընդեղէններ կ'արտադրէր։

Այցելուները տուն հասան, որ գալարագեղ խիժենիներով հովանաւորեալ էր։

Պատուհաններուն առջեւ կը տարածուէր փառաւոր ծովը, փայլատակունք չողշողելով արեւուն ճառագայթներէն։ Հարրի Կրանթ սեղան պատրաստել տուաւ գեղեցիկ ծառոց հովանիներու տակ, և ճաշի նստան։ Ամիկի աղդր մը, նարդոյի հաց, քանի մը կուժ կաթ, վայրի եղերդ, վճիտ և պաղուկ ջուր. ոչքա էին այս պարզ և Արկադիոյ հովուաց արժանի ճաշին տարերքը կազմողք։ Բականէլ սխրացած էր։ Իւր ռոպենսոնական հին գաղափարներն ուղեղը կ'ելլէին։

«Այդ սրիկայ էյրթընին վիճակը գէշ չպիտի լինի, գոչեց խանդավառեալ։ Դրախտ մ'է այս կղզեակ։

—Այո՛, պատասխանեց Հարրի Կրանթ, դրախտ մ'է երեք խղճալի նաւաբեկելոց համար, զորս երկինք կը պահէ աստ. բայց կը ցաւիմ որ Մարիա-Թերեզա ընդարձակ և արգաւանդ կղզի մը չէ։ Ո՛րչափ փափաքելի էր որ վտակի տեղ գետ մը, և փոքրիկ ալեկոծ ծովախորշի մը տեղ նաւահանգիստ մ'ունենար։

—Ինչո՞ւ համար, նաւապե՛տ, հարցուց Կլէնարվան։

—Վասն զի կրնայի աստ հիմնել զայն գաղութ, որով օժտել կ'ուզեմ զՍկովտիա Խաղաղական ովկէանի մէջ։

—Ա՜հ, Կրանթ նաւապետ, ըսաւ Կլէնարվան, դեռ չե՞ս թողած զայդ գաղափար որ այնչափ սիրելի ըրած է զձեզ մեր հինաւուրց հայրենեաց մէջ։

—Ո՛չ, Միլորտ, և Աստուած կ'ազատէ զիս ահա ձեր ձեռօք, որպէս զի թոյլ տայ ինձ կատարել զայն գաղափար։ Պէտք է որ մեր հնօրեայ Քալետոնիոյ աղբատ եղբարք, համայն տառապեալք, նոր երկիր մ'ապաստան ունենան թշուառութեան դէմ։ Պէտք է որ մեր սիրելի հայրենիքն իրեն յատուկ գաղթականութիւն մ'ունենայ այս ծովերու մէջ, ուր քիչ շատ գտնէ զայն անկախութիւն և բարեկեցութիւն որք կը պակսին իրեն Եւրոպիոյ մէջ։

—Ա՜, չատ լաւ կ'ըսէք, նաւապե՛տ, պատասխանեց տիկին Էլէնա, գեղեցիկ գաղափար մ'է այդ, մեծ սրտի մ'արժանի։ Բայց այս կղզեա՞կ։

—Ոչ, տիկի՛ն, ժայռ մ'է, հազիւ քանի մը գաղթական տնուցանելու բաւական, մինչ մեզ պէտք եղածն ընդարձակ և առատ իչն դարուց ամեն դանձերով լի երկիր մ'է։

—Ուրեմն, նաւապե՛տ, գոչեց Կլէնարվան, ասլագան մերն է, և զայդ երկիր ի միասին կը փնտռենք։»

Հարրի Կրանթի և Կլէնարվանի ձեռները ջերմաբար սեղմեցին զիրար, իբրեւ ի հաստատութիւն սոյն խոստման։

Յետոյ, նոյն կղզեկին մէջ, այն խոնարհ տան մէջ ուզեցին լսել Պէլլինգէյի նաւաբեկելոց երկամեայ միայնակեցութեան պատմութիւնը։ Հարրի Կրանթ փութաց գոհացնել իւր նոր բարեկամաց փափաքն։

«Իմ պատմութիւնս, ըսաւ, կղզւոյ մը վրայ ընկած ամեն Ռոպէնսոններուն պատմութիւնն է, որք Աստուծմէ և իրենց անձէն զատ ուրիչ վստահելի ապաւէն չունենալով, կ'զգան թէ իրենց կեանքը տարերաց հետ կռուելով պահպանելու պարտականութիւնն ունին։

«1862 յունիս 26 էն 27 լուսնալուս գիշերն էր որ Պէլլինգէ, վեցօրեայ մրրիկէ մը կայմակոտոր եղած, եկաւ Մարիա-Թերեզայի ժայռերու վրայ ջախջախեցաւ։ Մովը սաստկապէս ալեկոծեալ լինելով, նաւուն մէջէն մարդ ազատել անհնարին էր, ուստի դժբաղդ նաւաստիներուս ամենն ալ կորան. միայն երկու նաւաստիներս, Պոպ Լիբըս, ձոյ Պէլ և ես յաջողեցանք ծովեզրն ելնել՝ յետ քան ապարդիւն փորձերու։

«Մեզ հիւրընկալող ցամաքն սակայն կըզգեակ մ'էր երկու մղոն լայնութեամբ և հինգ մղոն երկայնութեամբ, որ երսունի չափ ծառեր, քանի մը մարգագետիններ, և պաղուկ ջուրի աղբերակ մ'ունէր, որ բաւեբաղդաբար չցամքեցաւ երբէք։ Ուստի,

միայնակ իմ երկու նաւաստեաց հետ աշխարհի այս անկիւնի մէջ, չյուսահատեցայ։ Յոյս Աստուծոյ վրայ դրի, և արիաբար մարտնչելու պատրաստուեցայ։ Իմ քայքայակիցքս և բարեկամք, Պոպ և Ճոյ, անձնուիրաբար օգնեցին ինձ։

«Մեր տիպարն եղող Դանիէլ Ֆոյէի ևրեւակայական Ռոպէնսոնին նման՝ նախ մեր նաւուն բեկորներն հաւաքեցինք, գործիները, քիչ մը վառօդ, զէնք, և պարկ մ'ընտիր սերմանց։ Առաջին օրերն յոյժ տաժանելի եղան, բայց՝ չատ չանցած՝ ծովային և ցամաքային որսերն ապահով սնունդ մատակարարեցին մեզ, վասն զի վայրի այծք կը վխտային կղզւոյն մէջ, և ծովափունք ալ լի էին ծովային կենդանեօք։ Քիչ քիչ մեր կենսավարութիւնը կանոնաւորեցաւ։

«Նաւուղղական գործիներս ազատած լինելով, կղզեկին դիրքը ճշդեի գիտէի։ Նաւերուն ուղիներէն դուրս էինք, ուստի և չէինք կրնար սպասել որ առանց նախախնամական դիպուածի, նաւ մը հանդիպէր աստ և մեզ ժողովէր։ Խորհելով հանդերձ իմ սրբելիներս, զորս ոչ ևս կը յուսայի տեսնել, արիաբար ընդունեցի զայս փորձ, և երկու զաւակաց անունն ամեն օր կը յիշէի աղօթքիս մէջ։

«Սակայն կ'աշխատէինք ժրութեամբ։

Շատ չանցաւ, քանի մ'ակրոն երկիր ցանեցինք պէլլոնէյէն ելած սերմերով։ Գետնախնձորը, եղերդն և թրթնջուկն առողջագործեցին մեր սովորական սնունդն. ապա ուրիշ ընդեղէններ աւ։ Քանի մ'ամիկ բռնեցինք, որ դիւրաւ ընդելացան. և այսպէս կաթն և կարագ ունեցանք։ Նարդուն, որ ցամքած առուներուն մէջ կը բուսնէր, տեսակ մը հաց մատակարարեց մեզ, բաւական հիւթեղ, և այսպէս նիւթական կեանքն ոչ ևս երկիւղ ազդեց մեզ։

«Տուն մը չինեցինք պէլլոնէյի բեկորներէն ելած տախտակներով, խնամով խայծդանեալ առագաստներ ծածկեցինք վրան, և այդ ամրակուռ հովանոյն տակ անձրեւաց եղանակն յաջողապէս անցաւ։ Շատ ծրագրեր խորհուեցան անդ, շատ բաներ տեսնուեցան, որոց լաւագոյնն իրագործեաւ աւասիկ։

«Ի սկզբան մտածեր էի՝ նաւուն բեկորներովը կուր մը չինել և քաջաբար ծովը ելնել. բայց հապար հինգ հարիւր մղոն հեռի էինք ամենէն մօտակայ ցամաքէն, այն է՝ Բոմոթու Արչիպելագոսին կղզիներէն։ Ոչ մի մակոյկ կամ նաւակ չէր կրնար դիմանալ այնչափ երկար ուղեւորութեան. ուստի ետ կեցայ, և նախախնամական միջնորդութենէ միայն սպասեցի փրկութիւնս։

«Ա՜հ, խեղճ զաւակուհքս, քանի՛ քանի անգամ ծովեզրին ժայռերուն վրայէն նաւ կը փնտռէինք լայնածաւալ ծովուն մէջ։ Մեր տարագրութեան միջոցին երկու կամ երեք առագաստանաւք միայն երեւցան հորիզոնին վրայ, բայց չատ չանցած՝ անհետացան։ Երկու տարի ու կէս անցան այսպէս։ Ոչ ևս կը յուսայինք, բայց չէինք ալ յուսահատեր տակաւին։

«Վերջապէս, երէկ իրիկուն կղզւոյն ամենաբարձր կատարն ելած էինք, թեթեւ ծուխ մը նշմարեցի արեւմտեան կողմը։ Մեծցաւ այն ծուխ։ Շատ չ'անցած նաւ մը տեսնուիլ սկսաւ, որ դէպ ի մեզ գալու երեւոյթ ուներ։ Բայց չպիտի՞ խորշէր այս կղզեակէ, որ դադարի բնաւ կէտ մը չընծայեր։

«Ա՜հ, ի՛նչ տագնապալից օր, ո՛րչափ սիրտս ճմլեցաւ կուրծիս մէջ։ Ընկերներս կրակ մը վառեցին Մարիա-Թերեզայի սարերէն մին վրայ։ Գիշեր եղաւ, բայց շոգենաւը ծանօթութեան նշան մը չ'տուաւ։ Սակայն մեր փրկութեան յոյսն անոր վրայ էր։ Պիտի վրիպէի՞նք։

«Ոչ ևս վարանեցայ։ Մութը կը կոխէր։ Շոգենաւը կրնար գիշերը մեկնիլ կղզւոյն առջեւէն։ Ծովը նետուեցայ և դէպ ի նաւը լողալ սկսայ։ Յոյսը կ'եռապատկէր ուժս։

Գերմարդկային ջանքեամբ կը ճեղքէի կոհակները, կը մօտենայի շոգենաւին, հազիւ երթուն գրկաչափ հեռի էի անկէ և ահա ձախ կողմը խոտորեցաւ։

«Յայնժամ արձակեցի այն յուսահատական աղաղակներն, որք իմ երկու որդւոցմէս միայն լսուեցան, և երեւակայական պատրանք չէին։

«Ցետոյ ծովեզրը վերադարձայ վաստակաբեկ, ոգեսպառ, ընկճեալ ի սրտայուզութենէ և ի խոնջութենէ։ Երկու նաւասիներս դիս ժողվեցին կիսամեռ։ Սոսկալի գիշեր մ'եղաւ այս վերջին գիշեր զոր անցուցինք այս կղզւոյ մէջ, և մշտնջենապէս լքեալ կը կարծէինք զմեզ։ Երբոր առաւօտ եղաւ, տեսայ որ շոգենաւն յայսկոյս և յայն կը ճեմէր կիսաշրջի։ Ձեր մակոյկը ծովն իջաւ . . . Փրկուա՛ծ էինք, և ո՛վ աստուածային բարութեան երկնից, զաւակներս, սիրելի զաւակներս մէջն էին և ձեռուընին կ'երկնցնէին ինձ։»

Չարիի կրանթի պատմութիւնն աւարտեցաւ Մարիի և Ռոպէրթի համբուրիցն ու գգուանաց մէջ։ Եւ յայնժամ իմացաւ նաւապետը թէ իւր աղատումն այն քիչ չատ առեղծուածական գրութեան կը պարտէր, զոր իւր նաւաբեկութենէն ութ օր յետոյ սրուակի մը մէջ փակելով՝ ալեաց հաճոյքին

յանձնած էր։ Բայց ի՞նչ կը խորհէր ծաք Բականէլ Կրանթ նաւապետին պատմութեան միջոցին։ Պատուարժան աշխարհագիրն հազարերորդ անգամ իւր մտքին մէջ կը յեղաշրջէր ծովէն ելած գրութեան խօսքերն։ Հետզհետէ տրուած երեք սխալ մեկնութիւնները կը յիշէր։ Ինչպէս նշանակուած էր Մարիա-Թերեզա կղզին այն կիսամաշ թուղթերուն վրայ։ Բականէլ չ'կրցաւ այլ ևս դիմանալ, և Հարրի Կրանթի ձեռքը բռնելով.

«Նաւապե՛տ, գոչեց, կ'ըսէ՞ք ինձ վերջապէս ձեր դժուարիմաց գրութեան պատմութիւնն։»

Աչխարհագրին այս հարցումին ամենուն հետաքրքրութիւնը չարժեց, վասն զի ինն ամէն ի վեր փնտռուած առեղծուածին հանգոյցը պիտի լուծուէր վերջապէս։

«Կը յիշէ՞ք նաւապե՛տ, հարցուց Բականէլ, այն գրութեան բուն խօսքերը։

— Ճշդիւ, պատասխանեց Հարրի Կրանթ, եւ օր չ'եղաւ որ չ'յիշէի այն խօսքերն, որոց հետ կապուած էր մեր միակ յոյսն։

— Ո՞յք են, նաւապե՛տ հարցուց Կլէնարվան, խօսեցէք, վասն զի մեր ինքնասիրութիւնը սաստկապէս գրգռեալ է։

—Պատրաստ եմ գոհացնել զձեզ, պատասխանեց Հարրի Կրանթ, բայց գիտէք որ ազատման հաւանականութիւնները չատացնելու համար՝ երեք լեզուով գրուած երեք թուղթ դրած էի սրուակին մէջ։ Ո՞րը կ'ուզէք իմանալ։

— Երեքն ալ նոյն չե՞ն, գոչեց Բականէլ։

—Այո՛, անուն մը զատ։

—Ուրեմն Ֆրանսերէնը նախ յիշեցէք, ըսաւ Կլէնարվան, վասն զի նա է ամենէն քիչ աւրուածն և մեր մեկնութեանց գլխաւորապէս հիմ եղողն։

—Ա՛սասիկ, Միլո՛րտ, բառ առ բառ, պատասխանեց Հարրի Կրանթ։

«1862, յունիս 27 ին, Կլասկովցի Պրիճ-
«նէ եռակայմը կորաւ Բաթագոնիայէն հա-
«զար հինգ հարիւր փարսախ հեռի, հա-
«րաւային կիսագունտին մէջ։ Ցամաք ընկ-
«նելով, երկու նաւաստիք և Կրանթ նաւա-
«պետ Թաբոր կղզին հասան . . .։

—Հէ՛, գոչեց Բականէլ։

—«Անդ, յարեց Հարրի Կրանթ, չարու-
«նակաբար դառն չքաւորութեան որս լի-
«նելով՝ այս գրութիւնը ծովը նետեցին
«երկայնութեան 153 և լայնութեան 37° 11′
«աստիճաններուն տակ։ Օգնութեան հա-
«սէք իրենց, ապա թէ ոչ՝ պիտի կորնչին։»

Բականէլ՝ Թաբոր անունը լսելուն պէս՝ ցատկեր ոտքի վրայ եղեր էր. յետոյ չկըրնալով ինքզինք զսպել, գոչեց.

«Ի՞նչպէս Թաբոր կղզի, բայց Մարիա-Թերեզա կղզին է այս։

—Անշուշտ, Պարոն Բականէլ, պատասխանեց Չարլզ Կրանթ, Մարիա-Թերեզա է անգլիական և գերմանական քարտէսներուն վրայ, իսկ Ֆրանսական քարտէսներուն վրայ Թաբոր է։

Նոյն վայրկենին կռուփի ահագին հարուած մ'իջաւ Բականէլի կրնակին, որ կքեցաւ։ Ճշմարտութիւնը կը պարտաւորէ ըսել թէ հազարապետը տուաւ զայն հարուածը, առաջին անգամ իւր մարդավարական ծանրաբարոյութենէն խոտորելով։

«Աչխարհագի՛ր» ըսաւ Մաք Նապս-մենախօսին արհամարհանօք։

Բայց Բականէլ և ոչ իսկ զգացեր էր հազարապետին հարուածն որ կինքն ընկճող աչխարհագրական հարուածին հետ բազդատելով՝ ոչինչ էր։

Այսպէս ուրեմն, ինչպէս որ հասկցուց Կրանթ նաւապետին, քիչ քիչ մօտեցեր էր ճշմարտութեան։ Գրեթէ կատարեալապէս լուծեր էր զայն անլուծանելի գրութիւն։ Հետզհետէ Բաթագոնիոյ, Աւստրալիոյ, Նոր-Զելանտայի անուններն երեւան ելեր էին անհերքելի ստուգութեամբ։ Քառլին, նախ Քանլինան (ցամաք երկիր), քիչ քիչ իւր ճշմարիտ Քանլին-էլ (չարունակ) նշանակութիւնն ստացեր էր։ Կնոքն նախ Էնոխեն (հնդիկ), ապա Էնոխեան (բնիկ), և ի վերջոյ իւր ճշմարիտ Էնոխեանս (չքաւորութիւն) իմաստը գտեր էր։ Միայն կրճատեալ «ապոր» բառը խաբեր էր աչխարհագրին կորովամըտութիւնը։ Բականէլ ապրիլ (ցամաք ելլել) բային արմատը կարծեր էր զայն յամառաբար, մինչ Ֆրանսերէն «Թապոր» անունն էր այն կղզեկին, որ ապաստան եղած էր Պլէնանիայի նաւաբեկելոց։ Դժուարախուսելի սխալ, որովհետեւ Տընփանի աչխարհացոյց քարտէսները Մարիա-Թերեզա անունը կուտային այդ կղզեկի։

«Ինչ որ ալ եղած լինի, կը գոչէր Բականէլ իւր մազերը փետելով, պէտք չէր որ մուռնայի երկու անուն ունենալն։ Աններեւելի սխալ մ'է այս, անվայել Աչխարհագրական ընկերութեան քարտուղարի մը։ Անպատուութիւն է ինձ։

—Բայց, պարո՛ն Բականէլ, ըսաւ տիկին Էլէնա, մի՛ տրտմիք այդչափ։

—Ո՛չ, տիկին, ո՛չ, աւանակ մ'եմ ես։

—Եւ ոչ իսկ գիտուն աւանակ մը։ աւելցուց հազարապետն իբր մխիթարութիւն։

Երբոր ճաշն աւարտեցաւ, Չարլզ Կրանթ ամեն բան կարգի դրաւ իւր տան մէջ։ բան մը չառաւ իւր հետ, ուզելով որ մեղա-

պարտը պարկեշտ մարդուն հարստութիւնը ժառանգէր։

Շոգենաւը վերադարձան։ Կլէնարվան կ'ուզէր նոյն օրը չուել, և հրաման ըրաւ որ շոգենաւէն կղզին վոխադրեն նաւաստեաց տասնապետը։ Էյրթըն իւր արգելոցէն հանուելով դուռնակին վրայ բերուեցաւ, Հարրի Կրանթի առջեւ։

«Ես եմ, Էյրթը'ն, ըսաւ Կրանթ։

—Դո՞ւք էք, նաւապե՛տ, պատասխանեց Էյրթըն՝ առանց զարմանք մը ցոյց տալու զայն վերստին գտնելուն վրայ. գոհ եմ որ ձեզ քաջառողջ կը տեսնեմ։

—Կ'երեւի թէ, Էյրթը'ն, սխալ մը գործեցի ձեզ մարդաբնակ երկիր մը հանելով։

—Այնպէս կ'երեւի, նաւապե՛տ։

—Այժմ իմ տեղս պիտի անցնիք այս ամայի կղզւոյ մէջ։ Իցի՛ւ թէ երկինք ապաշաւ ներշնչէ ձեզ։

—Ամէ՛ն» պատասխանեց Էյրթըն հանդարտ ձայնիւ։

Յետոյ Կլէնարվան նաւաստեաց տասնապետին դառնալով ըսաւ.

«Կը պնդէ՞ք, Էյրթըն, ամայի կղզի մը թողուելու որոշման վրայ։

—Այո՛, Միլորտ,

—Թաքոր կղզին կը յարմարի՞ ձեզ։

—Կատարելապէս։

—Այժմ մտիկ ըրէք իմ վերջին խօսքերս, Էյրթը'ն։ Աստ հեռի պիտի մնաք ամեն ցամաքէ, առանց երբէք ձեր նմանեաց հետ հաղորդակցելու հնարաւորութեան։ Հրաչքն յոյժ հազուադէպ է այժմ, և դուք չէք կրնար փախչիլ այս կղզեակէ, ուր կը թողու զձեզ Տէրտն։ Դուք առանձին պիտի մնաք աստ, սրտից խորը քննող Աստուծոյ աչքին առջեւ, բայց ոչ կորուսեալ պիտի մնաք, ոչ անծանօթ, ինչպէս եղաւ Կրանթ նաւապետ։ Որչափ և անարժան լինիք մարդոյժ յիշուելու, մարդիկ պիտի յիշեն զձեզ։ Ես գիտեմ ձեր ուր լինիլն, Էյրթը'ն, կըրնամ գտնել զձեզ, և չեմ մոռնար երբէք։

—Աստուած պահապանէ Ձեր աղնուութիւնը, պատասխանեց Էյրթըն պարզապէս։

Սոքա եղան Լորտ Կլէնարվանի և նաւաստեաց տասնապետին միջեւ վոխանակեալ խօսքերը։ Մակոյկը պատրաստ էր, Էյրթըն անոր մէջ իջաւ։

Ձոն Մանկլը կանխաւ քանի մը սնտուկ պահածոյ ուտելիք, գործիք, զէնք, վառօդ և կապար ղրկած էր կղզին։ Ուստի նաւաստեաց տասնապետը կրնար բարեկորոգիլ աշխատութեամբ։ Բան մը չէր պակսեր իրեն,

մինչեւ իսկ դրեան, և ի մէջ այլոց Աստուածաչունչ, որ յոյժ սիրելի է անգլիացի սիրտերու։

Բաժանման ժամն եկած էր։ Նաւապք և ուղեւորք նաւուն տախտակամածին վրայ էին։ Ամանց սիրտը կը ճմլուէր։ Մարի Կրանթ և տիկին Էլէնա չէին կրնար զսպել իրենց արտայուզութիւնն։

—Հո՞րկ է, հարցուց դեռատի կինն, հա՞րկ է որ այդ չուառական աստ թողուի անպատճառ։

—Հարկ է, Էլէնա՛, պատասխանեց Լորտ Կլէնարվան. իւր մեղաց քաւութիւնն է։»

Նոյն միջոցին մակոյկը, ձոն Մանկլսի հրամատարութեամբ, մեկնեցաւ շոգենաւէն։ Էյրթըն, ոտքի վրայ կանգնած, միշտ անզգած, փեղոյրն հանելով ողջունեց լրջաբար։

Կլէնարվան գլուխը բացաւ, և անոր հետ համայն նաւաղներն, ինչպէս որ ազնուութիւն է ընել մեռնելու պատրաստուած մարդու մ'առջեւ, և մակոյկն հեռացաւ խոր լռութեան մէջ։

Էյրթըն, ցամաքն հասնելնուն պէս, մակոյկէն դուրս ցատկեց ալագին վրայ, և կը վերադաձաւ ի շոգենաւ։ Ժամնմակոյ իրիկուան չորսն էր, և դունակին վրայէն ուղեւորք կրցին տեսնել նաւաստեաց տա-

նապետը, թեւերն ի կուրծ, ժայռի մը վրայ արձանի պէս անշարժ կեցած, և աչքը նաւուն ուղղած։

«Պիտի չուե՞նք Մլը՛րա, հարցուց ձոն Մանկլս։

—Ա՛յո՛, ձոն, պատասխանեց Լորտ Կլէնարվան յուզեալ սրտիւ, թէ և չէր ուզեր ցոյց տալ

—Օ՛ն ի չու» գոչեց ձոն մեքենավարին։

Շոգին չէեց իւր խողովակներուն մէջ, պտուտակը բախել սկսաւ կոհակներն, և ժամ ուրիշ, թաւոր կղզւոյն վերջին կատարներն աներեւոյթ կը լինէին գիշերին ստուերներուն մէջ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՎԵՐՋԻՆ ՄՏԱԶՐԱՂՈՒԹԻՒՆ ԺԱՔ ԲԱԿԱՆԷԼԻ

Տշնաւ, թաւոր կղզիէն մեկնելէ տասն-մէկ օր յետոյ, մարտ 18 ին, Ամերիկայի ծովեզերաց առջեւ հասաւ, և հետեւեալ առաւօտ երկաթ նետեց Թալքահուանոյի ծովածոցին մէջ։

Անդ կը վերադառնար յետ հնգամեայ

ուղեւորութեան, որոյ միջոցին, երսուն-եօթներորդ զուգահեռականի գծին հետեւելով, աշխարհի շուրջը դարձած էր։ Ուղեւորք այս նշանաւոր արշաւանաց, որ նախընթաց մը չունի երկրախուզական տարեգրութեանց մէջ, Շիլիէն, Բամբանեըէն, Արժանթեան հանրապետութենէն, Ատլանտեան Ովկէանէն, Աքունհա կղզիներէն, Հնդկական Ովկէանէն, Ամսդըրտամ կղզիներէն, Աւստրալիայէն, Նոր-Զելանտայէն, Թաբոր կղզիէն և Խաղաղական Ովկէանէն անցած էր։ Իրենց ճիգերն ապարդիւն չէին մնացած, Պըլլէնէյի նաւաբեկեալները գտեր իրենց հայրենիքը կը վերադարձուն էին։

Ոչ միայն այն քաջ սկովտացիներէն, որք իրենց լորտին ընկերացած էին, պակաս չէր. ամենն ալ կը վերադառնային իրենց հիւանդութեան Սկովտիան, և այս արշաւանք հնախօսութեան «առանց արտասուաց» պատերազմը կը յիշեցնէր։

Տըֆֆան, պարենաւորուելն աւարտելէ յետոյ, մեկնեցաւ Թալքահուանոյէն, Բադակոնիոյ ծովեզերքէն անցաւ, Հորն հրուանդանը դարձաւ և Ադլանտեան Ովկիանոս մտաւ։

Ոչ մի ուղեւորութիւն այսչափ նուազ արկածաւոր եղած չէր։ Շոփենաւն երջանկութիւն կը տանէր իւր կողերուն մէջ։ Գաղտնիք չկար նաւուն մէջ, մինչեւ իսկ Ճոն Մանկլսի սէրը Մարի Կրանթի վրայ։

Սակայն կար տակաւին գաղտնիք մը, որ Մաք Նապսի հետաքրքրութիւնը կը գրգռէր։ Ինչո՞ւ համար Բականել այնպէս ամրապահ կը փակուէր իւր զգեստուց մէջ, եւ լայն վզկապ մը կը փաթթէր ճիտը։ Հազարապետը բուռն տենչ մ'ունէր այս գրամանալի մեծամոլութեան պատճառն իմանալու։ Բայց տեղն է ըսել թէ, հակառակ իրեն եղած հարցմանց, ակնարկութեանց և Մաք Նապսի կասկածանաց, Բականել չքակեց զգեստին կոճակը։

Ոչ, մինչեւ իսկ երբոր յիսուն աստիճան ջերմութենէ անցան, որ տախտակամածին զօդերն հալեցուց։

«Այնչափ մտազբաղ է որ ինքզինք Բեդըրսպուրկի մէջ կը կարծէ» կ'ըսէր հազարապետը տեսնելով զաչխարհագիրը լայն կրկնոցի մը մէջ փաթթուած, իբր թէ սնդիկը սառած լինէր ջերմաչափին մէջ։

Վերջապէս, մայիս 9 ին, Թալքահուանոյէն մեկնելէ յիսուն-երեք օր գկնի, Ճոն Մանկլս նշմարեց Քլիր հրուանդանին փարոսը։ Սէնթ-Ճորճի ջրանցքէն և Իրլանտայի ծովէն անցաւ և մայիս 10 ին Քլայտի ծոցը մտաւ։ Ժամը տասն-մէկին երկաթ նետը

տեց Տրամպէրթընի առջեւ։ Իրիկուան ժամ երկուքին ուղեւորք Մալթամ Փասլ մոան ի ձայն ցնծութեան Սկովտայի լեռնակա-նաց։

Արդ, գրուած էր թէ Հարրի Կրանթ և իւր երկու ընկերք պիտի ազատէին, թէ ձոն Մանկլս պիտի պակուէր Մարի Կրանթի հետ Սէնթ-Մընկոյի վաղեմի մայր եկեղեցւոյն մէջ ուր վերապատուելի Բաքոթըն, որ ինն ամիս առաջ հօրը փրկութեան համար աղօթած էր, նորա դստերն ազատչին ամուսնութիւնն օրհնեց։ Գրուած էր նաև թէ Ռոպէրթ նաւազ պիտի լինէր Հարրի Կրանթի պէս, ձոն Մանկլսի պէս, և իւր հօր ծրագիրը գործադրելու պիտի ձեռնարկէր ընդ պաշտպանութեամբ Լորտ Կլէնարվանի։

Բայց գրուա՞ծ էր թէ ժաք Բականէլ ալ ամուրի չպիտի մեռնէր։ Շատ հաւանական է։

Արդարեւ, գիտուն աշխարհագիրն, զկնի իւր դիւցազնական չահատակութեանց, չէր կրնար պրծիլ համբաւէ։ Իւր մտազբաղութիւնք մեծ հռչակ հանեցին Սկովտիոյ բարձրը դասուց մէջ։ Իրարու ձեռքէ կը խլէին զայն, և չէր կրնար հասնիլ իրեն եղած քաղաքավարութեանց։

Նոյն միջոցին էր որ երեսնամեայ սիրուն օրիորդ մը, Մաք Նապս հաղարապե-

տին հօրեղբօրորդի, նոյնպէս քիչ մ'արտակեղրոն, բայց բարեբարոյ և տակաւին գեղեցիկ, սիրահարեցաւ աշխարհագրին նորանշան ձեւերուն, և ամուսնութեան խընդրեց զայն։ Միլիոն մ'ալ կար գործին մէջ, բայց խօսքը չըրին։

Բականէլ անզգայ չէր օրիորդ Արապէլլայի տարփանաց, սակայն չէր իշխեր պատասխանել։

Ցայնժամ հազարապետն յանձն առաւ մտնել այդ երկու սրտից միջև, որք իրարու համար ստեղծուած էին։ Մինչեւ իսկ ըսաւ Բականէլի թէ ամուսնութիւնն իւր «վերջին մտազբաղութիւնը» պիտի լինէր։

Մեծ եղաւ Բականէլի տագնապն, որ զարմանալի տարօրինութեամբ չէր համարձակեր վերջին բառն արտասանել։

—Արդեօք օրիորդ Արապէլլա հաճելի չէ՞ ձեզ, կը հարցնէր Մաք Նապս անդադար։

—Օ՛, հազարապետ, սխրալի՛ է, գոչեց Բականէլ, չափազա՛նց սխրալի, և եթէ հարկ է ամեն բան ըսել ձեզ, առաւել հաճելի կը լինէր ինձ, եթէ քիչ մը պակաս սխրալի լինէր։ Կ'ուզէի որ թերութիւն մ'ունենար։

—Անհոգ եղիք, պատասխանեց հազարապետն, ունի թերութիւն, և մեկէն աւելի։ Ամենէն կատարեալ կինն ալ ազատ

չէ թերութենէ։ Այսպէս, Բականէ՛լ, որոշուեցա՞ւ։

—Չեմ համարձակիր, կ՚ըսէր Բականէլ։

—Ըսէք տեսնեմ, գիտնակա՛ն բարեկամս, ինչո՞ւ կը տատանիք։

—Ես արժանի չեմ օրիորդ Արապէլլայի, կը պատասխանէր միշտ աչխարհագիրն, և խօսք չէր տար։

Վերջապէս օր մը նեղը լծուելով տնօղք հազարապետէն, հարկադրեցաւ գաղտնիք մը հաղորդել նմա խորհրդաբար, մասնաւորութիւն մը, որ իւր արտաքին նկարագիրը կը դիւրացնէր, եթէ երբէք ոստիկանութիւնը գինքը գտնել ուզէր։

—Բա՛, գոչեց հազարապետն։

—Ինչպէս որ կ՚ըսեմ ձեզ, ըսաւ Բականէլ։

—Հոգ չէ, պատուական բարեկամս։

—Կը կարծէ՞ք։

—Ընդհակառակն, ադով աւելի նորանշան եղած էք։ Ձեր անձնական արժանիքը կ՚աւելնայ։ Արապէլլայի երազած աննման մարդը կը լինիք։

Եւ անվրդով լրջութիւն մը պահելով, հազարապետը, բուռն սրտատանջութեանց մէջ թողուց զԲականէլ։

Կարճ խօսակցութիւն մ՚եղաւ ընդ մէջ Մաք Նապսի և օրիորդ Արապէլլայի։

Տասն-հինգ օր յետոյ ամուսնութիւն մը կը կատարուէր մեծ հանդիսիւ, Մալքոմ Ֆասլի մատրան մէջ։ Բականէլ յոյժ չքեղ էր, բայց ամրապէս կոճկուած։ Օրիորդ Արապէլլա ալ յոյժ պայծառագեղ։

Եւ աչխարհագրին գաղտնիքը միշտ թաղուած պիտի մնար անծանօթին անդընդոց մէջ, եթէ հազարապետը չյայտնէր Լորտ Կլէնարվանի, նա ալ տիկին Էլէնայի, որ ծածկաբար տիկին Մանկլսի հաղորդեց։ Վերջապէս տիկին Օլպինէթի ականջն հասաւ և անտի դուրս պայթեցաւ։

Ձաք Բականէլ, երեք օր Մաուրիներուն ձեռքը մնացած միջոցին, գինքը կտեր էին յոտից ցպարանոց, և իւր կուրծքին վրայ կնքաբանական քիվիի մը թեւատարած պատկերը նկարած էին, որ սիրտը կը խածնէր։

Այս եղաւ Բականէլի մեծ ուղեւորութեան միակ արկածն, որոյ վրայ չվախթարուեցաւ երբէք, և զոր չկրցաւ ներելնորզելանտացւոց։ Այս եղաւ նա՛ւ պատճառ, որ հակառակ բազում բաղճանաց և իւր կարօտմանց, չկրցաւ վերադառնալ ի Ֆրանսա։ Կը վախնար որ բովանդակ աչխարհագրական ընկերութիւնն իւր անձին վրայ ծաղու նիւթ կը լինէր ծաղրանկարչաց և զաւեշտական թերթերու՝ թարմապէս կըտեալ քարտուղար մը վերադարձնելով նմա։

Կրանթ նաւապետին Սկովտիա վերադարձն ողջունեցաւ իբրեւ ազգային մեծ դէպք, և Հարրի Կրանթ Հին-Քալետոնիոյ ամենէն ժողովրդական մարդն եղաւ։ Որդին, Ռոպէրթ, նաւապետ եղաւ իրեն պէս, ձոն Մանկլսի պէս, և խաղաղականի ծովերուն մէջ սկովտական գաղութ մը հիմնելու խորհուրդն իրագործելու ձեռնարկեց Լորտ Գլէնարվանի հովանաւորութեամբ։

ՎԵՐՋ



L4.5.3.

Х26

0004715

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004715

Книговѣзница
А. М. пицерова